

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Տարեկան **Հաղորդում**

ԵՐԵՎԱՆ 2019

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Տարեկան **Հաղորդում**

ԵՐԵՎԱՆ 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	8
1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԽՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	9
2. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ.....	21
3. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍՈՒՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ՔԱՅԼԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ.....	23
3.1. Ժամանակային սահմանափակումներն ու օրենսդրությամբ նախատեսված քայլերի իրականացման նախադրյալները.....	23
3.2. Խորհրդի որդեգրած սկզբունքներն ու ծրագրային մոտեցումները.....	26
3.3. Ձեռնարկված անհետաձգելի քայլերը դատական իշխանության ապակենտրոնացման ու գործունեության իրավական երաշխիքների ամրապնդման ուղղությամբ.....	28
3.4. Դատարանակազմական բնույթի աշխատանքները	31
3.5. Բարձրագույն դատական խորհրդի նորմատիվ որոշումները	35
3.6. Իրավական ակտերի նախագծերի փորձաքննության ուղղությամբ կատարված աշխատանքները	36
3.7. Կադրային բանկի ձևավորումը (հավակնորդների ու թեկնածուների ընտրություն, ուսուցում և առաջխաղացման ցուցակների կազմում)	37
3.8. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության ապահովման ուղղությամբ իրականացված քայլերը.....	39
3.9. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի «նեղ տեղերն» ու դրանց հետևանքները	40

3.10. «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքի ընդունման ուշացման ու անլիարժեքության հետևանքները	46
3.11. Կարգապահական վարույթների համակարգային անկատարությունն ու դրա հետևանքները	48
4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՆԴՈՒՄԸ.....	49
5. ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ՝ «ՆԵՂ ՏԵՂԵՐԻ» ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ, ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ, ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՈՒ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏՆՍԱՆԿՑՈՒՆԻՑ	52
5.1. Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի դատական իշխանության համակարգի վերաբերյալ	52
5.1.1. Դատարանները և դատավորների թվակազմը.....	52
5.1.2. Հայաստանի Հանրապետությունում 100.000 բնակչի հաշվով դատավորների թվաքանակը և դրա համեմատականն այլ պետությունների դատավորների թվաքանակի հետ.....	55
5.1.3. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների փաստացի ծանրաբեռնվածությունը	57
5.1.4. Վիճակագրական տվյալներ մասնագիտացված վարչական դատարանի փաստացի ծանրաբեռնվածության վերաբերյալ.....	59
5.1.5. Վիճակագրական տվյալներ վերաքննիչ դատարանների փաստացի ծանրաբեռնվածության վերաբերյալ.....	59
5.1.6. Վիճակագրական տվյալներ Վճռաբեկ դատարանի փաստացի ծանրաբեռնվածության վերաբերյալ.....	60
5.1.7. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների ծանրաբեռնվածությունը՝ ըստ Երևան քաղաքի և մարզային դատարանների, և առկա ծանրաբեռնվածությունը հավասարակշռելու նպատակով անհրաժեշտ դատավորների հաստիքների քանակը	61
5.1.8. Քաղաքացիական գործերով դատավորների թվաքանակի հնարավոր ավելացումը մարզային դատարաններում (հիմնավորումները)	64

5.1.9. Քրեական գործերով դատավորների թվաքանակի հնարավոր ավելացումը մարզային դատարաններում (հիմնավորումները).....	67
5.1.10. Գործոններ, որոնք ընկած են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քաղաքացիական գործերով ծանրաբեռնվածության հիմքում.....	70
5.1.11. Գործոններ, որոնք ընկած են վարչական գործերով ծանրաբեռնվածության հիմքում.....	74
5.1.12. Վերաքննիչ դատարանների դատավորների ծանրաբեռնվածության վիճակը	75
5.1.13. Վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածության խնդիրները.....	77
5.1.14. Դատական գործի ծախսատարությունն առաջին ատյանի դատարանում.....	78
5.2. Արդյունավետ արդարադատության նախադրյալների ապահովման ուղղությամբ քայլերը	82
5.3. «Մե խոռոչների» բացահայտման ու հաղթահարման ուղղությամբ քայլերը	86
5.4. Բյուջետային պլանավորման նոր մոտեցումները	91
6. ԴՍՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԳԻՆԴՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	96
6.1. Դատական իշխանության անկախության երաշխավորումը որպես երկրի իրավական անվտանգության առանցքային խնդիր.....	96
6.2. «Դատական իշխանություն» պետաիշխանական գործառույթի առանձնահատուկ բնույթը	100
6.3. Իշխանությունների բաժանման համակարգում դատական իշխանության գործառույթային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության օրենսդրական երաշխիքների ամրապնդումը	106
6.4. Արդարադատության ծախսատարության կրճատման նպատակային ծրագրի իրականացումը	108

6.5. Էլեկտրոնային արդարադատության համակարգի փուլային ներդրումը.....	109
6.6. Դատական գործերի կառավարման ժամանակակից թվայնացված համակարգի ներդրումը	113
6.7. Արդարադատության մշտադիտարկման համակարգի ներդրումը	115
6.8. Դատական արխիվների և ընթացիկ գործերի ամբողջական թվայնացման համակարգի ներդրումը	129
6.9. Դատարանների շենքային և նյութատեխնիկական պայմանների հիմնախնդիրների լուծումը՝ հստակեցնելով գերատեսչական պատկանելության և շահագործման կարգը, իրականացնելով փուլային ծրագիր՝ 2019-2020 թվականների ընթացքում դատարանների համար առնվազն նվազագույն պայմաններ երաշխավորելու նպատակով.....	130
6.10. Դատական իշխանության բյուջետային պլանավորման, ֆինանսական կառավարման ու կատարման վերահսկման առավել արդյունավետ, գործուն ու թափանցիկ համակարգի ներդրումը՝ միտված արդարադատության արդյունավետության բարձրացմանը և ծախսատարության կրճատմանը.....	137
6.11. Դատավորների գործունեության գնահատման՝ օբյեկտիվ չափորոշիչների վրա խարսխված համակարգի ներդրումը	138
6.12. Դատավորների օպտիմալ ծանրաբեռնվածության երաշխավորման ուղղությամբ իրականացված ու իրականացվելիք քայլերը, ըստ գործերի առանձին տեսակների և բարդության դրանց քննության միջին ուղենշային ժամկետների հստակեցումը՝ բացառելով տարիներ շարունակ տարբեր պատճառներով գործերի կասեցումները կամ քննության ու որոշման կայացման անորոշ հետաձգումները	145

6.13. Դատավորների և դատավորին կցված օգնականների թվակազմի օպտիմալացումը՝ հիմք ընդունելով դատավորի ողջամիտ ծանրաբեռնվածությունը և դատարանների բեռնաթափմանն ուղղված ձեռնարկվելիք միջոցառումների հնարավոր արդյունքները.....	147
6.14. Դատավորների աշխատանքի որակն ու արդյունավետությունը բարձրացնելուն, բարելավրության կանոնների պահպանմանը, մասնագիտական պատրաստվածության և հմտությունների շարունակական բարելավմանն ուղղված կառուցակարգերի կատարելագործումը	149
6.15. Դատավորների թեկնածուների ընտրության և դատավորների առաջխաղացման ու նշանակման գործընթացների հնարավոր առավելագույն թափանցիկության ապահովումը.....	154
6.16. Դատական հայեցողության սահմանների հստակեցումը՝ դարձնելով այն հնարավորինս կանխատեսելի և բացառելով հայեցողության ոչ իրավաչափ ընկալումն ու հնարավոր չարաշահումները	155
6.17. Դատավորի բարձր կարգավիճակին, պատասխանատվությանը և անկախության երաշխիքներին համապատասխանող վարձատրության, սոցիալական ապահովության և նյութական աջակցության խնդիրների համալիր կարգավորմանը միտված օրենսդրական նախադրյալների ամրապնդումը	155
6.18. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության նպատակային ծրագրի մշակումը, դատական իշխանության գործունեության նկատմամբ հանրային իրազեկվածության որակապես նոր համակարգի ներդրումը	158
7. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ	160
8. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	161

ՆԱԽԱԲԱՆ

Բարձրագույն դատական խորհուրդը դատավորի և դատա-
րանի անկախության երաշխավորման իր սահմանադրական
առաքելության իրականացման նպատակով լիազորությունների
ստանձնման պահից խնդիր է դրել հետևողական ու արդյու-
նավետ աշխատանքի շնորհիվ.

- երաշխավորել դատական իշխանության համարժեք տեղն
ու դերն իշխանությունների բաժանման ու հավասա-
րակշռման համակարգում,
- ապահովել դատավորների ու դատարանների գործառու-
թային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական
անկախության անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ,
- էապես բարձրացնել հանրային վստահությունն արդարա-
դատության նկատմամբ,
- նախադրյալներ ստեղծել իրավունքի գերակայության
սկզբունքի հետևողական իրացման, մարդու հիմնական
իրավունքների ու ազատությունների անմիջական գործո-
ղության համար,
- արդարադատության ոլորտում նվազագույնի հասցնել կո-
ռուպցիոն ռիսկերը,
- ներդնել առաջադիմական էլեկտրոնային արդարադա-
տության ու մշտադիտարկման համակարգեր,
- էապես կրճատել արդարադատության ծախսատարույթ-
յունը,
- որակական փոփոխություններ իրականացնել դատարա-
նի մատչելիության ու ողջամիտ ժամկետներում գործերի
քննության հիմնարար սկզբունքների իրացման համար,
- բարձրացնել դատական ծառայողների որակն ու պատաս-
խանատվությունը:

Բարձրագույն դատական խորհրդի գլխավոր նպատակն է
նախադրյալներ ստեղծել Հայաստանում ձևավորելու արդարա-
դատության անկախության, անաչառության, մատչելիության,
թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավե-
տության նոր մշակույթ:

1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԽՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ¹

Բարձրագույն դատական խորհուրդը հանրային իշխանության համակարգում առանձնահատուկ կարգավիճակ ունեցող սահմանադրական մարմին է, ինչն էլ թելադրել է Սահմանադրության 173-րդ հոդվածի առանցքային նշանակություն ունեցող հետևյալ հիմնադրույթը, ըստ որի՝ «Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը»:

Համաձայն Սահմանադրության 174-րդ հոդվածի.

1. Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից:

2. Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանների դատարաններից: Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ:

3. Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից: Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր:

4. Բարձրագույն դատական խորհրդի անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց վերընտրվելու իրավունքի:

5. Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների համար Դատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության պահանջներ:

¹ Ներկայացվում է համակարգային ամբողջականության մեջ՝ սահմանադրական այս նոր ինստիտուտի իրավական կարգավիճակի ու գործառնությունների մասին հնարավորինս հանրային լայն իրազեկման անհրաժեշտությունից ելնելով:

6. Դատական օրենսգրքով կարող է սահմանվել Բարձրագույն դատական խորհրդում պաշտոնավարման ընթացքում դատավոր անդամների լիազորությունների կասեցման պահանջ:

7. Բարձրագույն դատական խորհուրդն իր կազմից Դատական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից:

8. Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման մանրամասները սահմանվում են Դատական օրենսգրքով:

Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները սահմանված են Սահմանադրության 175-րդ հոդվածով.

«1. Բարձրագույն դատական խորհուրդը՝

1) կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները.

2) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա, ներառյալ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին.

3) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուներին.

4) Ազգային ժողովին առաջարկում է Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին.

5) լուծում է դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը.

6) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

7) լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

8) լուծում է դատավորների լիազորությունների դադարեցման հարցը.

9) հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.

10) օրենքին համապատասխան ձևավորում է իր աշխատակազմը:

2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

3. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով Բարձրագույն դատական խորհուրդն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

4. Բարձրագույն դատական խորհրդի այլ լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Դատական օրենսգրքով»:

Սահմանադրության անցումային դրույթներով նույնպես սահմանված են դատական իշխանությանն առնչվող մի շարք դրույթներ, որոնք պայմանավորել են 2018 թվականին Բարձրագույն դատական խորհրդի գործունեության առանձնահատուկ բնույթը:

Մասնավորապես, Սահմանադրության 214-րդ հոդվածի համաձայն.

1. Բարձրագույն դատական խորհուրդը, Սահմանադրության 174-րդ հոդվածին համապատասխան, կազմավորվում է Դատական օրենսգրքի համապատասխան դրույթներն ուժի մեջ մտնելուց հետո՝ Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:

2. Արդարադատության խորհրդի անդամների լիազորությունները դադարում են, իսկ Բարձրագույն դատական խորհուրդն իր լիազորություններն ստանձնում է Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտման օրը:

3. Ազգային ժողովը և դատավորների ընդհանուր ժողովը Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի համապատասխան երեքական անդամների ընտրում են հինգ, իսկ երկուական անդամների՝ երեք տարի ժամկետով:

Միաժամանակ, Սահմանադրության 215-րդ հոդվածով նախատեսվել է, որ.

1. Մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված դատավորները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ սահմանված ժամկետի ավարտը:

2. Մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված դատարանների նախագահները և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները շարունակում են պաշտոնավարել մինչև Սահմանադրության 166-րդ հոդվածով սահմանված կարգով դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակվելը կամ ընտրվելը, որն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի կազմավորումից հետո՝ ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում:

3. Եթե մինչև Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված դատարանների նախագահները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները Սահմանադրության 166-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում չեն նշանակվում համապատասխան դատարանների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներ, ապա նրանք շարունակում են պաշտոնավարել համապատասխան դատարաններում որպես դատավորներ:

Սահմանադրական իրավակարգավորումների պահանջներից ելնելով՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի² 3-րդ բաժնով (79-165-րդ հոդվածներ) սահմանվեցին Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման ու գործունեության բոլոր մանրամասները: Մասնավորապես, Սահմանադրության 175-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածով նախատեսվեցին Բարձրագույն դատական խորհրդի հետևյալ լիազորությունները.

1. Բարձրագույն դատական խորհուրդը՝

1) կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները.

2) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա, ներառյալ՝ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին.

3) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուներին.

4) Ազգային ժողովին առաջարկում է Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին.

5) լուծում է դատավորին մեկ այլ դատարան գործուղելու հարցը.

² Այսուհետ նաև՝ «Դատական օրենսգիրք»:

6) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

7) լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

8) լուծում է դատավորի լիազորությունների դադարեցման հարցը.

9) արձանագրում է դատավորի լիազորությունների դադարման հիմք հանդիսացող հանգամանքի առկայությունը.

10) հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները.

11) իր և դատարանների բյուջետային հայտը ներկայացնում է Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.

12) հաստատում է իր և դատարանների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և սահմանված կարգով ներկայացնում Կառավարություն.

13) բաշխում է դատարանների պահուստային ֆոնդի միջոցները.

14) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

15) լուծում է Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

16) լուծում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի և նախագահի լիազորությունները դադարեցնելու հարցը.

17) արձանագրում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարման հիմք հանդիսացող հանգամանքի առկայությունը.

18) քննարկում է դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող ցանկացած հարց և իրավասու մարմիններից պահանջում է հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ.

19) իրավասու պետական մարմիններին առաջարկներ է ներկայացնում դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ.

20) դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ տալիս է կարծիք.

21) հաստատում է դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը դատարաններում շրջանառելու կարգը.

22) հաստատում է գանգվածային լրատվության միջոցների հետ իր և դատարանների փոխհարաբերության կանոնները.

23) հաստատում է դատարան փաստաթղթերի հանձնման, ըստ տեսակների՝ գործերի դասակարգման և դատարանների գործավարության այլ կանոններ.

24) Կառավարության համաձայնությամբ ավելացնում է առանձին դատարանների դատավորների թվակազմը, կրճատում է իր կողմից ավելացված դատավորների թվակազմը.

25) սահմանում է առաջին ատյանի դատարանների՝ սույն օրենսգրքով չսահմանված նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքը, հաստատում է դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը.

26) սահմանում է դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը.

27) սահմանում է դատական կազմի բացակայող դատավորներին փոխարինելու կարգը.

28) սահմանում է գործերի քննության միջին տևողության ուղենշային ժամկետներ՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության.

29) սահմանում է դատավորի ծանրաբեռնվածությունը հաշվարկելու կարգը, ինչպես նաև դատավորի ծանրաբեռնվածության չափորոշիչները.

30) սահմանում է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների հերթապահություն սահմանելու կարգը.

31) հաստատում է Դատական դեպարտամենտի կանոնադրությունը և իրականացնում Դատական դեպարտամենտի հիմնադրի բոլոր լիազորությունները.

32) նշանակում և ազատում է Դատական դեպարտամենտի ղեկավարին.

33) Դատական դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է դատական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշ-

տոնների անձնագրերը, ինչպես նաև սահմանում է Դատական դեպարտամենտի հաստիքների քանակը.

34) սահմանում է դատական ծառայության թափուր պաշտոն գրադեցնելու համար փակ մրցույթի անցկացման ընթացակարգը, ինչպես նաև բաց մրցույթում թեստավորման, հարցազրույցի անցկացման և թեկնածուների հատկանիշների գնահատման ընթացակարգը, մրցութային հանձնաժողովների ձևավորման ընթացակարգը և դրանց գործունեության կարգը.

35) սահմանում է դատական ծառայողի գործունեության գնահատման կարգը, չափանիշները և բնութագրի ձևը.

36) հաստատում է դատական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստում անցկացնելու կարգը.

37) դատական ծառայողների, դատական կարգադրիչների ուսուցման ծրագրերում ներառման նպատակով Արդարադատության ակադեմիա է ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ.

38) սահմանում է դատական ծառայողների և դատական կարգադրիչների ուսումնառության ժամաքանակը.

39) սահմանում է դատական կարգադրիչներին որպես խրախուսանք շնորհվող կրծքանշանների տեսակները և ձևերը.

40) սահմանում է դատական կարգադրիչի կրծքանշանի տեսակները և ձևերը.

41) սահմանում է դատական կարգադրիչներին համազգեստ հատկացնելու և կրելու կարգը.

42) սահմանում է դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող քաղաքացիների երդման կարգը.

43) հաստատում է իր աշխատակարգը.

44) սահմանում է Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների շենքերի անցագրային կարգը և անվտանգության կանոնները.

45) իրականացնում է սույն օրենսգրքով սահմանված այլ լիազորություններ:

2. Բարձրագույն դատական խորհուրդը սույն հոդվածի 1-ին մասի 22-րդ, 25-րդ, 34-36-րդ, 41-րդ և 44-րդ կետերով նախատեսված իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև մյուս լիազորությունների իրականացման ժամանակ նորմատիվ կարգավորում սահմանելիս ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Միաժամանակ, Դատական օրենսգրքի եզրափակիչ ու անցումային դրույթներով (հոդվ. 166) սահմանվել է.

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու օրը, բացառությամբ Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման վերաբերյալ դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում սույն օրենսգրքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգիրքը և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-137-Ն օրենքը:

3. Արդարադատության խորհրդի անդամների լիազորությունները դադարում են, իսկ Բարձրագույն դատական խորհուրդն իր լիազորություններն ստանձնում է Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտման օրը:

4. Ազգային ժողովը և Ընդհանուր ժողովը Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի համապատասխան երեքական անդամների ընտրում են հինգ, իսկ երկուական անդամների՝ երեք տարի ժամկետով: Ընդ որում, Ազգային ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի անդամների պաշտոնները համարակալվում են՝ առաջին, երկրորդ և երրորդ պաշտոնների համար սահմանելով պաշտոնավարման հնգամյա ժամկետ, իսկ չորրորդ և հինգերորդ պաշտոնների համար՝ եռամյա ժամկետ:

5. Ազգային ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի անդամների յուրաքանչյուր պաշտոնի համար Ազգային ժողովի խմբակցությունները կարող են առաջադրել մեկական թեկնածու մինչև 2018 թվականի փետրվարի 22-ը՝ գրության մեջ նշելով նաև առաջադրվող թեկնածուի պաշտոնի համարը և պաշտոնավարման ժամկետը:

6. Ընդհանուր ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի անդամների ընտրություններն անցկացվում են մինչև 2018 թվականի մարտի 2-ը: Ընդհանուր ժողովի կողմից ընտրված՝ առավելագույն գործակից ստա-

ցած առաջին երեք թեկնածուների պաշտոնավարման ժամկետը հինգ տարի է, իսկ հաջորդ երկուսինը՝ երեք: Սույն մասով նախատեսված գործակիցը հաշվարկվում է սույն օրենսգրքի 76-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված կարգով:

7. Սույն օրենսգրքի 76-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված հարցերը մինչև Ընդհանուր ժողովի գործունեության կարգի սահմանումը կարգավորվում են Ընդհանուր ժողովի առանձին որոշմամբ, որն ընդունվում է մինչև Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի դատավոր անդամների ընտրությունը:

8. Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընտրությունից հետո՝ հնգօրյա ժամկետում, խորհրդի տարիքով ավագ անդամը հրավիրում է Բարձրագույն դատական խորհրդի առաջին նիստը, որի ընթացքում Ազգային ժողովի ընտրած անդամներից ընտրվում է խորհրդի նախագահ:

9. Սույն օրենսգրքով Սահմանադրական դատարանի դատավորի համար սահմանված դրույթները տարածվում են նաև Սահմանադրական դատարանի անդամի վրա:

10. Արդարադատության խորհրդի, Ընդհանուր ժողովի, Դատարանների նախագահների խորհրդի և Վճռաբեկ դատարանի նախագահի ընդունած համապատասխան ակտերը գործում են մինչև Բարձրագույն դատական խորհրդի կողմից սույն օրենսգրքով սահմանված ակտերի ընդունումը:

11. Սույն օրենսգրքով նախատեսված այն դրույթները, որոնցով կարգավորվող հարաբերությունների վերաբերյալ պետք է ընդունվեն Բարձրագույն դատական խորհրդի որոշումներ, և առկա չեն սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված մարմինների ակտեր, կիրառվում են Բարձրագույն դատական խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունման օրվանից, եթե այդ որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ:

12. Սույն օրենսգրքի 57-րդ հոդվածի 4-6-րդ մասերը գործում են 2019 թվականի հունվարի 1-ից:

13. Մինչև Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրը Հանրապետության նախագահի կողմից հաստատված դատավորների թեկնածությունների ցուցակը սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո պահպանում է իր ուժը, և մինչև այդ Արդարադատության ակադեմիայում ուսուցումը չավարտած դատավորների թեկնածուների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքով

դատավորի թեկնածուների հավակնորդների համար սահմանված դրույթները:

14. Մինչև Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրը Հանրապետության նախագահի կողմից հաստատված վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակը գործում է մինչև 2019 թվականի հունվարի 1-ը: Մինչև այդ ժամկետի լրանալը Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է առաջխաղացման կարգով վերաքննիչ դատարաններում նշանակման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը:

15. Մինչև Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրը Հանրապետության նախագահի կողմից հաստատված Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակը նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու օրվանից ուժը կորցնում է:

16. Նորընտիր Հանրապետության նախագահին առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում նշանակումներն առաջնահերթ կատարում է սույն հոդվածի 13-րդ և 14-րդ մասերով նախատեսված ցուցակների հիման վրա՝ հաշվի առնելով սույն հոդվածի 22-րդ մասով նախատեսված կարգավորումները:

17. Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրվանից երեք ամսվա ընթացքում՝

1) Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է առաջին ատյանի դատարանների՝ սույն օրենսգրքով չսահմանված նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքները, դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը:

2) ընդունում է սույն օրենսգրքով նախատեսված դատական գործերը բաշխելու, վերաբաշխելու, դատական կազմերը ձևավորելու և փոխարինելու վերաբերյալ բոլոր ակտերը:

18. Մինչև Բարձրագույն դատական խորհրդի կողմից առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կենտրոնական նստավայրերի սահմանումը գործում են Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքով նախատեսված կենտրոնական նստավայրերը:

19. Սույն հոդվածի 17-րդ մասով չնախատեսված իրավական ակտերը Բարձրագույն դատական խորհուրդը, իր հաստատած ժամանակացույցի համաձայն, ընդունում է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը: Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է ժամանակացույցը իր լիազորություններն ստանձնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

20. Սնանկության դատարանը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից և մինչև այդ նշանակված սնանկության դատարանի դատավորները, այդ թվում՝ սնանկության դատարանի նախագահը, պաշտոնն ստանձնած են համարվում 2019 թվականի հունվարի 1-ից:

21. Մինչև 2019 թվականի հունվարի 1-ը՝

1) սնանկության գործերը շարունակում են վարել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում սնանկության մասնագիտացված դատավորները, և նրանց բաշխվում են միայն սնանկության գործեր.

2) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գործում է առնվազն 66 դատավորի թվակազմով.

3) Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գործում է առնվազն 13 դատավորի թվակազմով.

4) Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գործում է առնվազն 13 դատավորի թվակազմով.

5) Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գործում է առնվազն 8 դատավորի թվակազմով.

6) Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գործում է առնվազն 11 դատավորի թվակազմով:

22. Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորությունների ստանձնման օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քաղաքացիական մասնագիտացման դատավորները կարող են դիմել Բարձրագույն դատական խորհուրդ՝ սնանկության դատարանում դատավորի պաշտոնում նշանակվելու խնդրանքով: Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների՝ սնանկության դատարան տե-

դափոխման դիմումներով Բարձրագույն դատական խորհուրդը դատավորների տեղափոխման հարցի վերաբերյալ որոշում է կայացնում և նրանց թեկնածությունները կարող է առաջարկել Հանրապետության նախագահին դիմումները ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

23. 2019 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում վարվող բոլոր սնանկության գործերը մեկ ամսվա ընթացքում փոխանցվում են սնանկության դատարան, և սնանկության դատարանում դրանց բաշխման ժամանակ սույն օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը կիրառելի չէ:

24. Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրվանից Դատական դեպարտամենտի հիմնադրի լիազորություններն իրականացնում է Բարձրագույն դատական խորհուրդը, և երկու ամսվա ընթացքում Բարձրագույն դատական խորհուրդը Դատական դեպարտամենտի կանոնադրությունը և կառուցվածքը համապատասխանեցնում է սույն օրենսգրքի պահանջներին:

25. Ընդհանուր ժողովը դատավորի Էթիկայի կանոնները հաստատում է մինչև 2019 թվականի հունվարի 1-ը:

26. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքով նախատեսված՝ դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի գործունեությունը և անդամների լիազորությունները դադարում են Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրը:

27. Դատավորների առաջին հերթական գնահատումն իրականացվում է 2019 թվականի հունվարի 1-ից 2024 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում: Բարձրագույն դատական խորհուրդը մինչև 2019 թվականի հունվարի 1-ը հաստատում է դատավորների առաջին հերթական գնահատման ժամանակացույցը:

28. Սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված օտար լեզուների իմացության պահանջը կիրառվում է 2020 թվականի հունվարի 1-ից:

29. Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրվանից եռամսյա ժամկետում Դատական դեպարտամենտը, Բարձրագույն դատական խորհրդի հաստատած ժամանակացույցին համապատասխան, Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում սույն

օրենսգրքին համապատասխան կազմված այն դատավորների ցուցակները, որոնց հիման վրա յուրաքանչյուր ցուցակն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում համապատասխանաբար Հանրապետության նախագահին և Ազգային ժողովին են առաջարկվում նշանակման ենթակա դատարանների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուները:

30. Մինչև 2018 թվականի նոյեմբերի 30-ը Դատական դեպարտամենտը Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում սնանկության դատարանի այն դատավորների ցուցակը, որի հիման վրա երկշաբաթյա ժամկետում Հանրապետության նախագահին է առաջարկվում սնանկության դատարանի նախագահի թեկնածուն:

31. Մինչև Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրը դատարանների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների պաշտոններում նշանակված լինելն արգելք չէ սույն հոդվածի 29-րդ մասով նախատեսված ցուցակներում ընդգրկվելու համար:

32. Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո առաջին անգամ դատարանների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակումը կամ ընտրությունն իրականացնելիս տվյալ դատարանում դատավորի որոշակի փորձառություն ունենալու վերաբերյալ սույն օրենսգրքով սահմանված պահանջը չի կիրառվում:

2. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի գիտնական անդամներն ընտրվեցին 2018 թվականի փետրվարի 27-ին՝ գաղտնի քվեարկությամբ: Նույն նիստում Խորհրդի նորընտիր անդամներն անհատապես երդվեցին. «Ստանձնելով Բարձրագույն դատական խորհրդի անդամի բարձր պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի առջև երդվում եմ իմ պարտականությունները կատարել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան՝ ապահովելով իրավունքի գերակայությունը, երաշխավորելով դատարանների և դատավորների անկախությունը»:

Խորհրդի դատավոր անդամներն ընտրվեցին Դատավորների ընդհանուր ժողովի կողմից՝ 2018թ. մարտի 1-ին: Նույն օրը կազմակերպվեց նաև նրանց երդման արարողությունը:

Կարևոր է շեշտադրել՝ անկախ այն հանգամանքից, որ երդման արարողությունն ըստ օրենքի տեղի է ունեցել Ազգային ժողովի նիստում և Դատավորների ընդհանուր ժողովում, Խորհրդի անդամները **նախ**՝ երդվել են Հայաստանի Հանրապետության ժողովրդի առջև, **երկրորդ**՝ պարտավորվել են իրենց պարտականությունները կատարել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան, **երրորդ**՝ իրենց գերագույն խնդիրն են համարել ապահովել իրավունքի գերակայությունը, երաշխավորել դատարանների և դատավորների անկախությունը:

Սրանք են Սահմանադրությունից բխող այն հիմնարար չափանիշները, որոնցով կարող է գնահատվել Բարձրագույն դատական խորհրդի ու նրա յուրաքանչյուր անդամի գործունեությունը:

Խորհրդի գործունեության առաջնահերթ քայլերը հստակ նախատեսվել են Սահմանադրության ու Դատական օրենսգրքի եզրափակիչ և անցումային դրույթներով:

Ինչպես նշվեց, Դատական օրենսգրքի 166-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջով Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընտրությունից հետո՝ հնգօրյա ժամկետում, խորհրդի տարիքով ավագ անդամը հրավիրում է Բարձրագույն դատական խորհրդի առաջին նիստը, որի ընթացքում Ազգային ժողովի ընտրած անդամներից ընտրվում է խորհրդի նախագահ:

Խորհրդի առաջին նիստը հրավիրվեց 2018թ. մարտի 5-ին, որն օրենքով սահմանված կարգով ընտրեց Խորհրդի նախագահին:

Նկատի ունենալով, որ Սահմանադրության 174-րդ հոդվածի համաձայն Բարձրագույն դատական խորհուրդն իր լիազորությունները պետք է ստանձներ Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտման օրը՝ 2018թ. ապրիլի 9-ին, Խորհրդի անդամները մարտի 5-ից մինչև ապրիլի 9-ը որոշակի նախապատրաստական աշխատանքներ իրականացրեցին լիազորությունների ստանձնման պահից Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով նախատեսված սեղմ ժամկետներում անհետաձգելի քայլերի իրականացման ու համակարգային կառուցողական երաշխավորման ուղղությամբ: Իրավիճակի բար-

դությունը պայմանավորված էր նաև նրանով, որ նորաստեղծ Խորհուրդը պետք է երաշխավորեր դատական իշխանության համակարգում սահմանադրական բարեփոխումները կյանքի կոչելու, համակարգային ապակենտրոնացումը երաշխավորելու ողջ գործընթացի իրականացումը:

3. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ՔԱՅԼԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.1. Ժամանակային սահմանափակումներն ու օրենսդրությամբ նախատեսված քայլերի իրականացման նախադրյալները

Դատական համակարգի ապակենտրոնացման և այս ոլորտում սահմանադրական բարեփոխումները կյանքի կոչելու համար Սահմանադրության 215-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվեց, որ դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակվելը կամ ընտրվելը պետք է իրականացվի Բարձրագույն դատական խորհրդի կազմավորումից հետո՝ ոչ ուշ, քան **վեց ամսվա ընթացքում**, այսինքն՝ մինչև 2018թ. հոկտեմբերի 9-ը:

Բացի դրանից, Դատական օրենսգրքի 166-րդ հոդվածի 17-րդ մասով նախատեսեց.

- Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրվանից **երեք ամսվա ընթացքում**՝
- 1) Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է առաջին ատյանի դատարանների՝ սույն օրենսգրքով չսահմանված նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքները, դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը.
- 2) ընդունում է սույն օրենսգրքով նախատեսված դատական գործերը բաշխելու, վերաբաշխելու, դատական կազմերը ձևավորելու և փոխարինելու վերաբերյալ բոլոր ակտերը:

Նույն հոդվածի 19-րդ մասով սահմանվեց. «Մույն հոդվածի 17-րդ մասով չնախատեսված իրավական ակտերը Բարձրագույն դատական խորհուրդը, իր հաստատած ժամանակացույցի համաձայն, ընդունում է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը: Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է ժամանակացույցն իր լիազորություններն ստանձնելու օրվանից **մեկ ամսվա ընթացքում**»:

Դատական օրենսգրքի 166-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն՝ սնանկության դատարանը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ ըստ 22-րդ մասի՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորությունների ստանձնման օրվանից հետո՝ **եռամսյա ժամկետում**, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քաղաքացիական մասնագիտացման դատավորները կարող են դիմել Բարձրագույն դատական խորհուրդ՝ սնանկության դատարանում դատավորի պաշտոնում նշանակվելու խնդրանքով: Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների՝ սնանկության դատարան տեղափոխման դիմումներով Բարձրագույն դատական խորհուրդը դատավորների տեղափոխման հարցի վերաբերյալ որոշում է կայացնում և նրանց թեկնածությունները կարող է առաջարկել Հանրապետության նախագահին դիմումները ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո՝ **մեկամսյա ժամկետում**:

Միաժամանակ նախատեսվեց (166-րդ հոդված, մաս 23), որ 2019 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում վարվող բոլոր սնանկության գործերը մեկ ամսվա ընթացքում փոխանցվում են սնանկության դատարան:

Դատական օրենսգրքի 166-րդ հոդվածի 24-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրվանից Դատական դեպարտամենտի հիմնադրի լիազորություններն իրականացնում է Բարձրագույն դատական խորհուրդը, և **երկու ամսվա ընթացքում** Բարձրագույն դատական խորհուրդը Դատական դեպարտամենտի կանոնադրությունը և կառուցվածքը համապատասխանեցնում է սույն օրենսգրքի պահանջներին:

Բարձրագույն դատական խորհրդի համար նախատեսվեցին նաև մի շարք այլ հստակ ժամկետային պարտավորություններ: Մասնավորապես, համաձայն Դատական օրենսգրքի 166-րդ

հողվածի 27-րդ մասի՝ դատավորների առաջին հերթական գնահատումն իրականացվում է 2019 թվականի հունվարի 1-ից 2024 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում: Բարձրագույն դատական խորհուրդը մինչև 2019 թվականի հունվարի 1-ը հաստատում է դատավորների առաջին հերթական գնահատման ժամանակացույցը: Իսկ նույն հողվածի 29-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրվանից **եռամսյա ժամկետում** Դատական դեպարտամենտը, Բարձրագույն դատական խորհրդի հաստատած ժամանակացույցին համապատասխան, Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում սույն օրենսգրքին համապատասխան կազմված այն դատավորների ցուցակները, որոնց հիման վրա յուրաքանչյուր ցուցակն ստանալու օրվանից **մեկամսյա ժամկետում** համապատասխանաբար Հանրապետության նախագահին և Ազգային ժողովին են առաջարկվում նշանակման ենթակա դատարանների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուները:

Բացի դրանից, նույն հողվածի 30-րդ մասով սահմանվեց, որ մինչև 2018 թվականի նոյեմբերի 30-ը Դատական դեպարտամենտը Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում սնանկության դատարանի այն դատավորների ցուցակը, որի հիման վրա երկշաբաթյա ժամկետում Հանրապետության նախագահին է առաջարկվում սնանկության դատարանի նախագահի թեկնածուն:

Բերված իրավակարգավորումներից ակնհայտ է, որ վերոնշյալ բոլոր աշխատանքները պետք է իրականացվեին Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների ստանձնման պահից առավելագույնը վեց ամիսների ընթացքում: Այդ ժամանակահատվածը համընկավ երկրում հեղափոխական բուռն իրադարձությունների, հանրային մեծ արձագանք ստացած մի շարք դատավարությունների, դրանցով պայմանավորված՝ դատարանների նկատմամբ հանրային ճնշման աննախադեպ ալիքի հետ:

Լուրջ խնդիրներ առաջացան նաև Դատական օրենսգրքի բազմաթիվ դրույթների՝ իրավական որոշակիության տեսանկյունից խնդրահարույց լինելու, անհստակության ու թերի իրավակարգավորումների, «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքը ժամանակին չընդունելու պատճառներով:

րով (այն մինչև ապրիլի 9-ն ընդունելու փոխարեն ընդունվեց միայն հունիսի 13-ին և ուժի մեջ մտավ հուլիսին):

Բարձրագույն դատական խորհուրդը լիազորությունների ստանձնման պահից մինչև 2019 թվականի ապրիլ ամիսը չունեցավ իր հիմնական նստավայրը և աշխատանքային անհրաժեշտ պայմաններ, ինչը լրացուցիչ խոչընդոտներ ստեղծեց խորհրդի աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման համար: Ծենքային խիստ սահմանափակ ու ոչ բարենպաստ պայմանները որոշակի խոչընդոտ հանդիսացան նաև Բարձրագույն դատական խորհրդի գործունեության արդյունքների լիարժեք լուսաբանումն ապահովելու և լրատվության միջոցների հետ աշխատանքները պատշաճ կազմակերպելու գործում:

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով նախատեսված ընթացակարգերն իրավասու մարմինների կողմից ժամանակին չընդունվելու պատճառով խաթարվեցին Դատական դեպարտամենտի հատկապես կենտրոնական մարմնի կազմավորման ու արդյունավետ գործունեության ապահովման աշխատանքները:

Այս մեկնարկային իրավիճակում Բարձրագույն դատական խորհուրդը պետք է կարողանար.

ա) ապահովել դատարանների բնականոն գործունեությունը՝ թույլ չտալով համակարգային կայունության էական խաթարում,

բ) իրականացնել օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունների՝ սահմանված ժամկետներում կատարումը,

գ) անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել դատական իշխանության անկախության ամրապնդման ու արդարադատության արդյունավետության և մատչելիության երաշխավորման համակարգային բարեփոխումներ իրականացնելու համար:

3.2. Խորհրդի որդեգրած սկզբունքներն ու ծրագրային մոտեցումները

Բարձրագույն դատական խորհուրդը լիազորությունների ստանձնման պահից իր գործունեության հիմքում դրել է հետևյալ սկզբունքները.

- դատական իշխանությունը դիտարկել ոչ թե որպես ինստիտուտների համակարգ, այլ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում իր համարժեք տեղն ու դերն ունեցող իշխանություն,

- դատական իշխանության գերխնդիրը համարել իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացումը և մարդու արժանապատվության ու հիմնական իրավունքների երաշխավորումը,
- Հայաստանի Հանրապետությունում արդարադատության հիմնական բնութագրիչները պետք է դառնան անկախությունը, անաչառությունը, արդյունավետությունը և մատչելիությունը,
- դատական իշխանության հանրային հաշվետվողականության ապահովումը դիտարկել որպես արդարադատության նկատմամբ հանրային վստահության գլխավոր երաշխիք,
- դատավորի մասնագիտական որակների, ներքին անկախության ու պատասխանատվության հետևողական բարձրացման, բարելավարքության արդի որակների արմատավորման, մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորի առաքելության լիարժեք ստանձնման ճանապարհով ապահովել դատարանի նկատմամբ հանրային ընկալման արմատական վերափոխումը,
- առաջնահերթ խնդիր համարել իշխանության տարբեր մարմինների, միջազգային կառույցների, քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվության միջոցների հետ լայն գործընկերային մոտեցումների արմատավորումը:

Բարձրագույն դատական խորհրդի գործունեությունն իրականացվում է համակարգային մոտեցմամբ՝ խնդիրների լուծումը դիտարկելով փոխալայմանավորվածության մեջ, իրականացնելով ծրագրանապատակային քաղաքականություն:

Հիշյալ սկզբունքներից ու մոտեցումներից ելնելով Բարձրագույն դատական խորհուրդն իր գործունեության անցած ամիսների ընթացքում իրականացրել է իրավիճակի համակարգային բազմագործոն ախտորոշում, անհետաձգելի, ընթացիկ ու ռազմավարական խնդիրների հստակեցում, մշակել է դրանց լուծման հայեցակարգային մոտեցումներն ու ռազմավարական հիմնական ուղղությունները:

3.3. Ձեռնարկված անհետաձգելի քայլերը դատական իշխանության ապակենտրոնացման ու գործունեության իրավական երաշխիքների ամրապնդման ուղղությամբ

Հայաստանում տասնամյակների ընթացքում ձևավորվել էր դատական իշխանության բրգաձև մի համակարգ, որտեղ առանցքային դեր էր վերապահված անփոփոխելիության սկզբունքով նշանակվող դատարանների նախագահներին: 2015թ. Սահմանադրական փոփոխությունների կարևոր քայլերից մեկը դատական իշխանության ապակենտրոնացումն էր, որը, մասնավորապես, ներառեց անկախ սահմանադրական մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի ձևավորումը, դատավորների ինքնակառավարման մարմնի՝ Դատավորների ընդհանուր ժողովի նոր կարգավիճակը, դատավորների ընտրության ու նշանակման նոր կարգը, դատարանների նախագահների որակական նոր կարգավիճակը:

Սահմանադրաիրավական լուծումների հիմնական նպատակն էր երաշխիքներ ստեղծել դատավորի ու դատարանի անկախության համար, ապահովել դատավորի վճռական դերակատարությունն արդարադատություն իրականացնելիս, երաշխավորել նրա հաշվետվողականությունն օրենքի առջև, նվազագույնի հասցնել սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը:

Անկախ, ինքնուրույն և օրենքի առջև հաշվետու դատական իշխանության կայացումը համարվեց նաև Դատական օրենսգրքի իրավակարգավորումների գլխավոր խնդիրը:

Վերջինիս գործնական իրականացման գլխավոր պարտականությունը դրվեց Բարձրագույն դատական խորհրդի վրա, որը դա պետք է երաշխավորեր իր լիազորությունների իրականացման միջոցով՝ Սահմանադրությամբ ու օրենքով սահմանված ժամկետներում ապահովելով նաև անցումային խնդիրների արդյունավետ լուծումը:

Լիազորություններն ստանձնելու հենց առաջին օրը՝ 2018 թ. ապրիլի 9-ին, Խորհուրդն ընդունեց երկու կարևոր որոշում. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի ուժով կատարման ենթակա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված և ընդունման ենթակա իրավական ակտերն

ընդունելու ժամանակացույցը հաստատելու մասին»: Այդ որոշումներով ծրագրանպատակային բնույթ հաղորդվեց Խորհրդի հետագա գործողություններին:

2018թ. ապրիլի 12-ին Խորհուրդն ընդունեց ելակետային նշանակություն ունեցող մեկ այլ որոշում, որով սահմանվեց.

«1. Անթույլատրելի համարել դատավորի գործունեությանը որևէ միջամտություն, այդ թվում՝ կոնկրետ գործի քննության առնչությամբ հանրային իշխանության ցանկացած ներկայացուցչի հեռախոսային կամ այլ բնույթի հաղորդակցությունը գործը քննող դատավորի կամ դատարանի նախագահի հետ, ինչպես նաև այդ առնչությամբ հրապարակային հայտարարություն անելը: Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝ ցանկացած սուբյեկտի կողմից քննության առարկա գործի առնչությամբ դատավորից ընդհուպ տեղեկատվություն ստանալու փորձը համարել միջամտություն դատավորի գործունեությանը և դատարանի անկախությանը:

2. Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ սույն որոշման 1-ին կետով նախատեսված միջամտության փաստի առկայության դեպքում դատավորը պարտավոր է անհապաղ սահմանված կարգով տեղյակ պահել Բարձրագույն դատական խորհրդին»:

Բարձրագույն դատական խորհուրդը կարևոր է համարում, որ տվյալ որոշման առաջին մասում կատարված շեշտադրումները բազմիցս հնչեցվել են նաև քաղաքական իշխանությունների կողմից:

Դատական իշխանության ապակենտրոնացման ու դատական գործերի բաշխման նախկին կարգին բնորոշ սուբյեկտիվ մոտեցումների հաղթահարման համար կարևոր նշանակություն ունեցան դատական նստավայրերի օպտիմալացման ու դատարանների նախագահների կողմից դատական գործերի հասցեական բաշխման պրակտիկայի բացառման ուղղությամբ Խորհրդի կողմից ձեռնարկված քայլերը: Մասնավորապես, կարգ սահմանվեց, որ գործի էլեկտրոնային բաշխումը պետք է հասնի կոնկրետ դատավորին՝ առանց նախագահի միջամտության, և յուրաքանչյուր նստավայրում գործերը պետք է բաշխվեն մեկից ավելի դատավորների միջև:

Տվյալ խնդրի լուծման համար կարևոր իրավական նախադրյալներ ստեղծեցին Խորհրդի մի շարք որոշումներ: Մասնավորա-

պես, դա վերաբերում է «Դատական օրենսգրքով չսահմանված՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքները սահմանելու, դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը հաստատելու մասին» ԲԴԽ-23-Ն-1 և «Դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը, գործերի վերաբաշխման, կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու կարգը և դատավորներին հանձնվող գործերի կոնկրետ տոկոսաչափեր սահմանելու մասին» ԲԴԽ-23-Ո-49 որոշումներին:

Դատական իշխանության ապակենտրոնացման և անցումային խնդիրների արդյունավետ լուծումն ապահովելու նպատակով միայն 2018թ. ապրիլ-օգոստոս ամիսների ընթացքում Բարձրագույն դատական խորհուրդն ընդունել է թվով 91 որոշում, կազմակերպել է 50-ից ավելի գաղտնի քվեարկություն, ընտրել է 12 դատարանի նախագահի և 27 դատավորի թեկնածություն և նշանակման համար ներկայացրել է Հանրապետության նախագահին: Հանրապետության նախագահի կողմից որևէ թեկնածուի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով առարկություն չի ներկայացվել:

Ընդհանուր առմամբ, 2018 թվականին Խորհրդի կողմից կազմակերպվել է թվով 104 գաղտնի քվեարկություն, որին մասնակից է եղել 503 անձ: Խորհրդի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա կատարվել է դատավորի 68 նշանակում, որից՝

18-ը նշանակվել են դատարանների նախագահներ (այդ թվում՝ սնանկության դատարանի նախագահը),

22-ը նշանակվել են նոր դատավորներ (2016-2017 թվականներին ընտրված և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված կազմից, քանի որ Դատական օրենսգրքի 166-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ «Մինչև Բարձրագույն դատական խորհրդի առաջին կազմի կողմից իր լիազորություններն ստանձնելու օրը Հանրապետության նախագահի կողմից հաստատված դատավորների թեկնածությունների ցուցակը սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո պահպանում է իր ուժը, և մինչև այդ Արդարադատության ակադեմիայում ուսուցումը չավարտած դատավորների թեկնածուների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքով դատավորի թեկնածուների հավակնորդների համար սահմանված դրույթները»),

28 գործող դատավորները տեղափոխվել են մեկ դատարանից մեկ այլ դատարան, այդ թվում՝

10-ը Դատական օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված կարգով տեղափոխվել են մեկ առաջին ատյանի դատարանից մեկ այլ առաջին ատյանի դատարան,

12-ը տեղափոխվել են նորաստեղծ սնանկության դատարան,

7-ը տեղափոխվել են մեկ ատյանի դատարանից մեկ այլ ատյանի դատարան:

Խորհուրդը 09.04.2018թ.-ից մինչ 28.02.2019թ. հրավիրել է 75 նիստ, դատարանների հետ կազմակերպել է թվով 15 հանդիպում, որից 5-ը՝ արտագնա:

Կազմակերպվել են նաև թվով 26 աշխատանքային քննարկումներ՝ դատավորների, Արդարադատության նախարարության, միջազգային փորձագետների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ամփոփելով Սահմանադրության և Դատական օրենսգրքի անցումային դրույթներով նախատեսված պարտավորությունների կատարման վիճակը՝ առանց վարանելու կարող ենք արձանագրել, որ անկախ այդ շրջանում առկա հասարակական-քաղաքական արտակարգ ու աննախադեպ իրավիճակից, Բարձրագույն դատական խորհրդին հաջողվեց լիարժեք իրացնել օրենսդրության պահանջները, ապահովել դատական իշխանության համակարգային ապակենտրոնացումը, երաշխավորել դատարանների բնականոն գործունեությունը, նախադրյալներ ստեղծել համակարգային բարեփոխումների նոր խնդիրների լուծման համար:

3.4. Դատարանակազմական բնույթի աշխատանքները

Ինչպես նշվեց, իր լիազորությունների ստանձնման պահից վեց ամիսների ընթացքում Բարձրագույն դատական խորհուրդը պարտավոր էր բոլոր դատարաններում կազմակերպել նոր կարգավիճակով նախագահների ընտրություն: Ընդ որում, Դատական օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն.

1. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետը երեք տարի է:

2. Ի լրումն դատավորի լիազորությունների՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահը՝

1) ապահովում է դատարանի բնականոն գործունեությունը, ներառյալ՝ վերահսկում է դատարանի աշխատակազմի գործունեությունը.

2) դատավորներին տրամադրում է արձակուրդ.

3) ներկայացնում է դատարանն այլ մարմինների հետ հարաբերություններում.

4) դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով դիմում է Բարձրագույն դատական խորհուրդ, Ընդհանուր ժողով և Ընդհանուր ժողովի հանձնաժողովներ.

5) դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին համապատասխան հաղորդում է ներկայացնում Ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովին (այսուհետ՝ Կարգապահական հարցերի հանձնաժողով).

6) իրականացնում է այլ լիազորություններ:

3. Առաջին ատյանի դատարանի նախագահը Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով հաստատում է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների հերթապահությունների ժամանակացույցը և դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակում է ժամանակացույցով հերթապահությանը ներգրավված դատավորների նստավայրերը:

Միաժամանակ, Դատական օրենսգրքի 33-րդ հոդվածով Վճռաբեկ դատարանի նախագահի համար սահմանվեց, որ.

1. Վճռաբեկ դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետը վեց տարի է:

2. Ի լրումն Վճռաբեկ դատարանի պալատի դատավորի լիազորությունների՝ Վճռաբեկ դատարանի նախագահը՝

1) ապահովում է Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունը, ներառյալ՝ վերահսկում է Վճռաբեկ դատարանի աշխատակազմի գործունեությունը.

2) Վճռաբեկ դատարանի դատավորներին տրամադրում է արձակուրդ.

3) ներկայացնում է Վճռաբեկ դատարանը այլ մարմինների հետ հարաբերություններում.

4) Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով դիմում է Բարձրագույն դատական խորհուրդ, Ընդհանուր ժողով և Ընդհանուր ժողովի հանձնաժողովներ.

5) Վճռաբեկ դատարանի դատավորի, այդ թվում՝ պալատի նախագահի կողմից դատավորի վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին համապատասխան հաղորդում է ներկայացնում Կարգապահական հարցերի հանձնաժողով:

6) իրականացնում է այլ լիազորություններ:

3. Արձակուրդի կամ գործուղման դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը պալատի նախագահներից մեկին նշանակում է իրեն փոխարինող:

Ներկայացված իրավակարգավորումներից ակնհայտ է, որ դատարանների նախագահների համար ոչ միայն սահմանվեցին պաշտոնավարման հստակ ժամկետներ, այլև որոշակիորեն ամրագրվեց, որ նախագահի համար նախատեսված սահմանափակ լիազորությունները կատարվում են ի լրումն դատավորի լիազորությունների: Դատարանների նորանշանակ նախագահները ոչ միայն պետք է կարողանային հաղթահարել նախկին կարգավիճակով պայմանավորված իներցիան, այլև դատավորի գործառույթը ճիշտ ձևով ներդաշնակելին վարչակազմակերպական գործառույթի հետ:

Երկրում ստեղծված նոր իրողությունների, գործառութային նոր լուծումների պայմաններում անհրաժեշտություն առաջացավ մինչև դատարանների նախագահների թեկնածուների ընտրությունների կազմակերպումը հանդիպումներ ու քննարկումներ կազմակերպել բոլոր դատարաններում: Դա նաև դատավորների մոտիվացիան փոխելու, նախկին տարաբնույթ սուբյեկտիվ դրսևորումներից ձերբագատվելու, սահմանադրաիրավական նոր իրողությունների պայմաններում արդյունավետ գործելու ազդակ հաղորդելու անհրաժեշտությամբ էր պայմանավորված: Բարձրագույն դատական խորհուրդը մայիս-օգոստոս ամիսներին ամբողջ կազմով հանդիպումներ ունեցավ առանց բացառության բոլոր աստիճանների դատարանների դատավորների հետ:

Հանդիպումների ժամանակ նաև ակնհայտ դարձավ, որ ամիսներ առաջ հապճեպորեն Երևանի մեկ միասնական դատարանի ձևավորումը հարակից լուրջ խնդիրներ է ստեղծել, որոնք անհետաձգելի հաղթահարման անհրաժեշտություն ունեն:

Հանդիպում-քննարկումների արդյունքում բոլոր դատարաններում հնարավոր եղավ օրենքով սահմանված ժամկետներում ապահովել դատարանների նախագահների թեկնածուների ընտրությունն ու նշանակումը:

Բարձրագույն դատական խորհուրդն ապահովեց նաև սահմանված կարգով սնանկության դատարանի ձևավորումը, դատարանի համապատասխան նստավայրով ու աշխատակազմով ապահովումը: Մնանկության դատարանը 2019 թվականի հունվարի 1-ից ստանձնեց իր գործառույթների իրականացումը:

Վերջին գործընթացը վեր հանեց նաև իրավական լուրջ անհատակություններ: Մասնավորապես, Կառավարությունը 2002 թվականի մարտի 2-ին՝ ի կատարումն «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունական (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների, ընդունել է թիվ 190 որոշումը «Անվճարունակության կառավարիչների կողմից աճուրդի անցկացման կանոնակարգը հաստատելու մասին»: 2003 թվականի դեկտեմբերի 17-ին ուժի մեջ է մտել «Անվճարունակության (սնանկության) մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-17-Ն օրենքը: 2003 թվականի նոյեմբերի 22-ից ուժի մեջ է մտել Օրենքը հրապարակային սակարկությունների մասին, իսկ 2007 թվականի փետրվարի 10-ից՝ «Մնանկության մասին» ՀՀ նոր օրենքը: Չնայած Կառավարության հիշյալ որոշումն իրավունքի ուժով այլևս չէր կարող գործել, սակայն փաստն այն է, որ այն չի վերանայվել և ներկայումս սնանկության գործերով հրապարակային սակարկությունների կազմակերպման հստակ իրավակարգավորում առկա չէ: Նման իրավիճակը նաև լուրջ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում և անհետաձգելի շտկման անհրաժեշտություն ունի:

Բացի դրանից, նկատի ունենալով, որ ներկայումս մեր երկրի համար առաջնահերթություն են ստանում ներդրումների հուսալի պաշտպանության հետ կապված վեճերով առավել արդյունավետ արդարադատություն իրականացնելու հիմնախնդիրները, կարծում ենք, Դատական օրենսգրքի փոփոխության արդյունքում անհրաժեշտ է.

1. սնանկության դատարանը վերանվանել «սնանկության և ներդրումային վեճերի քննության դատարան»,
2. այս դատարանում դատավորների թիվ սահմանել մինչև 18 դատավոր,
3. նախատեսել դատավարական ընթացակարգերի համարժեք փոփոխություններ՝ հստակեցնելով գործերի ընդդատության շրջանակները,

4. վերաքննիչ քաղաքացիական դատարանում ձևավորել սնանկության և ներդրումային վեճերով բողոքների քննության երկու մասնագիտացված կազմեր՝ երեքական դատավորով,

5. Վճռաբեկ դատարանում առանձնացնել քաղաքացիական և վարչական մասնագիտացումներով պալատներ, ինչը կերաշխավորի դատարանների մասնագիտացման սկզբունքի առավել հետևողական իրացումը:

Վերլուծելով Երևան քաղաքում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում առկա կացությունը՝ Բարձրագույն դատական խորհուրդը հանգել է նաև այն հետևությանը, որ անհրաժեշտ է քրեական մասնագիտացման համար կառուցել մեկ միասնական նստավայր, որը կունենա նաև համապատասխան դատավարական ենթակառուցվածքներ, ինչպես նաև հնարավոր կլինի ապահովել արդյունավետ հերթապահություն:

3.5. Բարձրագույն դատական խորհրդի նորմատիվ որոշումները

Բարձրագույն դատական խորհուրդն իր լիազորությունների ստանձնումից մինչև 28.02.2019թ. ընդունել է թվով 246 որոշում, որից 8-ը՝ ենթաօրենսդրական նորմատիվ, 223-ը՝ ներքին և անհատական, ինչպես նաև 15-ը՝ աշխատակարգային: Ընդ որում, նկատի ունենալով, որ խոսքն այնպիսի իրավակարգավորումների մասին է, որոնք ոչ միայն նախկինում երբևէ որևէ համանման իրավական ակտով կարգավորված չեն եղել, այլև ձեռք էին բերել աննախադեպ գործնական նշանակություն, Բարձրագույն դատական խորհրդի կողմից հնարավորինս սեղմ ժամկետում արդեն առաջին երեք ամիսների ընթացքում անմիջականորեն մշակվեցին և շրջանառության մեջ դրվեցին առավել հրատապ նախագծերը:

Առանձին դեպքերում, նախկինում շրջանառության մեջ դրված համանման նորմատիվ ենթաօրենսդրական ակտերը ոչ միայն իրենց ընդգրկվածության ակնհայտ սահմանափակ բնույթով, այլև իրավաբանական տեխնիկայի կանոնների շրջանցման տեսանկյունից խիստ խոցելի էին և որևէ կերպ չէին կարող անգամ որպես հիմք դիտարկվել Բարձրագույն դատական խորհրդի նախաձեռնած իրավաստեղծ գործունեությունում:

Նախագծերի վերջնական տեքստերը պատրաստելիս համարժեք նկատի առնվեցին ինչպես դատավորների, այնպես էլ

բազում իրավագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների եզրակացությունները:

Բնորոշ է այն, որ վերը նշված ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը ներկայումս լայն ճանաչում ունեն, մասնավորապես, դրանց հղումների կարելի է հանդիպել ոչ միայն Բարձրագույն դատական խորհրդի փաստաթղթերում, դատավորների պաշտոնական գրություններում, այլև զանգվածային լրատվության միջոցների նյութերում:

Սկստի ունենալով առանձին ենթաօրենսդրական ակտերի խիստ առանցքային գործնական նշանակությունը, հատկապես՝ հանրային շահերը շոշափելու տեսանկյունից, Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշ ենթաօրենսդրական ակտեր հանձնվել են միջազգային փորձագիտական կառույցներ, որտեղից արդեն իսկ ստացված եզրակացությունները ներկայացվում են լայն հրապարակային քննարկումների, մասնավորապես, աննախադեպ ընդգծված հետաքրքրություն դրսևորվեց «Չանգվածային լրատվության միջոցների հետ Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնների» նկատմամբ, որի առնչությամբ փորձագիտական եզրակացության քննարկումները դեռևս ընթացքի մեջ են:

3.6. Իրավական ակտերի նախագծերի փորձաքննության ուղղությամբ կատարված աշխատանքները

Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիք է տալիս: Այս նորմը համընդհանուր բնույթ ունի և հավասարապես վերաբերում է օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցող հանրային իշխանության բոլոր սուբյեկտներին: Միաժամանակ, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության Վարչապետի կողմից հիշյալ օրենսդրական նորմի առնչությամբ ընդգծվում է խիստ հետևողականություն, ինչի արդյունքում Կառավարության նիստի օրակարգում ընդգրկվում են դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի միայն այն նախագծերը, որոնց առնչությամբ առկա է Բարձրագույն դատական խորհրդի դրական եզրակացությունը: Բնորոշ է այն, որ առանձին

օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի կողմից տրված բացասական եզրակացությունների հիմքով պաշտոնական շրջանառության մեջ դրված մի շարք օրինագծեր (օրինակ՝ դատավորների կենսաթոշակների նվազեցման մասին և այլն) չեն ներառվել Կառավարության նիստերի օրակարգ:

Այս ընթացքում Բարձրագույն դատական խորհուրդը պաշտոնական փորձագիտական եզրակացություն է տվել թվով 105 նախագծերի վերաբերյալ (օրենքներ, կառավարության որոշումներ և այլն): Ընդ որում, դրանք եղել են անվերապահորեն համալիր ու պատշաճ վերլուծությունների հիման վրա կազմված եզրակացություններ և վերաբերել են խիստ էական հարցադրումների:

3.7. Կադրային բանկի ձևավորումը (հավակնորդների ու թեկնածուների ընտրություն, ուսուցում և առաջխաղացման ցուցակների կազմում)

Բարձրագույն դատական խորհուրդը 2018 թվականի օգոստոսի 23-ին որոշում է կայացրել ՀՀ առաջին ատյանի դատարաններում դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինների համալրման մասին:

Դատական դեպարտամենտի դատավորներին և թեկնածուներին առնչվող հարցերի վարչության կողմից կազմակերպվել է դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինները համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր քննությունների, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդում անցկացված հարցազրույցի փուլի ողջ գործընթացը (07.09.2018-20.12.2018թթ.):

Բարձրագույն դատական խորհրդին ներկայացվել է որակավորման ստուգմանը մասնակցելու նպատակով Դատական օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևի թվով 90 հայտ, որոնցից 42-ը՝ քաղաքացիական, 26-ը՝ քրեական, 12-ը՝ վարչական մասնագիտացմամբ բաժինները համալրելու նպատակով: Թվով 10 հայտ ներկայացվել է իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց համար:

Վերոնշյալ հայտերի ստուգման արդյունքում Դատական դեպարտամենտն օրենքով սահմանված կարգով կայացրել է հայտի

ընդունումը մերժելու մասին թվով 9 (քաղաքացիական՝ 7 (այդ թվում՝ 1 գիտնական), քրեական՝ 1, վարչական՝ 1) որոշում:

Որակավորման գրավոր քննությանը ներկայացած և մասնակցած թվով 72 հավակնորդներից հարցազրույցի փուլ են անցել թվով 24 (քաղաքացիական՝ 11, քրեական՝ 5, վարչական՝ 8) հավակնորդներ:

Բարձրագույն դատական խորհուրդը 2018 թվականի դեկտեմբերի 20-ին ԲԴԽ-59-Ո որոշմամբ հաստատել է 2018 թվականի դեկտեմբերի 17-20-ը տեղի ունեցած փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա կազմված դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը՝ քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացման բաժիններում, որի համաձայն քաղաքացիական մասնագիտացմամբ՝ թվով 12, քրեական մասնագիտացմամբ՝ թվով 5 և վարչական մասնագիտացմամբ՝ թվով 2 հավակնորդների թեկնածություններ ներկայացվել են Արդարադատության ակադեմիա՝ համապատասխան ուսումնառություն ստանալու նպատակով: Ընդ որում, վերոհիշյալ հավակնորդներից վեցն իրավաբանական գիտությունների թեկնածուներ են:

Արդեն 2019 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ Բարձրագույն դատական խորհուրդը նախաձեռնեց դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրում, հաշվի առնելով, որ ըստ Լուրջան բոլոր մասնագիտացմամբ ցուցակները նման անհրաժեշտություն ունեին:

2018 թվականի հունիսից մինչև օգոստոս կազմակերպվել են վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում դատավոր նշանակելու համար առաջխաղացման ցուցակների կազմման և հաստատման աշխատանքներ: Մասնավորապես, դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինները կազմելու արդյունքում քաղաքացիական մասնագիտացման բաժնում ընդգրկվել է թվով 3 թեկնածու, իսկ քրեական մասնագիտացման բաժնում՝ 2 թեկնածու:

Նույն ժամանակահատվածում կազմակերպվել է նաև Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի կազմման գործընթացը, որի արդյունքում համապատասխան առաջարկություն է ներկայացվել Ազգային ժողով:

3.8. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության ապահովման ուղղությամբ իրականացված քայլերը

Բարձրագույն դատական խորհրդում դատական իշխանության հանրային հաշվետվողականությունը դիտարկվում է որպես առաջնահերթ ուղղություն: Այդ ուղղությամբ ներկայումս ոչ միայն մշակվում են լայնածավալ ու արդիական էլեկտրոնային հաղորդակցության ծրագրեր, ընդգրկուն ու թափանցիկ պաշտոնական կայք և այլն, այլև ընդունվել են՝ հրապարակային հաշվետվողականության կարևոր բաղադրիչ դիտարկվող զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերության իրավական չափանիշները՝ հանձինս «Չանգվածային լրատվության միջոցների հետ Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնների»:

Սույն հաղորդումը ևս դիտարկվում է որպես պատասխանատու միջոց՝ դատական իշխանության հանրային հաշվետվողականությունը երաշխավորելու տեսանկյունից: Արդեն կարճ ժամանակ անց, երբ կլուծվեն գուտ ծրագրային ու համակարգչային տեխնիկական խնդիրները, հանրությունը հնարավորություն կունենա լինելու դատական իշխանության հանրային հաշվետվողականության միանգամայն նոր հարթակի ականատեսը, ավելին՝ յուրաքանչյուր անձ ձեռք կրերի անմիջապես դատական իշխանության պաշտոնական կայքում իր տեսակետը հայտնելու, ինչպես նաև առաջարկություններ ու դիտարկումներ ներկայացնելու փաստացի հնարավորություն:

Դատարանների գործունեության վերաբերյալ տեղեկատվության սակավությունը հանգեցնում է դատական իշխանության գործունեության արդյունավետության նկատմամբ թերահավատությանը և անվստահությանը: Ընդ որում, ուսումնասիրությունները վկայում են, որ հասարակությունը բավականին աղոտ պատկերացումներ ունի դատական իշխանության՝ որպես իշխանության ինքնուրույն ճյուղի վերաբերյալ, որի առաջնային առաքելությունն է մարդու իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ պետական իշխանության մարմինների ոտնձգություններից:

Ավելին, փորձը ցույց է տալիս, որ տարիներ շարունակ հասարակությունը հիմնականում տեղեկացվում է առանձին հանրային հետաքրքրություն ներկայացնող գործերի ընթացքի մասին, այն էլ՝ հատվածական և հիմնականում բացասական լույսի ներ-

քո: Իսկ այն, թե ինչ այլ կարգի գործեր են քննում դատարանները, ինչ քանակի և ծավալի իրավունքների խախտումներ են արձանագրվել և վերականգնվել դատական կարգով, ինչպիսի մարտահրավերներ են ամենօրյա ռեժիմով հաղթահարվում դատական իշխանության կողմից, ինչ որակավորում ունեցող մասնագետներով է տարեցտարի համայրվում դատական համակարգը և այլն, մնում է չլուսարանված:

Բարձրագույն դատական խորհուրդը նախաձեռնել է միջազգային կառույցների հետ դատական իշխանության հանրային հաշվետվողականության հարցադրումներով փորձագիտական հետազոտություններ, որոնց արդյունքները կիրառարկվեն և կդառնան հանրային քննարկումների նյութ: Միաժամանակ, Բարձրագույն դատական խորհուրդը, իր սահմանադրական առաքելության շրջանակում, մշտապես հետևելու է, որպեսզի դատական իշխանության հանրային հաշվետվողականությունը որևէ կերպ չընկալվի որպես դատարանների և դատավորների անկախությունը խաթարելու միջոց:

3.9. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի «նեղ տեղերն» ու դրանց հետևանքները

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքն ուժի մեջ մտավ 2018 թվականի ապրիլի 9-ից: Հիմնականում երաշխավորելով դատական իշխանության ոլորտում Սահմանադրության փոփոխությունների իրացումը և իրավական երաշխիքներ սահմանելով դատական իշխանության ինստիտուտների կազմավորման ու գործունեության համար, միաժամանակ պարզվեց, որ Դատական օրենսգիրքը բովանդակում է նաև որոշ խնդրահարույց դրույթներ, որոնք բավարար չափով համահունչ չեն դատարանակազմության սահմանադրական ոգուն և բովանդակում են ոչ միայն անհարկի հակասական, այլև խրթին ու թերի իրավակարգավորումներ: Բարձրագույն դատական խորհուրդն ստեղծված իրավիճակում փորձեց նախապատվությունը տալ ինչպես իրավունքի, այնպես էլ օրենքի անալոգիայի կիրառմանը, որպիսի ինստիտուտը, ինչպես հայտնի է, գրեթե կիրառում չունի հայրենական իրավական համակարգում: Այսպիսի մոտեցումը՝ մի կողմից, հնարավորություն տվեց արդեն կարճ ժամանակ անց համալիր պատկերացում կազմել օրենսդրության

թերությունների վերաբերյալ, մյուս կողմից՝ դրվեց իրավունքի և օրենքի անալոգիայի կիրառման համար խիստ անհրաժեշտ իրավական մշակույթի ձևավորման սկիզբը:

Բարձրագույն դատական խորհրդի աշխատանքների առնչությամբ կառանձնացնենք դրանցից մի քանիսը:

Դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 5-րդ մասը, մասնավորապես, սահմանում է. «Դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները կազմելու և հաստատելու, նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին Հանրապետության նախագահին առաջարկելու դեպքերում Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ գաղտնի քվեարկությամբ»:

Առաջին հայացքից թվում է, որ պարզ իրավակարգավորում է: Սակայն գործնականում խնդրահարույց ու անտրամաբանական է «...նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին Հանրապետության նախագահին առաջարկելու դեպքերում Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ գաղտնի քվեարկությամբ» դրույթը: Թեկնածուների հավակնորդները նախապես ընտրվում են գաղտնի քվեարկությամբ: Պետությունը հսկայական միջոցներ է ծախսում նրանց ուսուցման համար: Թեկնածուների հավակնորդները հանձնում են ավարտական քննություններ: Կրկին գաղտնի քվեարկությամբ նշանակման ներկայացնելու ժամանակ հստակ չէ, թե ինչ որակներ պետք է հիմք ընդունի Խորհուրդը և ինչպես պետք է ձևավորվի Խորհրդի անդամների ներքին համոզմունքը՝ գաղտնի քվեարկելու համար: Նախկին իրավակարգավորումներն այս փուլի համար կարևորել էին բացառապես ընթացակարգային հարցերի առնչությամբ Խորհրդի դիրքորոշման հստակեցումը, և դա միանգամայն ընկալելի ու ընդունելի մոտեցում էր: Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ նշված նորմի վերանայումն անհրաժեշտություն է:

Դատական օրենսգիրքը չի հստակեցրել նաև ցուցակներ «կազմել և հաստատել» գործընթացների շրջանակներում գաղտնի քվեարկության ինստիտուտի կիրառման առանձնահատուկ բնույթը:

Դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասը նախա-

տեսում է, որ դատավորի թափուր տեղ առաջանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը գրավոր առաջարկությունը թեկնածուին ներկայացնում է համապատասխան հիմքն առաջանալու օրվանից եռօրյա ժամկետում: Միաժամանակ հստակ սահմանված է տարբեր թեկնածուներին առաջարկ ներկայացնելու հերթականությունը: Այս իրավակարգավորումն իմաստ է ստանում միայն մեկ թափուր տեղ առաջանալու պարագայում: Իսկ եթե միաժամանակ առաջացել են մի քանի թափուր տեղեր, ապա առկա իրավակարգավորման պարագայում վերջին թափուր տեղը երեք օրվա փոխարեն կարող է համալրվել շաբաթներ հետո միայն, դա էլ այն դեպքում, երբ առաջին թափուր տեղի համար համալրման իրավասություն ունեցող թեկնածուներից վերջին համարը չի հրաժարվում նշանակումից և դուրս չի մնում ցուցակից: Առկա իրավակարգավորման պայմաններում հնարավոր է դառնում այնպիսի իրավիճակ, երբ բոլոր թեկնածուները կարող են մեկ կոնկրետ տեղում առաջադրվելուց խուսափելու դեպքում դուրս մնալ ցուցակից և միաժամանակյա կամ նույնիսկ մեկ օրվա տարբերությամբ առաջացած բոլոր թափուր տեղերը մնան չհամալրված:

Թափուր տեղի համար եռօրյա ժամկետում առաջարկություն անելու վերոնշյալ նորմը հիմնավոր չէ ու խնդրահարույց է: Գործնականում հնարավոր փակուղային իրավիճակը հաղթահարելու համար Բարձրագույն դատական խորհուրդը 2018թ. ԲԴԽ-43-Ո-122 որոշմամբ սահմանեց.

«Բարձրագույն դատական խորհրդի 2018թ. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-13-Ո-24 որոշման հավելվածի 6-րդ գլուխը լրացնել 77.1.կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«77.1. Դատավորի թափուր տեղ առաջանալիս մեկօրյա ժամկետում Դատական դեպարտամենտը Բարձրագույն դատական խորհրդին որոշման նախագիծ է ներկայացնում՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 115-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված կարգով թեկնածուին առաջարկություն ներկայացնելու վերաբերյալ: Բարձրագույն դատական խորհուրդը երկօրյա ժամկետում Խորհրդի նիստում կամ հարցման միջոցով որոշում է կայացնում առաջարկության վերաբերյալ, ինչը Դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից անհապաղ փոխանցվում է թեկնածուին»:

4. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 116-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ թափուր տեղի համար առաջարկությունները կրկնելու վերաբերյալ նորմերի համալիր իրացման նպատակով առաջին ատյանի տարբեր դատարաններում միաժամանակ դատավորի թափուր տեղեր առաջանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը՝ արդարադատության շահերից ելնելով, կարող է նախապատվությունը տալ այն դատարանում դատավորի թափուր տեղի համար թեկնածու առաջադրելուն, որտեղ դատավորների ծանրաբեռնվածության հետ կապված խնդիրների լուծումն առավել հրատապ է: Այդ առնչությամբ Բարձրագույն դատական խորհրդի 2018թ. թիվ ԲԴԽ-13-Ո-24 որոշման հավելվածի 6-րդ գլուխը լրացնել 77.2. կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«77.2. Առաջին ատյանի տարբեր դատարաններում դատավորի թափուր տեղերի առկայության դեպքում Դատական դեպարտամենտը Բարձրագույն դատական խորհրդին հիմնավորված առաջարկություն է ներկայացնում առաջնահերթության կարգով թափուր տեղը լրացնելու առնչությամբ: Առաջարկությունն ստանալու օրվանից աշխատակարգի 77.1. կետով նախատեսված կարգով Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում Դատական դեպարտամենտի կողմից ներկայացված հիմնավորման և թափուր տեղի համար թեկնածուին առաջարկություն ներկայացնելու վերաբերյալ»:

5. Առաջին ատյանի տարբեր դատարաններում թափուր տեղերի լրացման գործընթացը պատշաճ ժամկետներում իրականացնելու և դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով Բարձրագույն դատական խորհուրդը կարող է հրավիրել տվյալ մասնագիտացման գծով հավակնորդների ցուցակում ընդգրկված բոլոր թեկնածուներին և առաջարկել կամավորության սկզբունքով կատարել ընտրություն: Նույն տեղի համար մեկից ավելի ցանկություն հայտնողներից կառաջադրվի այն թեկնածուն, ով ունի հանրագումարային ավելի բարձր միավոր:

Եթե որևէ թեկնածու առաջարկությունները չի ընդունում, ապա առաջարկություններն արվում են ավելի վաղ առաջացած թափուր տեղի համար՝ Դատական օրենսգրքի 116-րդ հոդվածի կիրառմամբ»:

Այսուհանդերձ, առկա խնդրի օրենսդրական հստակեցումը շարունակում է հրատապ մնալ: Ինչևէ, Բարձրագույն դատա-

կան խորհրդի կողմից տարվում են աշխատանքներ՝ առկա բոլոր օրենսդրական խնդիրների հնարավորինս սեղմ ժամկետում ու արդյունավետ լուծմանը միտված օրինագծերի մշակման ուղղությամբ:

Գործնականում լուրջ խնդիրներ են առկա նաև Դատական օրենսգրքի 116-րդ և մի շարք այլ հոդվածներում «մայրության արձակուրդ» հասկացության մեկնաբանման առնչությամբ: Դրա պատճառով նաև առանձին թեկնածուների մոտ տարաբնույթ դժգոհություններ առաջացան: Բանն այն է, որ, մասնավորապես, Դատական օրենսգրքի 116-րդ հոդվածով սահմանված է.

«4. Սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերում թեկնածուի անհամաձայնությունը հանգեցնում է նրան դատավորների թեկնածուների ցուցակից հանելուն, բացառությամբ մայրության, երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման հետ կապված արձակուրդում գտնվելու կամ պատգամավոր ընտրված լինելու պատճառներով հրաժարվելու դեպքի:

5. Սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դեպքում թեկնածուի անհամաձայնությունը հանգեցնում է նրան դատավորների թեկնածուների ցուցակից հանելուն, բացառությամբ մայրության, երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման հետ կապված արձակուրդում գտնվելու կամ պատգամավոր ընտրված լինելու պատճառներով հրաժարվելու, ինչպես նաև այն դեպքի, երբ ցուցակում առկա են Արդարադատության ակադեմիայի թափուր տեղին համապատասխան մասնագիտացման նույն տարվա շրջանավարտներ, որոնք ունեն իրենից նվազ հանրագումարային միավորներ»:

Այս իրավակարգավորումներում օգտագործվում է «մայրության, երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման հետ կապված արձակուրդ» եզրույթները, որոնք ոչ Դատական օրենսգրքով և ոչ էլ Աշխատանքային օրենսգրքով հստակեցված չեն: Խոսքը հատկապես վերաբերում է «մայրության արձակուրդ» եզրույթին: Նախկին իրավակարգավորումները նման բացառություններ չեն սահմանել: Այս ոչ լիարժեք նորանուծությունը գործնական լուրջ խնդիրներ ստեղծեց:

Թերի են կարգավորված նաև դատավորի թեկնածուների հավակնորդների որակավորման քննությունների կազմակերպման ու արդյունքների բողոքարկման ընթացակարգերը: Ընդհան-

րապես նախատեսված չէ գրավոր քննությունների արդյունքների բողոքարկման ինստիտուտ, ինչը լուրջ դժգոհությունների տեղիք տվեց և շատերին ստիպեց իրենց իրավունքների պաշտպանությունն իրականացնել դատարանների միջոցով: Սակայն տվյալ դեպքում սա լավագույն լուծումը չէր: Գրավոր քննությունների արդյունքների բողոքարկման ինստիտուտի վերականգնումը դառնում է անհրաժեշտություն:

Դատական օրենսգրքով խորությամբ հաշվի չեն առնվել դատական իշխանության ապակենտրոնացման պայմաններում գործուն կարգապահական վարույթի ինստիտուտի կազմավորման առանձնահատկությունները: Առկա համակարգում մեծ է սուբյեկտիվ գործոնի դերը, և այն անարդյունավետ է: Այս հիմնախնդրին առանձին անդրադարձ կկատարվի ստորև:

Էական է նաև հետևյալ խնդիրը: Սահմանադրության 174-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվեց, որ «Դատական օրենսգրքով կարող է սահմանվել Բարձրագույն դատական խորհրդում պաշտոնավարման ընթացքում դատավոր անդամների լիազորությունների կասեցման պահանջ»:

Սակայն Դատական օրենսգիրքն ընտրեց այլ մոտեցում՝ Խորհրդի դատավոր անդամների ընտրությունը նախատեսվեց իրականացնել համատեղման սկզբունքով՝ դատավորի ծանրաբեռնվածությունը կրճատելով 75 տոկոսով: Նման մոտեցումը մի շարք խնդիրներ է ստեղծում և չի ապահովում արդյունավետ գործունեություն: Նախ. վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների խորհրդի անդամ դատավորները գեկուցող դատավոր լինելուց զատ գրեթե ամբողջ ծանրաբեռնվածությամբ ընդգրկվում են դատական կազմերի ու պալատի աշխատանքներում, իսկ մարզերից ընտրված դատավոր անդամները գործնականում միայն Խորհրդի նիստերի օրերին են ներգրավվում ակտիվ աշխատանքի: Օրենսդրական ներկա կարգավորման վերանայումը կնպաստի Խորհրդի գործունեության առավել արդյունավետ կազմակերպմանը:

Քննարկման առարկա պետք է դառնա նաև դատարանների նախագահների հնարավոր հետկանչի խնդիրը, երբ նրանք թերանում են իրենց պարտականությունների կատարման մեջ: Այս դեպքում հիմք կարող է ընդունվել, օրինակ, դասական պաշտոնանկության ինստիտուտը, երբ Բարձրագույն դատական խորհրդի անդամների կեսից ավելի ձայներով նշանակման առաջադրված դատարանի նախագահին Խորհուրդը ձայների երկու երրորդով կարող է ներկայացնել պաշտոնանկության:

3.10. «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքի ընդունման ուշացման ու անլիարժեքության հետևանքները

2015 թ. Սահմանադրական փոփոխություններից հետո նախատեսվեց համակարգային փոփոխություններ իրականացնել քաղաքացիական ծառայության և հանրային ծառայության ոլորտներում: «Քաղաքացիական ծառայության մասին» նոր օրենքն ուժի մեջ մտավ 01.07.2018 թվականին: Սույն օրենքի իրավակարգավորման շրջանակներում ներառվեցին նաև քաղաքացիական ծառայության իրավահարաբերությունները դատական իշխանության մարմիններում: Նախատեսվեց նաև (հոդված 5), որ.

«1. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) սահմանվում է՝ ելնելով համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերով նրա առջև դրված խնդիրներով պայմանավորված կառավարչական տվյալ մակարդակին ներկայացվող մասնագիտական պահանջներից: Քաղաքացիական ծառայության յուրաքանչյուր պաշտոն ունի անվանում, որը հնարավորին չափ ճշգրիտ արտացոլում է քաղաքացիական ծառայության պաշտոնի հիմնական գործառնությունները և չի կրում ընդհանրական բնույթ:

2. Համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում է տվյալ մարմնի գլխավոր քարտուղարը, իսկ Հաշվեքննիչ պալատում՝ Հաշվեքննիչ պալատը:

3. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի փոփոխությունը քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատման կամ ծառայությունը դադարեցնելու հիմք չէ, բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի:

4. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում վարում են համապատասխան մարմինները: Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հրապարակային է ծանոթացման համար:

5. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու իրավական հիմքի առաջացման պահից մեկ ամսվա ընթացքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը հաստատված մե-

թողաբանությանը համապատասխան կազմված և փաստաթղթերով հիմնավորված առաջարկությունը քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի նախագծերի հետ ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակ:

6. Պաշտոնը քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում ներառելու (հանելու)՝ քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պաշտոնը ներառվում (հանվում) է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ, և հաստատվում է պաշտոնի անձնագիրը:

7. Քաղաքացիական ծառայության պաշտոնի գնահատման, դասակարգման, անվանումների, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի կազմման, պաշտոնների ընդհանուր համակարգում տեղակայման, իրավունքների և պարտականությունների, անվանացանկի վարման, ինչպես նաև տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու մեթոդաբանությունը հաստատում է համակարգող փոխվարչապետը»:

Քաղաքացիական ծառայության համակարգի նման ձևով ներդրումը Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտում (կենտրոնական մարմնում և առանձնացված ստորաբաժանումներում) առաջացրել է մի շարք իրավական և կառուցակարգային խնդիրներ, որոնց իրավական հիմնավորվածությունը և ողջամիտ անհրաժեշտությունը համալիր քննարկման և ամբողջական լուծման կարիք ունեն:

Բացի դրանից, դատական ծառայության վերաբերյալ առանձին իրավական հիմքեր, հատկապես մրցույթների բնականոն ընթացքն ապահովելուն միտված ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը, դեռևս սպառիչ չեն ընդունվել, ինչը որոշակիորեն խաթարում է այդ խիստ կարևոր պետական կառույցի գործունեությունը՝ անդրադառնալով նաև Բարձրագույն դատական խորհրդի աշխատանքների արդյունավետության վրա: Բարձրագույն դատական խորհուրդը ելակետ է ընդունում այն դիրքորոշումը, ըստ որի՝ դատական ծառայությունը ոչ միայն նեղ մասնագիտական և բարձր արհեստավարժություն պահանջող հանրային ծառայության տեսակ է, այլև կոչված է աջակցելու դատական իշխանության անկախությանը: Ոչ հա-

մարժեք նյութական ու սոցիալական ապահովությունը չի կարող գրավիչ դարձնել հանրային ծառայության այդ տեսակը և նպաստել, որպեսզի ներգրավվեն դատական իշխանության արդյունավետության խնդիրների լուծմանն ունակ մասնագետներ:

3.11. Կարգապահական վարույթների համակարգային անկատարությունն ու դրա հետևանքները

Արդյունավետ և օրենքի առջև հաշվետու արդարադատություն իրականացնելու համար բացառիկ կարևոր է կարգապահական վարույթների գործունակ համակարգի առկայությունը:

Խորհրդի գործունեության առաջին քայլերը վկայեցին, որ այս հարցում առկա են ակնհայտ բացթողումներ: Նախ՝ նախորդ երկու տարիների ընթացքում գրեթե կարգապահական վարույթներ չէին հարուցվել: Այս ինստիտուտը գործնականում կորցրել էր իր կենսունակությունը:

Դատական օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանվեց, որ՝ Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝

- 1) Կարգապահական հարցերի հանձնաժողովը.
- 2) Լիազոր մարմինը:

Որպես լիազոր մարմին է ճանաչվել Արդարադատության նախարարը:

Խորհրդի գործունեության առաջին յոթ ամիսների ընթացքում որևէ կարգապահական վարույթ չհարուցվեց: Լիազոր մարմնի գնահատմամբ՝ դա կարող էր ընկալվել որպես միջամտություն դատարանների գործունեությանը, իսկ Դատարանների ընդհանուր ժողովի կարգապահական հանձնաժողովը ոչ միայն ուշացումով ձևավորվեց, այլև զգացնել տվեց կորպորատիվ շահերի հանգամանքը:

Բարձրագույն դատական խորհուրդը լրացուցիչ ուսումնասիրեց այս հարցում միջազգային փորձը, մասնավորապես՝ Արևելյան ու Արևմտյան Եվրոպայի երկրներում, և հանգել է այն հետևությանը, որ կարգապահական վարույթների հարուցման հարցերում Դատական օրենսգրքի իրավակարգավորումները բարեփոխումների անհրաժեշտություն ունեն: Դրա մասին Էին վկայում նաև դատավորների վարքի ու գործունեության նկատմամբ քաղաքացիների դիմում-բողոքների մեծ հոսքը Բարձ-

րագույն դատական խորհուրդ, որոնք Խորհուրդը կարող էր քննության առարկա դարձնել միայն օրենքով նախատեսված սուբյեկտների միջնորդությունների հիման վրա: Ուստի այդ դիմումները, որոնք առերևույթ խնդրահարույց էին գնահատվում, վերահասցեագրվում էին կարգապահական հանձնաժողով ու հիմնականում մնում էին անպատասխան:

Այսուհանդերձ, հետագա համատեղ քննարկումներն Արդարադատության նախարարության և կարգապահական հանձնաժողովի հետ, որոնք ուղեկցվեցին նաև օրենսդրության հիմնադրույթների պարզաբանմամբ, արձանագրեցին նկատելի տեղաշարժ: Վերջին չորս ամիսների ընթացքում կարգապահական վարույթներով Արդարադատության նախարարի կողմից Խորհրդին է ներկայացվել երկու միջնորդություն, հանձնաժողովի կողմից՝ երեք: Խորհրդի որոշմամբ դրանցից չորսը բավարարվել են՝ մեկ դատավորի լիազորությունները դադարեցվել է, մյուսներն ստացել են կարգապահական այլ տույժեր:

Անկախ այս հանգամանքից, գտնում ենք, որ, միջազգային փորձը հաշվի առնելով, անհրաժեշտ է վերանայել Կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմավորման կարգը՝ դրանում ներգրավելով նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, հնարավորինս հաղթահարելով կորպորատիվ շահերի ազդեցությունը:

4. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Հիմնադրումից անմիջապես հետո Խորհուրդը ձեռնամուխ եղավ եվրոպական գործընկերների ու դատական իշխանության ներկայացուցիչների հետ ակտիվ համագործակցության հիմնադրման, խորացման և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման ու ներդրման աշխատանքներին: 2008 թվականից Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդը, լինելով եվրոպական դատական խորհուրդների ցանցի (ENJC) համագործակից, որն է գործակցություն այդ կառույցի հետ չի ունեցել, չեն օգտվել այս ոլորտում եվրոպական հարուստ փորձից, երկու տարին մեկ հրավիրվող համաժողովներում ծավալվող լայն քննարկումների արդյունքներից:

Արդեն 2018թ. մայիսին Բարձրագույն դատական խորհուրդը, հատուկ հրավիրյալի կարգավիճակով, մասնակցեց Լիսաբոնում գումարված ENJC Վեհաժողովի աշխատանքներին, որի արդյունքում ընդունվեց Լիսաբոնյան հռչակագիրը (հասանելի է court.am կայքում): Վեհաժողովի շրջանակներում տեղի ունեցան հանդիպումներ ENJC գործող նախագահ, Իսպանիայի ԲԴԻՄ անդամ Նուրիա Աբադ Դիասի և նոր նախագահ, Հոլանդիայի ԲԴԻՄ և Վճռաբեկ դատարանի անդամ Կեյս Սթերքի հետ: Գործող և նորանշանակ նախագահների հետ քննարկված հարցերի լայն շրջանակում է եղել նաև ԲԴԻՄ-ի լիիրավ անդամակցության հարցի քննարկումը: Այցի շրջանակներում հաստատվել են կապեր Ֆրանսիայի, Հոլանդիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Պորտուգալիայի, Ուկրաինայի Բարձրագույն դատական խորհուրդների, Անգլիայի և Ուելսի ԲԴԻՄ մի շարք անդամների, Լեհաստանի, Պորտուգալիայի, Շոտլանդիայի, Լիտվայի ԲԴԻՄ անդամների հետ: Ուսումնասիրվեց ԵՄ մի շարք անդամ պետությունների դատական իշխանությունների նորարարական փորձը՝ հետագա աշխատանքներում հաշվի առնելու նպատակով:

2018թ. մայիսին ԲԴԻՄ-ն հյուրընկալեց Հոլանդիայի դատական խորհրդի պատվիրակությանը, որը գլխավորում էր մեր հայրենակից, Հոլանդիայի Գերագույն վարչական դատարանի նախագահ Թագվոր Ավետիսյանը: Երկօրյա այցի ընթացքում Հոլանդիայի և Հայաստանի ԲԴԻՄ անդամները, Վճռաբեկ և վերաքննիչ դատարանների դատավորները քննարկեցին դատական իշխանություններին վերաբերող ամենատարբեր հարցեր՝ իրականացնելով փորձի փոխանակում: Քննարկվող թեմաների շարքում էին արդարադատության ծախսատարության, դատարանների բյուջետավորման մեթոդաբանության, մշտադիտարկման չափորոշիչների, գործերի քննության ողջամիտ ժամկետների, դատավորների գործունեության գնահատման և նրանց օպտիմալ ծանրաբեռնվածության, էլեկտրոնային արդարադատության և դատական գործերի կառավարման ավտոմատացված համակարգերի ներդրման առանձնահատկությունների ու մարտահրավերների, հաշվետու, թափանցիկ, արդյունավետ և մատչելի արդարադատական համակարգի ներդրման հիմնախնդիրները:

2018թ. դեկտեմբերին, Լեհաստանի ԲԴԻՄ հրավերով, Վարշավա մեկնեց և հատուկ հյուրի կարգավիճակով՝ Լեհաստանում անկախ դատական իշխանության ձևավորման 100-ամյակին նվիրված լիագումար գիտաժողովում ելույթ-գեկույցով հանդես

եկավ ԲԴԻՄ անդամը՝ «ԲԴԻՄ դերն անկախ դատական իշխանության կայացման գործում» թեմայով:

2018թ. ընթացքում ՄԱԿ-ի Չարգացման ծրագրերի երևանյան գրասենյակի հետ համատեղ սկիզբ դրվեց «Դատական արխիվների մշակման և թվայնացման» լայնամասշտաբ և բազմաթիրախային ծրագրին: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ 2003թ.-ից ի վեր արխիվային մշակում չստացած ու գրեթե բարձիթողի վիճակում հայտնված բոլոր դատարանների դատական արխիվները կմշակվեն, կթվայնացվեն, իսկ արդյունքում առաջացած թղթե թափոնները կտրամադրվեն ՄԱԿ-ի Չարգացման ծրագրերի կողմից Լոռու Մեծ Պարնի համայնքում կառուցված թափոնների վերամշակման և բարձրակարգ ու Էկոլոգիապես մաքուր վառելանյութի արտադրման գործարանին: Նշված վառելանյութը հետագայում կտրամադրվի հանրապետության սահմանամերձ գյուղերի բնակիչներին և զինված բախումների արդյունքում կերակրողին կորցրած ընտանիքներին: Դա կօգնի նաև կանխարգելել նշված բնակավայրերում ապօրինի ծառահատումները և կնպաստի կլիմայական պայմանների բարելավմանը: Ծրագիրը նաև կապահովի թե՛ ուսանող-կամավորականների, թե՛ այլընտրանքային զինծառայողների, թե՛ այլընտրանքային պատիժ կրողների և թե՛ արխիվային գործի պրոֆեսիոնալների լայն ներգրավվածություն:

2018թ. ԲԴԻՄ-ն կապեր է հաստատել ՀՀ-ում հավատարմագրված մի շարք դեսպանությունների հետ, որոնց շարքում են Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Չինաստանի, Գերմանիայի, Հունաստանի և Չեխիայի դեսպանատները: Նշված երկրների դեսպանների հետ, ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ գործակցաբար, քննարկվել և նախաձեռնվել են այդ երկրների դատական իշխանությունների և ԲԴԻՄ-ների հետ փոխգործակցության իրականացման լայն ծրագրեր: Ս.թ. ապրիլի 15-16-ին սպասվում է Իտալիայի դատական իշխանության ներկայացուցիչների այցը Երևան, ընթացքում է մի շարք եվրոպական երկրներ ԲԴԻՄ պատվիրակության պաշտոնական այցերի նախապատրաստումը:

2018թ. ԲԴԻՄ-ի գործուն նախաձեռնության արդյունքում սկիզբ է դրվել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՁԵԲ) և Միջազգային զարգացման իրավունքի կազմակերպության (ՄՁԻԿ) կողմից ՀՀ սնանկության դատարանին տեխնիկական աջակցության ծրագրին, որի արդյունքում վերոհիշյալ դատարանում կներդրվի միջազգային լավագույն փորձի

վրա հիմնված փաստաթղթաշրջանառության և գործերի կառավարման համակարգ:

2018թ. կապեր են հաստատվել Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) հետ:

ՎՉԵԲ-ի և ՄՉԻԿ-ի մասնագետների հետ քննարկվել է նաև սնանկության դատարանի դատավորների՝ մասնագիտական միջազգային կառույցի՝ INSOL-ի ծրագրերին ներառման և վերապատրաստման ծրագիրը, որի իրականացումը նախատեսվում է սկսել 2019 թվականից:

Բարձրագույն դատական խորհուրդը միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և հաշվի առնելու նկատառումներով ակտիվ հանդիպումներ է ունենում նաև միջազգային տարբեր կառույցների պատասխանատուների ու փորձագետների հետ: Հատկանշական են հանդիպումները Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախագահի ու գլխավոր քարտուղարի, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության կենտրոնի նախագահի, Բարձրագույն դատարանների եվրոպական խորհրդակցական խորհրդի անդամների հետ:

**5. ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ՝
«ՆԵՂ ՏԵՂԵՐԻ» ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ, ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ, ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ
ՈՒ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ
ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

**5.1. Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի
դատական իշխանության համակարգի
վերաբերյալ**

5.1.1. Դատարանները և դատավորների թվակազմը

Հայաստանի Հանրապետությունում գործում են Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև մասնագիտացված դատարանները:

Հայաստանի Հանրապետությունում գործում են՝

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 62 դատավորի թվակազմով.

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 10 դատավորի թվակազմով.

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 12 դատավորի թվակազմով.

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 9 դատավորի թվակազմով.

Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 6 դատավորի թվակազմով.

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 12 դատավորի թվակազմով.

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 12 դատավորի կազմով.

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 6 դատավորի թվակազմով.

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 9 դատավորի թվակազմով.

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 9 դատավորի թվակազմով:

Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ գործում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության 10 դատարաններ՝ 147 դատավորի թվակազմով:

147 դատավորներից 87-ը մասնագիտացված են քաղաքացիական գործերով, իսկ 60-ը՝ քրեական գործերով:

Մասնագիտացված դատարաններն են՝

- վարչական դատարանը, որը գործում է առնվազն 24 դատավորի թվակազմով.
- սնանկության դատարանը, որը գործում է առնվազն 12 դատավորի թվակազմով:

Ընդհանուր առմամբ առկա են մասնագիտացված 2 դատարաններ՝ 36 դատավորի թվակազմով:

Վերաքննիչ դատարաններն են՝

- վերաքննիչ քրեական դատարանը. գործում է առնվազն 18 դատավորի թվակազմով.
- վերաքննիչ քաղաքացիական դատարանը. գործում է առնվազն 16 դատավորի թվակազմով.
- վերաքննիչ վարչական դատարանը. գործում է առնվազն 10 դատավորի թվակազմով:

Ընդհանուր առմամբ գործում են վերաքննիչ 3 դատարաններ՝ 44 դատավորի թվակազմով:

Վճռաբեկ դատարանը.

Վճռաբեկ դատարանը գործում է երկու պալատով, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանում գործում են՝

- քրեական պալատը՝ 6 դատավորի թվակազմով.
- քաղաքացիական և վարչական պալատը՝ 11 դատավորի թվակազմով, որոնք համարվում են միաժամանակ քաղաքացիական և վարչական մասնագիտացումներ ունեցող:

Վճռաբեկ դատարանը գործում է 17 դատավորի թվակազմով:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում արդար դատաքննության իրավունքի ապահովումը եռաստիճան դատական իշխանության միջոցով իրականացնելու համար սահմանված է 248 դատավորների ընդհանուր թվակազմ (առկա հաստիքներ), որոնցից 115-ը՝ քաղաքացիական մասնագիտացմամբ (այս թվի մեջ ներառված է նաև Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորների թիվը՝ 11), 87-ը՝ քրեական մասնագիտացմամբ, 34-ը՝ վարչական մասնագիտացմամբ և 12-ը՝ սնանկության մասնագիտացմամբ:

Դատարանների գործունեությունն ապահովում են դատարանների աշխատակազմերը, որոնք հանդիսանում են ՀՀ դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումներ:

Դատական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ 1) առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի յուրաքանչյուր դատավոր ունի օգնական և գործավար, 2) Վճռաբեկ դատարանի պալատի դատավորը և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահն ունեն օգնականներ: ՀՀ դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում և դատարանների աշխատակազմերում ծառայություն իրականացնող աշխատակիցների ընդհանուր թիվը կազմում է 1025, որից 496-ը՝ դատավորին կցված դատական ծառայողներ:

**5.1.2. Հայաստանի Հանրապետությունում 100.000
բնակչի հաշվով դատավորների թվաքանակը
և դրա համեմատականն այլ պետությունների
դատավորների թվաքանակի հետ**

Հայաստանում ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշն ընթացիկ հաշվառմամբ (2011թ. մարդահամարի հիմքով վարվող) կազմել է 2 972 732 մարդ, դատավորների թվաքանակը՝ 248, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է մոտ 8.3:

Համեմատական վերլուծության նկատառումով ուսումնասիրվել են նաև մի շարք այլ երկրներում բնակչության թիվը, դատավորների թվաքանակը, յուրաքանչյուր 100.000 բնակչին համադրվող դատավորների թվաքանակը, որի արդյունքում պարզվել է հետևյալը.

Վրաստանում բնակչությունը կազմում է 3.729.500 մարդ, դատավորների թվով քանակը՝ 254, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 7,

Մոլդովայում բնակչությունը կազմում է 3.555.159 մարդ, դատավորների թվաքանակը՝ 384, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 11,

Ալբանիայում բնակչությունը կազմում է 2.893.005 մարդ, դատավորների թվաքանակը՝ 363, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 13,

Բելգիայում բնակչությունը կազմում է 11.209.044 մարդ, դատավորների թվաքանակը՝ 1.602, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 14,

Ռուսաստանի Դաշնությունում բնակչությունը կազմում է 146.804.372 մարդ, դատավորների թվաքանակը՝ 26443, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 18,

Էստոնիայում բնակչությունը կազմում է 1.313.271 մարդ, դատավորների թվով քանակը՝ 231, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 18,

Ֆինլանդիայում բնակչությունը կազմում է 5.471.753 մարդ, դատավորների թվաքանակը՝ 988, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 18,

Պորտուգալիայում բնակչությունը կազմում է 10.374.822 մարդ, դատավորների թվաքանակը՝ 1990, յուրաքանչյուր

100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 19,

Լատվիայում բնակչությունը կազմում է 2.001.468 մարդ, դատավորների թվաքանակը՝ 488, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 24,

Սլովակիայում բնակչությունը կազմում է 5.421.349 մարդ, դատավորների թվաքանակը՝ 1.322, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 24,

Լիտվայում բնակչությունը կազմում է 2.921.262 մարդ, դատավորների թվաքանակը՝ 754, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 26,

Հունգարիայում բնակչությունը կազմում է 9.855.571 մարդ, դատավորների թվաքանակը՝ 2.813, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 29,

Չեխիայում բնակչությունը կազմում է 10.524.783 մարդ, դատավորների թվաքանակը՝ 3.028, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 29,

Սակեդոնիայում բնակչությունը կազմում է 2.069.172 մարդ, դատավորների թվաքանակը՝ 629, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 30,

Բուլղարիայում բնակչությունը կազմում է 7.202.198 մարդ, դատավորների թվաքանակը՝ 2.220, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 31,

Խորվաթիայում բնակչությունը կազմում է 4.225.316 մարդ, դատավորների թվաքանակը՝ 1.734, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 41,

Սլովենիայում բնակչությունը կազմում է 2.061.085 մարդ, դատավորների թվաքանակը՝ 924, յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է 45:

Համեմատական վերլուծության արդյունքները, թերևս, վկայում են, որ Հայաստանում դատավորների թվակազմն զգալիորեն գիջում է մյուս երկրների համանուն տվյալներին:

Դատավորների թվաքանակի հիմնավորվածության առնչությամբ առանցքային նշանակություն ունեն նաև դատի տրված անձանց թվաքանակով համեմատական ուսումնասիրության արդյունքները, որոնք ամփոփ տեսքով ներկայացված են ստորև:

Ղազախստանում դատավորների հաստիքների թվաքանակը կազմում է 2664, իսկ անձանց թվաքանակը, որոնց վերաբեր-

յալ կայացվել են դատական ակտեր, կազմում է 30.726: Այսինքն՝ յուրաքանչյուր դատավորի հաշվարկով անձանց թվաքանակը, որոնց վերաբերյալ կայացվել են դատական ակտեր, կազմում է շուրջ 11 (հիմք՝ 2016 թ. տվյալները):

Նույն ժամանակահատվածում ՀՀ դատավորների թվաքանակը կազմել է 234, իսկ անձանց թվաքանակը, որոնց վերաբերյալ կայացվել են դատական ակտեր՝ 3469: Այսինքն՝ յուրաքանչյուր դատավորի հաշվարկով հիշյալ բնույթի անձանց թվաքանակը կազմում է շուրջ 16:

Ռուսաստանի Դաշնությունում 2016 թվականի ընթացքում վերջնական դատական ակտերի քանակը կազմել է 74.130, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ 2533: Ռուսաստանի Դաշնությունում դատավորների թվաքանակը կազմում է 26443, իսկ Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականի դրությամբ՝ 234: Այսինքն՝ յուրաքանչյուր դատավորի հաշվարկով անձանց թվաքանակը, ում նկատմամբ դատական ակտ է կայացվել, Ռուսաստանի Դաշնությունում կազմել է շուրջ 3, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ շուրջ 11:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ այս ձևաչափով համեմատականը ևս փաստում է ՀՀ դատավորների թվաքանակի նվազ լինելը:

5.1.3. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների փաստացի ծանրաբեռնվածությունը

Վերջին տարիներին արձանագրվել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված գործերի կտրուկ աճ. այսպես՝ միայն քրեական գործերի հաշվարկով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում՝

2013 թվականի ընթացքում ստացվել է 4039 քրեական գործ,
2014 թվականի ընթացքում ստացվել է 4021 քրեական գործ,
2015 թվականի ընթացքում ստացվել է 4476 քրեական գործ,
2016 թվականի ընթացքում ստացվել է 4599 քրեական գործ,
2017 թվականի ընթացքում ստացվել է 5027 քրեական գործ,
2018 թվականի ընթացքում ստացվել է 4844 քրեական գործ :

2013 թվականի ընթացքում ստացվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին վե-

րաբերող 20.794 միջնորդություն (աղյուսակում՝ միջնորդություն),

2014 թվականի ընթացքում ստացվել է 21.150,

2015 թվականի ընթացքում ստացվել է 20.551,

2016 թվականի ընթացքում ստացվել է 21.322,

2017 թվականի ընթացքում ստացվել է 23.382,

2018 թվականի ընթացքում ստացվել է 26.192:

Նշված ժամանակահատվածում քաղաքացիական գործերի տվյալները՝ սկսած 2013 թվականից.

2013 թվականի ընթացքում ստացվել է 48.540 քաղաքացիական գործ,

2014 թվականի ընթացքում ստացվել է 85.772 քաղաքացիական գործ,

2015 թվականի ընթացքում ստացվել է 117.654 քաղաքացիական գործ,

2016 թվականի ընթացքում ստացվել է 132.581 քաղաքացիական գործ,

2017 թվականի ընթացքում ստացվել է 137.003 քաղաքացիական գործ,

2018 թվականի ընթացքում ստացվել է 129.941 քաղաքացիական գործ:

Սկստելի աճ է արձանագրվել նաև վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ գործերով, որոնց վերաբերյալ տվյալները դարձյալ ներկայացվում են սկսած 2013 թվականից.

2013 թվականի ընթացքում ստացվել է վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 58.176 գործ,

2014 թվականի ընթացքում ստացվել է վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 66.981 գործ,

2015 թվականի ընթացքում ստացվել է վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 76.981 գործ,

2016 թվականի ընթացքում ստացվել է վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 60.017 գործ,

2017 թվականի ընթացքում ստացվել է վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 96.245 գործ,

2018 թվականի ընթացքում ստացվել է վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 84.761 գործ:

Նույն ժամանակահատվածում արձանագրվել է նաև սնանկության գործերի նկատելի աճ, ինչն էլ պայմանավորեց սնանկության գործերով դատարան հիմնադրելու անհրաժեշտությունը: Այսպես՝

2013 թվականի ընթացքում ստացվել է 3376 սնանկության գործ,
2014 թվականի ընթացքում ստացվել է 4358 սնանկության գործ,
2015 թվականի ընթացքում ստացվել է 4926 սնանկության գործ,
2016 թվականի ընթացքում ստացվել է 8245 սնանկության գործ,
2017 թվականի ընթացքում ստացվել է 9218 սնանկության գործ,
2018 թվականի ընթացքում ստացվել է 9326 սնանկության գործ:

5.1.4. Վիճակագրական տվյալներ մասնագիտացված վարչական դատարանի փաստացի ծանրաբեռնվածության վերաբերյալ

Վարչական դատարանում 2013-2018թթ. ծանրաբեռնվածության կտրվածքով էական փոփոխություններ չեն արձանագրվել: Ինչևէ, վիճակագրական տվյալները շարադրված են ստորև՝

2013 թվականի ընթացքում ստացվել է 24.893 վարչական գործ,
2014 թվականի ընթացքում ստացվել է 16.897 վարչական գործ,
2015 թվականի ընթացքում ստացվել է 13.233 վարչական գործ,
2016 թվականի ընթացքում ստացվել է 16.552 վարչական գործ,
2017 թվականի ընթացքում ստացվել է 23.095 վարչական գործ,
2018 թվականի ընթացքում ստացվել է 21.719 վարչական գործ:

5.1.5. Վիճակագրական տվյալներ վերաքննիչ դատարանների փաստացի ծանրաբեռնվածության վերաբերյալ

Վերաքննիչ քրեական դատարանում 2013-2018թթ. ևս արձանագրվել է գործերի աճ, որոնց վերաբերյալ վիճակագրական տվյալներն ունեն հետևյալ պատկերը.

2013 թվականի ընթացքում ստացվել է 2461 գործ,
2014 թվականի ընթացքում ստացվել է 2563 գործ,

2015 թվականի ընթացքում ստացվել է 2850 գործ,
2016 թվականի ընթացքում ստացվել է 3299 գործ,
2017 թվականի ընթացքում ստացվել է 3460 գործ,
2018 թվականի ընթացքում ստացվել է 4005 գործ:

Վերը նշված ժամանակահատվածում (2013-2018 թթ.) վերաքննիչ քաղաքացիական դատարանում ստացված գործերի քանակի նկատելի աճ է արձանագրվել, ինչի առնչությամբ ստորև ներկայացված են համապատասխան վիճակագրական տվյալները.

2013 թվականի ընթացքում ստացվել է 4569 գործ,
2014 թվականի ընթացքում ստացվել է 4139 գործ,
2015 թվականի ընթացքում ստացվել է 4407 գործ,
2016 թվականի ընթացքում ստացվել է 4354 գործ,
2017 թվականի ընթացքում ստացվել է 4653 գործ,
2018 թվականի ընթացքում ստացվել է 5045 գործ:

Վերաքննիչ վարչական դատարանում նշված ժամանակահատվածում նկատվել է ծանրաբեռնվածության կրկնակի աճ, ինչն արտացոլող վիճակագրական տվյալները բերված են ստորև.

2013 թվականի ընթացքում ստացվել է 2343 գործ,
2014 թվականի ընթացքում ստացվել է 2314 գործ,
2015 թվականի ընթացքում ստացվել է 2321 գործ,
2016 թվականի ընթացքում ստացվել է 2773 գործ,
2017 թվականի ընթացքում ստացվել է 4988 գործ,
2018 թվականի ընթացքում ստացվել է 6667 գործ:

5.1.6. Վիճակագրական տվյալներ Վճռաբեկ դատարանի փաստացի ծանրաբեռնվածության վերաբերյալ

Վճռաբեկ դատարանի պալատներում ստացված վճռաբեկ բողոքների վերաբերյալ վիճակագրությունը ցույց է տալիս, որ Էսկան աճ նկատվել է քրեական գործերի մասով: Ստորև ներկայացված է Վճռաբեկ դատարանի քրեական պալատում ստացված վճռաբեկ բողոքների վերաբերյալ վիճակագրությունը.

2013 թվականի ընթացքում ստացվել է 1253 վճռաբեկ բողոք,
2014 թվականի ընթացքում ստացվել է 1250 վճռաբեկ բողոք,
2015 թվականի ընթացքում ստացվել է 1455 վճռաբեկ բողոք,
2016 թվականի ընթացքում ստացվել է 1781 վճռաբեկ բողոք,
2017 թվականի ընթացքում ստացվել է 1911 վճռաբեկ բողոք,
2018 թվականի ընթացքում ստացվել է 2213 վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված վճռաբեկ բողոքների վերաբերյալ վիճակագրությունն ունի հետևյալ պատկերը.

2013 թվականի ընթացքում ստացվել է 3049 վճռաբեկ բողոք,
2014 թվականի ընթացքում ստացվել է 2789 վճռաբեկ բողոք,
2015 թվականի ընթացքում ստացվել է 2743 վճռաբեկ բողոք,
2016 թվականի ընթացքում ստացվել է 2549 վճռաբեկ բողոք,
2017 թվականի ընթացքում ստացվել է 2880 վճռաբեկ բողոք,
2018 թվականի ընթացքում ստացվել է 2850 վճռաբեկ բողոք:

5.1.7. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների ծանրաբեռնվածությունը՝ ըստ երևան քաղաքի և մարզային դատարանների, և առկա ծանրաբեռնվածությունը հավասարակշռելու նպատակով անհրաժեշտ դատավորների հաստիքների քանակը

Նախ, հարկ է նշել, որ Հայաստանում դատավորների ողջամիտ ծանրաբեռնվածությունը որոշելու համար որևէ օրենսդրական ակտով սահմանված չեն ողջամիտ ծանրաբեռնվածության կանխորոշման հստակ եղանակներ և չափորոշիչներ, ինչը հնարավորություն կընձեռներ արդարադատության որակը երաշխավորելու տեսանկյունից խիստ անհրաժեշտ ողջամիտ ծանրաբեռնվածությունը հստակ հաշվարկել համապատասխան ժամանակահատվածի համար: Այդ խնդիրը նոր է առաջադրվել: Մասնավորապես՝ Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորի ծանրաբեռնվածությունը հաշվարկելու կարգը, ինչպես նաև դատավորի ծանրաբեռնվածության չափորոշիչները:

Այդուհանդերձ, դատավորների ծանրաբեռնվածությունը հաշվարկելու համար և քաղաքացիական, և քրեական գործերի կտրվածքով կատարվել է համեմատական վերլուծություն, և յուրաքանչյուր դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածության տվյալը համեմատվել է, համապատասխանաբար, Երևան քաղաքի և ՀՀ մարզերի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածության տվյալի հետ:

Արդյունքում պարզվել է, որ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի մի շարք դատարանների մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունն ուսումնասիրվող ժամանակահատվածում պարբերաբար, կայուն աճով գերազանցում է, համապատասխանաբար, Երևան քաղաքում և ՀՀ մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը:

Այսպես, քաղաքացիական գործերով Երևան քաղաքում՝

2013 թվականին մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 632 գործ,

2014 թվականին՝ 1068 գործ,

2015 թվականին՝ 1425 գործ,

2016 թվականին՝ 1374 գործ,

2017 թվականին՝ 1308 գործ,

2018 թվականին՝ 1290 գործ:

Նույն այդ ժամանակահատվածում մարզերում նշված վիճակագրությունն ունեցել է հետևյալ պատկերը.

2013 թվականին մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 469 գործ,

2014 թվականին՝ 865 գործ,

2015 թվականին՝ 1217 գործ,

2016 թվականին՝ 1501 գործ,

2017 թվականին՝ 1635 գործ,

2018 թվականին՝ 1447 գործ:

Քրեական գործերով Երևան քաղաքում ծանրաբեռնվածությունն ունեցել է հետևյալ պատկերը.

2013 թվականին մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 66 գործ,

2014 թվականին՝ 65 գործ,

2015 թվականին՝ 79 գործ,

2016 թվականին՝ 82 գործ,

2017 թվականին՝ 85 գործ,

2018 թվականին՝ 81 գործ:

Քրեական գործերով մարզերում ծանրաբեռնվածությունն ունեցել է հետևյալ պատկերը.

2013 թվականին մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 74 գործ,

2014 թվականին՝ 74 գործ,

2015 թվականին՝ 78 գործ,

2016 թվականին՝ 76 գործ,

2017 թվականին՝ 85 գործ,

2018 թվականին՝ 84 գործ:

Երևան քաղաքում դատավորների ծանրաբեռնվածության վերաբերյալ 2013-2017 թթ. կտրվածքով կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ նշված ժամանակահատվածում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության մի շարք դատարանների դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությունը գերազանցել է Երևան քաղաքի դատարանների դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությունը: Մասնավորապես, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների, Շենգավիթ վարչական շրջանի, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում քաղաքացիական գործեր քննող դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությունը գերազանցել է Երևան քաղաքի դատարանների դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությունը:

Հիշյալ դատարաններում քաղաքացիական գործեր քննող դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությունը Երևան քաղաքի դատարաններում քաղաքացիական գործեր քննող դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությանը համապատասխանեցնելու համար անհրաժեշտ կլինե՞ր ավելացնել քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորների առնվազն 1-ական հաստիք (ընդհանուր առմամբ՝ 3 հաստիք):

Քրեական գործերի պարագայում համամասն իրավիճակ արձանագրվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների, Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի, Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի

դատարաններում: Հիշյալ դատարաններում քրեական գործեր քննող դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությունը Երևան քաղաքի դատարաններում քրեական գործեր քննող դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությանը համապատասխանեցնելու համար անհրաժեշտ կլինե՞ր նշված դատարաններում ավելացնել դատավորի առնվազն 1-ական հաստիք (ընդհանուր առմամբ՝ 3 հաստիք):

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.12.2017թ. ընդունված «ՀՀ դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-34-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 25.01.2018 թ.) Երևան քաղաքում ստեղծվել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության մեկ դատարան: Մեկ դատարան ստեղծելու հիմնական նպատակներից մեկը դատական գործերի հավասարաչափ բաշխման արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բոլոր դատավորների հավասարաչափ ծանրաբեռնվածությունն ապահովելն է, քանի որ, ինչպես նշվեց վերը, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության թվով 7 դատարաններում առկա էր անհավասարաչափ ծանրաբեռնվածություն:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2018թ. գործունեության վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքում տվյալ դատարանում 1 դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածության պատկերը հետևյալն է.

- քաղաքացիական գործերով՝ 1290 գործ,
- քրեական գործերով՝ 81 գործ:

**5.1.8. Քաղաքացիական գործերով
դատավորների թվաքանակի հնարավոր
ավելացումը մարզային դատարաններում
(հիմնավորումները)**

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում առկա է քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորի 7 հաստիք: 2013 թվականին ՀՀ մարզային դատարաններում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 469 գործ, իսկ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության

առաջին ատյանի դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 584 գործ, 2014 թվականին՝ համապատասխանաբար 865/1330, 2015 թվականին՝ համապատասխանաբար 1217/1962, 2016 թվականին՝ համապատասխանաբար 1501/2416, 2017 թվականին՝ համապատասխանաբար 1635/2692, 2018 թվականին՝ համապատասխանաբար 1447/2450:

Այսպիսով, վերջին 6 տարիների կտրվածքով մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 1189 գործ, իսկ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 1906 գործ:

Նշված վիճակագրությունից բխում է, որ տվյալ դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը գերազանցում է մոտ 1,6 անգամ:

Դրանից բացի, ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում 2013 թվականի ընթացքում ստացվել է 6348 վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ գործ, 2014 թվականին՝ 7013, 2015 թվականին՝ 6673, 2016 թվականին՝ 5409, 2017 թվականին՝ 8883, իսկ 2018 թվականին՝ 10617:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում առկա է քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորի 5 հաստիք: 2013 թվականին մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 469 գործ, իսկ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 663 գործ, 2014 թվականին՝ համապատասխանաբար 865/1232, 2015 թվականին՝ համապատասխանաբար 1217/1482, 2016 թվականին՝ 1501/1932, 2017 թվականին՝ 1635/2117, 2018 թվականին՝ 1447/1979:

Այսպիսով, վերջին 6 տարիների կտրվածքով մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 1189 գործ, իսկ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 1567 գործ:

Նշված վիճակագրական տվյալներից բխում է, որ տվյալ դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունից ավելի է մոտ 1,3 անգամ:

Դրանից բացի, ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում 2013 թվականի ընթացքում ստացվել է 4436 վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ գործ, 2014 թվականին՝ 3838, 2015 թվականին՝ 6099, 2016 թվականին՝ 4569, 2017 թվականին՝ 10016, իսկ 2018 թվականին՝ 7224:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում առկա է քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորի 6 հաստիք: 2013 թ. մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 469 գործ, իսկ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 677 գործ, 2014 թվականին՝ համապատասխանաբար 865/1183, 2015 թվականին՝ համապատասխանաբար 1217/1455, 2016 թվականին՝ համապատասխանաբար 1501/1643, 2017 թվականին՝ համապատասխանաբար 1635/1904, 2018 թվականին՝ համապատասխանաբար 1447/1701:

Այսպիսով, վերջին 6 տարիների կտրվածքով մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 1189 գործ, իսկ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 1427 գործ:

Տվյալ դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունից ավելի է 1,2 անգամ:

Դրանից բացի, ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում 2013 թվականի ընթացքում ստացվել է 7552 վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ գործ, 2014 թվականին՝ 6675, 2015 թվականին՝ 8015, 2016 թվականին՝ 6663, 2017 թվականին՝ 9573, իսկ 2018 թվականին՝ 8769:

Այսպիսով, ՀՀ մարզային դատարաններում քաղաքացիական գործեր քննող դատավորների ծանրաբեռնվածության վերաբերյալ 2013-2018 թթ. կտրվածքով կատարված ուսումնասիրության արդյունքում կարող ենք արձանագրել, որ վերը նշված

դատարաններում քաղաքացիական գործեր քննող դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությունը գերազանցում է մարզային դատարաններում քաղաքացիական գործեր քննող դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությունը: Տվյալ դատարաններում քաղաքացիական գործեր քննող դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությանը համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է վերը նշված դատարաններում քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորների հաստիքների քանակն ավելացնել առնվազն 1-ականով (ընդհանուր առմամբ՝ 3 հաստիք):

Վերլուծությունը վկայում է նաև, որ Հայաստանում դատական տարածքների օպտիմալացման խնդիր գոյություն ունի, ինչը վերաբերում է նաև քրեական ու վարչական արդարադատության ոլորտներին:

5.1.9. Քրեական գործերով դատավորների թվաքանակի հնարավոր ավելացումը մարզային դատարաններում (հիմնավորումները)

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում առկա է քրեական մասնագիտացում ունեցող դատավորի 4 հաստիք:

2013թ. ՀՀ մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 74 գործ, իսկ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 129 գործ, 2014 թվականին՝ համապատասխանաբար 74/146, 2015 թվականին՝ համապատասխանաբար 78/145, 2016 թվականին՝ համապատասխանաբար 76/130, 2017 թվականին՝ համապատասխանաբար 85/165, 2018 թվականին՝ համապատասխանաբար 84/151:

Այսպիսով, վերջին 6 տարիների կտրվածքով մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 78 գործ, իսկ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 144 գործ:

Տվյալ դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունն ավելի է մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունից 1,8 անգամ:

Դրանից բացի, ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում 2013 թվականի ընթացքում ստացվել է 678 միջնորդություն, 2014 թվականին՝ 547, 2015 թվականին՝ 628, 2016 թվականին՝ 597, 2017 թվականին՝ 657, իսկ 2018 թվականին՝ 649 միջնորդություն:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում առկա է քրեական մասնագիտացում ունեցող դատավորի 4 հաստիք: 2013 թվականին ՀՀ մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 74 գործ, իսկ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 73 գործ, 2014 թվականին՝ համապատասխանաբար 74/83, 2015 թվականին՝ համապատասխանաբար 78/85, 2016 թվականին՝ համապատասխանաբար 76/85, 2017 թվականին՝ համապատասխանաբար 85/84, 2018 թվականին՝ համապատասխանաբար 84/83:

Այսպիսով, վերջին 6 տարիների կտրվածքով մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 78 գործ, իսկ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմում է մոտ 82 գործ:

Տվյալ դատարանի մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունն ավելի է մարզերում մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունից 1 անգամ:

Դրանից բացի, ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում 2013 թվականի ընթացքում ստացվել է 1412 միջնորդություն, 2014 թվականին՝ 1534, 2015 թվականին՝ 1251, 2016 թվականին՝ 1125, 2017 թվականին՝ 1938, իսկ 2018 թվականին՝ 2136 միջնորդություն:

Այսպիսով, ՀՀ մարզային դատարաններում քրեական գործեր քննող դատավորների ծանրաբեռնվածության վերաբերյալ 2013-2018թթ. կտրվածքով կատարված ուսումնասիրության արդյունքում կարող ենք արձանագրել, որ վերը նշված դատա-

րաններում քրեական գործեր քննող դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությունը գերազանցում է ՀՀ մարզային դատարաններում քրեական գործեր քննող դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությունը: Տվյալ դատարաններում քրեական գործեր քննող դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությունը ՀՀ մարզային դատարաններում քրեական գործեր քննող դատավորների տարեկան միջին ծանրաբեռնվածությանը համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քրեական մասնագիտացում ունեցող դատավորների հաստիքների քանակն ավելացնել առնվազն 2-ով, իսկ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ առնվազն 1-ով (ընդհանուր առմամբ՝ 3 հաստիք):

Միաժամանակ, ուսումնասիրվել է նաև մարզերի դատարանների նստավայրերում դատավորների տեղաբաշխվածության հարցը, որի արդյունքում պարզվել է, որ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում դատավորների հաստիքների նվազ լինելու պատճառով նույն դատարանի Բերդ քաղաքի նստավայրն ապահովված չէ քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորով, ինչի հետևանքով Բերդ քաղաքի ու նրա տարածաշրջանի գյուղերի բնակչությունը քաղաքացիական գործերով նիստերի պետք է մասնակցի Տավուշի մարզի այլ քաղաքների նստավայրերում, ինչը և ճանապարհային հեռավորության, և եղանակային պայմանների պատճառով նրանց համար բազմաթիվ դժվարություններ է առաջացնում:

Մասնավորապես, Բերդ քաղաքի և նրա տարածաշրջանի գյուղերի բնակչության թիվը կազմում է մոտ 15.000 անձ: 2013-2016 թվականների ընթացքում ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Բերդի նստավայրում մուտք է եղել 1466 քաղաքացիական գործ, այսինքն՝ տարեկան միջին հաշվով ստացվել է մոտ 366 գործ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորների հաստիքների թիվն անհրաժեշտ է ավելացնել 1-ով, ինչի արդյունքում կլուծվի առկա խնդիրը:

Այսպիսով, ՀՀ մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության վերը նշված դատարաններում առկա գերծանրաբեռնվածությունը տարեկան միջին ծանրաբեռնվածությանը

համապատասխանեցնելու, ինչպես նաև դատարանների մատչելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների ընդհանուր հաստիքների քանակն ավելացնել 7-ով, որից 4-ը՝ քաղաքացիական մասնագիտացմամբ, իսկ 3-ը՝ քրեական:

5.1.10. Գործոններ, որոնք ընկած են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քաղաքացիական գործերով ծանրաբեռնվածության հիմքում

Վերջին տարիների դատական վիճակագրության տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվող քաղաքացիական գործերի քանակը կտրուկ աճել է: Դա տեղի է ունեցել 2014 թվականից սկսած՝ շարունակվելով մինչև 2016 թվականը, իսկ 2017 թվականին ստացվող քաղաքացիական գործերի թիվը 2016 թվականի համեմատությամբ որոշակիորեն կայունացել է: Միևնույն ժամանակ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ քննարկվող ժամանակահատվածում դատավորների թվաքանակի էական փոփոխություն տեղի չի ունեցել (2016 թվականին քաղաքացիական մասնագիտացում ունեցող դատավորների հաստիքների քանակն ավելացել է ընդամենը 2-ով): Էական փոփոխություններ տեղի չեն ունեցել նաև դատավարական ընթացակարգերում, ինչի արդյունքում դատավորները փաստացի գործել են գերծանրաբեռնվածության պայմաններում և յուրաքանչյուր տարի ավելացել է կուտակված քաղաքացիական գործերի քանակը, ինչը հանգեցրել է գործերի երկարատև քննության:

Քաղաքացիական գործերի կտրուկ աճի պատճառները վեր հանելու նպատակով սույն ուսումնասիրության շրջանակներում վերջին 6 տարիների կտրվածքով իրականացվել է քաղաքացիական գործերի վիճակագրական տվյալների համեմատական վերլուծություն՝ ըստ քաղաքացիական գործերի առանձին կատեգորիաների:

Դատարաններում 2013-2018 թվականների ընթացքում առկա քաղաքացիական գործերի վիճակագրական տվյալների համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ կտրուկ ավելացում է տեղի ունեցել միայն մեկ տեսակի քաղաքացիական գործերով:

Մասնավորապես, պարտավորական իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործերով 2018 թվականին՝ 2013 թվականի համեմատությամբ, արձանագրվել է գործերի թվի մոտ 280 տոկոս աճ: 2013 թվականի ընթացքում դատաբաններում առկա տվյալ տեսակի քաղաքացիական գործերի թիվը կազմել է 28.483, իսկ 2018 թվականին՝ 107.734:

Որոշակի աճ առկա է նաև գույքային իրավահարաբերությունների (ներառում է սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը ճանաչելու/դադարեցնելու, համատեղ սեփականությունից բաժինն առանձնացնելու պահանջների, բնակարանից վտարելու պահանջի մասին գործեր և այլն), անձնական ոչ գույքային իրավահարաբերությունների (ներառում է կոնվենցիոն իրավունքների խախտման համար ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին գործեր և այլն) և հողային իրավահարաբերությունների վերաբերյալ քաղաքացիական գործերով, սակայն նշված տեսակների գործերի քանակն ինքնին մեծ չէ, և դրանց թվի ավելացումը չի կարող հանգեցնել դատարանների ծանրաբեռնվածության էական ավելացման:

Օրինակ՝ անձնական ոչ գույքային իրավահարաբերությունների վերաբերյալ գործերի թիվը 2013 թվականին կազմել է 167, իսկ 2018 թվականին՝ 378, այսինքն՝ տվյալ կատեգորիայի դատական գործերով 2018 թվականին՝ 2013 թվականի համեմատությամբ, արձանագրվել է գործերի թվի շուրջ 126 տոկոս աճ, սակայն քանակային արտացոլմամբ աճը կազմում է ընդամենը 211 քաղաքացիական գործ:

Մյուս կատեգորիայի քաղաքացիական գործերի քանակում (օրինակ՝ աշխատանքային, ընտանեկան, ժառանգության իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործեր) նկատվել են միայն աննշան շեղումներ:

Վերոգրյալի արդյունքում կարող ենք արձանագրել, որ դատարաններում ստացվող քաղաքացիական գործերի ավելացման պատճառը պարտավորական իրավահարաբերություններից բխող քաղաքացիական գործերի թվի կտրուկ ավելացումն է:

Պարտավորական իրավահարաբերությունների վերաբերյալ քաղաքացիական գործերում, որպես առանձին ենթախմբեր, ներառված են, մասնավորապես՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, պարտավորությունը բնեղենով կատարելու պահանջի մասին, վնասը հատուցելու պահանջի մասին, անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորությունները կատա-

րելու պահանջի մասին քաղաքացիական գործերը: Պարզելու համար, թե պարտավորական իրավահարաբերությունների վերաբերյալ քաղաքացիական գործերի մեջ կոնկրետ որ գործերով է առկա թվի կտրուկ ավելացում, առանձին ուսումնասիրության են ենթարկվել այդ կատեգորիայում ներառված գործերը: Արդյունքում պարզվել է, որ գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ գործերն են վերջին տարիների ընթացքում կտրուկ ավելացել:

Ստորև ներկայացվում են վերը նշվածը հիմնավորող վիճակագրական տվյալները.

2013 թվականի ընթացքում ստացվել է 48.540 քաղաքացիական գործ, որից 27.608-ը (56.9%)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

2014 թվականի ընթացքում ստացվել է 85.772 քաղաքացիական գործ, որից 64.045-ը (74.7%)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

2015 թվականի ընթացքում ստացվել է 117.654 քաղաքացիական գործ, որից 95.759-ը (81.4%)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

2016 թվականի ընթացքում ստացվել է 132.581 քաղաքացիական գործ, որից 111.225-ը (83.9%)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

2017 թվականի ընթացքում ստացվել է 137.003 քաղաքացիական գործ, որից 114.403-ը (83.5%)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

2018 թվականի ընթացքում ստացվել է 129.941 քաղաքացիական գործ, որից 106.618-ը (82%)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

Կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործերը հարուցվում են գլխավորապես բանկերի, վարկային կազմակերպությունների և հեռահաղորդակցության օպերատորների կողմից, այսպես.

2015 թվականին գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ վերը նշված 95.759 քաղաքացիական գործերից 60.248-ը (62.9%) հարուցվել է բանկերի և վարկային կազմակերպությունների, 19.621-ը (20.5%)՝ հեռահաղորդակցության օպերատորների կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա,

2016 թվականին գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ վերը նշված 111.225 քաղաքացիական գործերից 82.358-ը (74%) հարուցվել է բանկերի և վարկային կազմակերպությունների, 14.043-ը (12.6%)՝ հեռահաղորդակցության օպերատորների կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա,

2017 թվականին գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ վերը նշված 114.403 քաղաքացիական գործերից 86.174-ը (75.3%) հարուցվել է բանկերի և վարկային կազմակերպությունների, 13.663-ը (11.9%)՝ հեռահաղորդակցության օպերատորների կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա,

2018 թվականին գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ վերը նշված 106.618 քաղաքացիական գործերից 75.692-ը (70.1%) հարուցվել է բանկերի և վարկային կազմակերպությունների, 12.902-ը (12.1%)՝ հեռահաղորդակցության օպերատորների կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործերի գրեթե 80 տոկոսով հայցվորներ են հանդիսանում բանկերը, վարկային կազմակերպությունները և հեռահաղորդակցության օպերատորները:

Վերը նշված սուբյեկտների կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված քաղաքացիական գործերի ուսումնասիրությունից հետևում է, որ դրանցով հայցագինը հիմնականում չի գերազանցում 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամը:

Այսպես, օրինակ՝ 2017թ. ընթացքում բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներկայացված հայցերի հիման վրա հարուցված վերը նշված 86.174 քաղաքացիական գործերից 83.294-ով (96.6%), իսկ հեռահաղորդակցության օպերատորների կողմից ներկայացված հայցերի հիման վրա հարուցված վերը նշված 13.663 քաղաքացիական գործերից 13.489-ով (98.7%) հայցագինը չի գերազանցել 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամը:

2018թ. ընթացքում բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներկայացված հայցերի հիման վրա հարուցված վերը նշված 75.692 քաղաքացիական գործերից 73.176-ով (96.7%), իսկ հեռահաղորդակցության օպերատորների կողմից ներկայացված հայցերի հիման վրա հարուցված վերը նշված 12.902 քաղաքացիական գործերից 12.860-ով (99.7%) հայցագինը չի գերազանցել 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամը:

Կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ քաղաքացիական գործերով դատա-
րանների ծանրաբեռնվածությունը պայմանավորված է վերջին 6
տարիների ընթացքում գումարի բռնագանձման պահանջի վե-
րաբերյալ գործերի կտրուկ ավելացումով:

Գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ գործերի ու-
սումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում վե-
րաբերում են անձանց կողմից իրենց վարկային կամ ծառայութ-
յունների մատուցման պայմանագրերով նախատեսված՝ գու-
մարներ վերադարձնելու և/կամ վճարելու պարտականությունը
չկատարելու արդյունքում ծագած պահանջներին:

5.1.11. Գործոններ, որոնք ընկած են վարչական գործերով ծանրաբեռնվածության հիմքում

Վարչական դատարանի յուրաքանչյուր դատավորի տարե-
կան միջին ծանրաբեռնվածությունը հետևյալն է՝

2013 թվականին՝ 1464 վարչական գործ,

2014 թվականին՝ 626 վարչական գործ,

2015 թվականին՝ 490 վարչական գործ,

2016 թվականին՝ 614 վարչական գործ,

2017 թվականին՝ 855 վարչական գործ,

2018 թվականին՝ 905 վարչական գործ:

Վարչական դատարանի ծանրաբեռնվածության վերլուծութ-
յան նպատակով իրականացվել է վարչական գործերի վիճակագ-
րական տվյալների համեմատական վերլուծություն՝ ըստ վարչա-
կան գործերի առանձին կատեգորիաների:

Վարչական դատարանում 2013-2018 թվականների ընթաց-
քում առկա վարչական գործերի վերաբերյալ վիճակագրական
տվյալների համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառ-
նում, որ վարչական գործերի մեկ կատեգորիայի՝ ֆիզիկական
կամ իրավաբանական անձին դրամական պահանջները կա-
տարելուն պարտավորեցնելու հետ կապված իրավահարաբե-
րությունների վերաբերյալ վարչական գործերը կտրուկ նվազել
են (89%-ով): Հիշյալ կատեգորիայի գործերի քանակի նվազումը
պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով, մաս-
նավորապես՝ 09.01.2015թ. ուժի մեջ է մտել Վարչական դատա-
վարության օրենսգրքի 29.1-րդ գլուխը («Անբողոքարկելի վար-

չական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի վարույթը») և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասը, որով սահմանվել է, որ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման, եթե անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերագանցում է երկու հարյուր հազար դրամը:

Միևնույն ժամանակ, վարչական գործերի մեկ այլ կատեգորիայի՝ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր ճանաչելու հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ վարչական գործերը կտրուկ աճել են (566%-ով):

Պարզելու համար, թե պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր ճանաչելու հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ վարչական գործերի մեջ կոնկրետ որ գործերով է առկա թվի կտրուկ ավելացում, առանձին ուսումնասիրության են ենթարկվել այդ կատեգորիայում ներառված գործերը: Արդյունքում պարզվել է, որ տվյալ կատեգորիայի վարչական գործերի կտրուկ աճի պատճառ են հանդիսացել պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր ճանաչելու հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ գործերը:

5.1.12. Վերաքննիչ դատարանների դատավորների ծանրաբեռնվածության վիճակը

Վերաքննիչ քրեական դատարանը մինչև 25.01.2018թ. գործել է դատարանի նախագահի և 15 դատավորի կազմով: Հիմք ընդունելով յուրաքանչյուր դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը՝ հաշվարկվել է յուրաքանչյուր դատական կազմի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը, որը կազմել է.

2013 թվականին՝ 462 գործ,

2014 թվականին՝ 480 գործ,

2015 թվականին՝ 534 գործ,

2016 թվականին՝ 618 գործ,

2017 թվականին՝ 666 գործ,

2018 թվականին՝ 648 գործ:

Հարկ է նկատի ունենալ, որ վերաքննիչ քրեական դատարանի դատավորների հաստիքների քանակը 2018 թվականի հունվարի 25-ից ավելացվել է 2-ով և ներկայումս այն գործում է առնվազն 18 դատավորի թվակազմով: Արդյունքում կարող ենք արձանագրել, որ վերաքննիչ քրեական դատարանում վերը նշված ծանրաբեռնվածությունը որոշակի չափով նվազման միտում ունի:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը գործում է դատարանի նախագահի և 15 դատավորի կազմով: Հիմք ընդունելով յուրաքանչյուր դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը՝ հաշվարկվել է յուրաքանչյուր դատական կազմի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը, որը կազմել է՝

2013 թվականին 855 գործ,

2014 թվականին՝ 777 գործ,

2015 թվականին՝ 825 գործ,

2016 թվականին՝ 816 գործ,

2017 թվականին՝ 873 գործ,

2018 թվականին՝ 945 գործ:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի ծանրաբեռնվածության հարցի կապակցությամբ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 09.04.2018թ. ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսվել է վերաքննիչ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու կարգ: Մասնավորապես՝ հիշյալ օրենսգրքի 374-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ ներկայացված և վարույթ ընդունված վերաքննիչ բողոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ վերաքննիչ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է վերաքննիչ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում:

Վերաքննիչ վարչական դատարանը մինչև 06.01.2018 թ. գործել է դատարանի նախագահի և 6 դատավորի կազմով: Հիմք ընդունելով յուրաքանչյուր դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը՝ հաշվարկվել է յուրաքանչյուր դատական կազմի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը, որը կազմել է՝

2013 թվականին՝ 1002 գործ,
2014 թվականին՝ 990 գործ,
2015 թվականին՝ 993 գործ,
2016 թվականին՝ 1188 գործ,
2017 թվականին՝ 2136 գործ,
2018 թվականին՝ 2001 գործ:

Ակնհայտ է վերաքննիչ վարչական դատարանի գերծանրաբեռնվածությունը: Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ նման գերծանրաբեռնվածության արդյունքում վերաքննիչ վարչական դատարանում դատական նիստերը նշանակվում էին բողոքներն ստացվելուց հետո՝ շուրջ 2 տարի անց: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ որպես խնդրի լուծում վարչական դատարանի դատավորների հաստիքներից 3-ը կրճատելու միջոցով 2018 թվականի հունվարի 6-ից 3-ով ավելացվել են վերաքննիչ վարչական դատարանի դատավորների հաստիքները:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ վերաքննիչ դատարանների պարագայում ևս վերջին վեց տարիների կտրվածքով նկատվում է ծանրաբեռնվածության ավելացում, որի լուծման ուղղությամբ վերաքննիչ վարչական և վերաքննիչ քրեական դատարանների կապակցությամբ արդեն իսկ քայլեր ձեռնարկվել են, իսկ վերաքննիչ քաղաքացիական դատարանի պարագայում դեռևս հաստիքների ավելացման տեսանկյունից քայլեր չեն ձեռնարկվել:

5.1.13. Վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածության խնդիրները

Վերն արդեն հանգամանալից անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածության վիճակագրական տվյալներին և դրանց շարժին: Սկզբունքորեն այս ոլորտում էական շեղումներ չեն արձանագրվել, սակայն հարկ է հաղթահարել այն իրավիճակը, երբ ակնհայտ մեծ քանակի բողոքների պարագայում քննության են ընդունվում համեմատաբար սակավաթիվ բողոքներ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ մասամբ անհրաժեշտ է վերանայել բողոքները քննության ընդունելու հիմքերը, որպեսզի հնարավոր լինի երաշխավորել Վճռաբեկ դատարանի՝ օրենքների միատեսակ կիրառման առաքելությունը կյանքի կոչելը:

Մասնավորապես, հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ որոշ գործերով, որոնք առանձին վերցրած չեն առնչվում բարձր հայցագներին, այսինքն՝ չեն հանգեցնում ծանր հետևանքների, սակայն դրանց վերաբերյալ միասնական իրավական դիրքորոշման բացակայությունը հանգեցնում է հայցադիմումների անհարկի աճի: Օրինակ, Վճռաբեկ դատարանի նախադեպային նշանակության ակտի բացակայության պարագայում դեռևս հստակ չի որոշվել, թե պետական գնումների հետ կապված հայցերը որ դատարանում պետք է քննվեն՝ վարչական, թե առաջին ատյանի ընդհանուր իրավասության, և այլն:

Վերոշարադրյալ տվյալների վերլուծության արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ դատավորների թվաքանակի հնարավոր ավելացման հարցը կարող է օրակարգային դարձվել դատարանների անհարկի ծանրաբեռնվածության հաղթահարման և արդարադատության արդյունավետության բարձրացման խնդիրների լուծման համատեքստում:

5.1.14. Դատական գործի ծախսատարությունն առաջին ատյանի դատարանում

Բարձրագույն դատական խորհրդի կողմից ձևավորված մասնագիտական խմբերի վերլուծությունների արդյունքում վեր է հանվել մեկ դատական գործի համար պետական բյուջեի միջոցներից ծախսվող գումարի չափը: ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիական գործերի համար կատարված ծախսերը հաշվարկելու նպատակով ուսումնասիրվել են 2017 թվականի ընթացքում ավարտված քաղաքացիական, սնանկության գործերի, ինչպես նաև արձակված վճարման կարգադրությունների համար կատարված բյուջետային ծախսերը:

Այսպես, դատարաններում 2017 թվականի ընթացքում ավարտվել է՝

91.732 քաղաքացիական գործ,

1943 սնանկության գործ,

76.303 վճարման կարգադրություն:

Քաղաքացիական գործերի համար կատարված ծախսերի հաշվարկման համար անհրաժեշտ է 2017 թվականին ՀՀ առա-

ջին առյանի ընդհանուր իրավասության դատարանների բոլոր գործերի համար կատարված ծախսերից առանձնացնել միայն քաղաքացիական գործերի համար կատարված ծախսերը, որից հետո կորոշվի տվյալ գործերի առանձին կատեգորիաներին վերագրվող ծախսի մասնաբաժինը:

Կատարված բյուջետային ծախսերը դատական գործերի առանձին կատեգորիաներին վերագրելու նպատակով՝ կախված ծախսի բնույթից (հաշվի է առնվել գործերի քանակի ուղղակի և անուղղակի ազդեցությունը տվյալ ծախսին), կիրառվել են ծախսի հաշվարկի հետևյալ մոտեցումները:

Ծախսեր, որոնք հաշվարկվել են ըստ ավարտված գործերի քանակի.

- գրասենյակային նյութերի գծով ծախսեր,
- փոստային կապի ծառայությունների գծով ծախսեր:

Ծախսեր, որոնք հաշվարկվել են ըստ դատարանների աշխատակիցների ընդհանուր թվաքանակում առանձին կատեգորիայի դատական գործերին առնչվող աշխատակիցների թվաքանակի տեսակարար կշռի.

- կոմունալ ծառայությունների գծով ծախսեր,
- էներգետիկ ծառայությունների գծով ծախսեր,
- կապի ծառայությունների գծով ծախսեր (բացառությամբ փոստային կապի),

- մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր,
- կենցաղային նյութերի գծով ծախսեր,
- մաշվածության գծով ծախսեր:

Ծախսեր, որոնք հաշվարկվել են ըստ դատավորների ընդհանուր թվաքանակում առանձին կատեգորիայի դատական գործեր քննող դատավորների թվաքանակի տեսակարար կշռի.

- համակարգչային ծառայությունների գծով ծախսեր,
- տեղեկատվական ծառայությունների գծով ծախսեր,
- սարքեր և սարքավորումների սպասարկման ծառայությունների գծով ծախսեր,
- թարգմանչական ծառայությունների գծով ծախսեր:

Քաղաքացիական գործին անմիջապես առնչվող աշխատակիցների (քաղաքացիական գործեր քննող դատավորներ, նրանց կցված դատական ծառայողներ, նիստերի քարտուղարներ) աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների և սոցիալական փաթեթի ծախսերը հաշվարկի մեջ ընդգրկվել են հստակ հաշվարկներով:

Հաշվարկի մեջ չեն ընդգրկվել դատական կարգադրիչների և աշխատակազմերի այն աշխատակիցների աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների և սոցիալական փաթեթի ծախսերը, որոնք ուղղակի կապված չեն դատական գործերի հետ: Մակայն հարկ է նշել, որ եթե տվյալ աշխատակիցների վարձատրությանն ուղղված ծախսերը հաշվարկի մեջ ներառվեին ըստ քաղաքացիական գործեր քննող դատավորների թվաքանակի, ապա քաղաքացիական գործի ծախսերը կավելանային գրեթե 67 տոկոսով:

Ուսումնասիրության ընթացքում սնանկության վերաբերյալ միավոր գործի համար կատարված ծախսերի չափը նույնականացվել է քաղաքացիական գործերի ծախսատարության հետ: Ուստի մեկ քաղաքացիական գործի համար կատարված ծախսի չափը որոշելու համար քաղաքացիական ոլորտի ընդհանուր ծախսից նվազեցվել են վճարման կարգադրությունների համար կատարված ծախսերը և բաժանվել քաղաքացիական և սնանկության վերաբերյալ գործերի քանակի հանրագումարի վրա.

$(2\ 277\ 290\ 939 - 121\ 346\ 187) / (91732 + 1943) = 23015$ ՀՀ դրամ:

Այսպիսով, քաղաքացիական գործի միավորի ծախսը հավասար է 23015 ՀՀ դրամ: Միաժամանակ հարկ է նշել, որ քաղաքացիական գործերով գանձվող պետական տուրքի չափերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պարտավորական իրավահարաբերություններից (այս տեսակի գործերը կազմում են ընդհանուր գործերի ավելի քան 80 տոկոսը) բխող մեկ քաղաքացիական գործի համար գանձվող պետական տուրքի գումարի չափը կազմում է միջինը 8.554 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճարման կարգադրություններ արձակելու վերաբերյալ գործերի համար կատարվող ծախսերի հարաբերակցությունը՝ կապված աշխատանքի ծավալի և նյութական ծախսերի հետ, զգալի տարբերվում է քաղաքացիական գործի նույն հարաբերակցությունից, առանձին ուսումնասիրվել են 2017 թվականի ընթացքում վճարման կարգադրությունների համար կատարված ծախսերը՝ քաղաքացիական գործերի համար կատարվող ծախսերից տարանջատելու նպատակով: 2017 թվականի ընթացքում արձակված վճարման կարգադրությունների համար կատարված ընդհանուր ծախսը կազմել է 121 346 187 դրամ, իսկ վճարման կարգադրության գործի միավորի ծախսը հավասար է 1590,32 ՀՀ դրամի:

Արդյունքում՝ միայն մեկ տարում պետական բյուջեից մեկ միլիարդ երեք հարյուր քսանվեց միլիոն դրամ է ծախսվել քաղաքացիական գործերի քննության, ինչպես նաև հարյուր քսանմեկ միլիոն դրամից ավելի՝ վճարման կարգադրությունների համար: Այդ գումարի առյուծի բաժինը բանկերի ու վարկային կազմակերպությունների համար պետության կողմից կատարված անհատույց «արդարադատական» ծառայություններն են: Սա ծախսատար կամ անարդյունավետ արդարադատության բացահիկ օրինակ է:

Վարչական գործերի քննության համար կատարվող ծախսերի հաշվարկը

Կախված ծախսի բնույթից (հաշվի է առնվել գործերի քանակի ուղղակի և անուղղակի ազդեցությունը տվյալ ծախսի վրա)՝ գրասենյակային նյութերի, փոստային կապի, համակարգչային, տեղեկատվական, սարքեր և սարքավորումների սպասարկման, թարգմանչական ծառայությունների գծով ծախսերը վարչական գործերի համար կատարվող ծախսերի հաշվարկում ներառվել են 100 տոկոսով, իսկ կոմունալ, էներգետիկ, կապի (բացառությամբ փոստային կապի), մասնագիտական ծառայությունների, կենցաղային նյութերի, մաշվածության գծով ծախսերը ներառվել են 2017 թվականին համապատասխան տնտեսագիտական հոդվածներով կատարված ընդամենը ծախսերից վարչական գործերին առնչվող աշխատողների (դատավորներ, նրանց կցված դատական ծառայողներ, նիստերի քարտուղարներ) քանակի համամասնությամբ:

Վարչական գործերի համար կատարվող ծախսերի հաշվարկի արդյունքում պարզվել է, որ վարչական գործի միավորի ծախսը հավասար է 35.356 ՀՀ դրամ:

Մինչդեռ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ բազմաթիվ են այն գործերը, որոնցով վիճարկվող վարչական ակտերով նշանակված տուգանքների գումարները հիմնականում կազմում են 5.000 ՀՀ դրամ: Դեռ ավելին, պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր ճանաչելու հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործերի 91.5 տոկոս հայցվորները ֆիզիկական անձինք են ընդդեմ ՀՀ ճանապարհային ոստիկանության (հայցագինը հիմնականում 5.000 ՀՀ դրամ է), ուլքեր, սակայն, նշված

գործերի շրջանակներում ազատված են պետական տուրք վճարելու պարտավորությունից, մինչդեռ, ՀՀ ճանապարհային ու տիկանությունը՝ դատարանի կողմից այդ հայցերի բավարարման դեպքում, պարտավորվում է վճարել և պետական տուրքի գումարը՝ ըստ օրենքի 4000 ՀՀ դրամը, և նշված գործերի շրջանակներում պարտավորվում է փոխհատուցել ֆիզիկական անձի ներկայացուցչի՝ փաստաբանի, դատարանի կողմից սահմանված ողջամիտ վարձատրությունը, որն ընտրանքային եղանակով ուսումնասիրված գործերի շրջանակներում կազմում է միջինը 15000 ՀՀ դրամ:

Ամփոփելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ պետական մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր ճանաչելու հետ կապված իրավահարաբերությունների վերաբերյալ վարչական գործերով պետության վարչարարական բեռը մեկ գործի հաշվով կազմում է միջինը $15000 + 35356 = 50356$ ՀՀ դրամ, իսկ հնարավոր գանձվող գումարը՝ 5000 ՀՀ դրամ (վիճարկվող ակտի հայցագին): Արդյունքում՝ նման տիպի վարչական արդարադատություն իրականացնելու համար պետությունը տարեկան ծախսում է ավելի քան 625 միլիոն դրամ՝ շուրջ 70 միլիոն դրամին առնչվող վեճը լուծելու համար: Կամ, որ միևնույն է՝ պետությունը տարեկան ավելի քան 555 միլիոն դրամի անհատույց «արդարադատական» ծառայություն է մատուցում տրանսպորտային երթևեկության կանոնների խախտմանն առնչվող վեճերի լուծման համար:

5.2. Արդյունավետ արդարադատության նախադրյալների ապահովման ուղղությամբ քայլերը

Միջազգային պրակտիկայում արդարադատության արդյունավետությունը բացահայտվում է չորս հիմնական բաղադրիչով՝ **նորմատիվ** (օրենսդրության որակ), **ընթացակարգային** (դատական ակտերի որակ, ողջամիտ ժամկետներ, հրապարակայնություն), **կազմակերպական** (նյութական, տեխնիկական և կադրային ռեսուրսներ) և **կոմունիկատիվ** (դատավարության մասնակիցների հետ դատարանի շփման մշակույթը):

Բարձրագույն դատական խորհուրդն իր ձևավորման պահից ի վեր իր առջև նպատակ է դրել նախադրյալներ ստեղծել և էականորեն բարելավել արդարադատության արդյունավետու-

թյան ցուցանիշները վերոհիշյալ չորս հիմնական ուղղություններով:

Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովն (CEPEJ) իր 2018 թվականին հրապարակած՝ **«Եվրոպական դատական համակարգեր. Արդարադատության արդյունավետություն և որակ»** վերտառությամբ ուսումնասիրության շրջանակներում, գրեթե բոլոր ցուցիչներով (բյուջետային հատկացումներ, դատավորների և նրանց աշխատակազմերի քանակ, դատաքննության ժամկետներ և այլն), որոնք ուղղակի ազդեցություն ունեն արդարադատության արդյունավետության և որակի վրա, վերլուծելով եվրոպական պետությունների դատական համակարգերը՝ առանձնակի մտահոգություն առաջացնող երկրների շարքում մի քանի անգամ հիշատակում է Հայաստանի Հանրապետությունը³:

Բարձրագույն դատական խորհուրդը, բազմագործոն վերլուծության արդյունքում գնահատելով դատական իշխանության համակարգում ստեղծված իրավիճակը, հանգեց այն հետևությանը, որ.

նախ՝ հատվածական մոտեցմամբ առկա խնդիրների արդյունավետ լուծումն անհնարին է, պահանջվում է հստակ հայեցակարգի վրա խարսխված համակարգային մոտեցում,

երկրորդ՝ ոլորտի բարեփոխումների ու ռազմավարական բնույթի նախկին մոտեցումներն իրենց չեն արդարացրել հիմնականում այն պատճառով, որ շեշտը դրվել է սուբյեկտիվ գործոնի վրա, չի երաշխավորվել այնպիսի մեխանիզմների արմատավորումը, որոնք նվազագույնի կհասցնեն ոչ իրավաչափ գործողությունների հնարավորությունը, կերաշխավորեն ողջամիտ ժամկետներում գործերի քննությունը, կձևավորեն որակյալ աշխատակազմեր,

երրորդ՝ բավարար ուշադրություն չի դարձվել իրենց բնակավայրերից հեռու նշանակված դատավորների համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման ու տեղափոխումների հարցում իրավաչափ սպասելիքներ ունենալու հիմնախնդրին,

չորրորդ՝ դատարանների համար պատշաճ նյութատեխնիկական պայմանների ստեղծման խնդիրը տարիներ շարունակ մղվել է հետին պլան,

³ <https://rm.coe.int/rapport-avec-couv-18-09-2018-en/16808def9c>

հինգերորդ՝ պետական ու հանրային օրակարգի խնդիր չի դարձել դատավորի բարձր հեղինակության ձևավորման հրամայականը, շեշտը դրվել է պատժի հնարավորության միջոցով նրանց հնազանդ ու կոռուպցիայից գերծ պահելու վրա,

վեցերորդ՝ բավարար ուշադրություն չի դարձվել բարձր որակավորում ունեցող և թեկուզ նախարարությունների աշխատակիցներին համարժեք վարձատրվող դատական ծառայողների ինստիտուտի ձևավորման վրա:

Մի շարք այլ հանգամանքների անդրադարձ կատարվել է նաև տարեկան հաղորդման այլ բաժիններում: Այս բաժնում հիմնական շեշտադրումը վերաբերում է նրան, որ.

ա) արդյունավետ արդարադատության համար պետք է առկա լինեն արդարադատության անհրաժեշտ ու բավարար ենթակառուցվածքներ: Դրանք ոչ միայն շենքային ու տեխնիկական հնարավորություններն են, այլև, ու առաջին հերթին, արդարադատության կազմակերպման առաջադիմական մեթոդների ու եղանակների ամբողջությունը, ժամանակակից տեխնիկական հնարավորությունների խելամիտ օգտագործումը, այս հարցերում միջազգային փորձին շարունակական հաղորդակից լինելն ու այն հաշվի առնելը,

բ) դեռևս 1184 թվականին Մխիթար Գոշը շեշտում էր, որ դատավորը պետք է լինի «չափահաս, հմուտ, քաջուսումն, գիտուն, օրենսգետ, բարի, առաքինի, աննախանձ, ուշիմ, զգաստ, անաչառ, խիստ անկաշառելի, համբերող»: Եվրոպական իրավական մշակույթի տեսանկյունից ժամանակակից դատավորի թեկնածուի արժանիքները գնահատելիս պետք է հաշվի առնվեն նրա բարձր որակի մտավոր և անձնական կարողությունները՝ որակավորումը, մասնագիտական աշխատանքի փորձառությունը, դատավոր դառնալու կամ առաջխաղացման շարժառիթն ու ակնկալիքը, բնավորությունը, քնդհանուր զարգացածությունը, ազնվությունը, նրբանկատությունը, համոզելու կարողությունը, հավասարակշիռ պահվածքը, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման, ունկնդրելու և հաղորդակցվելու կարողությունների մակարդակը, սեփական ինքնությունն արտահայտելու ունակությունը, արդի իրավական մշակույթին հաղորդակից լինելու մակարդակը, պատասխանատվություն ստանձնելու և ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակությունը:

Նման որակներով մասնագետները մեկ օրում չեն ծնվում, տասնամյակներ են անհրաժեշտ հանրային այնպիսի միջավայր

ստեղծելու համար, որ մարդկանց մոտ կենսական անհրաժեշտություն դառնա այդ որակներին լիարժեք հասանելի դատավորների առկայությունը: Իսկ դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ դատական իշխանությունը դադարի հանրային մտածողության մեջ ընկալվել որպես քաղաքական իշխանության նպատակների իրականացմանն օժանդակող համակարգ, իսկ անփոփոխելիության սկզբունքով նշանակվող դատավորներն ունենան հեռանկարի իրավաչափ սպասելիքներ,

գ) արդյունավետ արդարադատության կարևորագույն ու հիմնարար երաշխիքներից է նաև անհրաժեշտ իրավագիտակցության ու իրավական մշակույթի առկայությունը: Դա իր հերթին պահանջում է կրթության ու դաստիարակության համարժեք որակներ, լիարժեք իրավունակ անհատների առկայություն: Միաժամանակ գերխնդիր է երկրում սահմանադրականության ու սահմանադրական մշակույթի անհրաժեշտ որակների ապահովումը, սահմանադրական մշտադիտարկման ու սահմանադրական պատասխանատվության գործուն համակարգերի առկայությունը,

դ) Բարձրագույն դատական խորհուրդը լայն ու շարունակական նախաձեռնություններ է իրականացնելու ոչ միայն ապահովելու արդյունավետ արդարադատության համար իրավական, տեխնիկական, կազմակերպչական խնդիրների ժամանակին ու արդյունավետ լուծումներ, այլև ձևավորելու արդարադատական նոր մշակույթ, մեր ինքնության որակներին համարժեք արդարության այնպիսի ընկալում, երբ յուրաքանչյուրը խորությամբ կընկալի Մեծն Նարեկացու պատգամն առ այն, որ մարդու գործած մեղքը նրա հանցանքը չէ, այլ նրա դժբախտությունը, ու մեր հասարակությունը պետք է ունենա կենսագոյի այն միջավայրը, ուր յուրաքանչյուրը կկարողանա մեղքերի թողության հնարավորություն ունենալ ու ապրել որպես Մարդ:

ԱՄՆ-ում դատավոր լինելն արդեն իսկ մարդու ինքնության բնութագիր է, նրա առանձնահատուկ տեղն ու դերը խորհրդանշող պարագա հասարակության մեջ: Մեզանում քանի դեռ պետական չինովնիկները խորհրդարանի կամ մեկ այլ ամբիոնից չդադարեն անհասցե, թացը չորին խառնելով ու հաճախ ինքնահաստատման նկրտումներից դրդված պախարակող ու նվաստացուցիչ խոսքեր հնչեցնել դատավորների հասցեին, մենք դժվար թե հնարավորինս արագ կունենանք անկախ Հայաստանի ապագային պատշաճող արդյունավետ արդարադատություն:

5.3. «Սև խոռոչների» բացահայտման ու հաղթահարման ուղղությամբ քայլերը

Դատական իշխանության ոլորտում համակարգային վերլուծությունները բացահայտեցին մի շարք խնդիրներ, որոնք պայմանականորեն կարող են բնորոշվել որպես «սև խոռոչներ»:

Միջազգային պրակտիկայում արդարադատության արդյունավետությունն ու մատչելիությունը համարվում են գերակա խնդիր և իրավական պետության կարևոր բնութագրիչ:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նույնպես սահմանված է, որ՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրատարրերից է:

Հայաստանում այս խնդրին բավարար ուշադրություն չի դարձվել:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի վավերացումից հետո Հայաստանի Հանրապետության դեմ կայացվել է 103 վճիռ, որից 40-ը (38.8 տոկոսը) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման հիմքով: Օրինակ, Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ 3627/06, 10.07.2012թ.) կամ Ագանիկյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ 21791/12, 18.05.2018թ.) գործերով ուղղակի փաստվում է, որ ակնհայտ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Նման խախտում է արձանագրվել նաև 31.01.2019թ. վճռով՝ ՖԻԼ ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի քաղաքացիական գործով: Մտահոգիչ են հատկապես վերջին տարիներին արձանագրված խախտումների ժամկետները: Օրի-

նակ, ՄԻԵԴ 2017 թվականի վճիռներով Դնգիկյանն ընդդեմ Հայաստանի գործով այն կազմում է 13 տարի և չորս ամիս, Նիկոդոսյանն ընդդեմ Հայաստանի գործով՝ 5 տարի չորս ամիս, Պապոյանն ընդդեմ Հայաստանի գործով՝ 8 տարի 11 ամիս, իսկ 2018 թվականին ընդունված Ֆիդանյանն ընդդեմ Հայաստանի գործով՝ 7 տարի և 8 ամիս:

Ցավոք, նման իրավիճակի պատճառները խորությամբ չեն հետազոտվել ու հաղթահարվել: Ներկայումս թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական և թե՛ վարչական գործերով տարիներ շարունակ քննությունները հետաձգվում են, իսկ առանձին դատավորների մոտ 50 տոկոս և ավելին են նշանակված ու չկայացած նիստերը:

Միայն Երևան քաղաքում ներկայումս առկա է 155 քրեական և 1628 քաղաքացիական գործ, որոնց քննությունը երկու և ավելի տարիներ ձգձգվում է (կան գործեր, որոնց քննությունը չի ավարտվում 10 և ավելի տարիներ): Միայն 7 դատավորների մոտ նման գործերի ընդհանուր թիվը հասնում է 1123-ի: Իսկ, օրինակ, վարչական դատարանի Վանաձորի նստավայրում դատավորի մոտ առկա է 2 և ավելի տարիներ քննվող 169 գործ, որոնց ավարտված չլինելը հիմնականում պատճառաբանվում է՝ «առկա է ապացույց հետազոտելու անհրաժեշտություն» խնդրահարույց ձևակերպմամբ:

Այս գործերից շատերը հավանաբար կրողորքարկվեն վերաքննիչ ու վճռաբեկ ատյաններ: Նման պարագայում քննության ավարտը կրկնակի ու գուցե եռակի անգամ ձգձգվելու վտանգի տակ կհայտնվի:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հստակ իրավական դիրքորոշումն է, որ քրեական վարույթի տևողությունը որոշելիս հաշվի առնվող ժամանակահատվածն սկսվում է այն օրվանից, երբ անձին մեղադրանք է առաջադրվում: Այս դիրքորոշումն արտահայտված է նաև վերոնշյալ՝ Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի գործով: Տվյալ հանգամանքը հաշվի առնելով, որպես արտառոց օրինակ, անհրաժեշտ է անդրադառնալ նաև խոշոր չափի կաշառք ստանալու հարցով երեք դատավորների դեմ հարուցված քրեական գործերին ու դրանց ներկա ընթացքին: Այդ գործերը հարուցվել են 28.10.2016թ., 11.05.2017թ. և 20.05.2017թ.: 2019թ. մարտի 1-ի դրությամբ այդ գործերով բուն դատաքննությունը դեռևս չի սկսվել: Փոխվել է դատավորների խափանման միջոցը՝ նրանք գրավի դիմաց կալանքից ազատ

են արձակվել, շարունակում են ստանալ դատավորի աշխատավարձ՝ գուցե նաև որևէ շահագրգռվածություն չունենալով գործի արագ ավարտի հարցում: Նման իրավիճակը պայմանավորված է ոչ միայն սուբյեկտիվ գործոններով, այլև օրենսդրական բացերով, ինչպես նաև դատական գործընթացի ոչ պատշաճ պլանավորման ու կազմակերպման հանգամանքով: Բացի դրանից, Հայաստանում արդարադատության ոլորտում շարունակական մշտադիտարկում չի իրականացվել, իսկ գուտ վիճակագրությունը ներկայացվել է տարեկան երկու անգամ՝ որպես նկարագրական նյութ:

Խնդրահարույց են նաև խափանման միջոցի ընտրության հարցում հստակ չափորոշիչների բացակայությունը և դատավորների հայեցողության սահմանների անհստակությունը: Դատական հայեցողությունն իրավաչափ տարբերակներից ընտրություն կատարելու հնարավորության մեջ է, այլ ոչ թե սուբյեկտիվ կամքի դրսևորման անսահմանության մեջ:

Բարձրագույն դատական խորհուրդը ծրագրում է այս հարցերը դարձնել լուրջ քննարկումների առարկա, Դատական օրենսգրքով նախատեսված կարգով սահմանել գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետներ՝ ըստ գործերի տեսակների ու բարդության, և դրանց պահպանման նկատմամբ իրականացնել մշտադիտարկում:

Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը վկայում է նաև, որ դրանցից 37-ը (35.9%) վերաբերում է ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտմանը, 22-ը (21.4%)՝ սեփականության իրավունքի խախտմանը: Տվյալ իրավունքների շարունակական խախտումները վկայում են, որ Հայաստանի արդարադատական համակարգի համար, այսպես կոչված, «սև խոռոչի» բնույթ է ստացել նաև նոր հանգամանքների հիմքով գործերի վերանայման համակարգը: Այս ոլորտի իրավակարգավորումները Սահմանադրական դատարանի կողմից բազմիցս են քննության առարկա դարձել: Մասնավորապես, ՄԴՈ-690 (9.04.2007թ.), ՄԴՈ-758 (9.09.2008թ.), ՄԴՈ-833 (13.10.2009թ.), ՄԴՈ-866 (23.02.2010թ.), ՄԴՈ-984 (15.07.2011թ.), ՄԴՈ-1114 (18.09.2013թ.) որոշումներում ոչ միայն Սահմանադրությանը հակասող են ճանաչվել նոր հանգամանքների հիմքով գործերի վերանայմանը վերաբերող առանձին դրույթներ, այլև հստակ իրավական դիրքորոշումներ են արտահայտվել ինչպես օրենսդ-

րական բարեփոխումների, այնպես էլ դատական պրակտիկան իրավաչափ հենքի վրա դնելու առնչությամբ: Սահմանադրական դատարանը ՍԴՌ-1114 որոշման եզրափակիչ մասում հատուկ շեշտադրել է, որ «նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է *is po facto* (փաստի ուժով) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի և/կամ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը՝ բացառելով դրա օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը»: Սակայն իրականությունն այն է, որ դեռևս դատական պրակտիկայում չի ձևավորվել հստակ նախադեպ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով Սարդու իրավունքների եվրոպական դատարանի ու Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի հստակ իրացման ուղղությամբ, որի պարագայում նույնաբնույթ խախտումները նման շարունակական դրսևորում չէին ունենա:

Դատական համակարգում ստեղծված անմխիթար վիճակի ցցուն վկայություններից է նաև գործավարության մշակույթի չափազանց ցածր մակարդակը, պարտականությունների նկատմամբ առանձին դեպքերում դրսևորված քամահրական վերաբերմունքը, դատական ծառայությունների անարդյունավետ աշխատանքը, դատական գործավարության նկատմամբ մշտադիտարկման իսպառ բացակայությունը:

Այդ ամենի բացահայտման առիթ հանդիսացավ, մասնավորապես, սնանկության դատարանի կազմավորումից հետո դատական գործերն այդ դատարանին հանձնելու գործընթացի նկատմամբ Դատական դեպարտամենտի կողմից իրականացված վերահսկողությունը:

Շուրջ 800 գործերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առկա են սահմանված գործավարության կանոնների համատարած խախտումներ:

Բերենք մի քանի կոնկրետ օրինակներ: Այսպես. թիվ ԵԿԴ/0121/04/12 սնանկության գործում առկա փաստաթղթերի ծավալը կազմում է 109 թերթ: Գործի վերջում ամրացված է գործում առկա փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող 2 ցուցակ, որոնցից առաջինը չի վերաբերում սույն գործին, իսկ երկրորդը, որը վերաբերում է սույն գործին, չի արտացոլում գործում առկա ամբողջ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը և անստորագիր է:

Թիվ ԵԿԴ/0119/04/17 սնանկության գործը բաղկացած է 2 հատորից: 1-ին հատորը փաստացի բաղկացած է **253 թերթից**, սակայն ցանկում նշված է **209 թերթ**, քանի որ 7-րդ թերթից հետո առկա են ևս 5 թերթեր, որոնք ամրացված են 7-րդ թերթին և համարակալված չեն. 8-րդ թերթից հետո ևս 3 թերթ, 9-րդ թերթից հետո՝ 6 թերթ, 10-րդ թերթից հետո՝ 8 թերթ, 11-րդ թերթից հետո՝ 2 թերթ, 12-րդ թերթից հետո՝ 3 թերթ, 13-րդ թերթից հետո՝ 3 թերթ, 14-րդ թերթից հետո՝ 4 թերթ, 15-րդ թերթից հետո՝ 2 թերթ, 17-րդ թերթից հետո՝ 1 թերթ, 18-րդ թերթից հետո՝ 1 թերթ, 19-րդ թերթից հետո՝ 3 թերթ. 91-րդ և 92-րդ, 95-րդ և 96-րդ, 102-րդ և 103-րդ և 107-րդ և 108-րդ թերթերի արանքում առկա են դատարան վերադարձված ծրարներ, որոնք համարակալված չեն:

2-րդ հատորը փաստացի բաղկացած է **215 թերթից**, սակայն ցանկում նշված է **208 թերթ**, քանի որ 85-րդ և 86-րդ թերթերի միջակայքում առկա են 3 անդորրագրեր, իսկ 95-րդ և 96-րդ, 100-րդ և 101-րդ, 101-րդ և 102-րդ, 110-րդ և 111-րդ, 113-րդ և 114-րդ ու 165-րդ և 166-րդ թերթերի միջակայքում առկա են դատարան վերադարձված ծրարներ, որոնք համարակալված չեն:

Թիվ ԵԿԴ/0026/04/12 սնանկության գործով 9-րդ էջը համարակալված է, բայց առանց որևէ գրառման՝ գտնվում է մաքուր վիճակում/?/:

Նմանատիպ են նաև թիվ ԵԿԴ/0029/04/15, ԵԿԴ/0079/04/14, ԵԿԴ/0115/04/13 սնանկության գործերը:

Թիվ ԵԱԲԴ/0462/04/16 սնանկության գործի 20-րդ հատորի 115-րդ էջում **դատարկ թղթի վրա(?)** առկա են միայն Նշան Հայրապետյան անուն ազգանունը և վերջինիս ստորագրությունը: Այլ նշումներ դրանում առկա չեն: Այսինքն՝ այնտեղ ինչ ցանկանան կարող են հետազայում լրացնել:

Ուսումնասիրված գործերում առկա են դատավորի, ինչպես նաև դատական նիստերի քարտուղարի կողմից գործում առկա դատական նիստի պարզ թղթային եղանակով կազմված արձանագրությունը չստորագրելու դեպքեր, ինչպես նաև դատավորի կողմից չստորագրված և չկնքված միջադատական ակտեր (օրինակ, թիվ ԵԿԴ/0444/04/16, ԵԿԴ/0398/04/15, ԵԿԴ/0136/04/14, ԵԱԲԴ/0110/04/14, ԵԱԲԴ/0239/04/16, ԵԱԲԴ/0175/04/16, ԵԱԲԴ/0009/04/18, ԵԿԴ/0596/04/16, ԵԴ/0378/04/18, ԵԿԴ/0081/04/17, ԵԿԴ/0375/04/16, ԵԿԴ/0303/04/16, ԵԿԴ/0111/04/13, ԵԿԴ/0008/04/16, ԵԿԴ/0130/04/17, ԵԿԴ/0478/04/16, ԵԿԴ/0130/04/15, ԵԿԴ/0284/04/16, ԵԿԴ/0141/04/15, ԵԿԴ/0133/04/17,

ԵԿԴ/0353/04/16, ԵԿԴ/0196/04/14, ԵԿԴ/0569/04/16, ԵԿԴ/0644/04/16, ԵԿԴ/0385/04/16 և բազմաթիվ այլ գործեր/։ Ալենհայտ է, որ նման դեպքերում իրավասու սուբյեկտները ժամանակին չեն ստանում դատական ակտերը և վտանգվում է նաև դրանց դեմ բողոք բերելու իրավունքի իրացումը։

Բազմաթիվ են դեպքերը, երբ դատարանը տևական ժամանակ գործը ողջամիտ ժամկետում քննելուն ուղղված որևէ դատավարական գործողություն չի իրականացրել (օրինակ, թիվ ԵԿԴ/0121/04/12, ԵԿԴ/0006/04/14, ԵԶԴ/0487/04/08, ԵԶԴ/0487/04/08, ԵԿԴ/0247/04/16, ԵԿԴ/0106/04/13 և այլն), ինչպես նաև չկան գործերը կասեցնելու վերաբերյալ անհրաժեշտ հիմնավորումներ։

Ստեղծված իրավիճակը նկատի ունենալով՝ Բարձրագույն դատական խորհուրդը Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի հիման վրա մշակում է և առաջիկայում կհաստատի դատարան փաստաթղթերի հանձնման, ըստ տեսակների՝ գործերի դասակարգման և դատարանների գործավարության այլ կանոնները, ինչպես նաև դրանց նկատմամբ մշտադիտարկման հստակ համակարգ։ Քայլերն ուղղված են նրան, որ իրավունքի գերակայության սկզբունքը ճիշտ ընկալվի և երաշխավորվի յուրաքանչյուր գործ քննելիս, արմատավորվի արդարադատության բարձր մշակույթ և դրա կրողը լինեն ոչ միայն դատավորները, այլև դատական իշխանության յուրաքանչյուր աշխատակից։

5.4. Բյուջետային պլանավորման նոր մոտեցումները

Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից կատարված և 2018 թվականին հրապարակված՝ «**Եվրոպական դատական համակարգեր. Արդարադատության արդյունավետություն և որակ**» վերտառությամբ ուսումնասիրության շրջանակներում արձանագրվել է, որ Հայաստանի Հանրապետությունը 2016 թվականի դրությամբ դատական իշխանությանը պետական բյուջեից կատարվող հատկացումների և բնակչության թվի հարաբերակցության առումով գիջում է Եվրոպայի խորհրդի գրեթե բոլոր պետություններին և առաջ է միայն Ադրբեջանից (0.2€-ով)։ Նշված ուսումնասիրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից մեկ շնչին դատական իշխանությանը հատկացվող գումարը կազմում է մոտ 8€, ինչը մոտ 8 անգամ ցածր է միջին եվրոպական ցուցանիշից (64€)⁴։

⁴ <https://rm.coe.int/rapport-avec-couv-18-09-2018-en/16808def9c>

Սահմանադրական ներկա իրավակարգավորումներն առաջին պլան են մղում ծրագրանպատակային քաղաքականության իրականացումը հատկապես ֆինանսատնտեսական խնդիրների լուծման ոլորտում:

Մինչև 2018 թվականը Դատական դեպարտամենտի բյուջետային հայտը հաստատել է Դատարանների նախագահների խորհուրդը, իսկ 2018 թվականի ապրիլի 9-ից ուժի մեջ մտած Դատական օրենսգրքով սահմանվեց, որ Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների բյուջետային հայտն հաստատում է Բարձրագույն դատական խորհուրդը:

2008-2018 թվականների բյուջեի պլանավորման ժամանակ առանձնացվել է մեկ սկզբունքային մոտեցում՝ բյուջեի պլանավորում՝ ելնելով ձեռք բերված մակարդակից:

Այս մոտեցումը հիմնվել է նախորդ տարվա ցուցանիշների վրա՝ հաշվի առնելով ակնկալվող փոփոխությունները:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից հաստատված Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների 2019 թվականի բյուջետային հայտի պլանավորման ժամանակ դրսևորվեց սկզբունքային այլ մոտեցում: Խնդիր դրվեց նախ՝ բազմագործոն վերլուծության արդյունքներով բացահայտել առկա վիճակի նեղ տեղերն ու հրատապ լուծում պահանջող խնդիրները: Երկրորդ՝ բյուջետային պլանավորումը թղթակցել համակարգային բարեփոխումների ծրագրի հետ: Երրորդ՝ իրականացնել արդարադատության ծախսատարության գնահատում և ծախսերի կառուցվածքի օպտիմալացման խնդիր առաջադրել:

Բյուջեի կազմումն ակնկալվող արդյունքներից ելնելով՝ առավել հայտնի է ծրագրային բյուջետավորում կամ ըստ արդյունքների բյուջետավորում անվանմամբ, որը վերջին տարիներին բավականաչափ լայն տարածում է ստացել տարբեր երկրներում:

Բյուջետային հայտի նախապատրաստումը Բարձրագույն դատական խորհուրդը կառուցել է նպատակների հիերարխիայից ելնելով՝ գնահատելով դրանց իրականացման համար պահանջվող ռեսուրսների ծավալը ու ծախսերի հետգնման հնարավորությունները:

Բարձրագույն դատական խորհուրդը նախ մշակել է «Հայաստանի Հանրապետությունում արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգ», որից բխեցրել է արդյունավետ արդարադատության երաշխավորման կարճաժամկետ և երկարաժամկետ ուղղությունները: Դրանց

մի մասը ներառվել է Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների 2019 թվականի բյուջետային հայտում:

Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների հեռանկարային բյուջետային հայտերում արդյունավետ արդարադատության երաշխավորման կարճաժամկետ և երկարաժամկետ ուղղությունների ամբողջական ներառմամբ նախատեսվում են օրենսդրական և կազմակերպչական բնույթի քայլեր՝ արդարադատության ծախսատարությունը կրճատելու ուղղությամբ:

Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների 2019 թվականի բյուջետային հայտի մշակման հիմքում դրվել են արդյունավետ արդարադատության երաշխավորման և դատական իշխանության անկախությանը նպաստող հետևյալ քայլերը.

1. Բարձրագույն դատական խորհրդի ռազմավարական նշանակության առաջնային խնդիրներից մեկի՝ Դատական իշխանության համակարգը որակյալ կադրերով ապահովելու, ինչպես նաև նվազագույն աշխատանքային ռեսուրսներով առավելագույն արդյունքի ստացման համար ՀՀ դատական իշխանության համակարգում կատարվել է ծառայությունների հնարավոր օպտիմալացում: 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ Դատական դեպարտամենտում հաստիքների քանակը կազմել է 2267 հաստիք: 2018 թվականի ապրիլի 9-ից պետք է ավելանային Բարձրագույն դատական խորհրդի անդամների օգնականների 10 հաստիքներ, իսկ 2019 թվականի հունվարի 1-ից՝ համաձայն Դատական օրենսգրքի 166-րդ հոդվածի 20-րդ մասի՝ սնանկության դատարանի ստեղծմամբ պայմանավորված՝ ևս 62 հաստիք: Այսինքն՝ ընդհանուր առմամբ պետք է ավելանար 72 հաստիք: Մինչդեռ ի կատարումն Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ և 33-րդ կետերով սահմանված դրույթների՝ Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ ԲԴԽ-25-Ո-58 որոշմամբ հաստատվել է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի կանոնադրությունը և կառուցվածքը, իսկ 2018 թվականի օգոստոսի 06-ի թիվ ԲԴԽ-31-Ո-74 որոշմամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտում դատական ծառայության, դատական կարգադրիչների ծառայության, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկերը և հաստիքների քանակները,

որի համաձայն՝ սահմանվել է թվով 2267 հաստիք: Արդյունքում՝ կրճատվել է 72 հաստիք: Միաժամանակ, կատարվել են էական կառուցվածքային փոփոխություններ և հաստիքների կրճատման հետ մեկտեղ որակյալ կադրերին համապատասխան աշխատավարձով ապահովելու նպատակով իրականացվել է աշխատավարձերի բարձրացում:

2. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1515-Ն որոշմամբ դատական համակարգին 2019 թվականին 1,845,618.0 հազար ՀՀ դրամ գումար է հատկացվել մինչ օրս երբևիցե չկիրառված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4112 (Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) հոդվածով, որի մեջ ներառված են նաև դատավորների պարգևատրմանն ու խրախուսմանն ուղղված միջոցները՝ որպես նրանց սոցիալական անկախության ամրապնդման երաշխիք:

3. Հիմք ընդունելով Դատական օրենսգրքի 57-րդ հոդվածի 5-րդ մասը՝ 2019 թվականի պետական բյուջեով 42,840.0 հազար ՀՀ դրամ է հատկացվել նաև իրենց մշտական բնակության վայրից դուրս պաշտոնի նշանակված դատավորներին տվյալ վայրում բնակարանի վարձը փոխհատուցելու նպատակով:

4. Հիմք ընդունելով Դատական օրենսգրքի 57-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 21-ի թիվ 116-Ն որոշմամբ դատավորները ներառվել են սոցիալական փաթեթի շահառուների ցանկում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացվել «Դատավորի՝ դժբախտ պատահարներից ապահովագրության պայմանները և չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

5. Բարձրագույն դատական խորհրդի ռազմավարական նշանակության խնդիրներից մյուսի՝ ՀՀ դատարանների բնականոն գործունեության ապահովման նպատակով դրանց նյութատեխնիկական, վարչական սարքավորումներով ապահովման, ինչպես նաև ՀՀ դատարանների շենքային պայմանների բարելավման նպատակով 2019 թվականի պետական բյուջեից Բարձրա-

գույն դատական խորհրդին և ՀՀ դատարաններին հատկացվել է 703,953.0 հազար ՀՀ դրամ, որի հաշվին կթարմացվի և ձեռք կբերվի ամբողջ դատական համակարգին անհրաժեշտ վարչական սարքավորումների մոտ 75%-ը: Դատարանների շենքային պայմանների բարելավման և բյուջետային բեռը շատ չծանրացնելու նպատակով դատարանների շենքերի հիմնանորոգման, վերակառուցման և նոր շենքերի կառուցման աշխատանքների համար անհրաժեշտ գումարները կնախատեսվեն երկու փուլով՝ հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների համար անհրաժեշտ գումարը կալանավորվի ԲԴԽ-ի և ՀՀ դատարանների 2020 թվականի բյուջետային հայտով, կառուցման աշխատանքները՝ 2021 թվականի բյուջետային հայտով: Կառավարությունը Բարձրագույն դատական խորհրդի կողմից ներկայացված հաշվարկների հիման վրա լրացուցիչ քայլեր է ձեռնարկում այդ աշխատանքներն ավելի սեղմ ժամկետներում իրականացնելու համար:

6. Բարձրագույն դատական խորհրդի կողմից մշակված՝ «Հայաստանի Հանրապետությունում արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգից» բխող արդյունավետ արդարադատության երաշխավորման ռազմավարական առաջնահերթությունների շրջանակներում արդարադատության ծախսատարության կրճատման գործընթացին Էապես կնպաստի նաև անցումն Էլեկտրոնային արդարադատության, որի առաջին փուլը նախատեսված է իրականացնել ընթացիկ տարում, որի համար 2019 թվականին պետական բյուջեից ԲԴԽ-ին և ՀՀ դատարաններին հատկացվել է 40,200.0 հազար ՀՀ դրամ, իսկ հիմնական աշխատանքները կավարտվեն երեք փուլով:

7. Դատական գործերի թվայնացման աշխատանքների համար՝ համապատասխան տեխնիկայի (համակարգիչների, սկաներների և այլն), նյութերի (Էլեկտրոնային կրիչների) և աշխատանքների համար անհրաժեշտ աշխատուժի ներգրավման նպատակով «դատական գործերի փաստաթղթերի թվայնացում և Էլեկտրոնային դատարանների համակարգի ներդրում Հայաստանի Հանրապետությունում» միջազգային դոնոր կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2017 թվականի ապրիլի 21-ին 264,250.0 ԱՄՆ դոլար (որից՝ 187,000.0 ԱՄՆ դոլար օտարերկրյա կազմակերպությունից, 77,250.0 ԱՄՆ դոլար՝ ՀՀ-ի համաֆինանսավորմամբ) գումար էր հատկացվել ՀՀ արդարադատության նախարարությանը,

քանի որ 2014 թվականից սկսած արխիվացված դատական գործերի թվայնացման աշխատանքների ծրագրի իրականացնողն է համարվել ՀՀ արդարադատության նախարարությունը: Տվյալ դրամաշնորհային ծրագրով իրականացվել են այլ բնույթի աշխատանքներ՝ գործնականում արխիվացված դատական գործերի թվայնացման ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել:

Բարձրագույն դատական խորհուրդը նախաձեռնել է այդ գործընթացն իրականացնել 2019 թվականից: 2019 թվականի պետական բյուջեով ԲԴԽ-ին և ՀՀ դատարաններին բյուջետային հատկացումների տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (4239) հոդվածով հատկացվել է 134,000.0 հազար ՀՀ դրամ դատական համակարգում կուտակված մշտական պահպանության և պահպանության ոչ ենթակա դատական գործերի (շուրջ 446667 գործ) արխիվացման նպատակով:

Նկատի ունենալով, որ դատական իշխանության ոլորտում բյուջետային քաղաքականության իրականացումը վերապահված է Բարձրագույն դատական խորհրդին, Խորհուրդը գտնում է, որ միջազգային դոնոր կազմակերպությունների հետ այս ոլորտին առնչվող աշխատանքներում, ծրագրերի կազմման ու իրականացման բոլոր փուլերում առաջնային պետք է համարվի գործակցությունը Բարձրագույն դատական խորհրդի հետ: Այս խնդիրն անմիջական աղերսներ ունի նաև իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական սկզբունքի հետևողական իրացման հետ:

6. ԴԱՏԱԿԱՆ ԻԾԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Դատական իշխանության անկախության երաշխավորումը որպես երկրի իրավական անվտանգության առանցքային խնդիր

Հայաստանի Հանրապետությունը չունի երկրի իրավական անվտանգության հստակ հայեցակարգ: Ուստի երկրի իրավական անվտանգության համալիր հայեցակարգի մշակումը և

հետևողական իրացումը դառնում է ներկա համակարգային զարգացումների հրամայականը:

Նման հայեցակարգը կյրացնի ու կամբողջականացնի երկրի ազգային անվտանգության հայեցակարգը՝ դառնալով դրա կարևոր ու անքակտելի բաղադրիչը:

Իրավական անվտանգության հայեցակարգն իր հերթին պետք է ներառի.

- ա) երկրի իրավական անվտանգության երաշխավորման խնդիրները, նպատակներն ու առաջնահերթությունները,
- բ) սահմանադրական անվտանգության երաշխավորման հիմնական սկզբունքներն ու դրանց իրացման առաջնահերթությունները,
- գ) իրավական անվտանգության արտաքին ու ներքին սպառնալիքների հաղթահարման հայեցակարգային մոտեցումները,
- դ) իրավական անվտանգության ապահովման օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքները,
- ե) պետական իշխանության մարմինների հասցեական անելիքներն իրավական անվտանգության երաշխիքների ապահովման ուղղությամբ:

Երկրի իրավական անվտանգության երաշխավորման համակարգում ռազմավարական նշանակություն ունեն փոխապայմանավորված երկու առաջնահերթություններ.

- իրավունքի գերակայության երաշխավորումը, դրա համար անհրաժեշտ սահմանադրաիրավական ու կառուցակարգային երաշխիքների ապահովումը,
- դատական իշխանության անկախության երաշխավորումը՝ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական սկզբունքի հետևողական իրացման ճանապարհով:

Այս համատեքստում առաջնահերթ նշանակություն են ձեռք բերում նաև.

- իրավական որոշակիության և իրավական համակարգի կանխատեսելիության ապահովումը,
- անհատի իրավունակության երաշխավորվածությունը,
- անհատ - հասարակություն - պետություն շղթայի շահերի ներդաշնակության իրավական երաշխավորվածությունը,
- իրավական համակարգի վրա արտածին և ներքին բացասական ազդակների ժամանակին բացահայտումն ու կանխումը:

Իրավական անվտանգության այլ նպատակներն ու կոնկրետ առաջնահերթությունները պայմանավորված են կոնկրետ ժամանակահատվածում երկրի իրավական համակարգի առկա վիճակով և սահմանադրական օրինականության հաստատման հրամայականներով:

Միջազգային արդի սահմանադրաիրավական զարգացումների հիմնական միտումները վկայում են, որ երկրի իրավական անվտանգության երաշխավորման համար առանցքային նշանակություն է ստանում դատական իշխանության անկախության անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը:

Իր հերթին, անկախ դատական իշխանության կայացման և իշխանությունների բաժանման սկզբունքի հետևողական իրացման համար ելակետային նշանակություն է ձեռք բերում սահմանադրական անվտանգության ապահովումը, որի հիմնական սկզբունքներն են.

- սահմանադրական հավասարակշռության յուրաքանչյուր խախտման ժամանակին բացահայտումը, գնահատումը և հաղթահարումը,
- Սահմանադրության գերակայության երաշխավորման համակարգի գործունակության ապահովումը,
- դատարանների միջոցով մարդու սահմանադրական հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորվածությունը,
- իրավունքով իշխանության սահմանափակման ապահովումը պետաիշխանական բոլոր գործառույթներն իրականացնելիս,
- իշխանության հանրային իրավական պատասխանատվության գործուն համակարգի առկայությունը:

Այդ սկզբունքների իրացման հիմնական առաջնահերթություններն են.

- արդյունավետ իրավաստեղծ գործունեությունը և պառլամենտարիզմի անհրաժեշտ մակարդակի երաշխավորումը,
- իրավունքի գերակայության սկզբունքը երաշխավորող արդարադատության առկայությունը, համարժեք արդարադատական մշակույթի արմատավորումը,
- սահմանադրական ժողովրդավարության հետևողական ամրապնդման անհրաժեշտ նախադրյալների ապահովումը,
- քաղաքացիական հասարակության և ազատ մամուլի առկայությունը,
- սոցիալական բոլոր հարաբերություններում իրավաչափ

վարքագծի խթանումը, անհատի, պաշտոնատար անձի վարքագծում սահմանադրական արժեքանության բավարար մակարդակի առկայությունը,

- սահմանադրական մշտադիտարկման ու սահմանադրական պատասխանատվության գործուն համակարգի սահմանադրաիրավական ու կառուցակարգային երաշխիքների ապահովումը:

Այս բաղադրատարրերից որևէ մեկի բացակայությունը կամ թերարժեքությունը ինքնին վտանգում է երկրի իրավական անվտանգությունը:

Երկրի իրավական անվտանգության ներքին սպառնալիքներից է անվստահությունը դատական իշխանության նկատմամբ:

Սահմանադրաիրավական պահանջն այն է, որ **արդարադատություն իրականացնելու ճանապարհով** դատարանները պետք է.

- հակակշռող և զսպող դերակատարություն ունենան իշխանությունների բաժանման համակարգում՝ կատարելով սահմանադրորեն իրենց վերապահված պետաիշխանական առաքելությունը,
- նպաստեն իրավունքի զարգացմանը, օրենքի բացի հաղթահարմանը, իրավական որոշակիության երաշխավորմանը,
- պաշտպանեն մարդու և քաղաքացու իրավունքներն ու հիմնարար ազատությունները,
- երաշխավորեն օրենքի միատեսակ կիրառումը:

Այս առաքելությունը պատշաճ չկատարող և, այսպես կոչված, «ընտրողաբար» ու սուբյեկտիվ հայեցողությամբ արդարադատություն իրականացնող դատական իշխանությունը չի կարող հանրային մեծ վստահություն ունենալ, ավելին՝ ինքն է դառնում երկրի իրավական անվտանգության սպառնալիք:

Արդարադատության նկատմամբ հանրային վստահության ամրապնդումը պահանջում է.

- ունենալ անկախ, ինքնուրույն և օրենքի առջև հաշվետու դատական համակարգ,
- ապահովել դատական իշխանության գործառույթային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախությունը,
- արդարադատության հիմքում դնել իրավունքի գերակայության երաշխավորումը,

- երաշխավորել սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողությունը,
- հաղթահարել դատարանակազմական լուծումների, դատավարական ընթացակարգերի թերությունները, սուբյեկտիվ հայեցողության շրջանակները, կոռուպցիոն ռիսկերը,
- երաշխավորել դատական իշխանության գործառնությանը ամբողջականությունը:

Այս խնդիրների լուծումը պահանջում է համակարգային ու համալիր մոտեցում՝ հիմքում ունենալով միջազգային չափանիշներին համահունչ դատական իշխանության արմատավորման հստակ հայեցակարգ, ինչին ուղղված են Բարձրագույն դատական խորհրդի ջանքերը:

6.2. «Դատական իշխանություն» պետաիշխանական գործառնության առանձնահատուկ բնույթը

Իշխանությունների բաժանման համակարգում դատական իշխանության դերն ու դերակատարությունը բացառիկ է ու առանձնահատուկ:

Բացառիկությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ իշխանության այս ճյուղին է իրավասություն վերապահվում գնահատել օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործունեության սահմանադրականությունն ու օրինականությունը և նրանց պահել սահմանադրական հավասարակշռության դաշտում: Դա բխում է Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներից, համաձայն որոնց.

«1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է»:

Սահմանադրության 164-րդ հոդվածով սահմանված են այն հիմնարար երաշխիքները, որոնք անհրաժեշտ են դատավորի անկախ ու անաչառ գործունեությունը երաշխավորելու համար:

Արդարադատության անկախության կարևոր երաշխիքներ են նաև սահմանադրորեն 166-րդ հոդվածով ամրագրված կառուցակարգային, ինչպես նաև 168, 171 և 172-րդ հոդվածներով ամրագրված գործառնային երաշխիքները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ դատական իշխանությանն է բացառիկ իրավասություն վերապահված լուծել իշխանության մարմինների սահմանադրական լիազորությունների հարցերով առաջացած վեճերը և պաշտոնապես բացահայտել սահմանադրական նորմի իրավական բովանդակությունը՝ ձևավորելով որոշակի նախադեպային իրավունք:

Դատական իշխանությունն է երաշխավորում Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողությունը, որով Սահմանադրության 3-րդ անփոփոխելի հոդվածի ուժով սահմանափակված են իշխանությունները, մասնավորապես՝ մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման միջոցով:

Դատական իշխանության ինստիտուտների կազմավորման կարգն ու գործունեության անկախության ապահովման սահմանադրական երաշխիքները կոչված են իշխանության այս թեկն հեռու պահելու քաղաքական գործընթացներից ու քաղաքական ազդեցություններից, և նույնիսկ այն դեպքերում, երբ օրենսդիր ու գործադիր իշխանությունների համապատասխան ինստիտուտները կազմավորվում են մեկ քաղաքական ուժի կողմից, իշխանությունների զսպման ու հակակշռման հիմնական առաքելությունը գործնականում պետք է իրականացնի դատական իշխանությունը: **Վերջինս հնարավոր է դառնում, երբ երաշխավորված է իրավունքի գերակայության սկզբունքը և առկա է իրավական ժողովրդավարություն, ինչպես նաև սահմանադրական, քաղաքական ու պառլամենտական մշակույթի անհրաժեշտ ու բավարար մակարդակ:**

Բոլոր այն դեպքերում, երբ տվյալ նախադրյալները բացակայում են և իշխանությունների բաժանման համակարգում թերագնահատվում է դատական իշխանության պետաիշխանական ինքնուրույն առաքելությունը, ոչ միայն չի կարող լինել անկախ ու անաչառ արդարադատություն, այլև անխուսափելի են քաղաքական ու վարչական մենիշխանության հաստատումը և իշխանությամբ իրավունքի սահմանափակումը, ինչը, վերջին հաշվով, հանգեցնում է քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճման:

Նշված ենթատեքստում պետք է դիտարկել ու արժեվորել անկախ սահմանադրական մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի տեղն ու դերն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում:

Սահմանադրությունը տվյալ խնդրին լուծում տվել է թե՛ կառուցակարգային և թե՛ գործառության առումով: Նախ՝ Սահմանադրությամբ նախատեսվել է **անկախ պետական մարմնի** առկայություն: Ինչպես նշել ենք՝ Սահմանադրության 173-րդ հոդվածով սահմանված է, որ **Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը**: Այդ առաքելությունն իրականացնելու համար Բարձրագույն դատական խորհուրդն օժտվում է դատարանակազմական, իրավակազմակերպչական, դատական իշխանության համակարգում կադրային քաղաքականության իրականացման, դատավորների գնահատման ու օրենքի առջև հաշվետվողականության երաշխավորման, նրանց արդյունավետ աշխատանքի նախադրյալների ապահովման սահմանադրական մի շարք լիազորություններով, որոնց իրականացումն է համակարգային առումով երաշխիք դառնում դատարանի ու դատավորների անկախության ապահովման համար:

Անհրաժեշտ է կատարել հետևյալ կարևոր հավելումն առ այն, որ Սահմանադրությունը Բարձրագույն դատական խորհրդին օժտել է նաև իրավասությամբ՝ հաղթահարելու Հանրապետության նախագահի առարկությունները՝ ներկայացված թեկնածուների նշանակման ժամանակ ծագած անհամաձայնությունների պարագայում, իսկ դատավորների լիազորությունների դադարեցման հարցը բացառապես վերապահված է Բարձրագույն դատական խորհրդին: Սա նշանակում է, որ դատական կորպուսի ձևավորման, որոշակի կադրային քաղաքականություն իրականացնելու հարցերում Բարձրագույն դատական խորհրդի դերակատարությունն առանցքային է:

Իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում Բարձրագույն դատական խորհրդի տեղի ու դերի գնահատման առաջին ու հիմնական չափանիշը Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով ամրագրված լիազորությունների իրականացման ճանապարհով դատական իշխանության անկախության երաշխավորումն է:

Առանձնահատուկն ու ուշադրության արժանին այստեղ այն է, որ Բարձրագույն դատական խորհրդի պարագայում այս լիազորությունը **գործառության լիազորություն է**: Նման բնույթ ունի նաև Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի իրացումն անկախ դատարանների կողմից՝ մարդու

հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորումը, որով սահմանափակվում է հանրային իշխանությունը: Դատական իշխանության այս գործառույթն առանցքային նշանակություն ունի թե՛ իշխանությունների գործառութային հավասարակշռության ապահովման և թե՛ իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից:

Բարձրագույն դատական խորհրդի գործառույթների ամբողջականության և դրան համարժեք՝ լիազորությունների ներդաշնակ ու գործուն համակարգի իրավական ամրագրման հարցերին մեծ կարևորություն է տվել նաև Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովն իր մի շարք գեկույցներում⁵: Դրանցում, մասնավորապես, շեշտվում է, որ Բարձրագույն դատական խորհրդի իրական անկախությունը պետք է համարժեք լինի Սահմանադրությամբ նախատեսված անկախության իրավական բովանդակությանը, Խորհրդի գործունեության արդյունավետությունն ու լիարժեքությունը որևէ չափով չպետք է կաշկանդված լինի իշխանության ճյուղերի որևէ մարմնի, այդ թվում ընդհուպ դատավորների ինքնակառավարման մարմինների հնարավոր ներագդեցությամբ: Վերջինս հատկապես վերաբերում է դատավորների կարգապահական վարույթների իրականացմանը:

Իր հերթին, Բարձրագույն դատական խորհրդի արդյունավետ գործունեությունը պետք է երաշխիք լինի դատավորի անկախության ամրապնդման, նրա մասնագիտական որակների բարձրացման, արդարադատության հանդեպ հասարակական պատշաճ վստահության ապահովման հարցերում:

Շվիժ համատեքստում միջազգային պրակտիկան կարևորում է նաև դատական իշխանության համակարգում կադրային այնպիսի քաղաքականության իրականացումը, որը, մի կողմից, ապահովում է դատավորների անկախությունը, մյուս կողմից՝ դատավորի կերպարը գնահատելի ու գրավիչ է դառնում հատկապես երիտասարդության համար և դատավորի պաշտոնի թափուր տեղերի լրացումն իրականացվում է լայն մրցակցության պայմաններում:

Սահմանադրական ճարտարապետության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ հենց այն է, որ Սահմանադրութ

⁵ Այդ մասին տե՛ս հանձնաժողովի հետևյալ գեկույցները.

CDL-AD(2007)028, CDL-AD(2014)008, CDL-AD(2018)028,
CDL-AD(2018)029, CDL-AD(2018)032, CDL-AD(2018)033.

յան մակարդակում պետաիշխանական անկախ գործառնությունը օժտված ինստիտուտներին համարժեք դերակատարություն է վերապահվում իշխանությունների բաժանման ու հավասարակշռման ապահովման հարցում:

Իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում Սահմանադրությունը Բարձրագույն դատական խորհրդին նույնպես օժտել է նման հակակշռող կարևոր լիազորությամբ: Առաջին անգամ 2015 թվականի Սահմանադրական փոփոխություններով նախատեսվեց, որ Սահմանադրական դատարանը լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը (հոդված 168): Իսկ 169-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսվեց, որ տվյալ հարցով Սահմանադրական դատարան կարող է դիմել Բարձրագույն դատական խորհուրդը: Նման սահմանադրաիրավական կարգավորումը մեր երկրում առաջին անգամ հստակ երաշխիք է սահմանում դատական իշխանության կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի միջոցով, քննարկման առարկա դարձնել և լուծել իրական կյանքում սահմանադրական լիազորությունների հաշվեկշռի յուրաքանչյուր խաթարում՝ պայմանավորված իշխանության այլ ինստիտուտների գործողությամբ կամ անգործությամբ: Այսպիսի սահմանադրաիրավական կարգավորման առկայությունը Սահմանադրության ինքնաբավության ապահովման կարևորագույն երաշխիք է:

Ավաճին հարկ է ավելացնել նաև այն, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքն արդյունավետ կարող է կյանքի կոչվել այնպիսի հասարակական հարաբերությունների պայմաններում, երբ սահմանադրական օրինականությունը կյանքի անխախտելի կանոն է դառնում, առկա չէ քաղաքական կամ վարչական մենիշխանություն, երբ յուրաքանչյուր անձի սոցիալական վարքագծի, քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի և հանրային իշխանությունների հանրային վարքագծի հիմքում դրված է իրավունքի գերակայության սկզբունքը: Ակնհայտ է, որ հիմնախնդրին պետք է մոտենալ համակարգային ամբողջականության տեսանկյունից: Ուստի Բարձրագույն դատական խորհրդի տեղն ու դերն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում կարող է առավելագույնս արդյունավորվել հենց նման համակարգային երաշխիքների ապահովման շրջանակներում:

Իշխանությունների բաժանման համակարգում դատական իշխանության տեղի ու դերի բացահայտման խնդիրը սերտորեն առնչվում է նաև արդարադատության իրականացման հարցում գործառույթային, հակակշռող կամ զսպող լիազորություններ ունեցող բոլոր մարմինների ներդաշնակ ու արդյունավետ գործունեության ապահովման խնդրին: Առաջին հերթին դրանք այն սահմանադրական մարմիններն են, որոնք օժտված են պետաիշխանական գործառույթներով:

Ընդհանրացնելով՝ կարող ենք շեշտել, որ իշխանությունների բաժանման համակարգում «դատական իշխանություն» պետաիշխանական գործառույթի առանձնահատուկ բնույթը պայմանավորված է նրանով, որ.

նախ՝ գործ ունենք այդ գործառույթը կրող բարդ ու բազմաշերտ համակարգի հետ, որում գործառույթային, զսպող ու հակակշռող լիազորություններով օժտված են հանրային իշխանության տարբեր մարմիններ, որոնք պետք է փոխհարաբերվեն բացառապես համակարգային ամբողջականության երաշխավորման սկզբունքի հիման վրա,

երկրորդ՝ այդ գործառույթի արդյունավետ իրացմամբ է պայմանավորված սահմանադրական հավասարակշռության երաշխավորվածությունը և սահմանադրականության մակարդակը երկրում,

երրորդ՝ դատական իշխանությանը բացառիկ կարևորության առաքելություն է վերապահված իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, իրավունքով իշխանության սահմանափակման և իրավական պետության կայացման հարցերում,

չորրորդ՝ քանի որ արդարադատություն իրականացնելիս ամեն մի դատավոր դատական ակտը կայացնում է Հայաստանի Հանրապետության անունից, իշխանության այս ճյուղում առավել քան կարևորվում է պետաիշխանական գործառույթ իրականացնողի անհատական ու մասնագիտական որակների խնդիրը: Դատավորի համարժեք կերպարի ձևավորումը պետական առաջնահերթության խնդիր է,

հինգերորդ՝ դատական իշխանության անկախությունն ու օրենքի առջև հաշվետվողականությունն օրգանական փոխկապվածություն ունեն, սակայն երբեք այդ հաշվետվողականությունը չպետք է դիտարկվի որպես հաշվետու լինելու հանգամանք իշխանության այլ թևերի կամ քաղաքական իշխանության առջև: Դատական իշխանության հաշվետվողականության խնդիրը

պետք է ներհամակարգային մշտադիտարկման ու ապահովման անհրաժեշտ և գործուն իրավական ու կառուցակարգային լուծումներ ունենա՝ երաշխավորելով հայեցողության սահմանափակվածությունն իրավունքով և հաշվետու լինելն օրենքի առջև:

Բարձրագույն դատական խորհուրդն այս բոլորի հաշվառմամբ է մշակում այն ռազմավարական առաջնահերթությունները, որոնք 2019 թվականից սկսած դրվելու են դատական իշխանության համակարգային բարեփոխումների հիմքում, և որոնց ուղղությամբ կատարված քայլերն ու առաջիկա անելիքները կներկայացվեն ստորև:

6.3. Իշխանությունների բաժանման համակարգում դատական իշխանության գործառույթային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության օրենսդրական երաշխիքների ամրապնդումը

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական համակարգում դատական իշխանությունը, ինչպես նշվեց, գլխավորապես ունի հավասարակշռող կամ կայունացնող դեր: Նման առաքելության իրացման առաջնային նախադրյալը ոչ իրավաչափ ցանկացած ներգործությունից կամ միջամտությունից դատական իշխանության պաշտպանվածությունն է՝ դրա անկախության տեսքով: Միայն գործառույթային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անհրաժեշտ ու բավարար անկախությամբ օժտված դատական իշխանությունը կարող է երկրում իրավունքի գերակայության, արդյունավետ արդարադատության և արդար դատաքննության երաշխավոր հանդիսանալ:

ՀՀ իրավական համակարգի համադրված վերլուծությունը վկայում է, որ եթե կառուցակարգային լուծումների առումով սահմանադրական վերջին փոփոխություններն ապահովել են անկախության համարժեք երաշխիքներ, ապա օրենսդրության առկա վիճակով պայմանավորված՝ գործառույթային, ինչպես նաև նյութական ու սոցիալական անկախության առումով վիճակը հետո է օրվա հրամայականների պահանջները բավարարելուց:

Գործառույթային դաշտում առկա օրենսդրական բարեփոխումները պետք է որդեգրեն այն ռազմավարական մոտեցումը, որ.

1. դատական իշխանության գործառույթներին չմիջամտելու՝ քաղաքական իշխանության կամքի դրսևորումը չընկալվի

յով, այսպես կոչված, «հեռախոսային արդարադատության» բացառում: Այն պետք է վերաբերի նաև իրավական այն նախադրյալների ստեղծմանը, որի պայմաններում դատարանը կարող է անկաշկանդ ու լիարժեք իր գործառնություն իրականացնել: Առկա իրավիճակը հակառակն ապացուցելու բազում ցցուն վկայություններ ունի: Օրինակ, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը գործադիր իշխանության համակարգի մարմին է, որը պետք է երաշխավորի արդարադատության գործընթացն իր տրամաբանական ավարտին հասցնելը: Բազմաթիվ դեպքեր են առկա, երբ քաղաքացին դատական բոլոր աստիճաններն անցնելուց ու կատարման ենթակա ակտը ձեռքին բախվում է հարկադիր կատարողի արգելանքին, ով իր որոշմամբ կասեցնում է դատարանի որոշման կատարումը՝ դա իր գնահատմամբ համարելով անհնարին: Մյուս արդարադատությունը, նույնիսկ մեծ վերապահումով, արդարադատություն համարելն անհնարին է: Տվյալ հիմնախնդրի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված գանգատներով կայացրել է թվով 6 վճիռ, որոնցով արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված ողջամիտ ժամկետների խախտում: Ընդ որում, կայացված վճիռներով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից կայացված դատական ակտերի կատարման, իսկ ավելի ճիշտ՝ չկատարման, ժամկետները դուրս են գալիս ողջամտության սահմաններից՝ գերազանցելով ութ, իսկ որոշ դեպքերում՝ տասներեք տարին:

Իրավական որոշակիության սկզբունքի հիման վրա այս և տարաբնույթ նմանօրինակ խնդիրների լուծումն օրենսդրական ճիշտ կանոնակարգումների դաշտում է:

2. Նորմատիվ պահանջ պետք է սահմանվի, որ դատական իշխանությանն առնչվող իրավական ակտերը Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված կարգով իրավական փորձաքննություն անցնեն: Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 19-21-րդ կետերով սահմանված է, որ Բարձրագույն դատական խորհուրդը.

- 19) իրավասու պետական մարմիններին առաջարկներ է ներկայացնում դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ.

- 20) դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ տալիս է կարծիք.
- 21) հաստատում է դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը դատարաններում շրջանառելու կարգը:

Խորհրդի կողմից նման կարգ սահմանվել է և մշակվել է իրավական ակտերի նախագծերի քննարկման ու առաջարկությունների ներկայացման որոշակի կառուցակարգ: Խնդիրն այն է, որ իրավասու պետական մարմինների կողմից իրավական ակտ ընդունվելիս պարտադիր նորմատիվ պահանջ լինի դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի կարծիքի առկայությունը:

3. Անհրաժեշտ է դատարաններին ու դատական իշխանությանն առնչվող բոլոր ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի փորձաքննություն իրականացնել՝ Սահմանադրությանն ու Դատական օրենսգրքին դրանց համապատասխանությունը երաշխավորելու համար:

Կառավարությունը գործնական քայլեր է նախաձեռնել դատական իշխանության նյութական ու սոցիալական անկախության համար անհրաժեշտ երաշխիքներ ստեղծելու ուղղությամբ: 2018 թվականի պետական բյուջեով դատական իշխանությանը լրացուցիչ հատկացվեց 1,3 միլիարդ դրամ՝ նյութատեխնիկական անհետաձգելի խնդիրների լուծման համար: Գործնական քայլեր են արվում դատավորների սոցիալական անկախության երաշխիքների ամրապնդման ուղղությամբ: Այս ոլորտում որակական տեղաշարժերը կյուծեն նաև ապագային միտված կարևորագույն խնդիր, քանի որ արդեն իսկ խնդրահարույց է դարձել դատավորների թափուր տեղերը որակյալ մասնագետներով համալրելու հարցը:

6.4. Արդարադատության ծախսատարության կրճատման նպատակային ծրագրի իրականացումը

Միջազգային չափանիշներով Հայաստանում արդարադատությունն ամենածախսատարներից մեկն է: Բարձրագույն դատական խորհրդի կողմից կազմակերպված մասնագիտական հետազոտությունները, ինչպես տեսանք, վկայում են, որ դրա պատճառները հիմնականում երկուսն են.

նախ՝ հատկապես վարչական ու քաղաքացիական դատարանները գերծանրաբեռնված են իրենց հիմնական գործառնություններին ոչ լիարժեք բնորոշ պարտավորություններով, որոնք կարող էին իրականացվել արտադատարանական եղանակներով: Օրինակ, համաձայն վերոշարադրյալ վերլուծության, վարչական դատարանի տարեկան ծանրաբեռնվածության մեջ ճանապարհային երթևեկության կանոնների խախտմանն առնչվող գործերը կազմում են շուրջ 70 տոկոսից ավելին: Միջին հաշվով նման մեկ գործի քննության արդյունքում լուծվում է 5000 դրամի խնդիր: Ամբողջ տարվա ընթացքում լուծվում է շուրջ 70 միլիոն դրամի խնդիր: Մակայն պետությունը նման տիպի վարչական արդարադատության վրա բյուջեից ծախսում է 625 միլիոն դրամ: Որևէ կերպ նման վիճակը չի կարող արդարացվել: Ելքը՝ նման տիպի գործերը վարչական վարույթների միջոցով ավարտին հասցնելն է:

Լուրջ խնդիր է նաև քաղաքացիական գործերով դատարանների բեռնաթափումը՝ վճարման կարգադրությունների և հատկապես բռնագանձումների հետ կապված հարցերին այլընտրանքային մոտեցում դրսևորելու ճանապարհով:

Արդարադատության գերծախսատարության երկրորդ հիմնական պատճառն այն է, որ Հայաստանը նույնիսկ նախկին ԽՍՀՄ շատ երկրներից հետ է մնացել էլեկտրոնային արդարադատության ներդրման հարցում: Ներկայումս դատարանները միայն փոստային առաքումների վրա տարեկան 500 միլիոն դրամից ավելի են ծախսում: Իսպառ բացակայում է նույնիսկ էլեկտրոնային թղթակցությունը պետական իշխանության մարմինների հետ: Բարձրագույն դատական խորհրդի կողմից այս ոլորտի արմատական վերափոխումների հայեցակարգ ու ծրագրային մոտեցումներ է մշակվել, ինչն արդեն իսկ գտնվում է աստիճանական ներդրման փուլում:

6.5. Էլեկտրոնային արդարադատության համակարգի փուլային ներդրումը

Մույն հարցը Բարձրագույն դատական խորհրդի առաջնահերթություններից է: Առկա է այն գիտակցումը, որ մարդկության թվայնացվածության ներկայիս մակարդակի ու տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) զարգացվածության պայմաններում անհնար է ապահովել դատական համակարգի գործունեության

արդյունավետությունն ու մատչելիությունն առանց ժամանակակից էլեկտրոնային արդարադատության և դատական գործունեության կառավարման ավտոմատացված ծրագրերի ներդրման: Ցավոք, իրողությունն այն է, որ այս հարցերում Հայաստանը հետ է մնացել ոչ միայն եվրոպական երկրներից, այլև ընդհուպ նախկին ԽՍՀՄ գրեթե բոլոր երկրներից: Մեծ իրավիճակի մեջ են թաքնված նաև զգալի կոռուպցիոն ռիսկեր: Այս հարցում արմատական ու համակարգային վերափոխումն անհետաձգելի անհրաժեշտություն է:

Անկախ այն իրողությունից, որ Հայաստանն իրավամբ հանդիսանում է զարգացած ՏՏ երկիր թե՛ տարածաշրջանում և թե՛ ողջ ԱՊՀ-ում, իսկ գործադիր և օրենսդիր իշխանություններն էապես առաջադիմել են ՏՏ ներդրման և կիրառման հարցում, դատական իշխանությունը վերջին տասնամյակում բավարարուշադրություն չի հատկացրել դատական գործերի կառավարումը ՏՏ լուծումներով իրականացնելու և դատարանների օգտատերերի համար էլեկտրոնային արդարադատության համապարփակ ծրագիր ներդնելու գերարդիական խնդրին:

Արդյունքում, դեռևս 2008 թվականին մշակված և ակնհայտորեն մեկ տասնամյակ առաջ հասանելի ու ներկայումս ոչ արդիական «Դատական համակարգ» ծրագրային լուծումը (CAST) չի զարգացել, չի ինտեգրվել այլ համակարգերի և տվյալների շտեմարանի հետ:

Այս ամենն իր բացասական ազդեցությունն է ունեցել թե՛ գործերի քննության ողջամիտ ժամկետների, թե՛ դատավորների օպտիմալ ծանրաբեռնվածության ու նրանց գործունեության գնահատման, թե՛ գործերի բաշխման և վերաբաշխման ավտոմատացված համակարգի, թե՛ արդարադատության ծախսատարության, թե՛ մշտադիտարկման ու դրա գրեթե իսպառ բացակայությամբ պայմանավորված հանրային հաշվետվողականության և թափանցիկության վրա: Արդյունքում՝ էապես վտանգվել է արդյունավետ ու մատչելի արդարադատության իրականացումը:

Բարձրագույն դատական խորհուրդը կազմավորումից անմիջապես հետո Արդարադատության նախարարության հետ գործակցաբար նախաձեռնել է արդի իրավիճակի ախտորոշման, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման, հայկական ճարտարագիտական մտքի կենտրոնացմամբ՝ ունեցած ծրագրային լուծումների էական և որակական բարեփոխման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքներ: Նախատեսվում

Է Էլեկտրոնային արդարադատության արդիականացված և ինտեգրված ծրագրի փուլային ներդրում 2019թ.-ից:

Դատավորների, դատական ծառայողների և դատարանների օգտատերերի համար աշխատանքային հարմարավետ պայմանների ստեղծումը եղել և մնում է Բարձրագույն դատական խորհրդի առաջնահերթություններից: Նշված խնդրի արմատական լուծման նպատակով 2018թ. Բարձրագույն դատական խորհրդի կողմից նախաձեռնված դատական համակարգում առկա նյութատեխնիկական հագեցվածության և վիճակի համապարփակ գույքագրման արդյունքներով արձանագրվեց, որ Հայաստանի ամբողջ տարածքով սփռված դատարանների նստավայրերում առկա է 1000 միավորից ավելի համակարգչային տեխնիկայի խիստ անհամաչափ բաշխվածություն թե՛ քանակային, թե՛ թարմության և թե՛ գործածվող ծրագրային ապահովման առումով: Ավելին, համակարգչային ցանցերը նույնպես ունեն հատվածական լուծումներ:

Datalex համակարգը նույնպես չի տրամադրում արդիական և ամբողջական տեղեկատվություն դատական գործերի և դրանց շարժի վերաբերյալ՝ դատական գործերի կառավարումն ապահովող գործավարության կանոնների և բիզնես գործընթացների անկատարության պատճառով:

Ուսումնասիրելով եվրոպական և տարածաշրջանի երկրների փորձը, 2018թ. ավարտին որոշվեց 2019թ. առաջին կիսամյակում աշխատել դատական իշխանության «ամպային տվյալների կենտրոնի» (ԴԱՏ կենտրոն) և վիրտուալ ցանցի կառուցման Ծրագրային Հայեցակարգի վրա: Նախնական գնահատականներով՝ ԴԱՏ կենտրոնը պետք է հանդիսանա Էլեկտրոնային արդարադատության համակարգային ներդրման հիմքն ու ողնաշարը:

Նախնական ուսումնասիրություններն ու քննարկումները ոլորտի ներկայացուցիչների հետ ի ցույց դրեցին այն իրողությունը, որ տվյալների կենտրոնները հաջողությամբ ներդրվել և գործում են Հարկադիր կատարման ծառայությունում, ՊԵԿ-ում, Ոստիկանությունում: Նշված կենտրոնները լայն տարածում ունեն նաև ՀՀ քանակային համակարգում:

Բարձրագույն դատական խորհուրդը ելնում է բյուջետային միջոցների օպտիմալ և արդյունավետ տնօրինման սկզբունքից: Այդ առումով հարյուրավոր անհատական համակարգիչների ձեռքբերումը թեև կարող է կարճատև ու տեղային լուծումներ

պարունակել, սակայն տեսանելի հորիզոնում անհատական համակարգիչների արագ մաշվածությունը և դրանց ամբողջ հանրապետության տարածքով սպասարկման և անվտանգության ապահովման հետ կապված վարչական ծախսերն անհրաժեշտ է համադրել ժամանակակից ծրագրային լուծումներով հագեցված ԴԱՏ կենտրոնի ընձեռած հնարավորությունների հետ:

Վերլուծական աշխատանքների ավարտին ակնկալվում է ունենալ դատական իշխանության համապարփակ թվայնացման այնպիսի Հայեցակարգ, որի հիման վրա իրականացվող ճարտարագիտական լուծումների արդյունքում հնարավոր կլինի.

- ապահովել արտոնագրված մուտք վիրտուալ գրասենյակ՝ ցանկացած կետից և սարքից,
- ապահովել անվտանգություն և տվյալների պաշտպանվածություն,
- արդյունավետ կիրառել առկա տեխնիկան, բազմապատկել համակարգիչների արագագործությունը,
- ապահովել առկա և ստեղծվող տվյալների ռեգերվային պատճենների հուսալի պահպանություն,
- սահմանել օգտագործվող լիցենզիոն ծրագրերի չափորոշիչները և բացառել կողմնակի ծրագրերի գործածումը,
- իրականացնել համապարփակ մշտադիտարկում, բարձրացնել դատարանների թափանցիկությունը՝ միաժամանակ ապահովելով հանրային վերահսկողություն և հաշվետվողականություն,
- ունենալ էլեկտրաէներգիայի խնայողություն,
- կիրառել VoIP համակարգը՝ հասնելով հեռախոսավճարների խնայողության,
- ունենալ դատական նիստերի կենտրոնացված տեսանկարահանման և ձայնագրման և online դատական նիստերի անցկացման արդիական կենտրոնացված համակարգի ներդրման տեխնիկական հնարավորություն,
- ԴԱՏ կենտրոնի և Ցանցի կենտրոնացված դյուրին կառավարում՝ արդյունքում վարչական տնտեսում և ապարատի կրճատում,
- անձնակազմի կառավարման և ռեսուրսների պլանավորման (ERP) ծրագրային ապահովման ներդրում, որի շնորհիվ հնարավոր կլինի հավաքել և համակարգել դատարանների աշխատակազմերի գործունեությունը և Խորհրդին տրամադրել դրանց կատարողականի վերաբերյալ արդիական տվյալներ:

Ծրագրային լուծումների ներդրման արդյունքում նախատեսվում է, որ դատավորների տեխնիկական աշխատանքի վրա ծախսվող ժամանակը կհասցվի նվազագույնի և ապագայում իսպառ կվերանա: Դա հնարավորություն կընձեռի դատավորներին իրենց ներուժը կենտրոնացնել իրավական բարդ վեճերի և խնդիրների լուծման վրա: Թվայնացման արդյունքում ակնկալվում է, որ Էապես կնվազի թղթաշրջանառությունը, ինչը կհանգեցնի թե պետական և թե դատարանի այլ օգտատերերի միջոցների խնայողությանը:


Բարձրագույն դատական խորհուրդը նպատակադրվել է Էլեկտրոնային արդարադատության ցանցի միջոցով հանրային տվյալների բազաները, իրավական տեղեկատվությունը, օրենքներն ու դրանց նախագծերը, դատական ակտերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները, Սահմանադրական դատարանի որոշումները, արդարադատության ոլորտում միջազգային փորձը մատչելի դարձնել դատավորների, դատարանների աշխատակազմերի, դատավարության կողմերի, լրագրողների և ընդհանրապես լայն հանրության համար:

6.6. Դատական գործերի կառավարման ժամանակակից թվայնացված համակարգի ներդրումը

Իր լիազորությունների ստանձնման առաջին իսկ օրերից նախաձեռնված քայլերի արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը հանգամանորեն գույքագրեց դատական համակարգի համակարգչային ցանցն ու տնտեսությունը, ուսումնասիրեց թե՛ տեղական և թե՛ միջազգային փորձը: Արդյունքում ակնհայտ դարձավ, որ Հայաստանով մեկ սփռված առկա ցանցը չի համապատասխանում ներկայումս ՏՏ առաջատարների կողմից առաջարկվող և հասանելի լուծումներին: Նույնը վերաբերում է համակարգչային տնտեսությանը:

Արդյունքում կայացվեց որոշում՝ կառուցել ժամանակակից տվյալների կենտրոն, որն Էապես կկրճատի դատական համակարգի համակարգչային տնտեսության վրա իրականացվող ծախսերը՝ աշխատավարձերից ու համակարգիչների անխուսափելի վերանորոգումից, արագ փոխարինումից ու պահպանումից մինչև Էլեկտրաէներգիայի և ծրագրային լիցենզիաների ձեռքբերումներ:

ԴԱՏ կենտրոնի կառուցման և Էլ-արդարադատության ծրագրային ապահովման բոլոր բաղադրիչների ներդրման աշխատանքներին գուգրնթաց՝ նախատեսվում է նաև ինտեգրել այն իշխանության մյուս ճյուղերի և պրոֆեսիոնալ օգտատերերի հետ՝ դատարաններից օգտվելն առավել մատչելի, հարմարավետ ու թափանցիկ դարձնելու նպատակով: Նախատեսվում է ունենալ հետևյալ ընդհանուր պատկերը⁶



Տվյալների կենտրոնի գործարկումով Հայաստանի ամենահետադարձ դատարանների նստավայրերի համակարգչային տնտեսությունն անգամ հասանելի կլինի ցանցային մասնագետներին, որոնք բոլորների ընթացքում կարող են միջամտել և շտկել առկա խնդիրները, կատարել ծրագրային թարմացումներ՝ օգնելով դատական ծառայողներին և դատավորներին կենտրոնանալ իրենց բուն գործունեության վրա՝ չմտածելով տեխնիկական խնդիրների մասին և գինված լինելով ամենաարդիական ծրագրային լուծումներով:

Նախատեսվում է իրականացնել դատական նիստերի ձայնագրությունների կենտրոնացված և ինտեգրված նոր համակարգի ներդրում, որը կօգնի նաև ավտոմատացնել արձանագրությունների վարումը:

⁶ Ծրագրային Հայեցակարգի վերջնական տարբերակից կախված հնարավոր են ինտեգրված համակարգի ընդհանուր պատկերի փոփոխություններ:

Նոր վիրտուալ ցանցն ու տվյալների կենտրոնը թույլ կտան նաև ապահովել Բարձրագույն դատական խորհրդի կարգապահական, ինչպես նաև դատական բաց նիստերն ուղիղ տեսահեռարձակումների միջոցով իրականացնելու հնարավորություն, ինչը կարող է նպաստել դատարանից օգտվողների ծախսերի կրճատմանն ու դատարանների մատչելիությանը:

6.7. Արդարադատության մշտադիտարկման համակարգի ներդրումը

Միջազգային արդարադատական պրակտիկան վկայում է, որ դատարանների անկախության երաշխավորման ու արդյունավետ արդարադատություն ունենալու, ինչպես նաև դատական գործերի օպտիմալ կառավարման համար անխուսափելի անհրաժեշտություն է արդարադատության մշտադիտարկման գործուն համակարգի ներդրումը: Տարբեր երկրների փորձի ուսումնասիրումը հանգեցրեց այն եզրակացությանը, որ այդ համակարգը պետք է դառնա էլեկտրոնային արդարադատության օրգանական բաղկացուցիչը, լինի թափանցիկ, մատչելի, ինչպես նաև իրականացվի անընդհատության ռեժիմով: Դատական վիճակագրության ամփոփման նախկին ավանդական մեթոդները կորցրել են իրենց կենսունակությունը, դրանք պետք է փոխարինվեն մշտադիտարկման արդյունքների վրա հենված շարունակական հետազոտություններով: Վերջիններս կբացահայտեն նաև գործընթացի նեղ տեղերն ու դատական գործերի օպտիմալ կառավարման անհրաժեշտ երաշխիքներ կստեղծեն:

Նման մշտադիտարկման համակարգը պահանջում է.

- ա) համապատասխան ինդիկատորների համակարգի մշակում,
- բ) տեղեկատվության հավաքման ու մշակման ծրագրային ապահովում,
- գ) տեխնիկական անհրաժեշտ պայմաններ,
- դ) որակական վերլուծությունների անհրաժեշտ ու բավարար կարողունակություն:

Բարձրագույն դատական խորհուրդը նշված բոլոր ուղղություններով արդեն իսկ նախապատրաստական աշխատանքներն իրականացրել է:

Մշակվել ու համակողմանի փորձաքննության առարկա է դարձվել մշտադիտարկման ինդիկատորների ներքոշարադրյալ տեղեկատվական շտեմարանը, լուծման փուլում են դրանց ամենօրյա լրացման ծրագրային ապահովման և էլեկտրոնային

արդարադատության համակարգին ինտեգրման, աշխատակիցների վերապատրաստման հարցերը: Ներկայումս Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում ձևավորվել է դատական պրակտիկայի վերլուծության ու մշտադիտարկման մասնագիտական ծառայություն, որի վրա է դրված նաև համակարգային թափանցիկության ու հետադարձ կապի երաշխավորման խնդիրների մասնագիտական ապահովումը:

Արդարադատության մշտադիտարկման տեղեկատվական շտեմարանը⁷ յուրաքանչյուր օրվա համար բովանդակելու է.

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆ

Քաղաքացիական և վարչական գործեր

- քանի՞ հայցադիմում/դիմում է մուտք եղել, դրանցից քանիսն է ստացվել էլեկտրոնային եղանակով,
- քանի՞ հայցադիմում/դիմում է ընդունվել վարույթ,
- քանի՞ հայցադիմում/դիմում է վերադարձվել,
- քանի՞ հայցադիմում/դիմում է վերադարձվելուց հետո սահմանված ժամկետում կրկին ներկայացվել,
- քանի՞ հայցադիմումի/դիմումի ընդունում է մերժվել,
- քանի՞ հայցադիմում/գործ է վերահասցեագրվել/ուղարկվել ըստ ընդդատության,
- քանի՞ գործով է կայացվել հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը՝
- բավարարելու մասին որոշում,
- մասնակի մերժելու մասին որոշում,
- լրիվ մերժելու մասին որոշում,
- քանի՞ գործով է հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը լրիվ կամ մասնակի մերժելու մասին որոշումը վերացվել վերաքննիչ դատարանի կողմից,

⁷ Ներկայացվում է ամբողջությամբ՝ նաև հանրային իրազեկման նկատառումներից ելնելով, որպեսզի յուրաքանչյուրը կարողանա տեսնել, թե մշտադիտարկման համակարգի օգնությամբ ամեն օր ցանկացած դատարանի վերաբերյալ ինչ տեղեկատվություն կարող է իրեն հասանելի լինել: Այդ տեղեկատվությունը ներկայացվելու է նաև վերլուծված և գրաֆիկական ամփոփումների տեսքով:

- քանի՞ գործով է հայցի ապահովման միջոցը փոփոխելու, ձևափոխելու, լրիվ կամ մասնակի վերացնելու մասին որոշում կայացվել,
- քանի՞ գործով է կայացվել պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին որոշում,
- քանի՞ գործով է կայացվել պետական տուրքի վճարումից ազատելու մասին որոշում,
- քանի՞ գործով է կայացվել պետական տուրքի չափը նվազեցնելու մասին որոշում,
- քանի՞ գործով է սահմանված ժամկետում ներկայացվել հայցադիմումի պատասխան,
- քանի՞ գործով է ներկայացվել հակընդդեմ հայց,
- քանի՞ գործով է հակընդդեմ հայցը.
- ընդունվել վարույթ,
- ընդունումը մերժվել,
- վերադարձվել,
- քանի՞ գործով է կայացվել գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշում,
- քանի՞ գործ է ստացվել այլ դատարանից ընդդատության կարգով,
- քանի՞ գործով է ծագել ընդդատության մասին վեճ,
- քանի՞ գործով է կիրառվել գրավոր դատաքննություն (վարչական գործերով),
- քանի՞ գործով է կիրառվել արագացված դատաքննություն,
- քանի՞ որոշում է կայացվել գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին (քաղաքացիական գործերով),
- քանի՞ գործով է հրավիրվել նախնական դատական նիստ,
- քանի՞ գործով է դատարանի նախաձեռնությամբ նշանակվել անվճար (մինչև 4 ժամ) հաշտարարություն,
- քանի՞ գործով է նշանակվել հաշտարարություն կողմերի համաձայնությամբ,
- քանի՞ նախնական դատական նիստ է կայացել,
- քանի՞ նախնական դատական նիստ չի կայացել,
- քանի՞ գործով է նշանակվել դատաքննություն,
- քանի՞ դատական նիստ է կայացել,
- քանի՞ դատական նիստ չի կայացել,

- քանի՞ դատական նիստ է հետաձգվել,
- հայցադիմումը կամ դիմումը վարույթ ընդունելուց հետո ի՞նչ ժամկետում է նշանակվել առաջին դատական նիստը,
- քանի՞ անգամ է տվյալ օրը քննվող կոնկրետ գործով դատական նիստը հետաձգված եղել,
- նշանակված դատական նիստի մասին ե՞րբ է ծանուցվել,
- որպես դատական սանկցիա՝ քանի՞ անգամ է կիրառվել.
- դատական նիստերի դահլիճից հեռացում,
- դատական տուգանք,
- քանի՞ գործով է դատախազի/փաստաբանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելուց հետո դատարանն այդ մասին տեղեկատվություն ուղարկել համապատասխանաբար գլխավոր դատախազին և փաստաբանների պալատի նախագահին,
- քանի՞ գործով է դատավորի նախաձեռնությամբ հայտնվել ինքնաբացարկ,
- քանի՞ գործով է ներկայացվել բացարկ և քանիսն է բավարարվել,
- քանի՞ գործով է կայացվել եզրափակիչ դատական ակտ, այդ թվում՝
- քանի՞ գործով է կայացվել վճիռ,
- քանի՞ գործով է կայացվել հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշում,
- քանի՞ գործով է կայացվել գործի վարույթը կարճելու մասին որոշում,
- քանի՞ գործով է հաստատվել հաշտության համաձայնություն,
- քանի՞ գործով է հաստատված հաշտության համաձայնությունը կնքվել հաշտարարության արդյունքում,
- քանի՞ գործով է կայացվել լրացուցիչ վճիռ,
- քանի՞ գործով է վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին որոշում կայացվել,
- քանի՞ գործով է եզրափակիչ դատական ակտը բողոքարկվել,
- քանի՞ գործով է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պետական տուրքի մասով տրվել կատարողական թերթ,
- քանի՞ գործ է առկա յուրաքանչյուր դատավորի վարույթում,
- քանի՞ գործ է կասեցված,

- քանի՞ եզրափակիչ դատական ակտ է ստացել օրինական ուժ,
- քանի՞ գործով է տրվել կատարողական թերթ,
- քննված գործով դատարանի ու կոնկրետ դատավորի հետ կապված ի՞նչ հանրային արձագանք է եղել:

Սնանկության գործեր.

- քանի՞ դիմում է մուտք եղել դրանցից քանիսն է ստացվել էլեկտրոնային եղանակով,
- քանի՞ կամավոր սնանկության դիմում է ստացվել,
- քանի՞ հարկադրված սնանկության դիմում է ստացվել,
- քանի՞ սնանկության վտանգի վերաբերյալ դիմում է ստացվել,
- քանի՞ հարկադիր և կամավոր սնանկության դիմում է ընդունվել վարույթ կամ քննության,
- քանի՞ դիմում է վերադարձվել,
- քանի՞ դիմում է վերադարձվելուց հետո սահմանված ժամկետում կրկին ներկայացվել,
- քանի՞ դիմումի ընդունում է մերժվել,
- քանի՞ դատական նիստ է հրավիրվել,
- քանի՞ դատական նիստ է կայացել,
- քանի՞ դատական նիստ չի կայացել,
- քանի՞ անգամ է տվյալ օրը քննվող կոնկրետ գործով դատական նիստը հետաձգված եղել,
- նշանակված դատական նիստի մասին ե՞րբ է ծանուցվել,
- որպես դատական սանկցիա՝ քանի՞ անգամ է կիրառվել.
- դատական նիստերի դահլիճից հեռացում,
- դատական տուգանք,
- քանի՞ գործով է դատախազի/փաստաբանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելուց հետո դատարանն այդ մասին տեղեկատվություն ուղարկել համապատասխանաբար գլխավոր դատախազին և փաստաբանների պալատի նախագահին,
- քանի՞ գործով է դատավորի նախաձեռնությամբ հայտնվել ինքնաբացարկ,
- քանի՞ գործով է ներկայացվել բացարկ և քանի՞սն է բավարարվել:

Տվյալ գործով.

- ե՞րբ է նշանակվել ժամանակավոր կառավարիչ,
- ե՞րբ է նշանակվել կառավարիչ,
- ե՞րբ է հաստատվել պարտատերերի/պահանջների վերջնական ցուցակը
- քանի՞ նոր պահանջ է ստացվել և գրանցվել պարտատերերի վերջնական ցուցակը հաստատվելուց հետո,
- ապահովված պարտատեր(եր)ը մորատորիում չտարածելու մասին ծանուցում ներկայացրե՞լ է, եթե՝ այո, քանի՞սն է բավարարվել,
- պահանջների ցուցակը հաստատելու դեմ բողոք բերվե՞լ է, եթե՝ այո, ապա բոլո՞ր պահանջների դեմ,
- ե՞րբ է հրավիրվել պարտատերերի առաջին ժողովը,
- քանի՞ գործով է ընդունվել ֆինանսական առողջացման ծրագիր,
- քանի՞ գործով է ընդունվել պարտապանի լուծարման վարույթ սկսելու որոշում,
- լուծարման վարույթում գտնվող պարտապանի գործունեության վերսկսման քանի՞ որոշում է ընդունվել,
- գործունեության վերսկսման դեպքում կառավարչի կողմից օրենքով սահմանված ժամկետներում հաշվետվություն ներկայացվե՞լ է, թե՝ ոչ,
- միջանկյալ բաշխման ծրագրի դեմ առարկություն ստացվե՞լ է, թե՝ ոչ,
- միջանկյալ բաշխման ծրագիրը հաստատվե՞լ է,
- միջանկյալ բաշխման ծրագրի հաստատումը վիճարկվե՞լ է վերաքննության կարգով,
- պարտատերերի պահանջների բավարարման մասին հաշվետվությունը ներկայացվե՞լ է օրենքով սահմանված ժամկետներում,
- ե՞րբ, ի՞նչ գույքի, ի՞նչ գնով է աճուրդ կայացել, գինը նվազե՞լ է, թե՝ ոչ,
- քանի՞ գործով է ներկայացվել կառավարչի վերջնական հաշվետվություն,
- վերջնական հաշվետվության քննության արդյունքներով քանի՞ վճիռ է կայացվել պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին,

- գործն ավարտելու քանի՞ միջնորդություն է մերժվել և ի՞նչ պատճառ(ներ)ով,
- քանի՞ գործով է կայացվել եզրափակիչ դատական ակտ,
- քանի՞ գործ է առկա յուրաքանչյուր դատավորի վարույթում,
- քանի՞ գործ է կասեցված,
- հարկադիր սնանկության քանի՞ գործով է անձին սնանկ ճանաչելու վճիռ կայացվել,
- կամավոր սնանկության քանի՞ գործով է անձին սնանկ ճանաչելու վճիռ կայացվել,
- սնանկության վտանգի քանի՞ գործով է անձին սնանկ ճանաչելու վճիռ կայացվել,
- հարկադիր սնանկության քա՞նի գործով է անձին սնանկ ճանաչելու դիմումը մերժվել,
- կամավոր սնանկության քանի՞ գործով է անձին սնանկ ճանաչելու դիմումը մերժվել,
- սնանկության գործն ավարտելու քանի՞ վճիռ է կայացվել, դրանցից քանի՞սն են ավարտվել պարտապանի ֆինանսապես առողջացմամբ,
- սնանկության գործն ավարտելու քանի՞ միջնորդություն է մերժվել,
- սնանկության քանի՞ գործով է վարույթը կարճվել,
- քանի՞ սնանկության գործով է հաստատվել ֆինանսական առողջացման ծրագիր,
- քանի՞ սնանկության գործով հաստատված ֆինանսական առողջացման ծրագիր է վաղաժամկետ դադարեցվել,
- քանի՞ սնանկության վտանգի գործով է հաստատվել ֆինանսական առողջացման ծրագիր,
- քանի՞ սնանկության վտանգի գործով հաստատված ֆինանսական առողջացման ծրագիր է վաղաժամկետ դադարեցվել,
- դատարանի ու կոնկրետ դատավորի հետ կապված ի՞նչ հանրային արձագանք է եղել:

Արբիտրաժային գործեր.

- քանի՞ դիմում է մուտք եղել, դրանցից քանի՞սն է ստացվել էլեկտրոնային եղանակով,
- քանի՞ դիմում է ընդունվել վարույթ,

- քանի՞ դիմում է վերադարձվել,
- քանի՞ դիմում է վերադարձվելուց հետո կրկին ներկայացվել,
- քանի՞ դատական նիստ է հրավիրվել,
- քանի՞ դատական նիստ է կայացել,
- քանի՞ դատական նիստ չի կայացել,
- քանի՞ անգամ է տվյալ օրը քննվող կոնկրետ գործով դատական նիստը հետաձգվել,
- այդ օրը նշանակված դատական նիստի մասին ե՞րբ է ծանուցվել,
- որպես դատական սանկցիա՝ քանի՞ անգամ է կիրառվել.
- դատական նիստերի դահլիճից հեռացում,
- դատական տուգանք,
- քանի՞ գործով է դատախազի/փաստաբանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելուց հետո դատարանն այդ մասին տեղեկատվություն ուղարկել համապատասխանաբար գլխավոր դատախազին և փաստաբանների պալատի նախագահին,
- քանի՞ գործով է հայտնվել բացարկ կամ բավարարվել ինքնաբացարկի միջնորդություն,
- քանի՞ գործով է կայացվել եզրափակիչ դատական ակտ,
- քանի՞ գործ է առկա յուրաքանչյուր դատավորի վարույթում,
- քանի՞ գործ է կասեցված,
- տվյալ օրը դատարանի ու կոնկրետ դատավորի հետ կապված ի՞նչ հանրային արձագանք է եղել:

Վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ գործեր.

- վճարման կարգադրություն արձակելու մասին քանի՞ դիմում է ստացվել, դրանցից քանի՞սն է ստացվել էլեկտրոնային եղանակով,
- քանի՞ վճարման կարգադրություն է արձակվել, դրանցից քանիսը՝ մասնակի,
- վճարման կարգադրություն արձակելու մասին քանի՞ դիմում է մերժվել,
- արձակված վճարման կարգադրության մասին պարտապանը ե՞րբ է ծանուցվել,

- քանի՞ վճարման կարգադրություն է վերացվել,
- քանի՞ վճարման կարգադրություն է ստացել օրինական ուժ:

Քրեական գործեր.

- քանի՞ քրեական գործ է մուտք եղել դատարանում,
- քանի՞ քրեական գործ է ընդունվել վարույթ,
- քանի՞ քրեական գործ է նշանակվել դատական քննության,
- քանի՞ քրեական գործով է գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացվել,
- քանի՞ քրեական գործ է վերադարձվել մեղադրողին,
- քանի՞ գործով է քրեական գործի վարույթը կարճվել ամբողջությամբ,
- քանի՞ գործով է քրեական գործի վարույթը կարճվել մասնակի,
- քանի՞ գործով են կիրառվել բժշկական բնույթի հարկադրական միջոցներ,
- քանի՞ գործով են կիրառվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ,
- քանի՞ գործով է դատարանի նախաձեռնությամբ գլխավոր դատախազին կամ տեղակալին մեղադրական եզրակացությունը վերահաստատելու առաջարկություն ներկայացվել,
- քանի՞ գործով է քրեական գործին միացվել այլ գործ,
- քանի՞ գործով է քրեական գործը միացվել այլ գործի,
- քանի՞ գործով է քրեական գործից անջատվել նոր գործ,
- քանի՞ գործով են դատական որոշման վերաբերյալ կասկածներ և անհստակություններ լուծվել,
- քանի՞ քրեական գործ է փոխանցվել այլ պետության,
- քանի՞ գործով է ստացվել տեղեկատվություն՝ դատավճիռն ի կատար ածելու վերաբերյալ,
- քանի՞ գործ է ստացվել այլ դատարանից ընդդատության կարգով,
- քանի՞ գործ է ուղարկվել ըստ ընդդատության այլ դատարան,

- քանի՞ գործով է ընդդատության մասին վեճ առաջացել,
- քանի՞ գործով է ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխություններին և լրացումներին համապատասխանեցում կատարվել,
- քանի՞ քրեական գործ է առկա յուրաքանչյուր դատավորի վարույթում,
- քանի՞ քրեական գործ է կասեցված,
- քանի՞ դատական նիստ է հրավիրվել,
- քանի՞ դատական նիստ է կայացել,
- քանի՞ դատական նիստ չի կայացել,
- քանի՞ անգամ է տվյալ օրը քննվող կոնկրետ գործով դատական նիստը հետաձգվել,
- այդ օրը նշանակված դատական նիստի մասին ե՞րբ է ծանուցվել,
- որպես դատական սանկցիա՝ քանի՞ անգամ է կիրառվել.
- դատական նիստերի դահլիճից հեռացում,
- դատական տուգանք,
- քանի՞ գործով է դատախազի/փաստաբանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելուց հետո դատարանն այդ մասին տեղեկատվություն ուղարկել համապատասխանաբար գլխավոր դատախազին և փաստաբանների պալատի նախագահին,
- քանի՞ գործով է դատավորի նախաձեռնությամբ հայտնվել ինքնաբացարկ,
- քանի՞ գործով է ներկայացվել բացարկ և քանի՞սն է բավարարվել,
- քանի՞ գործով է դատական քննության ընթացքում առաջադրված մեղադրանքը լրացվել կամ փոփոխվել,
- քանի՞ գործով է կիրառվել դատական քննության արագացված կարգ,
- քանի՞ գործով է կայացվել մեղադրական դատավճիռ,
- քանի՞ գործով է կայացվել արդարացման դատավճիռ,
- քանի՞ գործով է կայացվել լրացուցիչ որոշում,
- քանի՞ գործով է կայացվել եզրափակիչ դատական ակտ և ինչպիսի՞,
- դատարանի ու կոնկրետ դատավորի հետ կապված ի՞նչ հանրային արձագանք է եղել:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ստացվող միջնորդություններ.

- քանի՞ միջնորդություն է մուտք եղել դատարանում,
- քանի՞ միջնորդություն է նշանակվել քննության,
- քանի՞ դատական նիստ է հրավիրվել,
- քանի՞ դատական նիստ է կայացել,
- քանի՞ դատական նիստ չի կայացել,
- քանի՞ անգամ է տվյալ օրը քննվող կոնկրետ գործով դատական նիստը հետաձգվել,
- այդ օրը նշանակված դատական նիստի մասին ե՞րբ է ծանուցվել,
- քանի՞ միջնորդության քննություն է ավարտվել,
- տվյալ օրը դատարանի ու կոնկրետ դատավորի հետ կապված ի՞նչ հանրային արձագանք է եղել:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

Տվյալ օրը.

- քանի՞ բողոք է ներկայացվել,
- քանի՞ բողոք է ընդունվել վարույթ կամ քննության,
- քանի՞ բողոք է թողնվել առանց քննության (վարչական և քրեական գործերով),
- քանի՞ բողոքի ընդունում է մերժվել,
- քանի՞ բողոք է վերադարձվել,
- քանի՞ բողոք է վերադարձվելուց հետո կրկին ներկայացվել,
- քանի՞ բողոք է քննվել յուրաքանչյուր դատական կազմի կողմից,
- քանի՞ բողոք է քննվել գրավոր ընթացակարգով (վերաքննիչ քաղաքացիական դատարանի մասով),
- քանի՞ դատական նիստ է հրավիրվել,
- քանի՞ դատական նիստ է կայացել,
- քանի՞ դատական նիստ չի կայացել,
- ի՞նչ ժամկետում է նշանակվել քննվող ամեն մի կոնկրետ գործով առաջին դատական նիստը,
- քանի՞ անգամ է տվյալ օրը քննվող կոնկրետ գործով դատական նիստը հետաձգվել,

- այդ օրը նշանակված դատական նիստի մասին ե՞րբ է ծանուցվել,
- որպես դատական սանկցիա՝ քանի՞ անգամ է կիրառվել.
- դատական նիստերի դահլիճից հեռացում,
- դատական տուգանք,
- քանի՞ գործով է դատախազի/փաստաբանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելուց հետո դատարանն այդ մասին տեղեկատվություն ուղարկել համապատասխանաբար գլխավոր դատախազին և փաստաբանների պալատի նախագահին,
- քանի՞ գործով է դատավորի նախաձեռնությամբ հայտնվել ինքնաբացարկ,
- քանի՞ գործով է ներկայացվել բացարկ և քանի՞սն է բավարարվել,
- քանի՞ գործով է նշանակվել հաշտարարություն,
- քանի՞ գործով է կայացվել եզրափակիչ դատական ակտ,
- քանի՞ գործով է կայացվել վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում,
- քանի՞ գործով է առաջին ատյանի եզրափակիչ դատական ակտը.
- թողնվել անփոփոխ,
- փոփոխվել վճռի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին,
- բեկանվել ամբողջությամբ կամ մասնակիորեն, և գործն ուղարկվել է նոր քննության,
- ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանվել և փոփոխվել,
- ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանվել, և ամբողջությամբ կամ մասնակիորեն կարճվել է գործի վարույթը,
- ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանվել, և ամբողջությամբ կամ մասնակիորեն հայցը/դիմումը թողնվել է առանց քննության,
- ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանվել և հաստատվել է հաշտության համաձայնություն,
- քանի՞ գործով է առաջին ատյանի եզրափակիչ դատական ակտը բեկանվել.
- բացառապես նյութական իրավունքի նորմերի խախտման հիմքով,

- բացառապես դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով,
- դատական ակտի անվերապահ բեկանման հիմքով,
- նյութական և դատավարական նորմերի խախտման հիմքով,
- նոր հանգամանքի հիմքով,
- նոր երևան եկած հանգամանքի հիմքով,
- քանի՞ գործ է առկա յուրաքանչյուր դատական կազմի վարույթում,
- դատարանի ու կոնկրետ դատավորի հետ կապված ի՞նչ հանրային արձագանք է եղել:

ՎՃՈՎԵԿ ԴԱՏԱՐԱՆ (ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՊԱԼԱՏԻ ՄԱՍՈՎ).

- քանի՞ բողոք է ներկայացվել,
- քանի՞ բողոք է թողնվել առանց քննության,
- քանի՞ բողոքի ընդունում է մերժվել,
- քանի՞ բողոք է վերադարձվել,
- քանի՞ բողոք է վերադարձվելուց հետո կրկին ներկայացվել,
- քանի՞ բողոք է ընդունվել վարույթ,
- քանի՞ բողոք է քննվել գրավոր ընթացակարգով (քաղաքացիական գործերով),
- վարույթ ընդունված քանի՞ բողոքով է կայացվել եզրափակիչ դատական ակտ,
- քանի՞ գործով է կայացվել վճռաբեկ վարույթը կարճելու մասին որոշում,
- քանի՞ գործով է վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտը.
- թողնվել անփոփոխ,
- փոփոխվել դատական ակտի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին,
- բեկանվել ամբողջությամբ կամ մասնակիորեն, և գործն ուղարկվել է նոր քննության առաջին ատյանի դատարան,
- բեկանվել ամբողջությամբ կամ մասնակիորեն, և գործն ուղարկվել է նոր քննության վերաքննիչ դատարան,
- ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանվել և փոփոխվել,
- ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանվել, և ամբողջ-

- ջությամբ կամ մասնակիորեն կարճվել է գործի վարույթը,
- ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանվել, և ամբողջությամբ կամ մասնակիորեն հայցը/դիմումը թողնվել է առանց քննության,
 - ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանվել և հաստատվել է հաշտության համաձայնություն,
 - ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանվել, և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին,
 - քանի՞ գործով է վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանվել.
 - բացառապես նյութական իրավունքի նորմերի խախտման հիմքով,
 - բացառապես դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով,
 - դատական ակտի անվերապահ բեկանման հիմքով,
 - նյութական և դատավարական նորմերի խախտման հիմքով,
 - նոր հանգամանքի հիմքով,
 - նոր երևան եկած հանգամանքի հիմքով,
 - քանի՞ գործով է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումներ վերացվել,
 - քանի՞ գործով է Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա վերանայվել վերաքննիչ դատարանի դատական ակտը,
 - քանի՞ գործով է Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա վերանայվել Վճռաբեկ դատարանի դատական ակտը,
 - քանի՞ գործով է ՍԻԵԴ-ի որոշումների հիման վրա վերանայվել վերաքննիչ դատարանի դատական ակտը,
 - քանի՞ գործով է ՍԻԵԴ-ի որոշումների հիման վրա վերանայվել Վճռաբեկ դատարանի դատական ակտը,
 - քանի՞ գործով է արտահայտվել նախադեպային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշում,
 - տվյալ օրը դատարանի հետ կապված ի՞նչ հանրային արձագանք է եղել:

Մշտադիտարկման համակարգը ներառելու է նաև անհրաժեշտ տեղեկատվություն Մարդու իրավունքների եվրոպական

դատարանի վճիռների և Սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի մասին՝ հատուկ ուշադրություն դարձնելով նոր հանգամանքներով գործերի քննությանը:

6.8. Դատական արխիվների և ընթացիկ գործերի ամբողջական թվայնացման համակարգի ներդրումը

2003 թ.-ից ի վեր Հայաստանում դատական արխիվները չեն մշակվել և չեն հանձնվել պետական արխիվ: Արդյունքում՝ միլիոնավոր գործեր, ներառյալ դրանցում առկա փաստաթղթերի բնօրինակները, պահվել են արխիվացման ընդունված չափանիշների խախտմամբ: Դրա արդյունքում բազմաթիվ գործեր դարձել են կամ անընթեռնելի, կամ դրանց մշակումն ու անհրաժեշտ տեղեկատվության ստացումը դարձել է ժամանակատար:

2018 թ. Բարձրագույն դատական խորհրդի նախաձեռնությամբ իրականացված դատական արխիվների ամբողջական գույքագրման արդյունքներով որոշվեց սկսել դրանց մշակումն ու թվայնացումը: Այս լայնամասշտաբ ծրագրի իրականացմանը մասնակցում են ինչպես Դատական դեպարտամենտի, այնպես էլ պետական արխիվի աշխատակիցները, իրավագիտության ֆակուլտետների ուսանող-կամավորականները: Ինչպես նշվել է, նախատեսվում է նաև այլընտրանքային ծառայություն անցնող և այլընտրանքային պատիժ կրող անձանց ներգրավվածությունը:

Նշված ծրագիրը հավանության է արժանացել ՄԱԿ-ի Չարգացման ծրագրերի (UNDP) երևանյան գրասենյակի կողմից, որը պատրաստակամություն է հայտնել աջակցել արխիվների մշակման և թվայնացման գործում:

Արդյունքում, մեր հանրությունը կունենա դատական գործերի մշակված, թվայնացված, դասակարգված և համակարգված արխիվ, ինչը հնարավորություն կտա թե՛ քաղաքացիներին և թե՛ պետական մարմիններին արագորեն տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր:

Արդարադատության նախարարության հետ գործակցաբար նախաձեռնվել է հիմնել դատական իշխանության թվայնացված ժամանակակից արխիվ, որտեղ կարխիվացվեն նաև դատական իշխանությանն առնչվող բոլոր մարմինների թվայնացված պահոցին հանձնվող նյութերը:

6.9. Դատարանների շենքային և նյութատեխնիկական պայմանների հիմնախնդիրների լուծումը՝ հստակեցնելով գերատեսչական պատկանելության և շահագործման կարգը, իրականացնելով փուլային ծրագիր՝ 2019-2020 թվականների ընթացքում դատարանների համար առնվազն նվազագույն պայմաններ երաշխավորելու նպատակով

Բարձրագույն դատական խորհուրդը լիազորություններն ստանձնելուց անմիջապես հետո ձեռնամուխ եղավ իրավիճակի համակողմանի ուսումնասիրման, «նեղ տեղերի» բացահայտման, դրանց ուղղությամբ անհետաձգելի քայլեր նախաձեռնելու աշխատանքներին: Մտեղծվեց երեք աշխատանքային խումբ: Դրանցից **առաջինի առջև խնդիր դրվեց** ուսումնասիրել դատարանների շենքերի ու նյութատեխնիկական պայմանների վիճակը: **Երկրորդ խումբը** պետք է բացահայտեր դատական իշխանության պաշտոնական կայքի գործարկման և էլեկտրոնային արդարադատության արմատավորման ու արդարադատության ծախսատարության կրճատման հիմնախնդիրները: **Երրորդ խումբը** ձեռնամուխ եղավ օրենսդրության համեմատական վերլուծության ու օրենսդրական բացերի հաղթահարման ուղղությամբ առաջարկություններ նախապատրաստելու հիմնախնդիրներին:

Առաջին խմբի աշխատանքների արդյունքում բացահայտվեցին պարզապես աղաղակող թերացումներ ու ոչ իրավաչափ լուծումների մի ամբողջ շղթա: Այսպես, առկա են դատարանների 49 նստավայրեր, որոնցից 30-ը գտնվում է Արդարադատության նախարարության հաշվեկշռում, 15-ը՝ Դատական դեպարտամենտի հաշվեկշռում, 2-ը՝ Վճռաբեկ դատարանի հաշվեկշռում, 2-ը՝ քաղաքապետարանների հաշվեկշռում:

Դրանց շահագործումը բարձիթողի վիճակում է հայտնվել: Դատարանների առանձին նստավայրերում տեղակայվել են ոստիկանության, նոտարիատի, զագսի բաժանմունքներ, ավիատոմսերի ու վիճակահատի տոմսերի վաճառքի կրպակներ ու այլ հաստատություններ:

Բարձրագույն դատական խորհրդի առաջարկության հիման վրա ընթացքի մեջ է դատարանների շենքերի գերատեսչական պատկանելության հարցերի լուծումը:

Հայաստանի Հանրապետությունում 12 դատարաններում վերջին 30 տարում որևէ հիմնանորոգում չի իրականացվել, 2003-2011 թվականներին վերակառուցման աշխատանքներ են տարվել 20 շինություններում, որոնց մեծ մասում վերանորոգման նոր խնդիրներ են առաջացել: 2004 - 2013 թվականներին կառուցվել է 17 վարչական շենք, որոնցում նույնպես ընթացիկ նորոգումների խնդիրներ են առաջացել: Քանդման ենթակա է դատարանների արխիվի շենքը: Միսիանի նստավայրում դատարանի շենք ընդհանրապես գոյություն չունի, դատական նիստերը հրավիրվում են ոստիկանության շենքում: Ամբողջությամբ քանդման ենթակա է Արթիկի նստավայրի վարչական շենքը: Չգալի թվով դատարաններում չկան նվազագույն սանիտարական ու տեխնիկական պայմաններ, առանձին նստավայրերում դատական նիստերը տեղի են ունենում ընդհուպ միջանցքներում:

Ներկայումս վերակառուցման, վերանորոգման և կառուցման ենթակա են ընդհանուր առմամբ 49 վարչական շենքեր, որից.

վերակառուցման կարիք ունեցող վարչական շենքերի քանակը	7
վերանորոգման կարիք ունեցող վարչական շենքերի քանակը	38
կառուցման ենթակա վարչական շենքերի քանակը	4

Վերանորոգման, կառուցման և վերակառուցման համար անհրաժեշտ գումարների նախնական հաշվարկներ են կատարվել, քանի որ վերջնահաշվարկների համար հստակ հիմք կարող են հանդիսանալ միայն տվյալ աշխատանքների համար կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերը (նախագծանախահաշվային փաստաթղթերի գումարը կազմում է ընդհանուր շինարարական աշխատանքների ընդհանուր գումարի 3%-ից 10%-ը: Սույն հաշվարկների կատարման համար ընտրվել է միջինը՝ 4%-ը, դատարանների արխիվի դեպքում՝ 5%-ը):

Վերանորոգման համար անհրաժեշտ է 186,550.000 ՀՀ դրամ, իսկ դրանց նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար՝ 7,462.000 ՀՀ դրամ:

Վերակառուցման համար անհրաժեշտ է 2,860,600.000 հազ. ՀՀ դրամ, իսկ դրանց նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար՝ 114,424.000 ՀՀ դրամ:

Կառուցման համար անհրաժեշտ է 1,960,700.000 ՀՀ դրամ, իսկ դրանց նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար՝ 83,428.000 ՀՀ դրամ:

Ընդհանուր առմամբ շինարարական աշխատանքների ամբողջ ծավալի համար անհրաժեշտ է 5,213.164.000 ՀՀ դրամ գումար, որից 205,314.000 ՀՀ դրամ գումար՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար:

Ստորև նախնական հաշվարկների հիման վրա ներկայացվում են վերանորոգման, վերակառուցման և կառուցման համար անհրաժեշտ գումարները՝ ըստ դատարանների.

հազ. ՀՀ դրամ

Դատարան	Վերանորոգում	Վերակառուցում	Կառուցում
Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան			
Սևան նստավայր	200.0		
Ճամբարակ նստավայր	700.0		
Վարդենիս նստավայր	500.0		
Գավառ նստավայր			588,000.0
Մարտունի նստավայր		352,800.0	
Ընդամենը Գեղարքունիքի մարզի ԸԻԴ	1,400.0	352,800.0	588,000.0
Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան			
Հրազդան նստավայր		441,000.0	
Աբովյան նստավայր		438,000.0	
Չարենցավան նստավայր	3,400.0		
Եղվարդ նստավայր	1,450.0		
Ընդամենը Կոտայքի մարզի ԸԻԴ	4,850.0	879,000.0	0.0

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան			
Իջևան նստավայր	1,200.0		
Դիլիջան նստավայր	3,000.0		
Բերդ նստավայր	350.0		
Նոյեմբերյան նստավայր	1,500.0		
Ընդամենը Տավուշի մարզի ԸԻԴ	6,050.0	0.0	0.0
Ծիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան			
Գյումրի նստավայր	20,000.0		
Մարալիկ նստավայր	6,000.0		
Աշոցք նստավայր		285,000.0	
Արթիկ նստավայր		276,000.0	
Ընդամենը Ծիրակի մարզի ԸԻԴ	26,000.0	561,000.0	0.0
Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան			
Արտաշատ նստավայր	10,500.0		
Մասիս նստավայր	1,600.0		
Վայք նստավայր	1,000.0		
Եղեգնաձոր նստավայր	1,200.0		
Վեդի նստավայր			431,200.0
Ընդամենն Արարատի և Վայոց ձորի մարզերի ԸԻԴ	14,300.0	0.0	431,200.0
Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան			
Աշտարակ նստավայր	24,000.0		
Ապարան նստավայր	12,000.0		
Թալին նստավայր		283,000.0	
Ընդամենն Արագածոտնի մարզի ԸԻԴ	36,000.0	283,000.0	0.0

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան			
Կապան նստավայր	700.0		
Գորիս նստավայր	500.0		
Մեղրի նստավայր	400.0		
Սիսիան նստավայր			441,500.0
Ընդամենն Սյունիքի մարզի ԸԻԴ	1,600.0	0.0	441,500.0
Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան			
Արմավիր նստավայր		784,800.0	
Էջմիածին նստավայր	12,000.0		
Ընդամենն Արմավիրի մարզի ԸԻԴ	12,000.0	784,800.0	0.0
Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան			
Վանաձոր նստավայր	3,500.0		
Տաշիր նստավայր	200.0		
Ստեփանավան նստավայր	300.0		
Ալավերդի նստավայր	1,800.0		
Սպիտակ նստավայր	1,500.0		
Ընդամենն Լոռու մարզի ԸԻԴ	7,300.0	0.0	0.0
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան			
Ավան նստավայր	250.0		
Արաբկիր նստավայր	4,200.0		
Աջափնյակ նստավայր	1,100.0		
Կենտրոն նստավայր	500.0		
Էրեբունի նստավայր	800.0		
Ծենգավիթ նստավայր	2,500.0		
Ընդամենն Երևան քաղաքի ԸԻԴ	9,350.0	0.0	0.0
ՀՀ սնանկության դատարան	2,300.0		
Վարչական դատարան	1,400.0		

վերաքննիչ քաղաքացիական դատարան	3,500.0		
վերաքննիչ քրեական դատարան	3,500.0		
վերաքննիչ վարչական դատարան	50,000.0		
Վճռաբեկ դատարան	7,000.0		
Դատարանների արխիվ			500,000.0
Ընդամենը շինարարական աշխատանքներ	186,550.0	2,860,600.0	1,960,700.0
Նախագծանախահաշվա- յին աշխատանքներ 4%	7,462.0	114,424.0	58,428.0
Նախագծանախահաշ- վային աշխատանքներ (դատարանների արխիվի վարչական շենք) 5%			25,000.0
Ընդամենը նախագծա- նախահաշվային աշխա- տանքներ	7,462.0	114,424.0	83,428.0

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ այս ցանկին պետք է ավելացվի նաև Երևան քաղաքում քրեական դատարանի նստավայրի, ինչպես նաև սնանկության դատարանի կից կառույցի կառուցումը, արդարադատության ողջ համակարգի համար թվային արխիվի ժամանակակից կենտրոնի նախագծումն ու կառուցումը:

Սնանկության դատարանի կից կառույցը, որ կարող է ծառայել նաև ներդրումային վեճերի մասնագիտացված քննությունների կազմակերպման համար, կպահանջի հետևյալ միջոցները.

**Ներդրումային վեճեր քննող 4 դատավորի հաշվարկով՝
սնանկության դատարանի վարչական շենքին կից
աշխատանքային (շենքային) պայմաններ ստեղծելու
համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները**

	Չբաղեցվող տարածքի անվանումը	Չափման միավոր	Քա- նակը	Քմ	Ըն- դա- մենը
1.	Դատավորի համար նախա- տեսված աշխատասենյակ (սանհանգույցով)	հատ	4	30	120
2.	Դատավորի օգնականի համար նախատեսված աշխատասենյակ	հատ	4	15	60
3.	Դատական նիստերի քարտուղարի և դատա- վորին կցված գործավարի համար նախատեսված աշ- խատասենյակ	հատ	4	20	80
4.	Դատական նիստերի դահլիճ	հատ	2	40	80
5.	Սանհանգույց	հատ	4	10	40
6.	Երկու մասնաշենքը միացնող միջանցք	հատ	1	20	20
7.	Ճաշատեղի	հատ	1	20	20
8.	Միջանցքներ, ճեմասրահներ, աստիճանավանդակ (ընդհանուր տարածքի)			45%	190
9.	Նկուղային տարածք (արխիվ, պահեստային հատված)				300
10.	Ընդամենը քմ				910

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում 1 քմ-ի
մոտավոր արժեքը կազմում է 343.0 հազ. ՀՀ դրամ: Նշված ծավալ-
ներով շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը մո-

տավորապես կազմում է 327,736.0 հազ. ՀՀ դրամ, որից 15,606.0 հազ. ՀՀ դրամը (5%) կազմում է նախագծանախահաշվային աշխատանքների գումարը:

Վերոնշյալ երկրորդ մասնագիտական խմբի աշխատանքները վկայեցին, որ Հայաստանը տարիներ շարունակ էական քայլեր չի կատարել էլեկտրոնային արդարադատության ժամանակակից համակարգ ստեղծելու ուղղությամբ, իսկ արդարադատության ծախսատարության մակարդակը որևէ քննադատության չի դիմանում: Խորհրդի ձեռնարկած քայլերն այս ուղղություններով կներկայացվեն առանձին:

Առանձին կներկայացվեն նաև օրենսդրության վիճակի ուսումնասիրության արդյունքները, որին նաև առանձին բաժիններում ենք անդրադարձ կատարում:

6.10. Դատական իշխանության բյուջետային պլանավորման, ֆինանսական կառավարման ու կատարման վերահսկման առավել արդյունավետ, գործուն ու թափանցիկ համակարգի ներդրումը՝ միաված արդարադատության արդյունավետության բարձրացմանը և ծախսատարության կրճատմանը

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ դատական իշխանության բյուջետային պլանավորումը պետք է հստակ ծրագրանպատակային բնույթ ունենա՝ ներառելով ընթացիկ, կարճաժամկետ և ռազմավարական խնդիրների ներդաշնակ լուծումը: Օրակարգային խնդիր է նաև ըստ դատարանների և Դատական դեպարտամենտի կենտրոնական ու առանձնացված ստորաբաժանումների ֆինանսական կառավարման ու կատարման վերահսկման միջազգային չափորոշիչներին համապատասխանող թափանցիկ համակարգի ներդրումը:

Ուսումնասիրության փուլում են նման համակարգերի գործողության բնույթն ու առանձնահատկություններն Արևելյան ու Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում, ինչպես նաև այս ոլորտում էլեկտրոնային կառավարման հնարավորությունների տեղայնացման խնդիրները: Նախատեսվում է մինչև 2019թ. օգոստոսի 15-ը Բարձրագույն դատական խորհրդի քննարկմանը ներկայացնել հիմնարար լուծումների հայեցակարգային մոտեցումները:

6.11. Դատավորների գործունեության գնահատման՝ օբյեկտիվ չափորոշիչների վրա խաթախված համակարգի ներդրումը

Իրավունքի գերակայությունը պահանջում է ոչ միայն դատական իշխանության անկախության ապահովում, այլ նաև արդյունավետ ու բարձրորակ արդարադատություն իրականացնող իրավասու դատարանների ստեղծում: Դատավորների գնահատման անհրաժեշտությունը թելադրված է դատական իշխանությանը ներկայացվող երկու կարևոր պահանջներով, այն է՝ ժողովրդավարական հասարակությունում ապահովել բարձրագույն որակի արդարադատություն և հանրային հաշվետվողականություն:

Դատական օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ առաջինատյանի ընդհանուր իրավասության, մասնագիտացված և վերաքննիչ դատարանների բոլոր դատավորների գործունեությունը ենթակա է գնահատման:

Դատական օրենսգրքի՝ «Դատավորների գործունեության գնահատումը» վերտառությամբ 18-րդ գլխի նորմերով սահմանվել է, որ դատավորների գործունեության գնահատումն իրականացնում է Բարձրագույն դատական խորհուրդը՝ օրենսգրքով սահմանված չափանիշների հիման վրա (139 հոդվ., մաս 1), նախատեսվել են դատավորների գործունեության գնահատման նպատակները (136 հոդվ., մաս 2), գնահատման տեսակներն ու պարբերականությունը (137 հոդվ.), գնահատման չափանիշները (138 հոդվ.): Միևնույն ժամանակ նախատեսվել է, որ **Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և դատավորների գործունեության գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասները** (139 հոդվ., մաս 2):

Դատական օրենսգրքի անցումային դրույթներով նախատեսվել է, որ՝

1. դատավորների առաջին հերթական գնահատումն իրականացվում է 2019 թվականի հունվարի 1-ից 2024 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում:

2. Բարձրագույն դատական խորհուրդը մինչև 2019 թվականի հունվարի 1-ը հաստատում է դատավորների առաջին հերթական գնահատման ժամանակացույցը (166 հոդվ., մաս 27):

Ի կատարումն Դատական օրենսգրքի վերոշարադրյալ պահանջների, Բարձրագույն դատական խորհուրդը 2018թ. դեկտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-62-Ո-173 որոշմամբ հաստատել է դատավորների առաջին հերթական գնահատման ժամանակացույցը, միաժամանակ Եվրոպայի խորհրդի կողմից ձևավորված փորձագիտական խմբի հետ գործակցաբար ձեռնամուխ է եղել դատավորների գործունեության հիմնական և արտահերթ գնահատման մեթոդաբանությունը և գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասները մշակելու աշխատանքներին: Վերջիններիս շրջանակներում մանրակրկիտ ուսումնասիրվել են դատավորների անհատական գնահատման համակարգը ներդրած և հաջողությամբ կիրառող երկրների՝ Ավստրիայի, Բոսնիա և Հերցեգովինայի, Բուլղարիայի, Խորվաթիայի, Կիպրոսի, Էստոնիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունաստանի, Հունգարիայի, Իտալիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Սլովենիայի, Իսպանիայի փորձը, ինչպես նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք նախանշում են քննարկվող ինստիտուտի առավել արդյունավետ կիրառման ուղիները (օրինակ՝ ԵԴԽԽ-ի 2014թ. թիվ 17 եզրակացությունը, Դատական խորհուրդների եվրոպական ցանցի 2012-2013 թթ. զեկույցը՝ դատական իշխանության ներկայացուցիչների մասնագիտական պարտականությունները կատարելու և նրանց անփոխարինելիության նվազագույն չափորոշիչների վերաբերյալ և այլն):

Կատարված բազմագործոնային վերլուծության հիման վրա Բարձրագույն դատական խորհուրդը մշակել է «Դատավորների գործունեության գնահատման մեթոդաբանությունը և կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը, որը ներկայումս փորձագիտական կարծիքի և հնարավոր լրամշակման է ներկայացվել Եվրոպայի խորհրդի փորձագիտական խմբին՝ հաշվի առնելով տվյալ որոշման առանձնահատուկ կարևորությունը:

Մշակված նախագծի հիմքում դրվել են հետևյալ հայեցակարգային մոտեցումները.

- դատավորների գործունեության գնահատման համակարգը և դրա հիմքում դրված մեթոդաբանությունը պետք է ուղղված լինեն դատական իշխանության բարելավմանը՝ ապահովելով դատական իշխանության բարձր որակական հատկանիշները, երաշխավորելով դատական իշխանության անկախությունը և հաշվետվողականությունը.

- գնահատման մեթոդաբանությունը պետք է բացառի գնահատումն իրականացնողի հնարավոր միջամտությունը կամ ազդեցությունը գնահատվող դատավորի արդարադատական գործառնություններին կամ հանգեցնի իրավիճակների, երբ դատավորը դատական ակտ կայացնելիս ելնի ոչ թե փաստերի և օրենքի օբյեկտիվ մեկնաբանությունից, այլ ղեկավարվի գնահատողին գոհացնելու նկատառումներով.
- դատավորների գնահատումը կարող է իրականացվել բացառապես օրենքով կանխորոշված նպատակներով (այն է՝ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները կազմելիս նպաստել լավագույն թեկնածուների ընտրությանը, նպաստել դատավորների վերապատրաստման ուղղությունների ընտրությանը, բացահայտել դատավորի աշխատանքի արդյունավետությունը բարելավելու ուղիները, նպաստել դատավորի ինքնակատարելագործմանը, նպաստել դատարանի գործունեության արդյունավետության բարելավմանը).
- դատավորի գնահատման արդյունքներն այլ նպատակներով (պատասխանատվություն, տեղափոխում, դատական ակտերի վերանայում և այլն) օգտագործվել չեն կարող.
- գնահատումն իրականացվում է բացառապես օրենքով կանխորոշված չափանիշներով, որոնք պետք է որոշակիացնել Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ սահմանված գնահատման օբյեկտիվ չափորոշիչներով (ցուցիչներով).
- գնահատման չափորոշիչների (ցուցիչների) համակարգում հիմնական շեշտը պետք է դրվի որակական, այլ ոչ քանակական ցուցանիշների վրա.
- որևէ պարագայում գնահատման առարկա չի կարող լինել գործի լուծումը, դատական ակտում առկա օրենքի մեկնաբանությունը, փաստերի գնահատումը.
- դատավորի աշխատանքի որակը և արդյունավետությունը գնահատելիս հարկ է կենտրոնանալ դատավորի կողմից կիրառվող մեթոդաբանության վրա, այլ ոչ թե գնահատել առանձին դատական ակտերի իրավաբանական արժանիքները.
- պետք է հաշվի առնվեն կոնկրետ գործը և ընդհանուր ծանրաբեռնվածությունն արդյունավետորեն կառավարելու կարողությունը՝ հաշվի առնելով տվյալ ժամանակահատ-

վածում դատավորի կողմից կատարված աշխատանքի ամբողջ ծավալը.

- դատավորի կայացրած ակտերի բեկանման հաճախականությունը չպետք է էապես ազդի դատավորի գնահատման արդյունքների վրա, քանի դեռ բեկանման պատճառներն ու քանակն ակնհայտորեն ցույց չեն տալիս դատավորի՝ անհրաժեշտ գիտելիքների և աշխատանքի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի բացակայությունը.
- գնահատման ընթացքում դատավորը պետք է ունենա լաված լինելու և գնահատման նախնական արդյունքների վերանայում պահանջելու հնարավորություն.
- գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկություններն ու նյութերը պետք է լինեն բավարար և ստացվեն վստահելի աղբյուրներից.
- գնահատման արդյունքներով դատավորների որոշակի ռեյտինգավորումն ընդունելի է, այն հատկապես անհրաժեշտ է ծառայողական առաջխաղացման օբյեկտիվ հիմքերի ձևավորման համար.
- դատավորների գնահատման սկզբունքները, չափանիշները և ընթացակարգը պետք է մատչելի լինեն հանրությանը, սակայն դատավորի անկախությունը և պաշտպանվածությունը երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է ապահովել անհատական գնահատման ողջ ընթացքի և դրա արդյունքների գաղտնիությունը.
- անբարենպաստ գնահատականն ինքնին չի կարող կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ: Գնահատման ընթացքում առերևույթ կարգապահական խախտման կամ հանցագործության հատկանիշներ պարունակող արարք հայտնաբերելը կարող է լինել համապատասխան վարույթի հարուցման առիթ:

Նախագծով ակնկալվում է ներդնել դատավորների գնահատման 250 միավորային համակարգ, որի շրջանակներում դատավորի աշխատանքի որակը և արհեստավարժությունը կգնահատվի առավելագույնը 100 միավոր, դատավորի աշխատանքի արդյունավետությունը՝ 100 միավոր, դատավորի գործունեության էթիկական կողմը՝ 50 միավոր:

Գնահատումը ենթադրվում է իրականացնել՝ հիմք ընդունելով Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ հաստատված գնահատման սանդղակները, որոնք պետք է ներառեն յուրա-

քանցուր չափանիշով դատավորի գործունեության գնահատման ցուցիչները, ինչպես նաև յուրաքանչյուր ցուցիչով միավորը որոշելու մեթոդը, միավորների առավելագույն չափը, տվյալ ցուցիչով դատավորի գործունեության գնահատման հիմք հանդիսացող փաստաթղթավորված տվյալների շրջանակը և դրանք հավաքելու կարգը: Գնահատման մեթոդաբանության հիմքում դրված գնահատման ցուցիչները՝ ըստ գնահատման օրենքով սահմանված չափանիշների, հանգում են հետևյալին:

I. Դատավորի աշխատանքի որակի և արհեստավարժության գնահատումը (առավելագույն միավորը՝ 100)

Դատական ակտը հիմնավորելու կարողությունը որոշելու ցուցիչները՝

- դատական ակտի կառուցվածքին օրենքով ներկայացվող պահանջները պահպանելը, դատական ակտի առանձին մասերի միջև տրամաբանական կապը.
- դատական ակտում վերլուծության առկայությունը.
- մեկնաբանման կանոնների կիրառումը.
- դատական ակտի եզրափակիչ մասի որոշակիությունը և լրիվությունը.
- դատական ակտի լեզվական մատչելիությունը՝ հիմք ընդունելով այն, որ տեքստը պետք է մատչելի լինի միջինից ցածր կարգ ունեցող իրավաբանի և միջինից բարձր իրավագիտակցություն ունեցող ոչ-իրավաբանի համար:

Դատական նիստը կառավարելու կարողությունը որոշելու ցուցիչները՝

- դատական նիստի ընթացքում կատարման ենթակա գործողությունների պատշաճ հաջորդականությունն ապահովելը.
- դատավարության մասնակցի լսված լինելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ և բավարար ժամանակ տրամադրելը (հավասար պայմաններ ապահովելը).
- իշխանության չափավոր կիրառումը, այդ թվում՝ դատավարության մասնակիցների և դատական նիստերի դահլիճում ներկա գտնվող անձանց նկատմամբ համարժեք դատավարական ներգործությունը.
- դատական նիստերի դահլիճում կարգի ապահովումը.
- դատական նիստի ընթացքում ինքնատիրապետումը պահպանելու կարողությունը:

II. Դատավորի աշխատանքի արդյունավետության գնահատումը (առավելագույն միավորը՝ 100)

Աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակությունը և աշխատանքի պլանավորումը որոշելու ցուցիչները՝

- աշխատանքային ծանրաբեռնվածության քանակական կատարողականը, որը գնահատվում է՝ հիմք ընդունելով ԲԴԽ կողմից սահմանված՝ դատավորի ծանրաբեռնվածության չափորոշիչները, իսկ նախքան դրանք սահմանելը՝ դատավորի անհատական աշխատանքային ծանրաբեռնվածության գործակիցը.
- բողոքարկված և անփոփոխ թողնված եզրափակիչ դատական ակտերի հարաբերակցությունը.
- բեկանման անվերապահ հիմքերով բեկանված դատական ակտերի քանակը.
- տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ էլեկտրոնային ռեսուրսների օգտագործումը.
- աշխատանքի պլանավորումը, այդ թվում՝ դատական նիստերի ժամանակացույցերի առկայությունը, առաջնահերթություններ սահմանելը, աշխատակազմի աշխատակիցների միջև աշխատանքի բաժանումը, աշխատաժամանակի պատշաճ օգտագործումը:

Ողջամիտ ժամկետում գործեր քննելն ու դատական ակտեր կայացնելը որոշելու ցուցիչները՝

- օրենքով սահմանված ժամկետներում գործի քննությունն ավարտելը,
- այլ գործերի քննության տևողությունը, որը գնահատվում է՝ հիմք ընդունելով Դատական օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված չափանիշները.
- դատավորի կողմից առանձին դատավարական գործողություններ կատարելու համար օրենքով սահմանված ժամկետների պահպանումը:

Արդյունավետ աշխատամիջավայր սպահովելու կարողությունը որոշելու ցուցիչները՝

- դատավորին կցված ծառայողների համար նպատակներ սահմանելը.
- դատավորին կցված ծառայողների համար սահմանված նպատակներին հասնելուն ուղղված նախաձեռնությունները խրախուսելը.

- դատավորին կցված ծառայողների հմտությունների գարգացմանը նպաստելը.
- դատավորին կցված ծառայողների աշխատանքի պատշաճ վերահսկողությունը և ողջամիտ պահանջկոտությունը:

III. Դատավորի գնահատումն Էթիկայի չափանիշներով
(առավելագույն միավորը՝ 50)

Էթիկայի կանոնների պահպանումը, դատարանի հանրային ընկալմանն ու դատարանի նկատմամբ վստահությանը նպաստելը և այլ դատավորների, դատարանի աշխատակազմի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը որոշելու ցուցիչները՝

- ԴԸԺ կողմից սահմանված Էթիկայի կանոնների պահպանումը.
- վարքագծի կանոնների պահպանումը.
- գիտական և գիտամանկավարժական գործունեությունը, այդ թվում՝ դասավանդումը բուհական կամ հետբուհական կրթություն և մասնագիտական վերապատրաստում իրականացնող կազմակերպություններում.
- դատարանի հանրային ընկալմանն ու դատարանի նկատմամբ վստահությանը նպաստող հրապարակային ելույթները.
- մասնակցությունն օրենսդրության կատարելագործմանն ուղղված աշխատանքներին.
- այլ դատավորների և դատարանի աշխատակազմի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը:

Քննարկվող հարցով Բարձրագույն դատական խորհրդի որոշումը նախատեսված է վերջնական տեսքի բերել և ընդունել 2019թ. հունիսի առաջին տասնօրյակին: Որոշումն ընդունելուց անմիջապես հետո Բարձրագույն դատական խորհուրդը ձեռնամուխ է լինելու դատավորների գործունեության առաջին հերթական գնահատման աշխատանքներին՝ ըստ հետևյալ ժամանակացույցի⁸.

⁸ Հաստատվել է Բարձրագույն դատական խորհրդի 2018թ. դեկտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-62-Ո-173 որոշմամբ:

	ՏԱՐԵԹԻՎ	ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1.	2019 թ.	Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան
2.	2020 թ.	Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան
3.	2021 թ.	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան
4.	2022 թ.	վարչական դատարան սնանկության դատարան
5.	2023 թ.	վերաքննիչ քաղաքացիական դատարան վերաքննիչ քրեական դատարան վերաքննիչ վարչական դատարան

6.12. Դատավորների օպտիմալ ծանրաբեռնվածության երաշխավորման ուղղությամբ իրականացված ու իրականացվելիք քայլերը, ըստ գործերի առանձին տեսակների և բարդության դրանց քննության միջին ուղենշային ժամկետների հստակեցումը՝ բացառելով տարիներ շարունակ տարբեր պատճառներով գործերի կասեցումները կամ քննության ու որոշման կայացման անորոշ հետաձգումները

2018 թվականին, ի կատարումն Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, Բարձրագույն դատական խորհուրդը նախաձեռնեց ըստ գործերի առանձին տեսակների և բար-

դության գործերի քննության միջին տևողության ուղենշային ժամկետները սահմանող որոշման մշակման աշխատանքները՝ վերահաստատելով միջազգայնորեն ընդունված այն մոտեցումը, որ «ուշացված արդարադատությունը հավասար է արդարադատության մերժման»:

Գործերի քննության միջին տևողության ուղենշային ժամկետների սահմանումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում ապահովել դատական գործունեության (արդարադատության) արդյունավետ իրականացումը, այդ թվում՝ գործերի ողջամիտ ժամկետում քննությունը և լուծումը, դատարանների և դատավորների հաշվետվողականությունը, գործերի քննության տևողության կանխատեսելիությունը:

Այդ ժամկետների սահմանումը նպատակ է հետապնդում նաև ապահովել դատավորի գործունեության գնահատման գործընթացում ողջամիտ ժամկետում գործերը քննելու և դատական ակտեր կայացնելու չափանիշի գնահատումը՝ որպես դատավորի աշխատանքի արդյունավետության գնահատման չափորոշիչ:

Նշված ժամկետները սահմանելիս հիմք է ընդունվելու դատական գործերի՝ ըստ առանձին տեսակների առանձնահատկությունները և բարդության չափանիշները: Իսկ բարդությունն իր հերթին բաժանվելու է իրավականի և փաստականի՝ առանձին գործակիցներով:

Գործերի՝ ըստ տեսակների և բարդության գործակիցների սահմանումը կօգնի կատարելագործել գործերի բաշխման և վերաբաշխման ավտոմատ ծրագիրը, քանզի այն հաշվի կառնի գործերի բարդության գործակիցներն ըստ հատուկ այգորիթմի և արդյունքում դատավորների միջև առանձնակի բարդ, բարդ, նվազ բարդ և պարզ գործերը կբաշխվեն համաչափորեն:

Ժամկետների հաշվարկն անհրաժեշտ է նաև հիմնել առնվազն նախորդ երեք տարիների վիճակագրական տվյալների վրա՝ ճշգրտելով այդ տարիների ընթացքում տեղի ունեցած դատավարական օրենսդրության այն փոփոխությունները, որոնք կարող են ազդել գործերի տևողության վրա:

Ակնկալվում է, որ նշված ուղենշային ժամկետների սահմանումն էապես կնվազեցնի և տեսանելի ապագայում կբացառի դատական գործերի չհիմնավորված հետաձգումները, ձգձգումները՝ սահմանելով գործերի քննության առաջնահերթությունները, որպես հետևանք արդարադատության իրականացումը դարձնելով արդյունավետ և մատչելի:

Այս հարցով Բարձրագույն դատական խորհրդի որոշումը նախատեսված է վերջնական տեսքի բերել և ընդունել 2019թ. հունիսի առաջին տասնօրյակին:

6.13. Դատավորների և դատավորին կցված օգնականների թվակազմի օպտիմալացումը՝ հիմք ընդունելով դատավորի ողջամիտ ծանրաբեռնվածությունը և դատարանների բեռնաթափմանն ուղղված ձեռնարկվելիք միջոցառումների հնարավոր արդյունքները

Այս ուղղությամբ տարվող աշխատանքների երկրորդ փուլը նախատեսվում է սկսել 2019 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից՝ նոր բյուջետային հայտի նախապատրաստման շրջանակներում: Առաջնահերթ խնդիրներն են.

- դատավորների օպտիմալ ծանրաբեռնվածության չափորոշիչներից և դատարանների անհարկի, արդարադատության բուն էությունից չբխող գործերով ծանրաբեռնման խնդիրների լուծման արդյունքներից ելնելով ըստ նստավայրերի ու մասնագիտացման ուղղությունների դատավորների համաեվրոպական չափորոշիչներին համապատասխանող թվի ապահովումը,
- դատարանների աշխատակազմերի թվի ու կառուցվածքի ներդաշնակումն արդյունավետ արդարադատության երաշխավորման պահանջներին,
- դատարաններում և Դատական դեպարտամենտի կառուցվածքային ստորաբաժանումներում որակյալ մասնագետների ընդգրկման, նրանց առավել արդյունավետ ու նպատակային վերապատրաստման, դատական կարգադրիչների ծառայության գործունակության ամրապնդման նպատակային ծրագրի իրականացումը:

Բարձրագույն դատական խորհուրդը հիմք է ընդունում այն իրողությունը, որ դատարանների գործունեության արդյունավետության բարձրացման կարևորագույն բաղադրիչ է հանդիսանում նաև դատական կարգադրիչների և դատական ծառայողների աշխատանքի պատշաճ կազմակերպումը և համապատասխան պայմանների ստեղծումը: Քանի որ դատարանին առնչվող յուրաքանչյուր անձ անմիջականորեն շփվում է հենց դատական կարգադրիչների և դատական ծառայողների հետ,

որի հիման վրա էլ հիմնականում ձևավորվում է վերաբերմունքը դատական իշխանության նկատմամբ, ինչպես նաև դատաբանների նկատմամբ հանրային վստահության բարձրացման տեսանկյունից առավել քան կարևորվում է դատական կարգադրիչների և դատական ծառայողների մասնագիտական բարձր որակավորումը, դատաբաններում մատուցվող ծառայությունների հավուր պատշաճի կազմակերպումը և մատուցումը: Այս նպատակի իրագործումը հնարավոր է միայն համապատասխան իրավական, կադրային, տնտեսական և սոցիալական միջոցառումների իրականացմամբ:

Իրավական նախադրյալների ստեղծման տեսանկյունից Բարձրագույն դատական խորհուրդը Դատական օրենսգրքով սահմանված լիազորությունների շրջանակներում և ժամկետներում ընդունել է դատական կարգադրիչներին և դատական ծառայողներին վերաբերող գրեթե բոլոր իրավական ակտերը: Դատական ծառայողի գործունեության գնահատման կարգը, չափանիշները և բնութագրի ձևը սահմանող կարգը գտնվում է վերջնական խմբագրման փուլում:

Ինչ վերաբերում է կադրային քաղաքականությանը, ապա դատական համակարգում բարձր մասնագիտական որակավորում ունեցող անձանց ներգրավումը խրախուսելու առումով առաջնային է դառնում նրանց տնտեսական, սոցիալական և այլ պայմանների ապահովումը:

Դատական իշխանությունն արհեստավարժ կադրերով համալրելուն ուղղված գործողություններ ձեռնարկելու հետ մեկտեղ, դատաբանների ներկայիս գերծանրաբեռնվածության պայմաններում գնահատելով դատական կարգադրիչների և դատական ծառայողների կողմից իրականացվող ծանր աշխատանքը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են հանրային ծառայությունը կարգավորող օրենքներով, անհրաժեշտ է արձանագրել, որպեսզի դատական կարգադրիչների և դատական ծառայողների աշխատանքի արդյունավետության բարձրացման և բարձր մասնագիտական պատրաստվածությամբ անձանց Դատական դեպարտամենտում աշխատանքը շահագրգռելու հեռանկարները, տնտեսական և սոցիալական երաշխիքները պետք է դիտարկել Կառավարության կողմից քաղաքացիական և հանրային ծառայության բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացման համատեքստում:

6.14. Դատավորների աշխատանքի որակն ու արդյունավետությունը բարձրացնելուն, բարեվարքության կանոնների պահպանմանը, մասնագիտական պատրաստվածության և հմտությունների շարունակական բարելավմանն ուղղված կառուցակարգերի կատարելագործումը

Բարձրագույն դատական խորհուրդն այս ուղղությամբ տարվող աշխատանքները համարում է համալիր ու առաջնահերթ խնդիր: Դրա լուծումը պայմանավորված է ինչպես արդյունավետ արդարադատության ժամանակակից ենթակառուցների ձևավորմամբ, այնպես էլ դատավորների հավակնորդների թեկնածուների ընտրության, նախապատրաստման, առաջադրման, նշանակման գործընթացների թափանցիկության բարձրացման, դատավորի նոր կերպարի ձևավորման, դատավորի նկատմամբ հանրային վերաբերմունքի արմատական փոփոխության խնդիրների լուծմամբ: Այս աշխատանքները բազմաբևեռ են՝ առանձին օրենսդրական կանոնակարգումների վերանայում, Բարձրագույն դատական խորհրդի գործունեության արդյունավետության ու թափանցիկության բարձրացում, դատավորների վերապատրաստման համակարգի բարելավում, արդարադատության ոլորտի ներքին մշտադիտարկման արդյունավետ կառուցակարգերի արմատավորում և այլն:

Բարձրագույն դատական խորհուրդը նախատեսում է նշված բոլոր ուղղություններով նպատակային ծրագրերի իրականացում:

Նշված և հաղորդման 6-րդ բաժնում ներառված այլ հարցերի վերաբերյալ մոտեցումները կհստակեցվեն նաև հաշվի առնելով Բարձրագույն դատական խորհրդի կողմից նախաձեռնված քննարկումների արդյունքները, որոնք, ինչպես ներկայացված է դատական իշխանության պաշտոնական կայքում, կազմակերպվելու են վեց հիմնական թեմատիկ խմբերով: Դրանք են.

1. Իշխանությունների բաժանման համակարգում դատական իշխանության գործառնության, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախությունը երաշխավորելու հիմնախնդիրը, մասնավորապես.

- օրենսդրական առկա լուծումների համապատասխանեցումն այդ պահանջներին,
- դատական իշխանությանն առնչվող օրենսդրական ակտերի մշակման ու ընդունման գործընթացին դատական իշխանության գործուն մասնակցությունն ապահովող ընթացակարգերի ներդրումը,
- դատավորի բարձր կարգավիճակին, պատասխանատվությանը և անկախության երաշխիքներին համապատասխանող վարձատրության, սոցիալական ապահովության և նյութական աջակցության խնդիրների համալիր կարգավորմանը միտված օրենսդրական նախադրյալների ամրապնդումը,
- դատարանների շենքային և նյութատեխնիկական պայմանների հիմնախնդիրների լուծումը՝ հստակեցնելով գերատեսչական պատկանելության և շահագործման կարգը, իրականացնելով փուլային ծրագիր՝ 2019-2020 թվականների ընթացքում դատարանների համար առնվազն նվազագույն պայմաններ երաշխավորելու համար:

2. Դատավորների օպտիմալ ծանրաբեռնվածության երաշխավորման ուղղությամբ իրականացված և իրականացվելիք քայլերը.

- առաջին ատյանի դատարանում գործերի համաչափ բաշխման չափանիշների մշակումը և ներդրումը.
- դատավորի ծանրաբեռնվածության չափորոշիչների մշակումը և ներդրումը, դատավորների ծանրաբեռնվածության համահարթեցման, հետագա արդյունավետ կառավարման ուղիների և մեթոդների մշակումը և ներդրումը,
- անցումը ողջամիտ ժամկետներում գործերի քննության նոր համակարգին՝ բացառելով տարիներ շարունակ տարբեր պատճառներով գործերի կասեցումները կամ քննության ու որոշման կայացման անորոշ հետաձգումները, հստակեցնելով գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության.
- դատավորների և դատավորին կցված օգնականների թվակազմի օպտիմալացումը՝ հիմք ընդունելով դատավորի ողջամիտ ծանրաբեռնվածությունը և դատարանների բեռ-

նաթափմանն ուղղված ձեռնարկվելիք միջոցառումների հնարավոր արդյունքները:

3. Արդարադատության ծախսատարության կրճատման ծրագրային քայլերը, մասնավորապես.

- վարչական արդարադատության բեռնաթափումն արդարադատության հետ անմիջական աղերս չունեցող գործերից, ինչպես նաև դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով գերծանրաբեռնվածությունից՝ բարելավելով այդ վեճերով վարչական վարույթի իրավական հիմքերը,
- քաղաքացիական արդարադատության բեռնաթափումը բանկերին ու վարկային կազմակերպություններին, էներգամատակարարման, հեռահաղորդակցության և մի շարք այլ ոլորտներում ծառայություններ մատուցող կազմակերպություններին գրեթե անվճար սպասարկուի գործառույթից, գումարների բռնագանձման հարցերով անհարկի ծանրաբեռնումից:

4. Էլեկտրոնային արդարադատության բաղադրիչների փուլային ներդրումը, որը ներառում է.

- դատական ծանուցումների և պաշտոնական գրագրության էլեկտրոնային համակարգը,
- առանձին գործերով էլեկտրոնային դատավարությանն անցնելու իրավական, ծրագրային ու տեխնիկական ապահովման նախադրյալների ստեղծումը, համարժեք ծառայությունների կարողությունների բարձրացման ուղղությամբ քայլերը,
- Կառավարությունում գործող հաղորդակցության էլեկտրոնային «Mulberry» համակարգի հետ կապը,
- դատական արխիվների և ընթացիկ գործերի ամբողջական թվայնացման գործընթացը,
- արդարադատության մշտադիտարկման համակարգի ներդրման քայլերը,
- անցումը դատական գործերի կառավարման ժամանակակից համակարգի:

5. Դատավորների աշխատանքի որակն ու արդյունավետությունը բարձրացնելուն, բարեվարքության կանոնների պահպանմանը, մասնագիտական պատրաստվածության և հմտությունների շարունակական կատարելագործմանն ուղղված կառուցակարգերի ներդրումն ու կատարելագործումը, մասնավորապես.

- դատավորների գործունեության հերթական ու արտահերթ գնահատման մեթոդաբանության մշակումն ու ներդրումը,
- դատավորի կարգապահական պատասխանատվության ինստիտուտի կատարելագործումը.
- դատավորների և դատական ծառայողների արդյունավետ և վերջնարդյունք ապահովող վերապատրաստման ու մասնագիտացման խորացման հիմնախնդիրները՝ հաշվի առնելով իրավական քաղաքականության ոլորտում հայեցակարգային նոր մոտեցումները, օրենսդրական նոր կարգավորումները, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, ինչպես նաև օրենսդրական բացերի հաղթահարման համար օրենքի և իրավունքի անալոգիայի կիրառման հնարավորությունները, օրենքների մեկնաբանման և պարզաբանման, ապացույցների հետազոտման և գնահատման ոլորտում դատավորի հմտությունների հետևողական խորացման անհրաժեշտությունը:

6. Դատավարական և հարակից օրենսդրական ակտերում բարելավումներ իրագործելու նկատառումով մշակվող նախագծերում հետևյալ հիմնարար խնդիրների արդյունավետ լուծումը.

- դատական հայեցողության սահմանների հստակեցումը՝ դարձնելով այն հնարավորինս կանխատեսելի և բացառելով դրանց ոչ իրավաչափ ընկալումն ու հնարավոր չարաշահումները,
- գրավոր դատավարության շրջանակների ողջամիտ ընդ-

լայնումը՝ երաշխավորելով արդար դատաքննության իրավունքը և արդարադատության շահերը,

- հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ առանձին դատավարական գործընթացներում մասնակցելու իրական հնարավորության ստեղծումը, այդ թվում՝ անհրաժեշտ տեխնիկական հնարավորությունների ապահովումը (օրինակ, քրեական գործերով՝ կասկածյալների, մեղադրյալների, քաղաքացիական գործերով՝ գրեթե դատավարության բոլոր մասնակիցների մասնակցության այնպիսի ընթացակարգերը, որոնք հնարավորություն կտան վերջիններիս իրենց համաձայնությամբ (միջնորդությամբ) դատավարությանը մասնակցելու նաև էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ անմիջականորեն ներկա չգտնվելով դատական նիստերի դահլիճում),
- դատավարական փաստաթղթերին ներկայացվող արդիական պահանջների մշակումը՝ դրանց շրջանառությունը դարձնելով առավել մատչելի ու գործուն,
- արդարադատությանն օժանդակող արտադատական կառուցակարգերի (արբիտրաժ, հաշտարարություն և այլն) արդյունավետության բարձրացումը,
- քրեական դատավարության՝ անհարկի տևական և դատավարության մասնակիցների իրավունքների ոչ համաչափ սահմանափակմանը հանգեցնող դրույթների վերանայմանը միտված իրավական նորմերի մշակումը, հատկապես ուշադրության առանցքում ունենալով հարկադրանքի միջոցները համաչափության սկզբունքին համահունչ դարձնելու, ինչպես նաև կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի որոշակիացման և միջազգային իրավական չափանիշներին սպառիչ համապատասխանեցնելու խնդիրը,
- օրենսդրական կանոնակարգումների վերանայման հիմնախնդիրը՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառման, մասնավորապես՝ կալանքը որպես խափանման միջոց խիստ անհրաժեշտության դեպքում կիրառելու, ինչպես նաև գրավի կիրառման պրակտիկան սուրյեկտիվ հայեցողությունից ձերբազատելու ուղղությամբ,
- Քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի մի շարք ինստիտուտների կիրառելիության ապահովումը մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը հարուցված քաղաքա-

ցիական գործերով (օրինակ՝ հայցի ապահովում, ապացուցման բեռը բաշխելու կանոններ, փաստերի անվիճելիություն, վարույթը կարճելու, հայցն առանց քննության թողնելու հիմքեր, մասնագետի ներգրավում, պարզեցված և արագացված վարույթների կիրառում, գործից մասի առանձնացում և այլն)՝ այն հաշվարկով, որ դրանք չեն վատթարացնի դատավարության մասնակիցների իրավական վիճակը և կնպաստեն նշված գործերն առավել արագ և արդյունավետ ավարտելուն,

- Վարչական դատավարության օրենսգրքի այն ինստիտուտների վերանայումը, որոնց կիրառումը հանգեցնում է գործերի քննության անհարկի ձգձգումների (դատական ծանուցումները, գործի փաստական հանգամանքները «ի պաշտոն» պարզելու սկզբունքի բովանդակությունը և սահմանները, ապացույցներ ներկայացնելու, ապացուցման պարտականությունը կատարելու պայմանները, չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքները և այլն):

6.15. Դատավորների թեկնածուների ընտրության և դատավորների առաջխաղացման ու նշանակման գործընթացների հնարավոր առավելագույն թափանցիկության ապահովումը

Բարձրագույն դատական խորհուրդն առաջնահերթ է համարում դատավորների թեկնածուների ընտրության և դատավորների առաջխաղացման ու նշանակման գործընթացների հնարավորինս հրապարակային կազմակերպումը, որոշումների կայացումը հստակ չափորոշիչների հիման վրա, որոշումների բողոքարկման օրենսդրական կառուցակարգերի հստակեցումը: Առաջիկա քննարկումների արդյունքում նախատեսվում է համարժեք փոփոխություններ կատարել Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգում: Միջազգային փորձագետների հետ քննարկումների արդյունքում հնարավոր է նաև օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների փաթեթի նախապատրաստումը:

6.16. Դատական հայեցողության սահմանների հստակեցումը՝ դարձնելով այն հնարավորինս կանխատեսելի և բացառելով հայեցողության ոչ իրավաչափ ընկալումն ու հնարավոր չարաշահումները

Բարձրագույն դատական խորհուրդը նախատեսում է միջազգային փորձագետների ներգրավմամբ դատավարական օրենսգրքերի փորձաքննություն կազմակերպել՝ նպատակ ունենալով հնարավորինս հստակեցնել դատական հայեցողության սահմանները, դարձնելով այն իրավաչափորեն կանխատեսելի ու ընկալելի, բացառելով դատական հայեցողության ոչ իրավաչափ ու սուբյեկտիվ կամքով թելադրված դրսևորումները, ինչը նաև զգալի կոռուպցիոն ռիսկեր է պարունակում:

Այդ նպատակով աշխատանքային խմբի ձևավորումը նախատեսվում է 2019 թվականի հոկտեմբերին:

6.17. Դատավորի բարձր կարգավիճակին, պատասխանատվությանը և անկախության երաշխիքներին համապատասխանող վարձատրության, սոցիալական ապահովության և նյութական աջակցության խնդիրների համալիր կարգավորմանը միտված օրենսդրական նախադրյալների ամրապնդումը

Բարձրագույն դատական խորհուրդը մի շարք առիթներով շեշտել է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը Հայաստանը հռչակել է իրավական պետություն, որի գլխավոր բնութագրիչն իրավունքի գերակայության երաշխավորումն է: Իսկ դա հնարավոր է միայն անկախ դատական համակարգի առկայության պայմաններում: Դատավորի ու դատարանի անկախությունն անհնարին է երաշխավորել առանց նրա սոցիալական անկախության երաշխավորման:

Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից հաստատված և Եվրախորհրդի նախարարների կոմիտեի կողմից հավանության արժանացած՝ Իրավունքի գերակայության հիմնարար չափորոշիչների մեջ հատկապես կարևորվում է դատավորի նյութական ու սոցիալական անկախության առնչությամբ գործադիր իշխանության ներազդեցության բացա-

ռումը: Բացի դրանից, 2010 թվականի մարտին Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից ընդունված «Դատական համակարգի անկախության վերաբերյալ» զեկույցում (CDL-AD/2010/004) արձանագրվեցին դատական իշխանության անկախության երաշխավորման վերաբերյալ եվրոպական մի շարք չափորոշիչներ, որոնք կարևոր նշանակություն ունեն եվրոպական բոլոր երկրների համար: Դրանց շարքում հարկ է ուշադրություն դարձնել հետևյալներին.

- Դատական իշխանության անկախությունն ինքնանպատակ չէ: Այն դատավորների անձնական առավելությունը չէ, այլ պայմանավորված է դատավորների՝ որպես մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորի դերի իրագործման անհրաժեշտությամբ:
- Դատավորների անկախությունը և, հետևաբար, դատական իշխանության հեղինակությունը տվյալ հասարակությունում կախված է բազմաթիվ գործոններից: Մասնավորապես՝ Վենետիկի հանձնաժողովն ամրագրում է այն դիրքորոշումը, որ դատավորների նյութական ապահովությունը պետք է համաչափ լինի մասնագիտական արժանապատվությանը, և համապատասխան վարձատրությունն անհրաժեշտ պայման է դատավորներին անհիմն արտաքին ազդեցությունից պաշտպանելու համար: Պետության պարտականությունն է ապահովել համապատասխան ֆինանսական ռեսուրսներ դատական համակարգի համար: Նույնիսկ ճգնաժամի ժամանակ դատական համակարգի բնականոն գործունեությունը և անկախությունը չպետք է վտանգվի:

Անհրաժեշտ է նաև նշել, որ եվրոպական մակարդակով անկախ և անաչառ դատարանի իրավունքն առաջին հերթին երաշխավորված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով («1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: ...»):

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից բացի, եվրոպական մակարդակում դատական իշխանության անկախու-

թյան ամենահեղինակավոր փաստաթուղթը «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ (94) 12 հանձնարարականն է, որում նույնպես կարևորվում են դատարանի անկախության բոլոր բաղադրատարրերը:

Եվրոպայի խորհրդի մեկ այլ փաստաթուղթ՝ Դատավորների կարգավիճակի եվրոպական խարտիան (6.4. կետ), միանշանակ սահմանում է, որ դատավորի կենսաթոշակը պետք է հնարավորինս մոտ լինի դատավորի վերջին պաշտոնում ստացած աշխատավարձին:

Միավորված ազգերի կազմակերպության կողմից նույնպես ընդունվել են համարժեք մոտեցումներ, որոնք, մասնավորապես, արտացոլված են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականին սահմանված Դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքներում և 2002 թվականին ընդունված Դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքներում: Մասնավորապես, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1985թ. նոյեմբերի 29-ի և դեկտեմբերի 13-ի 40/32 և 40/146 բանաձևերով հավանության արժանացած՝ «Դատական իշխանության անկախության վերաբերյալ սկզբունքների» 11-րդ կետով ամրագրված է. «Դատավորների լիազորությունների տևողությունը, նրանց անկախությունը, անվտանգությունը, համապատասխան վարձատրությունը, թոշակը և թոշակի անցնելու պայմանները պետք է հավուր պատշաճի երաշխավորվեն»:

Ընդ որում, միջազգային իրավական չափանիշները հիշյալ հարցադրումների առնչությամբ կարևորել են նաև այնպիսի օրենսդրական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը, որոնք միտված կլինեն դատավորների վարձատրության և սոցիալական ապահովության կրճատումները բացառելուն, դրան ուղղված քաղաքականությունը զսպելուն (ինչպես, օրինակ՝ ԵԽ Նախարարների կոմիտեի 2010թ. նոյեմբերի 17-ի թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականը):

Միջազգային այս բոլոր իրավական ակտերը որպես դատավորի անկախության երաշխիք են դիտարկում ինչպես գործառությանը, կառուցակարգային, նույնպես և նյութական ու սոցիալական անկախության երաշխիքները: Բոլոր այս և մի շարք այլ միջազգային իրավական փաստաթղթերում անվերապահորեն ընդգծվում է, որ իրավական պետության առանցքային բա-

դադրիչ կարող է ճանաչվել բացառապես դատավորների երաշխավորված անկախությունը, որի կարևոր հենքերից է իշխանության այլ ճյուղերի հայեցողությամբ չպայմանավորված սոցիալական պատշաճ ապահովությունը:

Այն մտայնությունը, թե դատավորի կենսաթոշակը զուտ սոցիալական ապահովման միջոց է, չի համապատասխանում իրավական պետության և իրավունքի գերակայության երաշխավորման սկզբունքներին: Դատավորի կենսաթոշակը նրա սոցիալական անկախության կարևորագույն երաշխիքն է, որի թուլացումը մեծագույն վտանգ է դատավորի ու դատական իշխանության անկախության ու մարդկանց իրավունքների երաշխավորված պաշտպանությունն ապահովելու առումով:

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքային մոտեցումներից ելնելով պետք է վերանայվեն մի շարք օրենսդրական կարգավորումներ: Առաջին հերթին դա վերաբերում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի իրավակարգավորումներին, ինչպես նաև Դատական օրենսգրքին:

Խորհրդի կողմից մշակվող փոփոխությունների վերաբերյալ կկազմակերպվի մասնագիտական բաց քննարկում, որից հետո կոնկրետ առաջարկությունները կներկայացվեն իրավասու մարմիններին:

6.18. Դատական իշխանության հանրային հաշվետվողականության նպատակային ծրագրի մշակումը, դատական իշխանության գործունեության նկատմամբ հանրային իրազեկվածության որակապես նոր համակարգի ներդրումը

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Բարձրագույն դատական խորհուրդն Էապես բարեփոխեց դատական իշխանության պաշտոնական կայքը և ստեղծեց «Մամուլի և հասարակայնության հետ կապերի ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն): Ծառայության առջև դրվեց դատական իշխանության հանրային հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակով հետևողական աշխատանքների իրականացումն ու ծրագրի մշակումը՝ ելնելով լավագույն միջազգային փորձից և հիմքում ունենալով «Արդարադատությունը, Հանրությունը և Մեղիան: ENJC գեկույցը:

ԲԴԽ գործունեության առաջին իսկ օրերից ներդրվեց ՉԼՄ-ների մշտադիտարկման համակարգ, որի արդյունքում առանձնացվել է դատական իշխանությանը վերաբերող ընդհանուր բնույթի **2936**, իսկ կոնկրետ դատարաններին կամ դատավորներին՝ **2122** հրապարակում: Կազմվել է **88** մամլո հաղորդագրություն, **17** պարզաբանող, Կարգապահական և ուսումնական հարցերի հանձնաժողովների ձևավորման վերաբերյալ **18** և Դատավորների ընդհանուր ժողովի նիստերը լուսաբանող **54** հրապարակում, որպիսիք արտացոլվել են զանգվածային լրատվության ամենատարբեր միջոցներում շուրջ **1848** անգամ: Ներգրավվել է մեդիա-փորձագետ, ստեղծվել, գործարկվել և սպասարկվել է պաշտոնական կայքի **Media** բաժինը, Խորհրդի **Ֆեյսբուքյան** էջը և **YouTube** ալիքը, մշակվել և ընդունվել են ՉԼՄ-ների հետ Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնները: Ընդ որում, նշված կանոնների ընդունմանը նախորդեց հանրային քննարկումների շարք՝ ՉԼՄ ներկայացուցիչների լայն ընդգրկմամբ:

Խորհրդի կողմից խնդիր դրվեց իրականացնել նախաձեռնողական քաղաքականություն, որի արդյունքում սահմանվեց հանրության և ՉԼՄ-ների գրավոր և բանավոր հարցումներին պատասխանելու հնարավորինս սեղմ ժամկետ՝ ըստ հարցման բարդության: Նշված ժամանակահատվածում Ծառայության կողմից մշակվել և սպասարկվել են **50-ից** ավելի հարցումներ:

2018թ. հունիսից մշակվեց և սկսվեց դատական իշխանության գործունեությունը լուսաբանող լրագրողների վերապատրաստումների շարք, որը շարունակական բնույթ է կրում: Այն եզակի հնարավորություն է տրամադրում ոլորտի լրագրողներին ուղղակի շփումներ ունենալ Բարձրագույն դատական խորհրդի անդամների և դատական իշխանության այլ ներկայացուցիչների հետ, ստանալ ավելի խորքային տեսական և գործնական տեղեկություններ ու գիտելիքներ ոլորտի և դրան առնչվող խնդիրների վերաբերյալ: Ակնկալվում է, որ վերապատրաստման մասնակիցներն արդյունքում կխորացնեն իրենց հմտությունները բարձր մասնագիտական բովանդակություն և վերլուծություն ունեցող հոդվածների և ռեպորտաժների պատրաստման նպատակով:

Որպես վերջնանպատակ կշահեն բոլորը՝ ստանալով բարձրորակ, օբյեկտիվ և բազմակողմանի տեղեկատվություն դատական իշխանության գործունեության վերաբերյալ:

7. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՅԵՐ

Բարձրագույն դատական խորհուրդը խնդիր դրեց դատական իշխանության կայքը դարձնել ոչ միայն դատական օրենսգրքով նախատեսված տեղեկությունների ստացման գործիք, այլև այն վերածել հանրային հաշվետվողականություն ու առավելագույն թափանցիկություն ապահովող համապարփակ և օգտակար հարթակի: Այդ նպատակով ուսումնասիրվեցին եվրոպական երկրների դատական խորհուրդների կայքերը, գնահատվեցին դատարանների օգտատերերի կարիքները և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրերի երևանյան գրասենյակի (UNDP) աջակցությամբ մշակվեց դատական իշխանության նոր կայքը:

Կայքում ներառված բազմաթիվ նորությունների շարքում, որը կներկայացվի առանձին շնորհանդեսի տեսքով, կարևոր է ընդգծել «Թափանցիկության հարթակի» ստեղծումը և «Հետադարձ կապի» հաստատումը: Այն հնարավորություն է ընձեռում դատարաններից օգտվողներին ուղղակի կապով Բարձրագույն դատական խորհրդի և Դատական դեպարտամենտի ուշադրությունը հրավիրել թե՛ առօրյայում հանդիպած խնդիրներին, թե՛ բարձրացնել համակարգային լուծում պահանջող խնդիրներ և ներկայացնել առաջարկներ:

«Թափանցիկության հարթակը» հնարավորություն կտա հանրությանը տեսնել և հետևել դատական իշխանության կողմից բյուջետային միջոցների կառավարմանը և գործունեության բոլոր այն ասպեկտներին, որոնք պահանջում են առավելագույն թափանցիկություն: Դրանք են.

- ինստիտուցիոնալ տեղեկատվությունը,
- իրավակարգավորումներն ու փաստաթղթերը,
- հետադարձ կապը,
- լավ կառավարումը և վարքագծի կանոնները,
- բյուջեի կառավարումը,
- գնումները, կապալառուները, պայմանագրերը,
- պաշտոնատար անձանց վարձատրություններն ու հայտարարագրերը,
- աշխատակազմի վարձատրությունը,
- միջազգային գործընկերներից ստացված աջակցությունը,
- դատական իշխանության ծախսերը:

«Հետադարձ կապի» հարթակի միջոցով մեր հանրությունից առաջարկի, գանգատի, դրվատանքի կամ ազատ մեկնաբանության

տեսքով ստացված բոլոր արձագանքները՝ մշակված տեխնոլոգիական լուծումների շնորհիվ անմիջապես ստացվում են Դատական դեպարտամենտի համապատասխան ծառայությունների կողմից:

Բարձրագույն դատական խորհրդի որդեգրած ռազմավարության համաձայն՝ որևէ նույնականացվող առաջարկ կամ խնդիր, որը կբարձրացվի դատարանի սրտացավ օգտատիրոջ կողմից, չի մնա անարձագանք:

Նախատեսվում է նաև հիմնել ժամանակակից տեխնիկական հագեցվածություն ունեցող մեդիակենտրոն, որը կօգնի հանրությանն ու ՉԼՄ-ներին ներկայացնել դատական իշխանության ամենատարբեր խնդիրների շուրջ սեփական քննարկները:

Բարձրագույն դատական խորհուրդն անհրաժեշտ համարեց ապահովել նաև դատական իշխանության ակտիվ ներկայացվածությունը սոցիալական կայքերում: Այսպես, Խորհրդի Ֆեյսբուքյան էջն ունի հազարավոր հետևորդներ: ՖԲ կայքում ևս տեղադրվում են Խորհրդին և դատական իշխանությանը վերաբերող գրեթե բոլոր նորություններն ու ընդունված որոշումները: ՖԲ կայքով դիմող բոլոր անձինք կստանան արագ և հնարավորինս սպառիչ պատասխան:

Ակնհայտ է, որ տեղեկատվական ներկայիս հսկայածավալ բազմազանության պայմաններում հաճախ մեր քաղաքացիները կարիք ունեն ուղղորդման դեպի ճիշտ իրավական աղբյուր կամ հասցե: Առանց խախտելով իր լիազորությունների շրջանակը, Խորհրդի աշխատակազմը փորձելու է ամենաօպերատիվ կերպով առավելագույն օժանդակություն ցուցաբերել մեր հանրության ամենատարբեր ներկայացուցիչներին իրենց հետաքրքրող կամ անհանգստացնող հարցերի պատասխանները գտնելու գործում՝ օգտագործելով նաև սոցիալական ցանցերի ընձեռած հնարավորությունները:

8. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Բարձրագույն դատական խորհուրդը Դատական օրենսգրքի 19-րդ գլխի դրույթներին համապատասխան հանդես գալով որպես դատարան, լիազոր մարմնի և Դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հանձնաժողովի միջնորդությունների հիման վրա ունեցել է թվով վեց կարգապահական վարույթ և ընդունել է հետևյալ որոշումները.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ք.Երևան
11.01.2019թ.**

ԲԴԽ-60-Ո-Կ-01

2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
ԱՐԱՅԻԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

Նախագահությամբ՝

մասնակցությամբ՝
անդամներ

Գ. Հարությունյանի,

Ա. Բեկթաշյանի,

Գ. Դանիելյանի,

Ա. Խաչատրյանի,

Հ. Հովհաննիսյանի,

Լ. Մելիքջանյանի,

Ս. Մեղրյանի,

Ա. Մխիթարյանի,

Ս. Չիչոյանի,

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր

Ա. Մելքումյանի,

ՀՀ ԴԸԺ կարգապահական հարցերի
հանձնաժողովի նախագահ

Ս. Պապոյանի,

ՀՀ ԴԸԺ կարգապահական
հարցերի հանձնաժողովի անդամ

Ա. Ավագյանի,

քարտուղարությամբ՝

Շ. Վարդանյանի,

դռնբաց նիստում, քննության առնելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) դատավոր Արայիկ Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.

ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի նոյեմբերի 19-ի թիվ Կ-7/2018 որոշմամբ Դատարանի դատավոր Արայիկ Մելքումյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել փաստաբան Տիգրան Մուրադյանի 2018 թվականի սեպտեմբերի 10-ի հաղորդումը՝ հասցեագրված Հանձնաժողովին:

2. Կարգապահական խախտման վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը.

Ըստ 2018 թվականի նոյեմբերի 19-ի թիվ Կ-7/2018 որոշման՝ փաստաբան Տիգրան Մուրադյանը 2018 թվականի սեպտեմբերի 10-ին հաղորդում է ներկայացրել Հանձնաժողովին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արայիկ Մելքումյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ: Հաղորդման մեջ մասնավորապես նշվել է, որ թիվ ԵԿԴ/1363/02/17 քաղաքացիական գործով նախագահող դատավոր Արայիկ Մելքումյանը պատասխանող է ներգրավել դատաքննության փուլում, ինչպես նաև փորձել է ուղղորդել հայցվորին, որպեսզի հայցի փոփոխության միջոցով պահանջ ներկայացնի դատաքննության փուլում ներգրավված պատասխանողի դեմ:

Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ փաստաբան Տիգրան Մուրադյանի հաղորդման հիման վրա դա-

տավոր Արայիկ Մելքումյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Հարուցված կարգապահական վարույթի ընթացքում դատավոր Արայիկ Մելքումյանը ներկայացրել է գրավոր բացատրություն:

Հարուցված կարգապահական վարույթի ընթացքում Հանձնաժողովը ձեռք է բերել թիվ ԵԿԴ/1363/02/17 քաղաքացիական գործի նյութերը, այդ թվում՝ դատական նիստերի արձանագրությունները, որոնց ուսումնասիրությամբ պարզվել է հետևյալը.

2017 թվականի ապրիլի 6-ին հայցվորներ Բորիս Մուրադյանը և Կարինե Մարգարյանը հայցադիմում են ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գեորգի Գրիգորյանի, «ՄԵՏԱՂ ԿԱՅՍ» ՍՊԸ-ի, «ԱՐԱՍՇԻՆ» ՍՊԸ-ի, երրորդ անձինք՝ «ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի՝ Բորիս Մուրադյանի, Կարինե Մարգարյանի և Գեորգի Գրիգորյանի միջև 2015 թվականի օգոստոսի 19-ին կնքված անշարժ գույքի բաժնետասի նվիրատվության գործարքը շինծու գործարք ճանաչելու, վերոնշյալ գործարքի նկատմամբ նպատակային փոխառությանը վերաբերող կանոնները կիրառելու, նպատակային փոխառության պայմանագիրը ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու, այն է՝ Գեորգի Գրիգորյանից, «ՄԵՏԱՂ ԿԱՅՍ» ՍՊԸ-ից, «ԱՐԱՍՇԻՆ» ՍՊԸ-ից համապարտության կարգով 110.000.000 ՀՀ դրամ վարկի գումարի բռնագանձման, Գեորգի Գրիգորյանին, «ՄԵՏԱՂ ԿԱՅՍ» ՍՊԸ-ին, «ԱՐԱՍՇԻՆ» ՍՊԸ-ին «ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում գրավադրված Երևան քաղաքի Պուշկին փողոցի 35-րդ շենքի 19-րդ բնակարանի անշարժ գույքը գրավից ազատել պարտավորեցնելու պահանջների մասին, որը դատարանի 07.04.2017 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2017 թվականի հոկտեմբերի 18-ին հայցվորների կողմից ներկայացվել է դիմում՝ հայցային պահանջի չափն ավելացնելու մասին, որով խնդրել են պատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել 110.000.000 ՀՀ դրամ գումարի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկման ենթակա տոկոսները՝ սկսած 2016 թվականի նոյեմբերի 3-ից մինչև գումարը վերադարձնելու օրը, պատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել «Ալբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ին վճարվելիք տոկոսները և տույժերը՝ 60.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

2017 թվականի դեկտեմբերի 7-ին հայցվորների կողմից Դատարան է ներկայացվել միջնորդություն՝ պատասխանողներին սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու և որպես պատասխանող Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին ներգրավելու մասին:

2018 թվականի ապրիլի 3-ի դատական նիստում, որն արձանագրվել է պարզ թղթային եղանակով (ստորագրված է նիստերի քարտուղարի կողմից, իսկ դատավորի կողմից ստորագրված չէ), Դատարանի կողմից արձանագրվել է, որ ներկայացվել է միջնորդություն՝ Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին պատասխանող ներգրավելու մասին:

2018 թվականի հունիսի 11-ի Դատարանի կողմից կայացվել է որոշում թիվ ԵԿԴ/1363/02/17 քաղաքացիական գործը դատաքննության նշանակելու մասին, որում նշված պատասխանողների շարքում Փավրիզ Նոսրաթի Ալամդարին առկա չէ:

2018 թվականի հունիսի 22-ին հայցվորների կողմից ներկայացվել է միջնորդություն, որով խնդրել են որպես պատասխանող ներգրավել Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին և արգելանք դնել նրան սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա, արգելանք դնել «ՄԵՏԱՂ ԿԱՅՄ» ՍՊԸ-ի դրամական միջոցների վրա:

2018 թվականի հուլիսի 4-ին հայցվորների կողմից ներկայացվել է միջնորդություն, որով խնդրել են որպես պատասխանող ներգրավել Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին և արգելանք դնել նրան սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա, արգելանք դնել «ՄԵՏԱՂ ԿԱՅՄ» ՍՊԸ-ի դրամական միջոցների վրա:

2018 թվականի հուլիսի 6-ին Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին ներկայացրել է դիմում՝ իրեն երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ:

2018 թվականի հուլիսի 12-ի դատական նիստում դատավոր Արայիկ Մելքումյանը հայցվորին հայտնել է, որ նա դիմել է Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին պատասխանող ներգրավելու համար, ով դիմում է ներկայացրել 3-րդ անձ ներգրավելու մասին, հայցվորի դիմումը միջնորդություն չէ, այլ՝ պահանջ, հայցվորն է որոշում ունի դեմ է հայցն ուղղված և դատարանը որևէ անելիք չունի, ինչին ի պատասխան հայցվորը պնդել է Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին պատասխանող ներգրավել, և դատարանը մերժել է 3-րդ անձ ներգրավելու մասին դիմումը,

քանի որ կողմը պնդել է Փավրիզ Նոսրաթի Ալամդարիի պատասխանող հանդիսանալը:

2018 թվականի սեպտեմբերի 6-ի դատական նիստում ի պատասխան պատասխանողների ներկայացուցչի հարցադրումների՝ դատավոր Արայիկ Մելքումյանը հայտնել է, որ դատարանը չի որոշում որպես պատասխանող ներգրավելու հարցը, կողմն իր դիրքորոշումը հայտնել է, որ իր հայցն ուղղված է նաև Փավրիզ Նոսրաթի Ալամդարիի դեմ, խնդրել է ծանուցել, որպեսզի հետագայում գրավոր ներկայացնի վերջինի դեմ ուղղված հայցը, այդ պարագայում առանձին միջնորդություն դատարանը չի բավարարել, այլ դիտարկել է որպես պատասխանող, ինչ վերաբերում է առանձին ներկայացվել է հայցը, թե՛ ոչ, ինքը չգիտի դրա մասին: Հայցվորներին ուղղված խոսքում դատավոր Արայիկ Մելքումյանը հայտնել է, որ նրանք պետք է հայցադիմումը գրավոր ներկայացնեին:

Հանձնաժողովը, վկայակոչելով 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասը, նախկին՝ 1998 թվականի հունիսի 17-ի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը, 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 32-րդ հոդվածի 1-ին մասը, 149⁸-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերը, 146-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 148-րդ հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես փաստել է, որ քանի որ սույն գործն առաջին ատյանի դատարանում քննվել է մինչև 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելը, ուստի այն պետք է քննվեր ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով և նշված օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա: Քաղաքացիական դատավարության կողմերն են հայցվորը և պատասխանողը: Գործով քննությունը դատաքննության նախապատրաստական փուլով իրականացվելու դեպքում հայցվորն իրավունք ունի փոխելու հայցի հիմքը և առարկան, ավելացնելու կամ նվազեցնելու հայցային պահանջների չափը մինչև առաջին ատյանի դատարանում գործով դատաքննության սկսվելը: Նախնական դատական նիստում դատարանը, ի թիվս այլոց, պարզում է հայցի առարկան ու հիմքը, պարզում է գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը:

Վերոգրյալ իրավական նորմերի և թիվ ԵԿԴ/1363/02/17 քաղաքացիական գործի նյութերի համադրման արդյունքում Հանձնաժողովը գտել է, որ դատավոր Արայիկ Մելքունյանն իր խոսքով և վարքագծով դրսևորել է կողմնակալ և խտրական մոտեցում: Մասնավորապես, հայցվորներ Բորիս Մուրադյանի և Կարինե Մարգարյանի կողմից ներկայացված հայցադիմումում Փավրիզ Նոսրաթի Ալամդարիի դեմ որևէ պահանջ չի ներկայացվել և վերջինին որպես պատասխանող ներգրավելու մասին գրավոր միջնորդությունը հայցվորների կողմից ներկայացվել է 2017 թվականի դեկտեմբերի 7-ին, որպիսի փաստն արձանագրվել է 2018 թվականի ապրիլի 3-ի դատական նիստով կազմված պարզ թղթային արձանագրությամբ: Նշված արձանագրության վերաբերյալ Հանձնաժողովը հարկ է համարել արձանագրել, որ ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջների՝ այն նախագահող դատավորի կողմից հաստատված չէ, որպիսի պայմաններում կասկածի տակ է մնում դրա ապացուցողական ուժը: Այնուամենայնիվ, 2018 թվականի հունիսի 11-ի գործը դատաքննության նշանակելու որոշմամբ պատասխանողների շարքում Փավրիզ Նոսրաթի Ալամդարին չի հիշատակվել, որպիսի հանգամանքները հիմք են հանդիսանում Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին դատարանի կողմից որպես պատասխանող դիտարկված լինելու վերաբերյալ կասկած հարուցելու համար: Հանձնաժողովը փաստել է, որ հայցվորների կողմից Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին պատասխանող ներգրավելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացվել են նաև 2018 թվականի հունիսի 22-ին և հուլիսի 4-ին, և միայն 2018 թվականի հուլիսի 12-ի դատաքննության նիստում հայցվորը պնդել է Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին պատասխանող ներգրավելու մասին իր միջնորդությունը, իսկ դատավոր Արայիկ Մելքունյանն արձանագրել է, որ դատարանը տվյալ միջնորդությամբ որևէ դատավարական անելիք չունի: Արդյունքում 2018 թվականի սեպտեմբերի 6-ի դատաքննության նիստում դատավոր Արայիկ Մելքունյանը հայտնել է, որ պատասխանող Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին ներգրավել են որպես պատասխանող և ծանուցել են՝ մինչև հայցվորի կողմից վերջինի դեմ պահանջ ներկայացնելը, իսկ դատական նիստի օրվա դրությամբ ներկայացված լինելու կամ չլինելու վերաբերյալ ինքը տեղյակ չէ, և հայցվորներից ուղղորդող հարցերով կատարել է ճշտումներ, որ նրանք պետք է հայցադիմումը գրավոր ներկայացնեին:

Նշվածից հետևում է, որ դատավոր Արայիկ Մելքումյանը, խախտելով կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները, առանց նախնական դատական նիստում գործին մասնակցող անձանց կազմը հաստատապես պարզելու, պատասխանող Փավրիզ Նուրաթի Ալամդարիի դեմ հայցային պահանջ ներկայացված լինելու, նշված հարցը քննարկել է միայն դատաքննության նիստում այդպիսով թույլ տալով դատավարական իրավունքի նորմի խախտումներ, որոնք դատավարության մասնակցի մոտ ստեղծել են կողմնակալ և խտրական վերաբերմունքի տպավորություն:

Հանձնաժողովը վկայակոչելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասը, 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 142-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը, 147-րդ հոդվածի 5-րդ մասը, 148-րդ հոդվածի 1-ին մասը գտել է, որ դատավոր Արայիկ Մելքումյանը կողմնակալ և խտրական վարքագծով կոպիտ խախտել է դատավորի վարքագծի կանոնները՝ այդպիսով հեղինակագրկելով դատական իշխանությունը, ինչը կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության, որպիսի պայմաններում Հանձնաժողովի գնահատմամբ առկա է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:

3. Դատավորի բացատրությունները և դիրքորոշումը Հանձնաժողովի կողմից հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ.

Դատավոր Արայիկ Մելքումյանը 2018 թվականի հոկտեմբերի 18-ին Հանձնաժողովին ներկայացրել է գրավոր բացատրություն, որում փաստաբան Տիգրան Մուրադյանի կողմից ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովին ուղարկված դիմումի վերաբերյալ նշել է հետևյալը.

Քաղաքացիական դատավարության տնօրինչականության սկզբունքի համաձայն կողմերին վերապահվում է հնարավորություն սեփական հայեցողությամբ տնօրինելու իրենց նյութական և դատավարական իրավունքները, որոշելու իրենց իրավունքների պաշտպանության եղանակները:

Հայցվորները, հիմնվելով վերոնշյալ սկզբունքի վրա, իրականացրել են օրենքով իրենց վերապահված իրավունքը և պահանջ են

ներկայացրել իրենց կողմից որոշված անձի դեմ միջնորդել են Փավրիզ Լոսրաթի Ալամդարիին ներգրավել որպես պատասխանող, իսկ դատարանը հաշվի առնելով կողմին ընձեռնված հնարավորությունը՝ պատասխանող ներգրավելու միջնորդությունը բավարարել է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁸ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում դատավորը քննարկում է գործի քննությանն այլ անձանց ներգրավելու, ոչ պատշաճ կողմին փոխարինելու, մի քանի պահանջների միացման և առանձնացման, արտագնա դատաքննության անցկացման հնարավորության հարցերը:

Դատարանը, հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149⁸ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի պահանջների վրա, իրականացրել է քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված իր իրավունքները, և գործի դատաքննության նախապատրաստման փուլում լուծել է գործի քննությանը Փավրիզ Լոսրաթիի Ալամդարիին որպես պատասխանող ներգրավելու հարցը:

Պատասխանող կողմի ներկայացուցչի այն փաստարկը, որ Փավրիզ Լոսրաթիի Ալամդարին ներգրավվել է որպես պատասխանող գործի դատաքննության փուլում, չի համապատասխանում իրականությանը: Վերոնշյալ փաստը հիմնավորվում է այն հանգամանքով, որ Դատարանը գործի դատաքննության ընթացքում մերժել էր Փավրիզ Լոսրաթիի Ալամդարիին որպես երրորդ անձ ներգրավելու մասին պատասխանող կողմի միջնորդությունը՝ փաստելով այն հանգամանքը, որ Փավրիզ Լոսրաթիի Ալամդարին արդեն իսկ սույն գործով հանդիսանում է պատասխանող: 2018 թվականի ապրիլի 03-ին՝ նախքան դատաքննության անցնելը Փավրիզ Լոսրաթի Ալամդարին սույն գործով ներգրավվել էր որպես պատասխանող:

Դատավոր Արայիկ Մելքումյանը 2018 թվականի դեկտեմբերի 11-ին նույնաբովանդակ բացատրություն է ներկայացրել նաև Խորհրդին, որում մասնավորապես նշել է, որ Հանձնաժողովի կողմից որոշումը կայացվել է ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի նորմերի ամբողջական խախտումներով:

ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից չեն պահպանվել որոշման կայացման ընթացակարգին և որոշման պահանջներին վերաբերող պարտադիր դրույթները:

Մասնավորապես՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 148-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշումը կայացման պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է Բարձրագույն դատական խորհուրդ, դատավորին և վարույթ հարուցող մյուս մարմին: Որոշման հետ Բարձրագույն դատական խորհուրդ և դատավորին են ուղարկվում կարգապահական վարույթի բոլոր նյութերի պատճենները:

ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին թիվ Կ-7/2018 որոշումը կայացրել է 2018 թվականի նոյեմբերի 19-ին: Այնինչ, 2018 թվականի նոյեմբերի 28-ին իրեն հանձնված վերոնշյալ որոշումը ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի աշխատակազմից ԴԴ-Գ-64/2 համարով ելք է արվել 2018 թվականի նոյեմբերի 23-ին: Նշվածը թույլ է տալիս փաստել այն մասին, որ որոշումը կայացման պահից եռօրյա ժամկետում ուղարկվելու դեպքում պետք է ուղարկվեր 2018 թվականի նոյեմբերի 21-ին: Եթե նույնիսկ օրենսդրի սահմանած եռօրյա ժամկետի հաշվարկը սկսենք որոշման կայացման հաջորդ օրվանից, ապա այս դեպքում ևս առկա է եռօրյա ժամկետի խախտում:

Ինչ վերաբերում է Դատավորի վարույթում գտնվող գործում առկա նյութերի պատճեններն ուղարկված չլինելու հանգամանքին, ապա հայտնել է, որ սույն բազմաձևավալ քաղաքացիական գործը պարունակում է չորս հատոր և իր աշխատակազմի կողմից Հանձնաժողովի պահանջով պատճենահանվել և ուղարկվել են գործում առկա այն փաստաթղթերը, որոնք հանձնաժողովն անհրաժեշտ է համարել: Մակայն այդ փաստը չի ազատում Հանձնաժողովի մոտ գտնվող բոլոր նյութերի պատճեններն իրեն ուղարկելու պարտականությունից, քանզի ընթացակարգը նման բացառություն չի նախատեսում և ամբողջական պատկերացում կազմելու և դիրքորոշում արտահայտելու համար պետք է կարգապահական վարույթում առկա բոլոր նյութերը որոշման հետ միասին ուղարկվեին պատշաճորեն և ամբողջական:

Ինչ վերաբերում է որոշման բովանդակությանը, ապա Ա.Մելքումյանը, վկայակոչելով ՀՀ դատական օրենսգիրք սահմանադ-

րական օրենքի 148-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, հայտնել է, որ սույն որոշման կառուցվածքը չի բխում վերոնշյալ նորմի պահանջներից: Սույն հոդվածի պահանջները պահպանված լինելու դեպքում որոշման մեջ պետք է հստակ տարանջատված լինեին որոշման նկարագրական և պատճառաբանական մասերը: Այնինչ որոշումը, կարծես թե, հանդիսանում է սույն քաղաքացիական գործի նախապատմության դրսևորում, իսկ պատճառաբանական մասն իրենից ներկայացնում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդվածների և ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի դրույթների հաջորդական վերարտադրություն և արարքը կատարված լինելը հիմնավորող տեղեկություն, իսկ արարքը կարգապահական խախտում որակելու հիմնավորումները պարտադիր համարված լինելու պահանջը կարծես թե վրիպել է որոշումը կայացնող մարմնի աչքից: Օրենսդիրն առանձնացնելով արարքը կարգապահական խախտում որակելու համար պարտադիր համարվող տարրերի առկայության՝ որոշումը կայացնող մարմնի կողմից ապացուցման պարտականությունը, նախատեսել է, որ յուրաքանչյուր հաջորդ տարրին անցնելու համար նախ պետք է ապացուցված համարել յուրաքանչյուր նախորդ տարրի առկայությունը:

Որոշման մեջ հանձնաժողովի անդամները նշել են, որ 2017 թվականի դեկտեմբերի 07-ին հայցվորների կողմից ներկայացվել է գրավոր միջնորդություն, որով վերջինները խնդրել են որպես պատասխանող ներգրավել Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին, որպիսի փաստն արձանագրվել է 2018 թվականի ապրիլի 03-ի դատական նիստով կազմված պարզ թղթային արձանագրությամբ: Հանձնաժողովի անդամները կասկածի տակ են դրել նշված արձանագրության ապացուցողական ուժը, քանզի այն դատավորի կողմից ստորագրված չի եղել: Հանձնաժողովի կողմից արձանագրված խախտումներից թերևս միակը, որով փորձում են ապացուցված համարել արարքի առկայության փաստը՝ արձանագրության՝ դատավորի կողմից չստորագրված լինելու հանգամանքն է: Թեև նշել է, որ Հանձնաժողովը, արձանագրելով նման փաստը, չի փորձել անգամ վեր հանել նման բաց թողնման իրական պատճառը: Գործում առկա ստորագրված արձանագրության փոխարեն իր աշխատակազմի կողմից ուղարկվել է արձանագրության չստորագրված տարբերակը, այնինչ գործում առկա է եղել արձանագրության ստորագրված տարբերակը: Նման խնդիր առկա չէր լինի, եթե հանձնաժողովի անդամները

պահանջեին իրենց անհրաժեշտ փաստաթղթերը հստակ սահմանված ցանկով, քանի որ սույն մեծածավալ քաղաքացիական գործը բաղկացած է չորս հատորից:

Հանձնաժողովը, որպես դատավորի կողմից ենթադրվող արարքը հիմնավորող տեղեկություն, նշել է, որ հայցվորների կողմից Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին որպես պատասխանող ներգրավելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացվել են նաև 2018 թվականի հունիսի 22-ին և հուլիսի 4-ին և միայն 2018 թվականի հուլիսի 12-ի դատաքննության նիստում հայցվորը պնդել է Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին ներգրավել պատասխանող, իսկ դատավոր Արայիկ Մեյքունյանն արձանագրել է, որ դատարանը տվյալ միջնորդությամբ որևէ դատավարական անելիք չունի (...):

Հանձնաժողովը որոշմամբ շարադրելով ամենևին ոչնչով չհաստատված և չապացուցված «արարքը հիմնավորող տեղեկությունները», նշել է՝ «նշվածից հետևում է, որ դատավոր Արայիկ Մեյքունյանը, խախտելով կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները, առանց նախնական դատական նիստում գործին մասնակցող անձանց կազմը հաստատապես պարզելու, պատասխանող Փավրիզ Նոսրաթի Ալամդարիի դեմ հայցային պահանջ ներկայացված լինելու, նշված հարցը քննարկել է միայն դատաքննության նիստում՝ այդպիսով թույլ տալով դատավարական իրավունքի նորմի խախտումներ, որոնք դատավարության մասնակցի մոտ ստեղծել են կողմնակալ և խտրական վերաբերմունքի տպավորություն»: Որոշման ոչ տրամաբանական կառուցվածքից ենթադրվում է հետևյալը. հանձնաժողովը խախտում համարվող արարք դիտարկել է այն հանգամանքը, իբրև թե Փավրիզ Նոսրաթի Ալամդարիի դեմ հայցային պահանջ ներկայացված լինելու հարցը դատավորի կողմից քննարկվել է միայն դատաքննության նիստում: Այդ արարքը կարծես թե հիմնավորել են դատական նիստի պարզ թղթային արձանագրությունն իր կողմից ստորագրված չլինելու հանգամանքով, որը չի կարող կասկածի տակ դնել իրական արձանագրության ապացուցողական ուժը: Հիմնվելով այդ փաստի վրա, արձանագրել են, որ այդ փաստը կասկածի տակ է դնում այդ արձանագրության ապացուցողական ուժը, այնինչ իրենց իսկ կողմից ենթադրյալ արարքը հիմնավորող ապացույցի միայն կասկածի տակ դնելու հանգամանքը չի կարող համարվել արարքը հիմնավորող տեղեկություն, որից հանգում ենք այն

եզրակացության, որ օրենսդրի սահմանած պարտադիր տարրերի առանձնացված, հստակ սահմանագատված ներկայացնելու փաստը և յուրաքանչյուր տարրի ապացուցված լինելու հանգամանքը չի պահպանվել, քանզի միայն որևէ փաստի իրենց իսկ կողմից որակված կասկածի տակ դնելու հանգամանքը չի կարող դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ:

Վկայակոչելով ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 143-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ Ա.Մելքումյանը գտել է, որ Հանձնաժողովի կողմից ներկայացված կասկածի տակ դրված ապացույցները և ոչնչով չհիմնավորված փաստերը ոչ այլ ինչ են, քան չփարատված կասկածներ, որոնք չեն կարող մեկնաբանվել ի վնաս դատավորի՝ ըստ օրենքի հստակ նախանշած և հանձնաժողովի կողմից անտեսված պարտադիր պահանջի:

Հանձնաժողովի որոշումից անհասկանալի է, թե ենթադրյալ և կասկածի տակ դրված ապացույցներով ինչպես է հանձնաժողովը չհաստատված արարքը որպես կարգապահական խախտում որակել՝ առանց ներկայացնելու արարքը կարգապահական խախտում որակելու հիմնավորումները: Պետք է արձանագրել, որ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի հոդվածների տառացի վերաբարտադրությունը չի կարող համարվել արարքը կարգապահական խախտում որակելու հիմնավորում: Մասնավորապես, այն դեպքում, երբ հանձնաժողովի արձանագրած ենթադրյալ արարքի և օրենսդրական վերը շարադրված նորմերի միջև բացակայում է պատճառահետևանքային կապը: Ներկայացնելով որոշման ընդհանուր բովանդակությունը՝ հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովը գտել է, որ առանց նախնական դատական նիստում գործին մասնակցող անձանց կազմը հաստատապես պարզելու, պատասխանող Փավրիզ Նուրաթի Ալամդարիի դեմ հայցային պահանջ ներկայացված լինելու, նշված հարցը քննարկել է միայն դատաքննության նիստում՝ այդպիսով թույլ տալով դատավարական իրավունքի նորմի խախտումներ, որոնք դատավարության մասնակցի մոտ ստեղծել են կողմնակալ և խտրական վերաբերմունքի տպավորություն, ինչն էլ հանգեցրել է վարքագծի կանոնների խախտման: Որոշման ընթերցողի մոտ անհասկանալի է մնում այն հանգամանքը, թե ինչպես է հանձնաժողովը դատավարական նորմի ենթադրյալ խախտում համարվող արարքը շարադրելիս ան-

ցում կատարում դատավորի վարքագծի կանոնները սահմանող դրույթի շարադրմանը:

Վկայակոչելով ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասը՝ Ա. Մելքումյանը նշել է, որ որոշման բովանդակությունից կարելի է հանգել այն եզրակացության, որ իրեն վերագրվում է արարք, որը հակասում է դատավարական նորմի պահանջներին: Սակայն, Հանձնաժողովը, հակասելով իր իսկ կողմից մատնանշած եզրահանգումներին, նշել է, որ «դատավոր Արայիկ Մելքումյանը կողմնակալ և խտրական վարքագծով կոպիտ խախտել է դատավորի վարքագծի կանոնները, ինչը կարող է հանգեցնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի: Հանձնաժողովն անգամ չի մեկնաբանել, թե ինչպես է հանգել այդ մտքին, եթե օրենսդիրը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի մեջ սահմանազատել է դատավարական կամ նյութական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում կատարելու և դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելու հիմքը: Հանձնաժողովը շարադրելով դատավարական նորմի խախտման մասին ենթադրյալ դատողություններ՝ հանգել է այն մտքին, որ դատավորի կողմից թույլ է տրվել վարքագծի կանոնների կոպիտ խախտում:

Վկայակոչելով ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածը, 154-րդ հոդվածի 4-րդ մասը, 156-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Ա. Մելքումյանը գտել է, որ վերոշարադրյալ փաստերի և իրավական նորմերի համադրական վերլուծությունը հիմք է տալիս հաստատելու, որ ի թիվս այլ խախտումների՝ Հանձնաժողովի կողմից խախտվել են նաև դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքի համար նույն օրենսգրքով սահմանված ժամկետները, որը, ըստ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 156-րդ հոդվածի պահանջի, հանգեցնում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդության մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ Դատավորը գտել է, որ նման ընթացակարգային խախտումներով և օրենսդրական պահանջներին հակասող կայացված որոշումը, որը հանգեցրել է ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 143-րդ, 148-րդ, 156-րդ հոդվածների պահանջների խախտման, Բարձրագույն

դատական խորհրդի կողմից ենթակա է մերժման: Եվ հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրել է մերժել իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին 2018 թվականի նոյեմբերի 19-ի միջնորդությունը:

4. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության համար Էական նշանակություն ունեցող հանգամանքները.

Բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) հիմք է ընդունում արձանագրված հետևյալ հանգամանքները.

1. 2017 թվականի ապրիլի 6-ին հայցվորներ Բորիս Մուրադյանը և Կարինե Մարգարյանը հայցադիմում են ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գեորգի Գրիգորյանի «ՄԵՏԱՂ ԿԱՅՄ» ՍՊԸ-ի, «ԱՐԱՍՇԻՆ» ՍՊԸ-ի, երրորդ անձինք՝ «ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի և ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի՝ Բորիս Մուրադյանի, Կարինե Մարգարյանի և Գեորգի Գրիգորյանի միջև 2015 թվականի օգոստոսի 19-ին կնքված անշարժ գույքի բաժնեմասի նվիրատվության գործարքը շինծու գործարք ճանաչելու, վերոնշյալ գործարքի նկատմամբ նպատակային փոխառությանը վերաբերող կանոնները կիրառելու, նպատակային փոխառության պայմանագիրը ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու, այն է՝ Գեորգի Գրիգորյանից, «ՄԵՏԱՂ ԿԱՅՄ» ՍՊԸ-ից, «ԱՐԱՍՇԻՆ» ՍՊԸ-ից համապարտության կարգով 110.000.000 ՀՀ դրամ վարկի գումարի բռնագանձման, Գեորգի Գրիգորյանին, «ՄԵՏԱՂ ԿԱՅՄ» ՍՊԸ-ին, «ԱՐԱՍՇԻՆ» ՍՊԸ-ին «ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում գրավադրված Երևան քաղաքի Պուշկին փողոցի 35-րդ շենքի 19-րդ բնակարանի անշարժ գույքը գրավից ազատել պարտավորեցնելու պահանջների մասին, որը դատարանի 07.04.2017 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Բորիս Մուրադյանի և Կարինե Մարգարյանի հայցադիմումով Փավրիգ Նոսրաթի Ալամդարիի դեմ որևէ պահանջ չի ներկայացվել և վերջինս որպես պատասխանող չի հիշատակվել:

3. 2017 թվականի դեկտեմբերի 7-ին հայցվորների կողմից ներկայացվել է միջնորդություն, որով խնդրել են արգելանք դնել պատասխանողներին սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա, և որպես պատասխանող ներգրավել Փավրիգ Նոսրաթի Ալամդարիին:

4. Նշված գործով 2018 թվականի հունիսի 11-ի որոշմամբ 2018 թվականի հուլիսի 03-ին նշանակվել է դատաքննություն, սակայն որոշմամբ պատասխանողների շարքում Փավրիզ Նոսրաթի Ալամդարին առկա չէ:

5. Մինչև դատաքննություն նշանակելը դատարանը գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմի փոփոխության վերաբերյալ որևէ որոշում չի կայացրել:

6. 2018 թվականի հունիսի 22-ին հայցվորների կողմից ներկայացվել է միջնորդություն, որով խնդրել են որպես պատասխանող ներգրավել Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին և արգելանք դնել նրան սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա, արգելանք դնել «ՄԵՏԱՂ ԿԱՅՍ» ՍՊԸ-ի դրամական միջոցների վրա:

7. 2018 թվականի հուլիսի 4-ին հայցվորների կողմից ներկայացվել է միջնորդություն, որով խնդրել են որպես պատասխանող ներգրավել Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին և արգելանք դնել նրան սեփականության իրավունքով պատկանող գույքի և դրամական միջոցների վրա, արգելանք դնել «ՄԵՏԱՂ ԿԱՅՍ» ՍՊԸ-ի դրամական միջոցների վրա:

8. 2018 թվականի հուլիսի 6-ին Փավրիզ Նոսրաթի Ալամդարին ներկայացրել է դիմում՝ իրեն երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ:

9. 2018 թվականի սեպտեմբերի 6-ի դատաքննության նիստում ի պատասխան պատասխանողների ներկայացուցչի հարցադրումների՝ դատավոր Արայիկ Մելքումյանը հայտնել է, որ Դատարանը չի որոշում պատասխանող ներգրավելու հարցը, կողմն իր դիրքորոշումը հայտնել է, որ իր հայցն ուղղված է նաև Փավրիզ Նոսրաթի Ալամդարիի դեմ, խնդրել է ծանուցել, որպեսզի հետագայում գրավոր ներկայացնի վերջինի դեմ ուղղված հայցը, այդ պարագայում առանձին միջնորդություն դատարանը չի բավարարել, այլ դիտարկել է որպես պատասխանող:

10. ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովը Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին թիվ Կ-7/2018 որոշումը կայացրել է 2018 թվականի նոյեմբերի 19-ին:

11. Վերոնշյալ որոշումը ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից թիվ ԴԴ-Գ-64/2 գրությամբ ելքագրվել է 2018 թվականի նոյեմբերի 23-ին, իսկ դատավորին հանձնվել է 2018 թվականի նոյեմբերի 28-ին:

5. Բարձրագույն դատական խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննարկելով դատավոր Արայիկ Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը, լսելով Հանձնաժողովի անդամ ԱՏ Ավագյանի զեկույցը, Հանձնաժողովի նախագահ Մ. Պապոյանի ելույթը, դատավորի բացատրությունը, ուսումնասիրելով վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Խորհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ (...):

Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի այն խախտումը, որը հեղինակագրվում է դատական իշխանությունը: Կոպիտ է նաև դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակագրվում է դատական իշխանությանը: Սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ (...) արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

Դատավոր Արայիկ Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար Խորհուրդն Էական է համարում հետևյալ հարցադրումները.

1. եթե գործով քննությունն իրականացվում է դատաքննության նախապատրաստության փուլով, արդյո՞ք դատարանը պարտավոր է գործի քննությանն այլ անձանց, այդ թվում՝ նոր պատասխանողին ներգրավելու հարցը քննարկել և լուծել նախնական դատական նիստում,
2. արդյո՞ք թիվ ԵԿԴ/1363/02/17 քաղաքացիական գործով պահպանվել է գործով նոր պատասխանող ներգրավելու դատավարական կարգը,
3. արդյո՞ք թիվ ԵԿԴ/1363/02/17 քաղաքացիական գործով դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը վտանգում կամ կասկածի տակ է առնում դատավորի անկախությունը և անաչառությունը կամ ողջամիտ անկողմնակալ դիտորդի մոտ կողմնակալ կամ խտրական վարքագծի տպավորություն է ստեղծում՝ հանգեցնելով դատավորի վարքագծի կանոնների խախտման,
4. արդյո՞ք թույլ տրված խախտումները կարող են որակվել որպես կոպիտ,
5. արդյո՞ք վարույթ հարուցած մարմինը պահպանել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքի համար ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքով սահմանված ժամկետները:

2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերն առաջին ատյանի դատարանում քննվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով: Խորհուրդը փաստում է, որ թիվ ԵԿԴ/1363/02/17 քաղաքացիական գործն առաջին ատյանի դատարանում քննվել է մինչև 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելը, ուստի այն պետք է քննվեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով: Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից թիվ ԵԿԴ/1363/02/17 քաղաքացիական գործով արձանագրված և դատավոր Արայիկ Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության հիմքում դրված դատավարական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումները, որոնք կողմի մոտ ստեղծել են կողմնակալ վարքագծի տպավորություն, պետք է գնահատվեն՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի (այսուհետ՝ Տախկին օրենսգիրք) դրույթները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 149.5-րդ հոդվածի համաձայն՝ (...) գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով դատարանը ձեռնամուխ է լինում գործը դատաքննության նախապատրաստելուն:

Նույն օրենսգրքի 149.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս դատավորը (...) դատական քննությունն արդյունավետ իրականացնելու համար կարող է հրավիրել նախնական դատական նիստ (...):

Նույն օրենսգրքի 149.8-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում մասնավորապես՝ քննարկում է գործի քննությանն այլ անձանց ներգրավելու (...) հարցերը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նշանակությանը՝ իր որոշմամբ արձանագրել է, որ. «Գործը դատաքննության նախապատրաստելը՝ որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն և պարտադիր փուլ, արդարադատության արդյունավետության, անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացման համար պայմաններ ապահովող դատավարական գործողությունների և դրանց հիման վրա առաջացող իրավահարաբերությունների ամբողջություն (համակարգ) է, որը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը»:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ. «Գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նպատակը քաղաքացիական գործի ար-

դյունավետ քննության ապահովումն է (...): Գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նշված նպատակի իրականացումը պայմանավորված է դատավարության այս փուլի խնդիրների ճիշտ իրականացմամբ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ գործող քաղաքացիադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի հետևյալ հիմնական խնդիրները՝

1) վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելը,

2) դատավարության մասնակիցների կազմը ճշտելը և նրանց մասնակցությունն ապահովելը,

3) գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելը,

4) ապացույցների բավարար համակցության ձևավորումը (ապացույցների կենտրոնացումը) ապահովելը»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում իրականացվող նախապատրաստական գործողությունների գերակշիռ մասն իրականացվում է բացառապես նախնական դատական նիստի ընթացքում (...)» (տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0930/02/13 քաղաքացիական գործով 22.04.2016 թ. և թիվ ԳԴ4/0504/02/14 քաղաքացիական գործով 22.04.2016 թ. որոշումները):

ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 149.5-րդ հոդվածից, 149.8-րդ հոդվածի 1-ին մասի և 149.8-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության հիման վրա Խորհուրդն արձանագրում է, որ գործը նախնական դատական նիստով դատաքննության նախապատրաստելիս դատարանը պարտավոր է նախնական դատական նիստում կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները դատաքննության կանոնավոր ընթացքն ապահովելու, դատական նիստերի հնարավոր հետաձգումները, ինչպես նաև կողմերի մրցակցային իրավունքների հնարավոր խախտումները կանխելու համար: Ի թիվս այլ դատավարական գործողությունների, նախքան գործը դատաքննության նշանակելը դատարանը պարտավոր է նախնական դատական նիստում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ճշտելու համար դատավարության մասնակիցների կազմը, այդ թվում լուծելու նոր

պատասխանող ներգրավելու, նրան այդ մասին ծանուցելու, հայցի կապակցությամբ նրա դիրքորոշումը պարզելու հարցը:

Խորհուրդն արձանագրում է, որ գործը պատշաճորեն դատաքննության նախապատրաստելու, դրա արդյունավետ քննությանն ապահովելու առումով նոր պատասխանող ներգրավելու հարցը նախքան դատաքննությունն նշանակելը չափազանց կարևոր է այն իմաստով, որ նոր ներգրավվող գործին մասնակցող անձի՝ պատասխանողի համար դատարանը պետք է ապահովի հայցադիմումի պատասխան ներկայացնելու հնարավորություն, որի բովանդակությունն էական նշանակություն կարող է ունենալ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի մյուս հիմնական խնդիրները լուծելու, այն է՝ վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելու, գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (սպացուցման առարկան) որոշելու, սպացույցների բավարար համակցության ձևավորումը (սպացույցների կենտրոնացումը) ապահովելու համար: Մինչդեռ գործը դատաքննության նշանակելուց հետո նոր պատասխանող ներգրավելու հարցին անդրադառնալու պարագայում նախնական դատական նիստում կատարված գործողությունների մեծամասնությունը իմաստազրկվում է և ծագում է դրանք կրկին կատարելու անհրաժեշտություն: Հենց այդ նկատառումներից ելնելով է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 149.8-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով սահմանվել, որ դատարանը նախնական դատական նիստում քննարկում է գործի քննությանն այլ անձանց ներգրավելու հարցը:

Թիվ ԵԿԴ/1363/02/17 քաղաքացիական գործի և կարգապահական վարույթի նյութերի հետազոտման արդյունքում Խորհուրդը պարզեց հետևյալը.

Հայցվորներ Բորիս Մուրադյանի և Կարինե Մարգարյանի կողմից հայցադիմումով Փավրիզ Նոսրաթի Ալամդարիի դեմ որևէ պահանջ չի ներկայացվել, իսկ վերջինը որպես պատասխանող հայցադիմումում չի հիշատակվել:

2017 թվականի դեկտեմբերի 7-ին հայցվորների կողմից ներկայացվել է գրավոր միջնորդություն, որով վերջինները խնդրել են որպես պատասխանող ներգրավել Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին:

2018 թվականի ապրիլի 3-ի դատական նիստով կազմված պարզ թղթային արձանագրության հետազոտման արդյունքում

Խորհուրդը հաստատված է համարում, որ դատարանը դատական նիստում միայն արձանագրել է, որ հայցվոր Բորիս Մուրադյանը դատարան է ներկայացրել միջնորդություն՝ Փավրիզ Նուրաթի Ալամդարիին որպես պատասխանող ներգրավելու մասին, և չի անդրադարձել այդ միջնորդության քննարկմանը, չի կատարել որևէ դատավարական գործողություն, որը կարող է վկայել Փավրիզ Նուրաթի Ալամդարիին գործով որպես պատասխանող ներգրավելու մասին:

Խորհուրդն անհիմն է համարում դատավոր Արայիկ Մելքումյանի պնդումն առ այն, որ 2018 թվականի ապրիլի 03-ին՝ նախքան դատաքննության անցնելը, Փավրիզ Նուրաթի Ալամդարին գործով ներգրավվել էր որպես պատասխանող: Տվյալ պնդումը հերքվում է նաև նույն նիստի պարզ թղթային արձանագրությամբ, որի համաձայն՝ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածով, որոշել է գործի քննությունը հետաձգել, դատական նիստը նշանակել 16.04.2018 թ.-ին, լրացուցիչ ծանուցել գործին մասնակցող անձանց (նրանց ներկայացուցիչներին) դատական նիստի վայրի և ժամանակի մասին՝ ծանուցման ենթակա անձանց կազմում չնշելով Փավրիզ Նուրաթի Ալամդարիին:

Խորհուրդը հաստատված է համարում, որ հաջորդ նախնական դատական նիստը տեղի է ունեցել 2018 թվականի հունիսի 11-ին, որի ձայնային արձանագրության և համառոտագրման ուսումնասիրությունը, իր հերթին, վկայում է, որ Փավրիզ Նուրաթի Ալամդարին որպես պատասխանող գործով չի հիշատակվում: Ավելին, տվյալ նախնական դատական նիստում Փավրիզ Նուրաթի Ալամդարիին որպես պատասխանող ներգրավելու հարցը կրկին չի քննարկվել, թեև դատարանի՝ «լրացումներ, միջնորդություններ ունե՞ք հարցին ի պատասխան հայցվորը պնդել է Փավրիզ Նուրաթի Ալամդարիի գույքի վրա արգելանք դնելու անհրաժեշտությունը, «որովհետև ինքն էլ է պարտապան (հայցվորի բառացի ձևակերպմամբ): Փաստելով, որ դա առանձին միջնորդություն է՝ դատարանն արձանագրել է «ընդհանուր գործի վերաբերյալ միջնորդություններ, նոր ապացույցներ» չունենալու հանգամանքը և, այլևս որևէ կերպ չանդրադառնալով Փավրիզ Նուրաթի Ալամդարիին որպես պատասխանող ներգրավելու հարցին, գործը հայտարարել է նախապատրաստված դատաքննության և որոշում է կայացրել այն դատաքննության նշանակելու մասին:

Փավրիզ Լոսրաթի Ալամդարին 2018 թվականի հունիսի 11-ի՝ գործը դատաքննության նշանակելու որոշմամբ ևս պատասխանողների շարքում չի հիշատակվել:

Միաժամանակ վերը շարադրվածի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից արձանագրված փաստն առ այն, որ 2018 թվականի ապրիլի 03-ի դատական նիստի պարզ թղթային արձանագրությունն ստորագրված չէ Դատավորի կողմից, ինչպես նաև Դատավորի պնդումն առ այն, որ գործում այդուհանդերձ առկա է արձանագրության իր կողմից ստորագրված օրինակը, սույն հարցի քննության համար Էսկան նշանակություն չունի:

Խորհուրդը հաստատված է համարում նաև այն, որ հայցվորների կողմից Փավրիզ Լոսրաթի Ալամդարիին պատասխանող ներգրավելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացվել են նաև գործը դատաքննության նշանակելուց հետո՝ 2018 թվականի հունիսի 22-ին և հուլիսի 4-ին: Միաժամանակ Փավրիզ Լոսրաթի Ալամդարին 2018 թվականի հուլիսի 6-ին ներկայացրել է իրեն որպես երրորդ անձ ներգրավելու մասին դիմում:

Նշված միջնորդություններին դատարանն անդրադարձել է 2018 թվականի հուլիսի 12-ի դատաքննության նիստում, որի ժամանակի և վայրի մասին Փավրիզ Լոսրաթի Ալամդարին որպես պատասխանող ծանուցված չի եղել: Վերջինիս ծանուցված չլինելու փաստը հաստատվում է նաև նշված նիստի ձայնային արձանագրության և համառոտագրման ուսումնասիրությամբ, որոնց բովանդակությունից երևում է, որ Փավրիզ Լոսրաթի Ալամդարին՝ որպես դատական նիստի մասին ծանուցված, սակայն չներկայացած պատասխանող, չի հիշատակվում:

2018 թվականի հուլիսի 12-ի դատաքննության նիստի ձայնային արձանագրության և համառոտագրման ուսումնասիրությամբ հաստատվում է, որ այն բանից հետո, երբ հայցվորը կրկին պնդել է Փավրիզ Լոսրաթի Ալամդարիին պատասխանող ներգրավելու անհրաժեշտությունը, դատավոր Արայիկ Մելքումյանն արձանագրել է, որ «դատարանը տվյալ միջնորդությամբ որևէ դատավարական անելիք չունի», և կողմին հայտնել է. «Եթե գտել եք, որ վերջինս պետք է պատասխանող լինի, Ձեր իրավունքն է (...) հետևաբար Դուք այս պահին պատասխանող եք ներգրավել վերջինիս» (Փավրիզ Լոսրաթի Ալամդարիին):

Սույն նիստում դատավոր Արայիկ Մելքումյանը մերժել է Փավրիզ Լոսրաթի Ալամդարիի դիմումն իրեն որպես երրորդ անձ

ներգրավելու մասին, այն հիմնավորմամբ, որ վերջինս հայցվորի կողմից գործով ներգրավվել է որպես պատասխանող, և հետաձգել է գործի քննությունը՝ արձանագրելով «սույն գործով արդեն պատասխանող Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին» (դատավորի բառացի ձևակերպմամբ) ծանուցելու անհրաժեշտությունը:

Խորհուրդը հաստատված է համարում, որ 2018 թվականի օգոստոսի 15-ի և դրան հաջորդող մյուս դատական նիստերի արձանագրություններում Փավրիզ Նոսրաթի Ալամդարին հիշատակվում է որպես պատասխանող:

Շարադրված փաստերի և դրանք հաստատող ապացույցների համակցության հիման վրա Խորհուրդը եկել է եզրահանգման, որ դատավոր Արայիկ Մելքումյանը նախքան գործը դատաքննության նշանակելը նախնական դատական նիստում պատշաճորեն չի լուծել դատավարության մասնակիցների կազմը ճշտելու, այն է՝ Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին որպես պատասխանող ներգրավելու հարցը՝ դրան անդրադառնալով գործը դատաքննության նշանակելուց հետո: Արդյունքում դատավոր Արայիկ Մելքումյանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 149.8-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի խախտում:

Խորհուրդը հաստատված է համարում, որ 2018 թվականի սեպտեմբերի 6-ի դատաքննության նիստում դատավոր Արայիկ Մելքումյանը հայտնել է, որ պատասխանող Փավրիզ Նոսրաթի Ալամդարին ներգրավվել է որպես պատասխանող և ծանուցվել է՝ մինչև հայցվորի կողմից վերջինի դեմ պահանջ ներկայացնելը, իսկ դատական նիստի օրվա դրությամբ ներկայացված լինելու կամ չլինելու վերաբերյալ ինքը տեղյակ չէ, և հայցվորներից ուղղորդող հարցերով կատարել է ճշտումներ, որ նրանք պետք է հայցադիմումը գրավոր ներկայացնեին:

Խորհուրդը հարկ է համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նախկին օրենսգիրքը, ի տարբերություն 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի, նոր պատասխանող ներգրավելու հարցը կարգավորող հատուկ նորմեր չի նախատեսում բավարարվելով ընդհանուր բնույթի նորմով, որն ամրագրված է 149.8-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում:

Նոր պատասխանող ներգրավելուն նվիրված միակ հատուկ նորմը նախատեսված է նախկին օրենսգրքի 31-րդ հոդվածի

3-րդ մասով, որը վերաբերում է ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելուն հայցվորի անհամաձայնության դեպքերին, երբ դատարանին վերապահվում է պատշաճ պատասխանողին գործի քննությանը որպես երկրորդ պատասխանող ներգրավելու հնարավորություն: Ելնելով գործի հանգամանքներից՝ Խորհուրդը գտնում է, որ նախկին օրենսգրքի ոչ պատշաճ կողմի փոխարինման վերաբերյալ կանոնները թիվ ԵԿԴ/1363/02/17 քաղաքացիական գործով կիրառելի չեն: Միևնույն ժամանակ Խորհուրդն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: (...)

Սույն օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

Սույն օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ քաղաքացիական դատավարության կողմերն են հայցվորը և պատասխանողը, ընդ որում՝ պատասխանողներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնց դեմ հայց է հարուցվել:

Սույն օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումում պետք է նշվեն՝ (...) գործին մասնակցող անձանց անունը, ազգանունը, հայրանունը (...), նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները (...), հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս, հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները (...):

Նշված նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ քաղաքացիադատավարական օրենսդրությունը հայցվորին է վերապահել հայցով դատարան դիմելու, հայցադիմումով որոշակի անձի կամ անձանց որպես պատասխանող ներգրավելու, նրանց ուղղված պահանջը որոշելու իրավունքը: Ընդ որում, այդ իրավունքը, ընդհանուր կանոնի ուժով, կարող է իրականացվել որոշակի անձանց դեմ հայցադիմում ներկայացնելու միջոցով:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի որևէ նորմ չի բացառում գործը դատարան-

նության նախապատրաստելու ընթացքում նոր պատասխանող ներգրավելու դիմումով կամ միջնորդությամբ դատարանին դիմելու հայցվորի հնարավորությունը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց դիմումների և միջնորդությունների քննարկման արդյունքներով դատարանը կայացնում է որոշում:

Խորհուրդն արձանագրում է, որ սույն գործով հայցվորների կողմից Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին որպես պատասխանող ներգրավելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Մեծան միջնորդություններով հայցվորներն իրականացրել են իրենց դատավարական իրավունքները, որպիսի պայմաններում այդ միջնորդությունները դատավոր Արայիկ Մելքումյանի կողմից քննարկման առարկա չդարձնելը, դրանց որևէ եղանակով չանդրադառնալը, ինչպես նաև 2018 թվականի հուլիսի 12-ի և սեպտեմբերի 6-ի դատական նիստերի ընթացքում դրանց կապակցությամբ արտահայտված դատողություններն առ այն, որ «դատարանը տվյալ միջնորդությամբ որևէ դատավարական անելիք չունի», որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով հիմնավորվել չեն կարող: Դատարանն առնվազն պարտավոր էր, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան, այդ միջնորդությունների քննարկման արդյունքներով կայացնել որոշումներ: Մինչդեռ գործի նյութերի ուսումնասիրությամբ, ինչպես նաև դատավոր Արայիկ Մելքումյանի բացատրություններով հաստատվում է, որ դատարանը ոչ միայն չի քննարկել և լուծել Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին որպես պատասխանող ներգրավելու վերաբերյալ հայցվորների միջնորդությունները, այլ նաև, հայտարարելով, որ տվյալ միջնորդություններով անելիք չունի, Փավրիզ Նոսրաթի Ալամդարիին հայտարարել է պատասխանող՝ հայցվորներին առաջարկելով նրա դեմ սահմանված կարգով ներկայացնել հայցային պահանջ, որպիսի հանգաման-

քը դատավարության մասնակցի մոտ ստեղծել է կողմնակալ վերաբերմունքի տպավորություն:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը պարտավոր է պահպանել սույն օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները: Վարքագծի կանոնները չպահպանելը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է գերծ մնալ այնպիսի հայտարարություն անելուց կամ վարքագծի դրսևորելուց, որը վտանգում կամ կասկածի տակ է առնում դատավորի կամ դատարանի անկախությունը և անաչառությունը:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է լինել անաչառ և գերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց կամ ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ նման տպավորություն ստեղծելուց:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Խորհուրդն արձանագրում է, որ դատավոր Արայիկ Մելքումյանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտումներն ակնհայտ են, քանի որ դրանց առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Խորհրդի գնահատմամբ նման խախտումները վտանգում են դատավորի և դատարանի անկախությունը և անաչառությունը, ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ստեղծել դատավորի կողմնակալ կամ խտրական վերաբերմունքի տպավորություն, ուստի դրանք անթույլատրելի են:

Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ թիվ ԵԿԴ/1363/02/17 քաղաքացիական գործով դատավոր Արայիկ Մելքումյանի կողմից թույլ տրված թերացումներն ու բացթողումները չեն կարող համարվել կոպիտ, եթե չունեն պարբերական բնույթ կամ չեն պարունակում ՀՀ Սահմանադրության կամ օրենքների նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների ոտնահարմանը,

չհիմնավորված և չպատճառաբանված որոշման կայացմանը և, որպես հետևանք, դատական իշխանության հեղինակագրկմանը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Վերոշարադրյալից հետևում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է ոչ միայն օրենքի նորմի խախտման առկայությունը, այլ նաև այն, որ այդ խախտումը լինի կոպիտ, այսինքն՝ դրանց միա-

ժամանակյա առկայությունը:

Խորհրդի գնահատմամբ տվյալ պարագայում առկա խախտումներն ակնհայտ են, սակայն դրանք որպես կոպիտ որակվել չեն կարող: Հետևաբար, այն չի կարող նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ Արայիկ Մելքումյանն արդարադատություն իրականացնելիս թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ խախտումներ, որոնք դատավարության մասնակցի մոտ ստեղծել են կողմնակալ վերաբերմունքի տպավորություն, այնուամենայնիվ Խորհուրդը հաստատված է համարում նաև այն հանգամանքը, որ դատավոր Արայիկ Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է ոչ միայն օրենքի նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի խախտման առկայությունը, այլ նաև այդ խախտումների կոպիտ լինելու հանգամանքը, այսինքն՝ դրանց միաժամանակյա առկայությունը:

Ինչ վերաբերում է, դատավոր Արայիկ Մելքումյանի դիրքորոշմանն առ այն, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշումն օրենքով սահմանված եռօրյա ժամկետում իրեն չուղարկելու փաստը հանդիսանում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու հիմք, ապա Խորհուրդն այն անհիմն է համարում հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 148-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդու-

թյուն ներկայացնելու մասին որոշումը կայացման պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է Բարձրագույն դատական խորհուրդ, դատավորին և վարույթ հարուցող մյուս մարմին: (...)

Նույն օրենքի 156-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը մերժում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը, եթե վարույթը հարուցած մարմինը խախտել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքի համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետները, և դատավորը համաձայն է այդ հիմքով վարույթի կարճմանը:

Տվյալ դեպքում Խորհուրդը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 148-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ժամկետը չի կարող գնահատվել որպես դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքի համար սահմանված ժամկետ, քանի որ այն չի վերաբերում կարգապահական վարույթը հարուցող մարմնի կողմից վարույթ հարուցելուն և հարուցված վարույթի տևողությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 156-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդությունը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արայիկ Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ՝ մերժել:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԱՆԴԱՄՆԵՐ՝**

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԲԵԿԱԾՅԱՆ

Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լ. ՄԵԼԻՔՉԱՆՅԱՆ

Ս. ՄԵՂՐՅԱՆ

Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ս. ԶԻՉՈՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ք.Երևան
07.02.2019

ԲԴԽ-5-Ո-Կ-02

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
ԱՐԱ ԿՈՒԲԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ.**

նախագահությամբ՝
մասնակցությամբ՝
անդամներ

Գ. Հարությունյանի,

Ա. Բեկթաշյանի,
Գ. Դանիելյանի,
Ա. Խաչատրյանի,
Հ. Հովհաննիսյանի,
Լ. Մելիքջանյանի,
Ս. Մեղրյանի,
Ա. Մխիթարյանի,
Ս. Զիչոյանի,
Ա. Կուրբանյանի,

դատավոր
Դատավորների ընդհանուր ժողովի
կարգապահական հարցերի
հանձնաժողովի նախագահ
Դատավորների ընդհանուր ժողովի
կարգապահական հարցերի
հանձնաժողովի անդամ

Մ. Պապոյանի,

Ա. Ավագյանի,

դոնրաց նիստում, քննության առնելով Դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի նոյեմբերի 26-ի N-Կ-10/2018 որոշմամբ ներկայացված միջնորդությունը՝ մինչև 2018 թվականի օգոստոսի 10-ը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, այնուհետև՝ սնանկության դատարանի դատավոր Արա Կուրբանյանին (այսուհետ՝ Դատավոր) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել փաստաբան Շուշանիկ Թադևոսյանի 2018 թվականի հոկտեմբերի 30-ի հաղորդումը՝ հասցեագրված Հանձնաժողովին:

Հաղորդման մեջ մասնավորապես նշվել է, որ թիվ ԵԴ/13722/02/18 քաղաքացիական գործով նախագահող դատավոր Արա Կուրբանյանը 2018 թվականի հուլիսի 16-ի, օգոստոսի 31-ի և հոկտեմբերի 5-ի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումներում չի նշել հայցադիմումը վերադարձնելու բոլոր հիմքերը, ինչի արդյունքում խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 26-ի N-Կ-10/2018 որոշմամբ փաստաբան Շուշանիկ Թադևոսյանի հաղորդման հիման վրա Դատարանի դատավոր Արա Կուրբանյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Հարուցված կարգապահական վարույթի ընթացքում Դատավորը ներկայացրել է գրավոր բացատրություն:

2. Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը.

Հարուցված կարգապահական վարույթի ընթացքում ձեռք բերված թիվ ԵԴ/13722/02/18 քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրման արդյունքում Հանձնաժողովը պարզել է հետևյալը.

2018 թվականի հուլիսի 9-ին Հովհաննես Չամսարյանի ներկայացուցիչ Շ. Թադևոսյանը հայցադիմում է ներկայացրել

Դատարան ընդդեմ Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի, երրորդ անձինք՝ «Նաիրի ինշուրանս» ԱՄՊ ընկերության, «Մուլտի Ֆուդ» ՍՊ ընկերության՝ ՃՏՊ արդյունքում պատճառված վնասի չափի և պատահարի առաջացման պատճառների վերաբերյալ կրկնակի փորձաքննություն կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, որը նույն օրը մակագրվել է դատավոր Արա Կուբանյանին:

2018 թվականի հուլիսի 16-ին Դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում է կայացրել, համաձայն որի՝ հայցվորի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները, այն է՝ չեն ներկայացվել հայցադիմումին կից ներկայացված էլեկտրոնային կրիչի համապատասխան թվով օրինակները:

2018 թվականի օգոստոսի 22-ին հայցվորի ներկայացուցիչ Ծ.Թադևոսյանը հայցադիմումը կրկին ներկայացրել է դատարան:

2018 թվականի օգոստոսի 31-ին դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում է կայացրել, համաձայն որի՝ հայցվորի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (որոշման պատճառաբանական մասում նշվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դրույթները) պահանջները, այն է՝ պատասխանողի անվանումը թերի է նշվել:

2018 թվականի սեպտեմբերի 26-ին հայցվորի ներկայացուցիչ Ծ.Թադևոսյանը հայցադիմումը կրկին ներկայացրել է դատարան:

2018 թվականի հոկտեմբերի 5-ին դատարանը դարձյալ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում է կայացրել՝ պատճառաբանելով, որ հայցվորի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջները, այն է՝ չի նշվել հայցվորի ծանուցման հասցեն կամ այն հայցվորի հաշվառման հասցեի հետ համընկնելու հանգամանքը:

2018 թվականի հոկտեմբերի 25-ին հայցվորի ներկայացուցիչ Ծ. Թադևոսյանը հայցադիմումը կրկին ներկայացրել է դատարան, որն այս անգամ արդեն մակագրվել է դատարանի մեկ այլ դատավոր Ա.Ստեփանյանին:

Ուսումնասիրելով ներկայացված նյութերը՝ Հանձնաժողովը փաստել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

127-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված են հայցադիմումը վերադարձնելու հիմքերը, մասնավորապես նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են հայցադիմումը վերադարձնելու բոլոր հիմքերը:

Թիվ ԵԴ/13722/02/18 քաղաքացիական գործով դատավոր Ա.Կուբանյանի կողմից 2018 թվականի հուլիսի 16-ին, օգոստոսի 31-ին և հոկտեմբերի 5-ին կայացվել է հայցադիմումը վերադարձնելու մասին թվով երեք որոշում, մինչդեռ 2018 թվականի հուլիսի 16-ին հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում կայացնելիս արդեն իսկ ակնհայտ էին հայցադիմումի բոլոր թերությունները, այն է՝ հայցվորի կողմից չեն ներկայացվել հայցադիմումին կից էլեկտրոնային կրիչի համապատասխան թվով օրինակները, պատասխանողի անվանումը թերի է նշվել, ինչպես նաև չի նշվել հայցվորի ծանուցման հասցեն կամ այն հայցվորի հաշվառման հասցեի հետ համընկնելու հանգամանքը:

Այդուհանդերձ, Դատավորը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, այն է՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են հայցադիմումը վերադարձնելու բոլոր հիմքերը, 2018 թվականի հուլիսի 16-ի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման մեջ չի նշել հայցադիմումը վերադարձնելու բոլոր հիմքերը, որոնք առկա են եղել դեռևս հայցվորի ներկայացուցչի կողմից հայցադիմումն առաջին անգամ ներկայացնելու ժամանակ, փոխարենը դրանք արձանագրվել են արդեն հաջորդող երկու՝ 2018 թվականի օգոստոսի 31-ին և հոկտեմբերի 5-ին կայացված հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումներով: Դատավորը մեկ որոշման շրջանակներում չի անդրադարձել հայցադիմումում իրեն ակնհայտ բոլոր թերություններին, որպիսի հանգամանքը Հանձնաժողովին հիմք է տվել եզրակացնելու, որ դատավոր Ա.Կուբանյանի կողմից թույլ է տրվել քաղաքացիադատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում:

Վերոգրյալ իրավական նորմերի և թիվ ԵԴ/13722/02/18 քաղաքացիական գործի նյութերի համադրման արդյունքում, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 2-րդ և 3-րդ մասերի, 147-րդ հոդվածի 5-րդ մասի, 148-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ Հանձնաժողովը գտել

Է, որ դատավոր Արա Կուրբանյանի կողմից արդարադատություն իրականացնելիս թույլ է տրվել դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով, որն էլ հեղինակագրվում է դատական իշխանությունը և կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության: Ընդ որում՝ Հանձնաժողովը գտել է, որ դատավոր Արա Կուրբանյանի կողմից դատավարական իրավունքի նորմի խախտումը կրել է պարբերաբար բնույթ, քանի որ այն կատարվել է մեկից ավելի անգամ:

Հանձնաժողովի գնահատմամբ առկա է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:

3. Դատավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ.

Հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ դատավոր Արա Կուրբանյանը ներկայացրել է հետևյալ դիրքորոշումը.

1. Հանձնաժողովի որոշումը որևէ կերպ պատճառաբանված չէ, որոշմամբ արտահայտված դիրքորոշումը խիստ սուբյեկտիվ է, չփաստարկված և չափազանցված:

Որոշման մեջ Հանձնաժողովը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի գործողություններին տվել է սուբյեկտիվ գնահատականներ ԵԴ/13722/02/18 քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումներում առկա թերությունների ակնհայտության, ՀՀ քաղաքացիադատավարական նորմերի մեկնաբանման և կիրառման կապակցությամբ:

Հանձնաժողովն օրյեկտիվորեն չի գնահատել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կողմից Հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթ հարուցելու մասին 26.11.2018թ. կայացված N-Կ-10/2018 որոշման վերաբերյալ 20.12.2018թ. տրված բացատրությունները, որոնք հիմնավորում են դատավորին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքի սահմանադրական օրենքով ամրագրված կարգապահական պատասխանատվության ենթարկելու համապատասխան հիմքերի բացակայությունը:

2. Դատավորը վերահաստատել է Հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթ հարուցելու մասին 26.11.2018թ. կայացված N-Կ-10/2018 որոշման վերաբերյալ 20.12.2018թ.

տրված բացատրություններով ներկայացված հիմնավորումները, որոնք հանգում են հետևյալին.

ԵԴ/13722/02/18 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 16.07.2018թ., 31.08.2018թ. և 05.10.2018թ. կայացված՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումները որևէ կերպ չեն խախտում ինչպես հայցվորի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, այնպես էլ անկախ և անաչառ Դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքները: Ավելին՝ նշված որոշումների կայացումը նպատակ է հետապնդել քաղաքացիական գործի վարույթն իրականացնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված նորմերի խստագույն և ճշգրիտ պահպանմամբ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են արդարադատություն կամ որպես Դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը:

Սույն քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կողմից թույլ չեն տրվել դատավարական նորմերի պարբերաբար, Էական, ակնհայտ և կոպիտ խախտումներ, քանի որ հայցվորը և նրա ներկայացուցիչը, լինելով փաստաբաններ, Դատարան են ներկայացրել հայցադիմումներ՝ չպահպանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումների կայացման համար հիմք են հանդիսացել Դատարան ներկայացված փաստաթղթերի հետազոտումը և դրանց ոչ պատշաճ լինելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի եզրահանգումը: Հայցադիմումներում առկա թերություններն ակնհայտ չեն եղել, քանի որ պատասխանող կազմակերպության անվանումը սխալ նշելը հայտնի է դարձել Դատարանին հայցադիմումը կրկին ներկայացնելու ժամանակ: Այսինքն, ըստ Էության, իր լիազորություններն իրականացնելիս դատավորը մեկնաբանել

Է քաղաքացիադատավարական օրենքը, ներքին համոզմամբ գնահատել Է ներկայացված փաստերը և ապացույցները, որպիսի գործողությունները «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 9-րդ մասի ուժով ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

Ավելին՝ հայցվորի ներկայացուցչի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին 29.10.2018թ. տրված հաղորդման 3.4 կետում (Էջ 6) հայցվոր կողմը Դատարանի կողմից 16.07.2018թ. և 31.08.2018թ. կայացված որոշումներն իրավական առումով հիմնավոր Է համարել, այսինքն՝ դրանց իրավաչափությունը որևէ կերպ չի վիճարկել:

Ինչ վերաբերում Է հայցադիմումը վերադարձնելու մասին Դատարանի 05.10.2018թ. որոշումը քաղաքացիադատավարական նորմերի խախտմամբ կայացված լինելու՝ հայցվորի եզրահանգմանը, ապա հայցվորի ներկայացուցչի նման պնդումը չի բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի դրույթներից, այն Է հայցադիմումում պարտադիր նշվում են հայցվորի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում Է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից)...

Վերոգրյալ նորմի վերլուծությունից բխում Է, որ Օրենսդիրը պարտադիր Է համարել հայցադիմումում նշել հայցվորի և՛ հաշվառման, և՛ ծանուցման հասցեները, եթե ծանուցման հասցեն տարբերվում Է հաշվառման հասցեից, ընդ որում՝ սույն դեպքում Դատարանը պետք Է իրապես տեղեկացված լինել՝ արդյոք հայցվորի ծանուցման և հաշվառման հասցեները տարբերվում են, թե ոչ: Նշված իրավակարգավորումը չի կարող ձևական բնույթ կրել, քանի որ առավելապես կապված Է հայցվորի արդար դատաքննության իրավունքի իրացման հետ: Այսպես՝ ծանուցման հասցեի վերաբերյալ հստակ տեղեկատվության առկայությունը երաշխավորում Է հայցվորի կողմից դատական ծանուցագրերի և դատավարական փաստաթղթերի ժամանակին ստացման հնարավորությունը, որպիսի պայմաններում վերջինս հնարավորություն Է ստանում լիարժեք իրացնելու իր դատավարական իրավունքները:

Սույն գործով Դատարան ներկայացված հայցադիմումներում նշվել Է միայն հայցվորի հաշվառման հասցեն՝ դատարանին չներկայացնելով որևէ տեղեկություն այն ծանուցման հասցեի

հետ համընկնելու վերաբերյալ: Ավելին՝ հայցադիմումը վերադարձնելու մասին Դատարանի 16.07.2018թ. և 31.08.2018թ. որոշումները հայցվոր կողմն ստացել է առձեռն, որպիսի հանգամանքը հայցվորի հաշվառման և ծանուցման հասցեները տարբեր լինելու հիմնավոր կասկածի տեղիք է տվել:

Դատարանը, 05.10.2018թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում կայացնելով, հետապնդել է բացառապես հայցվորի ծանուցման հասցեն բացահայտելու քաղաքացիադատավարական օրենսդրությամբ ամրագրված նպատակ, որը, նախևառաջ, բխում է հենց հայցվորի շահերից և վերջինիս կողմից արդար դատաքննության իրավունքը լիարժեք իրացնելու համար բավարար պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունից:

Ինչ վերաբերում է հաղորդման մեջ հայցվորի ներկայացուցչի կողմից նշված այն պնդմանը, որ Դատարանի 05.10.2018թ. որոշման հիմքում դրված է «հնարված», օրենսդրական պահանջների շրջանակից դուրս ներկայացված հիմք, որը գործից «ազատվելու» նպատակ է հետապնդել, ապա նշված փաստարկները մտացածին են, հայցվորի անհիմն ենթադրությունների արդյունք, իսկ վկայակոչված հիմքը հստակ սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում:

Ավելին՝ հայցվոր կողմը հաղորդման 1.9. կետում նշել է, որ հայցադիմումը վերադարձնելու բոլոր երեք դեպքերի կապակցությամբ վերաքննիչ բողոք չի ներկայացրել, քանի որ չի ցանկացել գործի քննության ժամկետը երկարաձգել վերաքննիչ դատարանում գործի քննության համար պահանջվող ժամկետով, մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում և որոշում է կայացնում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո՝ երկշաքայա ժամկետում:

Բացի դրանից, հայցվոր կողմի վերաքննիչ բողոք չներկայացնելու նման պատճառաբանությունը հիմնավորված չէ, քանզի «ակնհայտ և կոպիտ դատավարական նորմերի խախտմամբ» կայացված որոշումները վերաքննության կարգով չբողոքարկելու և «օրինական ուժի մեջ թողնելու» վարքագիծը հարիր չէ փաստաբանների իրավապաշտպան գործունեությանը: Այս առումով, հայցվոր կողմի պասիվ վարքագիծը ցույց է

տալիս, որ հայցվոր կողմը Դատարանի որոշումները համարել է իրավաչափ:

Անդրադառնալով հայցվորի ներկայացուցչի այն պնդմանը, որ սույն քաղաքացիական գործը հայցվորի համար ունի առանձնակի կարևորություն, հայցադիմումին կից ներկայացված հայցի ապահովում կիրառելու, ինչպես նաև ապացույցի ապահովման միջոցներ կիրառելու մասին միջնորդությունները ենթակա էին անհապաղ քննության, և հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումները դատավարական նորմերի խախտմամբ կայացնելու պայմաններում հայցվորին պատճառվել է անմիջական վնաս, պետք է փաստել, որ նախ՝ հայցվորն օբյեկտիվորեն չէր կարող ունենալ համոզմունք առ այն, որ ներկայացված միջնորդությունները Դատարանի կողմից կրավարարվեին: Բացի դրանից, հայցվորը և նրա ներկայացուցիչը, հանդիսանալով փաստաբաններ և քաջատեղյակ լինելով ՀՀ օրենսդրական իրավակարգավորումներին, գրկված չէին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածով սահմանված կարգով հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելու իրական հնարավորությունից, սակայն կրկին գերադասել են պասիվ վարքագիծ դրսևորել, որը վկայում է սույն քաղաքացիական գործի կարևորության վերաբերյալ չափազանցված դիրքորոշում ստեղծելու մտադրության մասին:

Սույն գործով իր լիազորություններն իրականացնելիս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորը պահպանել է քաղաքացիադատավարական նորմերի պահանջները, իսկ հայցվորի կողմից քաղաքացիադատավարական նորմի մեկնաբանման և կիրառման հետ առկա անհամաձայնությունը որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով հիմնավորված չէ, կրում է գույտ էմոցիոնալ բնույթ:

Դատավորը նաև ընդգծում է, որ Դատարանի կողմից կայացված որոշումները որևէ կերպ չեն հեղինակազրկում դատական իշխանությունը, միտված են քաղաքացիադատավարական նորմերի պահպանմանը, այդ թվում փաստաբանների կողմից, որոնք իրականացնում են քաղաքացիներին իրավաբանական օգնություն տրամադրելու բարձր առաքելություն:

Դատավորը եզրակացնում է, որ ԵԴ/13722/02/18 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարանի դատավորի կողմից 16.07.2018թ., 31.08.2018թ. և 05.10.2018թ. կայացված հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումները կայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված նորմերի պահանջներին համապատասխան (16.07.2018թ. և 31.08.2018թ. կայացված որոշումների իրավաչափությունը հայցվորի կողմից ընդունվել է), որպիսի պայմաններում բացակայում է դատավարական իրավունքի նորմի պարբերաբար, էական, ակնհայտ և կոպիտ խախտումը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումներն ինքնին չեն կարող որևէ կերպ խախտել անձի արդար դատաքննության իրավունքը, քանի որ նման որոշման առկայության պայմաններում անձը զրկված չէ Դատարանի դիմելու իրավունքից, ինչը և հայցվորի կողմից փաստացի իրացվել է: Բացի դրանից, հայցադիմումը Դատարան կրկին ներկայացնելու և այն, ի վերջո, վարույթ ընդունվելու դեպքում համարվում է դատարան ներկայացված սկզբնապես ներկայացնելու օրը:

Ավելին՝ սույն քաղաքացիական գործով հայցվորի իրավունքները չեն ոտնահարվել, իսկ գործի քննության ձգձգումը պայմանավորված է եղել հենց հայցվորի վարքագծով (փաստաբաններ լինելով հանդերձ՝ դատավարական նորմերի պահանջների խախտմամբ հայցադիմում ներկայացնելը, որպիսի հանգամանքն ընդունել է նաև հայցվոր կողմը):

3. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 156-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը մերժում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը, եթե՝

1) առկա է սույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 6-րդ մասով և 147-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված որևէ հիմք.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ վարույթ հարուցած մարմինը կարճում է կարգապահական վարույթը, եթե դադարեցվել կամ դադարել են դատավորի լիազորությունները:

Հանրապետության նախագահի 2018թ. օգոստոսի 10-ի հրամանագրով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության

առաջին ատյանի դատարանի դատավոր Արա Կուբանյանը նշանակվել է սնանկության դատարանի դատավոր:

Բարձրագույն դատական խորհրդի 26.12.2018թ. արձանագրային որոշմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Արա Կուբանյանի լիազորությունները սնանկության դատարանի դատավոր նշանակվելու կապակցությամբ դադարեցվել են օրենքի ուժով:

Այս դեպքում՝ թեև արդարադատություն իրականացնելիս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի գործողություններում իսպառ բացակայում է դատավարական նորմերի պարբերաբար, էական, ակնհայտ և կոպիտ խախտումը, և առկա չեն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով ամրագրված կարգապահական պատասխանատվության ենթարկելու համապատասխան հիմքերը, այնուամենայնիվ, սնանկության դատարանի դատավոր Արա Կուբանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է մերժման, քանի որ վերջինիս՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի լիազորությունները դադարեցվել են:

2) Վարույթը հարուցած մարմինը խախտել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքի համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետները, և դատավորը համաձայն է այդ հիմքով վարույթի կարճմանը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցող մարմինը վարույթ հարուցելու, այն կասեցնելու, վերսկսելու և կարճելու որոշումները կայացնելու պահից եռօրյա ժամկետում ուղարկում է վարույթ հարուցող մյուս մարմնին, ինչպես նաև հաղորդում ներկայացրած անձին և համապատասխան դատավորին:

Այս դեպքում Դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթ հարուցելու մասին N-Կ-10/2018 որոշումը կայացվել է 2018թ. նոյեմբերի 26-ին, մինչդեռ տվյալ որոշումը վարույթ հարուցող մարմինը դատավոր Կուբանյանին, համապատասխան հաղորդում ներկայացրած անձին և Արդարադատության նախարարի պաշտոնակատարին ուղարկել է 2018թ. դեկտեմբերի 13-ին, այսինքն՝ «Հայաստանի Հանրապետության դատական

օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված եռօրյա ժամկետի խախտմամբ:

Նման պայմաններում կարգապահական վարույթ հարուցած մարմինը խախտել է Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքի համար օրենքով սահմանված ժամկետը, որպիսի հանգամանքը ներկայացված միջնորդությունը մերժելու (կարճելու) հիմք է:

4. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

Բարձրագույն դատական խորհուրդը հիմք է ընդունում արձանագրված հետևյալ հանգամանքները.

1. 2018 թվականի հուլիսի 9-ին Հովհաննես Չամսարյանի ներկայացուցիչ Ծ.Թադևոսյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի, երրորդ անձինք՝ «Նաիրի ինշուրանս» ԱՄԴ ընկերության, «Մուլտի Ֆուդ» ՍՊ ընկերության՝ ՃՏԴ արդյունքում պատճառված վնասի չափի և պատահարի առաջացման պատճառների վերաբերյալ կրկնակի փորձաքննություն կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, որը նույն օրը մակագրվել է Դատարանի դատավոր Արա Կուրանյանին:

2. 2018 թվականի հուլիսի 16-ին Դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում է կայացրել, համաձայն որի՝ հայցվորի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները, այն է՝ չեն ներկայացվել հայցադիմումին կից ներկայացված էլեկտրոնային կրիչի համապատասխան թվով օրինակները:

3. 2018 թվականի օգոստոսի 22-ին հայցվորի ներկայացուցիչ Ծ.Թադևոսյանը կրկին հայցադիմում է ներկայացրել Դատարան:

4. 2018 թվականի օգոստոսի 31-ին Դատարանը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում է կայացրել, համաձայն որի՝ հայցվորի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (որոշման պատճառաբանական մասում նշվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դրույթները) պահանջները, այն է՝ պատասխանողի անվանումը թերի է նշվել:

5. 2018 թվականի սեպտեմբերի 26-ին հայցվորի ներկայացուցիչ Շ. Թադևոսյանը հայցադիմումը կրկին ներկայացրել է Դատարան:

6. 2018 թվականի հոկտեմբերի 5-ին Դատարանը դարձյալ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում է կայացրել՝ պատճառաբանելով, որ հայցվորի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջները, այն է՝ չի նշվել հայցվորի ծանուցման հասցեն կամ այն հայցվորի հաշվառման հասցեի հետ համընկնելու հանգամանքը:

7. Հանրապետության նախագահի 2018 թ. օգոստոսի 10-ի հրամանագրով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Արա Կուբանյանը նշանակվել է սնանկության դատարանի դատավոր, և Բարձրագույն դատական խորհրդի 26.12.2018թ. արձանագրային որոշմամբ արձանագրվել է, որ սնանկության դատարանի դատավոր նշանակվելու կապակցությամբ Արա Կուբանյանի լիազորությունները՝ որպես Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր, դադարել են օրենքի ուժով:

5. Բարձրագույն դատական խորհրդի պատճառաբանություններն ու եզրահանգումները.

Քննարկելով դատավոր Արա Կուբանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը, լսելով Հանձնաժողովի անդամի գեկույցը, դատավորի բացատրությունը, ուսումնասիրելով վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա

քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) և Սահմանադրական դատարանի որոշումներում:

Այսպես՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը:

Եվրոպական դատարանը նշել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է բոլոր անձանց քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին վերաբերող յուրաքանչյուր հայց դատարանին ներկայացնելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է «դատարանի իրավունքը, այսինքն՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը քննություն սկսելու իրավունքի միայն մի մասն է, ինչի սահմանափակումը դատարանների կողմից ընթացակարգային օրենքների գուտ խիստ մեկնաբանման հետևանքով կառաջացնի իրավունքի խախտում, և անձի այդ իրավունքը կկրի վերացական բնույթ, հետևաբար՝ քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում, ինչի արդյունքում տեղի չի ունենա դատավարություն, և առհասարակ կարժեգրկվեն այդ վարույթի արդար, հրապարակային և արագ քննության բնորոշումները: Ընդ որում, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակը ոչ թե տեսական կամ վերացական, այլ իրավունքների գործնական և արդյունավետ երաշխավորումն է: Դա, մասնավորապես, վերաբերում է դատարանի դիմելու իրավունքին՝ նկատի ունենալով այն զգալի դերը, որ արդար դատաքննության իրավունքն իրականացվում է ժողովրդավարական հասարակությունում (տե՛ս Կրեուզն ընդդեմ Լեհաստանի թիվ 28249/95 գանգատով ՄԻԵԴ 19.06.2001 թվականի վճիռը, պարբ. 52, 53-

56, Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 4451/70 գանգատով ՄԻԵԴ 21.02.1975 թվականի վճիռը, պարբ. 34):

Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրահանգել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում են «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքները, բացարձակ չեն և կարող են ենթարկվել սահմանափակումների, սակայն կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի դրանից, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ (տե՛ս Ալ-Մդսանին ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 35763/97 գանգատով ՄԻԵԴ 21.11.2001 թվականի վճիռը, պարբ. 53, Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի թիվ 34791/97 գանգատով ՄԻԵԴ 14.12.1999 թվականի վճիռը, պարբ. 35, Ռապոն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 4210/00 գանգատով ՄԻԵԴ 25.07.2002 թվականի վճիռը, պարբ. 90, «Պայքար և հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 գանգատով ՄԻԵԴ 20.12.2007 թվականի վճիռը, պարբ. 44):

Անդրադառնալով անձի՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ Սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի ՍԴՈ-719 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտակա-

նությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները և իրավակիրառ պրակտիկան պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների ու ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

Վճռաբեկ դատարանը, իր հերթին, անդրադառնալով հայցադիմումը (դիմումը) վերադարձնելու, հայցադիմումի (դիմումի) ընդունումը մերժելու ինստիտուտներին, իր մի շարք որոշումներում վկայակոչելով Եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի վերոհիշյալ դիրքորոշումները, բազմիցս ընդգծել է, որ **անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այն կերպ կամ այն աստիճանի, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը** (տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/1020/02/14 քաղաքացիական գործով 24.09.2014 թ., թիվ ԵԿԴ/5797/02/15 քաղաքացիական գործով 01.08.2016 թ., թիվ ԵՄԴ/3384/02/15 քաղաքացիական գործով 03.08.2016 թ., թիվ ԵԱԼԴ/3828/02/15 քաղաքացիական գործով 22.07.2016 թ., թիվ ԵԱԲԴ/0229/02/16 քաղաքացիական գործով 07.06.2017 թ., թիվ ԵԷԴ/3578/02/16 քաղաքացիական գործով 23.08.2017 թ. որոշումները):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վերադարձնում է հայցադիմումը, եթե (...) չեն պահպանվել սույն օրենսգրքով հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են հայցադիմումը վերադարձնելու բոլոր հիմքերը:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցադիմումում պարտադիր նշվում են՝ (...) հայցվորի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից) (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ հայցադիմումում պարտադիր նշվում են՝ (...) պատասխանողի անունը (անվանումը),

հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի հասցեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ հայցադիմումին կցվում են՝ (...) հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները՝ գործին մասնակցող անձանց թվին համապատասխան (...):

Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 3-րդ մասի, 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի, 122-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության հիման վրա Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ թիվ ԵԴ/13722/02/18 քաղաքացիական գործով դատավոր Արա Կուբանյանի կողմից 2018 թվականի հուլիսի 16-ին, օգոստոսի 31-ին և հոկտեմբերի 5-ին կայացվել է հայցադիմումը վերադարձնելու մասին թվով երեք որոշում, այն դեպքում, երբ 2018 թվականի հուլիսի 16-ին Դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում կայացնելիս արդեն իսկ առկա էին հայցադիմումի բոլոր թերությունները, որոնք հիմք ընդունելով՝ հայցադիմումը երեք անգամ վերադարձվել է:

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ դատավոր Արա Կուբանյանի կողմից խախտվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, այն է՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման մեջ չեն նշվել բոլոր հիմքերը, որոնք առկա են եղել դեռևս հայցվորի ներկայացուցչի կողմից հայցադիմումն առաջին անգամ ներկայացնելու ժամանակ, այլ դրանք արձանագրվել են արդեն հաջորդող երկու՝ 2018 թվականի օգոստոսի 31-ին և հոկտեմբերի 5-ին կայացված հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումներով: Օրենքի պահանջի նման խախտումը և դատարանի մատչելիության իրավունքի իրացման տևական (շուրջ չորս ամիս) չերաշխավորելի անհամատեղելի են իրավաչափ ակնկալիքների և իրավունքի գերակայության երաշխավորման սկզբունքների հետ: Դատավոր Արա Կուբանյանի կողմից թույլ է տրվել քաղաքացիադատավարական իրավունքի ակնհայտ և կոպիտ խախտում, որով էլ խախտվել է անձի՝ անկախ և անաչառ

դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության սահմանադրական իրավունքը:

Բարձրագույն դատական խորհուրդն անհիմն է համարում դատավորի պնդումն առ այն, որ իր լիազորություններն իրականացնելիս դատավորը մեկնաբանել է դատավարական օրենքը, ներքին համոզմամբ գնահատել է ներկայացված փաստերը և ապացույցները, որպիսի գործողությունները «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 9-րդ մասի ուժով ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները չպահպանելը չի կարող գնահատվել որպես դատավարական օրենքի մեկնաբանություն, փաստերի և ապացույցների գնահատում: Բացի դրանից, ելնելով Սահմանադրական դատարանի՝ այս հարցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումներից (մասնավորապես՝ 09.04.2007թ. ՄԴՈ-690 որոշումը)՝ կարելի է եզրահանգել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանն օրենսդրորեն նախատեսված պետաիշխանական ցանկացած բնույթի լիազորություն (այդ թվում՝ հայեցողական) իրականացնելիս, անհրաժեշտ նպատակ հետապնդելու հետ մեկտեղ, պետք է առաջնորդվի վերջինիս հասնելու հասարակական հարաբերությունների կոնկրետ առանձնահատկություններով պայմանավորված իրավական, չափավոր միջոցներով, տվյալ դեպքում՝ պարտադիր հաշվի առնելով նաև քաղաքացիների արդար դատաքննության իրավունքը: Մասնավորապես, հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում կայացնելիս կարևոր նշանակություն ունի այդ որոշման պատճառաբանվածությունը, ինչը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար:

Բացի դրանից, ելնելով Եվրոպական դատարանի արտահայտած վերոնշյալ դիրքորոշումից՝ կարելի է արձանագրել, որ տվյալ պարագայում անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումները կրել են պարբերական բնույթ, ինչի արդյունքում խաթարվել է այդ իրավունքի բուն էությունը, ինչպես նաև խախտվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»

եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ դատարանի մատչելիության սկզբունքը:

Բարձրագույն դատական խորհուրդն անհիմն է համարում նաև դատավորի պնդումն առ այն, որ հայցվորի ներկայացուցչի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին 30.10.2018թ. տրված հաղորդման 3.4. կետում (էջ 6) հայցվոր կողմը Դատարանի կողմից 16.07.2018թ. և 31.08.2018թ. կայացված որոշումներն իրավական առումով հիմնավոր է համարել, այսինքն՝ դրանց իրավաչափությունը որևէ կերպ չի վիճարկել:

Բարձրագույն դատական խորհուրդը փաստում է, որ թեև հայցվորի կողմից վերոնշյալ երկու որոշումները չեն վիճարկվել, այնուամենայնիվ, նշվածից չի բխում, որ հիմնավոր է այն հանգամանքը, որ ամեն վերադարձի հիմքին Դատարանն անդրադարձել է առանձին որոշմամբ:

Բարձրագույն դատական խորհուրդը հիմնավոր չի համարում նաև Դատավորի փաստարկն առ այն, որ հայցադիմումի մեջ պետք է նշվեր հայցվորի ծանուցման հասցեն կամ հաշվառման և ծանուցման հասցեների համընկնելու հանգամանքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պարզ ընթերցման արդյունքում անգամ ակնհայտ է դառնում, որ հայցվորի հաշվառման կամ գտնվելու վայրի հասցեն նշելը պարտադիր պայման է, մինչդեռ ծանուցման հասցե նշելը հայցվորի իրավունքն է, որը կարող է իրացվել այն դեպքում, երբ վերջինս ցանկանում է դատական ծանուցումները և այլ դատավարական փաստաթղթերն ստանալ իր հաշվառման վայրից տարբերվող հասցեում: Նշվածն ուղղակիորեն բխում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի բովանդակությունից, որի 1-ին մասն ամրագրում է. «Դատական ծանուցագիրն ուղարկվում է **դատավարության մասնակցի նշած հասցեով (ծանուցման հասցե)**, իսկ 5-րդ մասում սահմանվում է. «Եթե դատավարության մասնակիցը հրաժարվել է ստանալ ծանուցագիրը, կամ **նրա հայտնած հասցեով** ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է դատարան (...), ապա դատարանը դատական ծանուցագիրն ուղարկում է՝ 1) ֆիզիկական անձի դեպքում **այդ անձի հաշվառման**, աշխատանքի վայրի հայտնի հասցեով (...): Նշված նորմերի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համադրված

վերլուծությունից ակնհայտորեն բխում է, որ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելու պահի դրությամբ դատարանը որպես հայցվորի ծանուցման հասցե պետք է դիտարկի նրա կողմից հայցադիմումում նշված հաշվառման վայրի հասցեն, իսկ հաշվառման վայրի հասցեից տարբերվող այլ հասցե հայցադիմումում նշելու պարագայում՝ այդ հասցեն: Ընդ որում, եթե հաշվառման վայրի հասցեից տարբերվող այլ հասցեով ուղարկված դատական ծանուցագիրը վերադարձվում է դատարան, ապա այդ հասցեով ծանուցումն ստանալու հայցվորի իրավունքը և դատարանի՝ դրան համապատասխանող պարտականությունը, ըստ էության, դադարում են, իսկ դատական ծանուցագիրը, ի թիվս այլ հասցեների, ուղարկվում է նաև հայցվորի հաշվառման վայրի հասցեով՝ ապահովելով դատավարական համապատասխան գործողության վերաբերյալ կողմի պատշաճ ծանուցումը:

Բարձրագույն դատական խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ, ծանուցման հասցե նշելու իրավունքի հետ մեկտեղ, օրենսդիրն ամրագրել է հայցվորի հաշվառման վայրի հասցեն հայցադիմումում նշելու իմպերատիվ պահանջ՝ նպատակ հետապնդելով կանխելու հայցադիմումի մեջ հաշվառման վայրից տարբերվող այլ ծանուցման հասցե նշելու՝ կողմի իրավունքի հնարավոր չարաշահումները:

Ինչ վերաբերում է հաշվառման և ծանուցման հասցեների համընկնելու հանգամանքը հայցադիմումում նշված չլինելու վերաբերյալ Դատավորի պատճառաբանություններին, ապա Բարձրագույն դատական խորհուրդն անհրաժեշտ է համարում փաստել, որ նման օրենսդրական պահանջ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ընդհանրապես նախատեսված չէ: Բացի դրանից, Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ քաղաքացիադատավարական օրենսդրությունը դատարանի առջև չի դնում հայցվորի ծանուցման հասցեն նման եղանակով բացահայտելու խնդիր. դատավարության մասնակիցների ծանուցման հասցեն բացահայտելու միակ միջոցը հայցադիմումում նրանց հաշվառման (գտնվելու) վայրի հասցեների մասին տեղեկություններ նշելու իմպերատիվ պահանջն է: Դատական ծանուցումները և այլ դատավարական փաստաթղթերն իր հաշվառման վայրից տարբերվող հասցեում ստանալու իրավունքից չօգտվելու պարագայում հայցվորի վրա չի կարող դրվել այդ իրավունքից չօգտվելու հանգամանքը նշելու կամ դրա շար-

Ժառիթները ներկայացնելու լրացուցիչ բեռ, քանի որ այն որևէ կերպ չի կարող խոչընդոտել վարույթի կանոնավոր ընթացքը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ելնելով վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից՝ կարելի է եզրահանգել, որ Դատավորը վերոնշյալ, այն է՝ ծանուցման հասցեն նշված չլինելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու որոշումը կայացնելիս թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանություն՝ հաշվի չի առել այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ դատական ծանուցումների ինստիտուտին նվիրված 9-րդ գլխի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում հայցվորի մոտ իրավաչափորեն ձևավորվել է տպավորություն, որ դատարանը հայցադիմումը վերադարձնելու որոշման հիմքում դրել է «հնարված և օրենսդրական պահանջների շրջանակից դուրս ներկայացված» հիմք՝ «հետապնդելով գործից «ազատվելու» նպատակ»:

Ինչ վերաբերում է 2018 թվականի հուլիսի 16-ի հայցադիմումը վերադարձնելու որոշմանը, որի հիմքում դրվել է հայցադիմումին կից էլեկտրոնային կրիչի համապատասխան թվով օրինակները չներկայացնելու փաստը, և 2018 թվականի օգոստոսի 31-ի հայցադիմումը վերադարձնելու որոշմանը, համաձայն որի՝ պատասխանողի անվանումը թերի է նշվել, Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ Դատարանը պարտավոր էր դրանցով արձանագրված թերություններին անդրադառնալ մեկ որոշման շրջանակներում, ինչն սկզբնա-

պես՝ հայցադիմումը դեռ առաջին անգամ վերադարձնելու մասին որոշմամբ, հայտնի է եղել Դատարանին: Ընդ որում, Բարձրագույն դատական խորհուրդն անհիմն է համարում Դատավորի պնդումն այն մասին, որ հայցադիմումներում առկա թերություններն ակնհայտ չեն եղել, քանի որ պատասխանող կազմակերպության անվանումը սխալ նշելը հայտնի է դարձել Դատարանին հայցադիմումը կրկին ներկայացնելու ժամանակ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի, 125-րդ հոդվածի 1-ին մասի և 127-րդ հոդվածի 3-րդ մասի համադրված վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս դատարանը պարտավոր է ստուգել հայցադիմումը վերադարձնելու բոլոր հիմքերի առկայությունը, իսկ այդպիսիք բացահայտելու պարագայում կայացնել հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում՝ դրանում նշելով հայցադիմումը վերադարձնելու բոլոր հիմքերը: Այն իրողությունը, որ պատասխանող կազմակերպության անվանումը սխալ նշելու փաստը հայտնի է դարձել Դատարանին հայցադիմումը կրկին ներկայացնելու ժամանակ, ընդամենը թույլ է տալիս եզրակացնել, որ 2018 թվականի հուլիսի 16-ի հայցադիմումը վերադարձնելու որոշումը կայացնելիս Դատարանն անհրաժեշտ ծավալով չի ուսումնասիրել ներկայացված հայցադիմումը՝ այն վերադարձնելու մասին որոշում կայացնելու համար բավարարվելով բացահայտված ընդամենը մեկ թերությամբ, այն պարագայում, երբ հայցադիմումը պարունակում էր նաև այլ թերություն:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի այն խախտումը, որը հեղինակագրվում է դատական իշխանությունը: Կոպիտ է նաև դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակագրվում է դատական իշխանությունը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է: Ուստի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված նորմի պայմանների, այն է՝ խախտումը պետք է լինի ակնհայտ և կոպիտ, միաժամանակյա առկայությունը պարտադիր է:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Խորհուրդն արձանագրում է, որ Դատարանի դատավոր Արա Կուբանյանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտումներն ակնհայտ են, քանի որ դրանց առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Դատարանի դատավոր Արա Կուբանյանի կողմից թույլ տրված խախտումները համարվում են նաև կոպիտ, քանի որ չեն բխել իրավունքի գերակայության

սկզբունքի էությունից, հանգեցրել են անձի՝ վերոնշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների սահմանափակմանը, ոչ իրավաչափ որոշման կայացմանը և որպես հետևանք՝ դատական իշխանության հեղինակագրկմանը: Մասնավորապես, Դատավորի կողմից թույլ տրված խախտումների արդյունքում խախտվել է անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված դատական պաշտպանության իրավունքը, 63-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված՝ արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքը: Արդյունքում՝ չի երաշխավորվել Սահմանադրության 80-րդ հոդվածով ամրագրված՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ դատավոր Արա Կուբանյանն արդարադատություն իրականացնելիս թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ, ինչն էլ հիմք է հանդիսանում վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

Բարձրագույն դատական խորհուրդն անհիմն է համարում Դատավորի դիրքորոշումն առ այն, որ սնանկության դատարանի դատավոր Արա Կուբանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է մերժման, քանի որ վերջինիս՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի լիազորությունները դադարեցվել են:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 156-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը մերժում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը, եթե առկա է սույն օրենսգրքի (...) 147-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված որևէ հիմք:

Սույն օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ վարույթ հարուցած մարմինը կարճում է կարգապահական

վարույթը, եթե դադարեցվել կամ դադարել են դատավորի լիազորությունները:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատավոր է Վճռաբեկ, վերաքննիչ, առաջին ատյանի դատարաններում դատավորի պաշտոնում Սահմանադրությամբ և սույն օրենսգրքով սահմանված կարգով նշանակված անձը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Արա Կուրանյանը Հանրապետության նախագահի 2018 թ. օգոստոսի 10-ի հրամանագրով նշանակվել է սնանկության դատարանի դատավոր: Բարձրագույն դատական խորհրդի 26.12.2018թ. որոշմամբ արձանագրվել է, որ սնանկության դատարանի դատավոր նշանակվելու կապակցությամբ Արա Կուրանյանի լիազորություններն օրենքի ուժով դադարել են որպես Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ դատավորի՝ որպես պետաիշխանական լիազորություններով օժտված պաշտոնատար անձի՝ լիազորությունների դադարեցման և դադարման հիմքերն սպառիչ թվարկված են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի համապատասխանաբար 159-րդ հոդվածի 2-րդ և 160-րդ հոդվածի 1-ին մասերում, որոնցից և ոչ մեկը տվյալ դեպքում կիրառելի չէ դատավոր Արա Կուրանյանի նկատմամբ: Հետևաբար, Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ դատավոր Արա Կուրանյանի՝ որպես դատավորի լիազորությունները չեն կարող համարվել դադարեցված կամ դադարած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետի իմաստով, քանի որ 2018 թ. օգոստոսի 10-ին սնանկության դատարանի դատավոր նշանակվելու փաստի ուժով նրա պետաիշխանական գործառույթի բնույթը չի փոխվել, նա շարունակում է պաշտոնավարել որպես դատավոր, քննել իր վարույթում գտնվող սնանկության և դրանց հետ կապված քաղաքացիական գործերը, նրա վրա տարածվում են դատավորի վարքագծի կանոնները, ինչպես նաև դատավորի կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները:

Խորհուրդն անհրաժեշտ է համարում նշել, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական

օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքը կիրառելի է դատավորի լիազորություններն ընդհանրապես դադարելու կամ դադարեցվելու դեպքում, իսկ մեկ դատարանի դատավորի պաշտոնից մեկ այլ դատարանի դատավորի պաշտոնում նշանակվելը դատավորի լիազորությունները դադարեցված կամ դադարած համարելու հիմք չէ:

Ինչ վերաբերում է դատավոր Արա Կուրբանյանի դիրքորոշմանն առ այն, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշումն օրենքով սահմանված եռօրյա ժամկետում իրեն չուղարկելու փաստը հանդիսանում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու հիմք, Բարձրագույն դատական խորհուրդն անհրաժեշտ է համարում վերահաստատել նախկինում արտահայտած իր դիրքորոշումը, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 148-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ժամկետը չի կարող գնահատվել որպես դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի ընթացքի համար սահմանված ժամկետ, քանի որ այն չի վերաբերում կարգապահական վարույթը հարուցող մարմնի կողմից վարույթ հարուցելուն և հարուցված վարույթի տևողությանը (տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 11.01.2019 թ. թիվ ԲԴԽ-60-Ո-Կ-01 որոշումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արայիկ Մելքունյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ): Ավելին՝ տվյալ դեպքում կարգապահական վարույթ հարուցելու որոշումն ուղարկելու եռօրյա ժամկետի խախտումը որևէ բացասական հետևանք չի առաջացրել ինչպես հաղորդում ներկայացրած անձի և դատավորի, այնպես էլ կարգապահական վարույթի ընթացքի համար սահմանված ժամկետների պահպանման համար: Հետևաբար, վարույթ հարուցած մարմնի կողմից նշված ժամկետի խախտումը չի կարող դիտարկվել որպես դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու հիմք:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է նաև, որ սնանկության դատարանի դատավոր Արա Կուրբանյանը կարգապահական խախտում թույլ տալու պահին կարգապահական տույժ չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 149-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 155-րդ հոդվածով Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդությունը բավարարել: Մնանկության դատարանի դատավոր Արա Կուբանյանին հայտարարել խիստ նկատողություն:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԱՆԴԱՄՆԵՐ՝

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ԲԵԿԹԱԾՅԱՆ
Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Լ. ՄԵԼԻՔՅԱՆՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ԶԻՉՈՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ք.Երևան
07.02.2019թ.

ԲԴԽ-5-Ո-Կ-03

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
ՈՒՒԲԵՆ ԱՓԻՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ.**

*նախագահությամբ՝
մասնակցությամբ՝
անդամներ*

Գ. Հարությունյանի,

*Ա. Բեկթաշյանի,
Գ. Դանիելյանի,
Ա. Խաչատրյանի,
Հ. Հովհաննիսյանի,
Լ. Մելիքջանյանի,
Ս. Մեղրյանի,
Ա. Մխիթարյանի,
Ս.Զիչոյանի,*

դատավոր

Ռ.Ափինյանի,

*Դատավորների ընդհանուր ժողովի
կարգապահական հարցերի
հանձնաժողովի նախագահ*

Մ.Պապոյանի,

*Դատավորների ընդհանուր ժողովի
կարգապահական հարցերի
հանձնաժողովի անդամ*

Ա. Ավագյանի,

քարտուղարությամբ՝

Շ. Վարդանյանի,

դռնփակ նիստում, քննության առնելով Դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ Կ-9/2018 որոշմամբ ներկայացված միջնորդությունը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) դատավոր Ռուբեն Ափինյանին (այսուհետ՝ Դատավոր) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթը փաստաբան Լուսինե Սահակյանի 2018 թվականի նոյեմբերի 13-ի հաղորդումն է՝ հասցեագրված Հանձնաժողովին:

Հաղորդման մեջ մասնավորապես նշվել է, որ թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով նախագահող դատավոր Ռուբեն Ափինյանի կողմից թույլ են տրվել դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ստեղծել կողմնակալ և խտրական վերաբերմունքի տպավորություն, կասկածի տակ են դնում Դատավորի անաչառությունը, հանգեցրել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 8-րդ և 12-րդ կետերով, 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված վարքագծի կանոնների կոպիտ խախտման:

Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ Կ-9/2018 որոշմամբ Դատարանի դատավոր Ռուբեն Ափինյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Հարուցված կարգապահական վարույթի ընթացքում Դատավորը ներկայացրել է գրավոր բացատրություն:

2. Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը.

Հարուցված կարգապահական վարույթի ընթացքում ձեռք բերված թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործի նյութերի, ինչպես նաև Դատավորի ներկայացրած բացատրությունների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարել, որ դատավոր Ռուբեն Ափինյանն իր վարքագծով դրսևորել է կողմնակալ և խտրական մոտեցում, կասկածի տակ է դրել դատարանի անկախությունն ու անաչառությունը, որի արդյունքում նաև հեղինակագրկվել է դատական իշխանությունը: Մասնավորապես, Դատավորը կատարել է նշագրում 2018 թվականի սեպտեմբերի 14-ի վճռի՝ հոկտեմբերի 15-ին օրինական ուժի մեջ մտնելու մասին, մինչդեռ հոկտեմբերի 15-ին՝ մինչև ժամը 24:00-ն առաջին ատյանի դատարանի վճիռը չէր կարող ստանալ օրինական ուժ, և, հետևապես, այդ օրը մինչև կեսգիշեր եղել է վերաքննիչ բողոք ներկայացնելու հնարավորություն, ընդ որում, բողոքը ներկայացվել է այդ ժամկետում:

2018 թվականի հոկտեմբերի 18-ին, առանց դատական նիստ հրավիրելու, Դատարանի որոշմամբ բավարարվել է հայցի ապահովման միջոցները վերացնելու վերաբերյալ միջնորդությունը, ինչն ուղղակիորեն հակասում է տվյալ գործի նկատմամբ կիրառելի ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին: Վերջինիս հետևանքով խախտվել են նաև ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 6-րդ հոդվածի պահանջները, այն է՝ քաղաքացիական դատավարության իրականացումը կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա: Նշված որոշումից հետո անհապաղ տրվել է կատարողական թերթ:

Նույն օրը՝ հոկտեմբերի 18-ին, հոկտեմբերի 15-ին վերաքննիչ քաղաքացիական դատարան ներկայացված և հոկտեմբերի 17-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացված վերաքննիչ բողոքի պատճենը հանձնվել է դատավոր Ռուբեն Ափինյանի կազմին՝ վերջինիս պնդմամբ նույն օրվա երեկոյան՝ հայցի ապահովման միջոցները վերացնելու վերաբերյալ միջնորդության բավարարման մասին որոշման կայացումից և դրա հիման վրա կատարողական թերթ տալուց հետո: Սակայն հանձնաժողովն արձանագրել է, որ բողոքի պատճենն ստանալուց հետո դատավոր Ռուբեն Ափինյանը չի ձեռնարկել որևէ գործողություն վճռի կատարումը կասեցնելու նպատակով:

Ի թիվս վերոշարադրյալի՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ին կայացված «Վրիպակն ուղղելու մասին» որոշումը կողմին առաքելու նպատակով փոստին է հանձնվել 2018 թվականի հոկտեմբերի 31-ին:

Նշվածից, ըստ Հանձնաժողովի, հետևում է, որ դատավոր Ռուբեն Ափինյանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի իրավակարգավորումների պահանջը, ժամկետից շուտ կատարել է վճռի օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ մակագրություն, առանց դատական նիստ հրավիրելու կայացրել է հայցի ապահովումը վերացնելու մասին որոշում, ինչպես նաև Դատարանի որոշումը կողմին է ուղարկվել սահմանված ժամկետի խախտմամբ՝ այդպիսով թույլ տալով դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումներ, որոնք դատավարության մասնակցի մոտ ստեղծել են կողմնակալ և խտրական վերաբերմունքի տպավորություն, ինչպես նաև կասկածի տակ են դրել դատարանի անկողմնակալությունն ու անաչառությունը:

Հանձնաժողովը, վկայակոչելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասը, 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 8-րդ կետերը, 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 142-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը, 147-րդ հոդվածի 5-ին մասը, 148-րդ հոդվածի 1-ին մասը, գտել է, որ դատավոր Ռուբեն Ափինյանը կողմնակալ, խտրական և դատարանի անկողմնակալությունն ու անաչառությունը կասկածի տակ դնող վարքագծով կոպիտ խախտել է դատավորի վարքագծի կանոնները՝ այդպիսով հեղինակագրկելով դատական իշխանությունը, ինչը կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության, որպիսի պայմաններում, Հանձնաժողովի գնահատմամբ, առկա է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:

3. Դատավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ.

Հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ դատավոր Ռուբեն Ափինյանը 2018 թվականի դեկտեմբերի 14-ին Հանձնաժողովին ներկայացրել է գրավոր բացատրություն, իսկ 2018 թվականի հունվարի 21-ին՝ պարզաբանում Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդին:

Գրավոր բացատրության մեջ Ռուբեն Ափինյանը նշել է, որ դատարանի կողմից վաղօրոք նշանակված դատական նիստերից մեկը վերանշանակվել է ավելի շուտ ժամկետում՝ հայցվոր Արսեն Զիչյանի միջնորդության հիման վրա՝ հիմքում դնելով գործի քննությունը ողջամիտ ժամկետներում քննելու սկզբունքը: Հայցվորը պատրաստակամություն է հայտնել պատասխանողին ուղարկվելիք դատական ծանուցումները մասնավոր սուրհանդակային ընկերության միջոցով ուղարկելու և դրա վերաբերյալ պատշաճ ապացույց Դատարանին ներկայացնելու կապակցությամբ: Ելնելով նույն գործի քննությունը ողջամիտ ժամկետներում քննելու սկզբունքից՝ Դատարանը հայցվորին է տրամադրել պատասխանողի վերաբերյալ ծանուցումները, իսկ նշված հասցեով պատասխանողին առաքելու վերաբերյալ տեղեկանքները ներկայացվել են դատարանին: Դատավոր Ռ. Ափինյանը շեշտում է նաև, որ դատավարական ծանուցումները գործին մասնակցող **ան-**ձանց ուղարկելու եղանակի սահմանափակում որևէ նորմով կարգավորված չէ: Իսկ ինչ վերաբերում է Արսեն Զիչյանին ուղարկված ծանուցումների Դատարան վերադարձին և վերջինիս դատական նիստերին մասնակցելուն, ապա, ըստ Դատավորի՝ յուրաքանչյուր գործով datalex.am կայքում տեղադրվում է հաջորդ դատական նիստի անցկացման ժամի և վայրի վերաբերյալ տեղեկատվություն: Այսինքն՝ բացի դատարանի կողմից ծանուցում ուղարկելուց, գործին մասնակցող անձինք զրկված չեն գործով նշանակված դատական նիստերի անցկացման վայրի և ժամանակի վերաբերյալ datalex.am կայքից տեղեկանալու հնարավորությունից:

Անդրադառնալով այն հանգամանքին, որ փաստաբան Լուսինե Սահակյանը հրապարակումից մոտ 20 օր հետո է ծանոթացել գործի նյութերին, Դատավորը հայտնել է, որ գործով վճռի հրապարակումից հետո՝ նույն օրը, դատավորի օգնականի և դատական նիստերի քարտուղարի մասնակցությամբ Լուսինե Սահակյանը ծանոթացել է գործի նյութերին: Ընդ որում, այդ պահին վերջինիս մոտ առկա չի եղել համապատասխան լիազորագիր: Այնուհետև Լուսինե Սահակյանը դիմել է, ներկայացել դատարան և կրկին անգամ ծանոթացել է գործի նյութերին: Իսկ ինչ վերաբերում է վճռում թույլ տրված վրիպակն ուղղելու մասին որոշմանը, ապա Դատարանի կողմից այն կայացվել և ուղարկվել է գործին մասնակցող անձանց:

Դատավորն անդրադարձել է նաև փաստաբանի կողմից նշված այն հանգամանքին, որ դատավոր Ռուբեն Ափինյանը,

14.09.2018թ. կայացնելով նշված վճիռը, իբր թույլ տալով «վրիպակ», վճռի եզրափակիչ մասում նշել է, թե այն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Այդ «վրիպակը» հիմք ընդունելով՝ Արսեն Զիջանը, 18.09.2018թ. և 20.09.2018թ. կոտրելով կայացված վճռով իր սեփականությունը ճանաչված Նալբանդյան 7 շենքի 1 և 1ա բնակարանների մուտքի փականները, մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ ապօրինի մուտք է գործել այդ հասցեներում տեղակայված «Բագին» փաստաբանական գրասենյակ, որտեղից հափշտակել են դրամական միջոցներ և գույք: Փաստի առթիվ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում քննվում է քրեական գործ: Այս փաստարկի կապակցությամբ դատավորը հայտնել է, որ դատարանը վճռի հրապարակումից հետո հայցվոր կողմին վճիռը տրամադրել է երկրորդ կնիքով չվավերացված վիճակում, որպիսի պայմաններում վճիռը չի կարող համարվել օրինական ուժի մեջ մտած:

Դատավորն իր բացատրությամբ անդրադարձել է նաև վճռի կայացումից հետո վրիպակն ուղղելու պահանջով 27.09.2018թ. մուտքագրված դիմումի քննարկման առնչությամբ դիմումատուի փաստարկներին և հայտնել, որ դատավարական փաստաթղթերը փոստով առաքելու ժամկետների վերաբերյալ դատավորը որևէ առնչություն չունի, այնուամենայնիվ, նշվածը կարող է հանդիսանալ դատավորի աշխատակազմի գերծանրաբեռնվածության հետևանք:

Օրենքով սահմանված ժամկետում կայացված վճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ բողոքը ներկայացնելուց հետո դատավոր Ռուբեն Ափինյանը 14.09.2018թ. կայացված վճռի վրա կատարել է մակագրություն՝ իբր դրա օրինական ուժի մեջ մտնելու մասին և դատական ակտն անհապաղ, առձեռն տրամադրել է Արսեն Զիջանին՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ դատական ակտը բողոքարկված է, հետևաբար և չի ստացել օրինական ուժ: Այդ գրառումը Ռ.Ափինյանը կատարել է 15.10.2018թ. (երկուշաբթի), այն պարագայում, երբ կողմն այդ օրը մինչև կեսգիշեր դեռ ժամկետ է ունեցել ներկայացնելու վերաքննիչ բողոք:

Վերոգրյալի կապակցությամբ Դատավորը հայտնել է, որ թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքը Դատարանի կազմին հանձնվել է 18.10.2018 թվականին՝ ժամը 17:00-ի սահմաններում: Datalex.am կայքում արտացոլված

Է վերաքննիչ բողոքի ներկայացման ժամկետը՝ 17.10.2018 թվականին, և, նկատի ունենալով, որ իր նստավայրը հանդիսանում է Քանաքեռ նստավայրը, նշված բողոքն իր կազմին հանձնվել է 18.10.2018 թվականին՝ ժամը 17:00-ի սահմաններում՝ դատարանի ցրիչների միջոցով: Մինչ այդ Արսեն Չիչյանի կողմից ներկայացված է եղել վճիռը երկրորդ կնիքով հաստատելու վերաբերյալ միջնորդություն, ուստի հիմք ընդունելով այն, որ վճիռը կայացվել է 14.09.2018 թվականին, 15.09.2018 թվականին Դատարանի կողմից կատարվել է նշում վճիռն օրինական ուժի մեջ մտնելու մասին:

Հայցի ապահովման միջոցների վերացման առնչությամբ Դատավորը հայտնել է, որ հայցի ապահովման միջոցները վերացվել են հայցվորի համապատասխան միջնորդության հիման վրա, և նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործով հայցի ապահովման միջոց կիրառվել էր հենց հայցվորի միջնորդությամբ, վճիռը 15.10.2018 թվականին մտել էր օրինական ուժի մեջ, և դատարանի կազմին դեռևս վերաքննիչ բողոքը չէր հանձնվել, դատարանն առանց դատական նիստ հրավիրելու կայացրել է որոշում հայցի ապահովման միջոցները վերացնելու վերաբերյալ: Ընդ որում, վերաքննիչ բողոքի վերաբերյալ դատավորի կազմին հայտնվել է որոշման կայացման օրը՝ երեկոյան, իսկ որոշումն Արսեն Չիչյանն առձեռն ստացել է օրվա առաջին կեսին:

Դատավորը նշել է նաև, որ դատարաններում առկա էր ձևավորված պրակտիկա, որ հայցի ապահովման միջոցները վերացվում էին առանց դատական նիստ հրավիրելու միայն այն դեպքում, երբ դատարանի կողմից հայցի ապահովման միջոցը կիրառելու վերաբերյալ որոշման համար հենց նույն միջնորդող կողմից ներկայացվում էր հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդություն, և հատկանշական է, որ 09.04.2018 թվականի գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նշված պրակտիկան ստացել է իրավական կարգավորում:

Ամփոփելով վերոգրյալը՝ դատավոր Ռուբեն Ափինյանը հայտնել է, որ փաստաբան Լուսինե Սահակյանի դիմումը գտնում է անհիմն, և դրանում հիմքեր չկան եզրահանգելու, որ դատավոր Ռ.Ափինյանն իրականացրել է գործողություններ, դրսևորել է վարքագիծ, որոնք վկայում են կողմնակալության, խտրականության դրսևորման մասին և կասկածի տակ են դնում դատավորի անաչառությունը, նպաստում են դատական իշխանության վարկաբեկմանը:

2019 թվականի հունվարի 21-ին Բարձրագույն դատական խորհրդին ներկայացված պարզաբանման մեջ Դատավորը վերահաստատել է Հանձնաժողովին ներկայացված գրավոր բացատրության մեջ արտահայտված իր դիրքորոշումները: Նաև անդրադառնալով վճռի կատարումը կասեցնելու նպատակով որևէ գործողություն չիրականացնելու փաստարկին՝ Դատավորը նշել է, որ վճռի կատարումը կասեցնելու նպատակով որևէ գործողություն կատարելու գործառույթ, իրավունք կամ պարտականություն դատավորը չունի:

Խորհրդի նիստում Դատավորն ընդունեց թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով վարույթի ընթացքում թույլ տրված բացթողումները և դատավարական ժամկետների խախտումները՝ դրանք պատճառաբանելով իր և իր աշխատակազմի գերծանրաբեռնվածությամբ:

4. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության համար Էական նշանակություն ունեցող հանգամանքները.

Բարձրագույն դատական խորհուրդը հիմք է ընդունում արձանագրված հետևյալ հանգամանքները.

1. Արսեն Բենիկի Չիչյանի (այսուհետ նաև՝ Հայցվոր) լիազորված անձ Վահե Արմենակյանը 28.02.2014 թվականին դիմել է դատարան ընդդեմ Սերոփ Գորիոն Դեր-Բողոսյանի՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, այն է՝ Հայցվորի հետ կնքել նվիրատվության պայմանագիր և նրան նվիրել Երևանի Նալբանդյան փողոցի 7-րդ շենքի թիվ 1 և թիվ 1ա հասցեներում գտնվող անշարժ գույքերը:

2. Թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործը 18.01.2018 թվականին մակագրվել և 19.01.2018 թվականին հանձնվել է դատավոր Ռուբեն Ափինյանին:

3. Թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով վճիռը կայացվել է 2018 թվականի սեպտեմբերի 14-ին, որի եզրափակիչ մասում նշվել է, որ այն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. 2018 թվականի հոկտեմբերի 1-ին կայացվել է «Վրիպակն ուղղելու մասին» որոշում:

5. Վերոնշյալ որոշումը կողմին առաքելու նպատակով փոստին է հանձնվել 2018 թվականի հոկտեմբերի 31-ին:

6. Դատավոր Ռուբեն Ափինյանի կողմից կատարվել է նշագրում 2018 թվականի սեպտեմբերի 14-ի վճռի՝ հոկտեմբերի 15-ին օրինական ուժի մեջ մտնելու մասին:

7. 2018 թվականի հոկտեմբերի 15-ին պատասխանողի անունից վերաքննիչ քաղաքացիական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք:

8. 2018 թվականի հոկտեմբերի 17-ին ներկայացված վերաքննիչ բողոքի պատճենն ստացվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

9. Նույն օրը դատարան է ստացվել հայցվոր Արսեն Զիչյանի դիմումը՝ հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ:

10. 2018 թվականի հոկտեմբերի 18-ին, առանց դատական նիստ հրավիրելու, Դատարանի որոշմամբ բավարարվել է հայցի ապահովման միջոցները վերացնելու վերաբերյալ միջնորդությունը, և դրա հիման վրա նույն օրը տրվել է կատարողական թերթ:

5. Բարձրագույն դատական խորհրդի

պատճառաբանություններն ու եզրահանգումները.

Քննարկելով դատավոր Ռուբեն Ափինյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը, լսելով Հանձնաժողովի անդամ Ա. Ավագյանի գեկույցը, Դատավորի բացատրությունը, ուսումնասիրելով վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը,

որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի այն խախտումը, որը հեղինակագրվում է դատական իշխանությունը: Կոպիտ է նաև դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակագրվում է դատական իշխանությանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ (...) արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

Դատավոր Ռուբեն Ափինյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար Բարձրագույն դատական խորհուրդն էական է համարում հետևյալ հարցադրումները.

1. արդյո՞ք թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով պահպանվել է հայցի ապահովման միջոցը վերացնելու դատավարական կարգը,

2. արդյո՞ք թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը վտանգում կամ կասկածի տակ է առնում դատավորի անկախությունը և անաչառությունը կամ ողջամիտ անկողմնակալ դիտորդի մոտ կողմնակալ կամ խտրական վարքագծի տպավորություն է ստեղծում՝ հանգեցնելով դատավորի վարքագծի կանոնների խախտման:

2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 439-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող գործերն առաջին ատյանի դատարանում քննվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավա-

րության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով: Բարձրագույն դատական խորհուրդը փաստում է, որ թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործն առաջին ատյանի դատարանում քննվել է մինչև 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելը, ուստի այն պետք է քննվեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի նորմերով: Հետևաբար՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով արձանագրված և դատավոր Ռուբեն Ափինյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության հիմքում դրված դատավարական իրավունքի նորմերի ենթադրյալ խախտումները, որոնք կողմի մոտ ստեղծել են կողմնակալ վարքագծի տպավորություն, պետք է գնահատվեն՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) դրույթները:

ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման վերացման հարցը լուծվում է միջնորդությունն ստանալուց հետո՝ **տասնօրյա ժամկետում, դատական նիստում:** Գործին մասնակցող անձինք պատշաճ ձևով տեղեկացվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ հայցի ապահովման վերացման հարցի քննարկման համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման վերացման հարցի քննարկման արդյունքներով կայացվում է որոշում:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է հայցի ապահովման դատավարական ինստիտուտի սահմանման օրենսդրական նպատակին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը (տե՛ս *Կատավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Ալնես Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3511/05/10 գործով Վճռաբեկ դատարանի 27.04.2011 թվականի որոշումը*):

Այսպիսով, հայցի ապահովման դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով կանխելու հնարավոր բացասական հետևանքները և պաշտպանելու հայցվորի (ապագա հնարավոր պահանջատիրոջ) իրավունքները և օրինական շահերը: Հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի նպատակը՝ օրենսդիրը սահմանել է, որ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը, ինչը դատական ակտի կատարման կարևորագույն երաշխիք է, իսկ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում՝ մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը (տե՛ս «Ինտեկտրանկ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, երրորդ անձ Իգարեյլա Վանյանի թիվ ՎԴ/2127/05/11 գործով Վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության հիման վրա Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ դատարանը պարտավոր է հայցի ապահովման վերացման հարցը լուծել միջնորդությունն ստանալուց հետո՝ **տասնօրյա ժամկետում, դատական նիստում**, մինչդեռ սույն գործով դատավոր Ռուբեն Ափինյանի կողմից հայցի ապահովման վերացման վերաբերյալ միջնորդությունը քննվել և որոշում է կայացվել առանց դատական նիստ հրավիրելու:

ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Համաձայն նույն օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դատավարական գործողությունը կարող է կատարվել մինչև սահմանված ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:

Վարույթի նյութերի, Դատավորի բացատրությունների և պարզաբանումների հիման վրա Բարձրագույն դատական խորհուրդը հաստատված է համարում, որ 2018 թվականի հոկտեմբերի 18-ին առանց դատական նիստ հրավիրելու դատարանի որոշ-

մամբ բավարարվել է հայցվոր Արսեն Չիչյանի հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ 15.10.2018թ. միջնորդությունը, որի հիման վրա նույն օրը տրվել է կատարողական թերթ:

2018 թվականի հոկտեմբերի 15-ին վերաքննիչ քաղաքացիական դատարան ներկայացված և հոկտեմբերի 17-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ստացված վերաքննիչ բողոքի պատճենը հոկտեմբերի 18-ին հանձնվել է դատավոր Ռուբեն Ափինյանի կազմին:

Բարձրագույն դատական խորհուրդը հաստատված է համարում, որ դատավորը հայցի ապահովման միջոցը վերացնելու որոշումը կայացրել է առանց դատական նիստ հրավիրելու, ինչպես նաև նրա կողմից «Վրիպակը ուղղելու մասին» որոշումը կողմերին հանձնվել է դատավարական ժամկետների խախտմամբ:

Բարձրագույն դատական խորհուրդն անհիմն է համարում դատավոր Ռուբեն Ափինյանի պատճառաբանություններն առայն, որ կատարված խախտումները պայմանավորված են եղել դատարանի գերծանրաբեռնվածությամբ:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ երկրորդ կնիքով ու ստորագրությամբ դատական ակտը վավերացնելիս դատավորի կողմից հաշվի չի առնվել նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2007թ. դեկտեմբերի 21-ի թիվ 231 որոշման մեջ 2011թ. հուլիսի 21-ի ԴՆԽ թիվ 08Լ որոշմամբ կատարված լրացմամբ սահմանված կարգը՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվելուց և այն օրինական ուժի մեջ մտնելու համար օրենքով սահմանված ժամկետն ավարտվելուց 3 օր հետո բողոք չստացվելու դեպքում դատական ակտի վրա համապատասխան նշում կատարելու և ստորագրությամբ ու կնիքով վավերացնելու մասին:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը պարտավոր է պահպանել սույն օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները: Վարքագծի կանոնները չպահպանելը սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կարող է հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է գերծ մնալ

այնպիսի հայտարարություն անելուց կամ վարքագիծ դրսևորելուց, որը վտանգում կամ կասկածի տակ է առնում դատավորի կամ դատարանի անկախությունը և անաչառությունը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է լինել անաչառ և գերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց կամ ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ նման տպավորություն ստեղծելուց:

Ըստ Էության, դատավորի կողմից վերոհիշյալ կանոնների խախտումները կատարվել են խախտված կանոնների օրենսդրական հիմքերի մասին իրազեկվածության պայմաններում, սակայն խախտումը պատճառաբանվել է ծանրաբեռնվածությամբ, ինչպես նաև, իր գնահատմամբ, պրակտիկայում ձևավորված, սակայն օրենքին հակասող ընթացակարգերով, որը կարող է գնահատվել որպես կոպիտ անփութություն:

Ընդ որում, խախտման հետևանքն այն է, որ կասկածի տակ է դրվել դատավորի անկախությունն ու անաչառությունը, ինչպես նաև տեղի են ունեցել արտադատական գործընթացներ, որոնք հանգեցրել են կողմերի սեփականության իրավունքի խաթարմանը:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբեն Ափինյանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտումներն ակնհայտ են, քանի որ դրանց առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Բարձրագույն դատական խորհրդի գնահատմամբ նման խախտումները վտանգում են դատավորի և դատարանի անկախությունը և անաչառությունը, ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ստեղծել դատավորի կողմնակալ կամ խտրական վերաբերմունքի տպավորություն, ուստի դրանք անթույլատրելի են:

Բարձրագույն դատական խորհուրդը միաժամանակ արձանագրում է, որ դատավոր Ռուբեն Ափինյանը խախտումը կատարելու պահին չի ունեցել կարգապահական տույժ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 149-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 155-րդ հոդվածով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդությունը բավարարել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռուբեն Ափինյանին հայտարարել նկատողություն:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԱՆԴԱՄՆԵՐ՝**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ԲԵԿԹԱՇՅԱՆ
Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Լ. ՄԵԼԻՔՉԱՆՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ԶԻԶՈՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ք.Երևան
14.02.2019թ.

ԲԴԽ-8-Ո-Կ-04

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՐԱՅԻԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ.**

նախագահությամբ՝

Գ. Հարությունյանի,

*մասնակցությամբ՝
անդամներ*

*Ա. Բեկյաշյանի,
Գ. Դանիելյանի,
Ա. Խաչատրյանի,
Հ. Հովհաննիսյանի,
Լ. Մելիքջանյանի,
Ս. Մեղրյանի,
Ա. Մխիթարյանի,
Ս. Զիչյանի,*

*Երևան քաղաքի
առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի
դատավոր*

Ա. Մելքումյանի,

Երևան քաղաքի
առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի
դատավոր Ա. Մելքումյանի
ներկայացուցիչ

Դ. Գրիգորյանի,

Արդարադատության նախարար
Արդարադատության նախարարի
ներկայացուցիչ՝ Արդարադատության
նախարարության վերահսկողական
վարչության պետ

Ա. Չեյնայանի,

Ս. Մինասյանի,

քարտուղարությամբ՝

Շ. Վարդանյանի,

դռնբաց նիստում, քննության առնելով Արդարադատության
նախարարի պաշտոնակատար Ա. Չեյնայանի (այսուհետ՝ Ար-
դարադատության նախարար) 2018 թվականի դեկտեմբերի 25-ի
թիվ 630-Ա որոշմամբ ներկայացված միջնորդությունը՝ Երևան
քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատա-
րանի (այսուհետ՝ Դատարան) դատավոր Արայիկ Մելքումյանին
(այսուհետ՝ Դատավոր) կարգապահական պատասխանատ-
վության ենթարկելու վերաբերյալ,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Արդարադատության նախարարի 2018 թվականի նոյեմբերի
11-ի թիվ 588-Ա որոշմամբ Դատավորի նկատմամբ կարգապահա-
կան վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել քաղաքացի Ար-
թուր Մկրտչյանի 2018 թվականի հոկտեմբերի 26-ի հաղորդումը՝
հասցեագրված Արդարադատության նախարարին:

Հաղորդման մեջ նշվել է, որ թիվ ԵԿԴ/2347/02/16 քաղաքա-
ցիական գործով Դատավորի կողմից թույլ են տրվել դատավորի
վարքագծի կանոնների խախտումներ: Մասնավորապես՝ թիվ
ԵԿԴ/2347/02/16 քաղաքացիական գործով Դատավորը տվել է կա-
տարողական թերթ դեռևս ուժի մեջ չմտած դատական ակտի վե-
րաբերյալ, ավելին՝ դատական ակտը եղել է բեկանված վերաքն-
նիչ քաղաքացիական դատարանի կողմից: Հետևաբար Դատա-
վորի կողմից խախտվել են նյութական և դատավարական իրա-

վումքի նորմերը: Խախտումներն ակնհայտ են և կոպիտ, ուստիև Դատավորը ենթակա է կարգապահական պատասխանատվության «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա:

Արդարադատության նախարարի 2018 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 588-Ա որոշմամբ քաղաքացի Արթուր Մկրտչյանի հաղորդման հիման վրա Դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Հարուցված կարգապահական վարույթի ընթացքում Դատավորը ներկայացրել է գրավոր բացատրություն Արդարադատության նախարարին և գրավոր պարզաբանում՝ Բարձրագույն դատական խորհրդին:

2. Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը.

Հարուցված կարգապահական վարույթի ընթացքում ձեռք բերված թիվ ԵԿԴ/2347/02/16 քաղաքացիական գործի նյութերի, ինչպես նաև Դատավորի ներկայացրած գրավոր բացատրության ուսումնասիրության արդյունքում Արդարադատության նախարարը հանգել է այն հետևությանը, որ դատավոր Արայիկ Մելքումյանի կողմից 12.10.2017թ. կայացված վճռի հիման վրա (նշված վճիռը հրապարակման պահից չի մտել օրինական ուժի մեջ) 17.10.2018թ. տրվել է կատարողական թերթ՝ նշումով, որ վճիռն օրինական ուժի մեջ է մտել 31.08.2018թ.-ին, սակայն դատավորի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ Դատարանի 12.10.2017թ. վճիռը, բացառությամբ գործի վարույթը կարճելու մասի, մինչ օրս չի մտել օրինական ուժի մեջ, քանի որ վերաքննիչ դատարանի 31.07.2018թ. որոշմամբ վճիռը՝ հայցը բավարարելու մասով, բեկանվել է, և գործն այդ մասով ուղարկվել է նոր քննության: Ընդ որում, վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ առկա է այն դատական սխալը, որը հիմք է Դատարանի վճիռը բեկանելու և նոր քննության ուղարկելու համար: (...) Տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտը հայցը բավարարելու մասով բեկանելու և գործն այդ մասով ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու վերաքննիչ դատարանի լիազորությունը»: Այսինքն՝ վերաքննիչ դատարանի կողմից համապատասխան վերաքննիչ բողոքի

բավարարման արդյունքում սույն քաղաքացիական գործով Դատարանի կողմից կայացված վճիռը՝ հայցը բավարարելու մասով, բեկանվել է, և գործն այդ մասով ամբողջ ծավալով ուղարկվել է նոր քննության:

Արդարադատության նախարարն իր միջնորդության մեջ նշել է, որ Դատավորի կողմից խախտվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, մասնավորապես՝ կատարողական թերթը տրվել է օրինական ուժի մեջ չմտած, բեկանված դատական ակտի հիման վրա, որի արդյունքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորման ուժով ստեղծվել է բեկանված դատական ակտի կատարման պարտադիրության և՛ տեսանելիություն, և՛ անհրաժեշտություն՝ հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված՝ հարկադիր կատարողի համար նշված կատարողական թերթը կատարելուց ձեռնպահ մնալու որևէ իրավական հնարավորության բացակայությունը:

Արդարադատության նախարարը գտել է, որ Դատավորի կողմից թույլ տրված խախտումն ակնհայտ է, կոպիտ և կատարված է կոպիտ անփութությամբ: Վարույթ հարուցած մարմինը նաև գտել է, որ Դատավորի կողմից թույլ տրված խախտումը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով նախատեսված էական խախտում է: Դատավորի կողմից այնպիսի արարք է կատարվել, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ, ինչպես նաև Դատավորի կողմից վարույթ հարուցած մարմնին ներկայացված բացատրությունը հիմք է տալիս կասկածի տակ առնել նրա պատշաճ մասնագիտական պատրաստվածությունը:

3. Դատավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ.

Դատավորը ներկայացրել է երկու բացատրություն. առաջինը՝ Արդարադատության նախարարին, երկրորդը՝ Բարձրագույն դատական խորհրդին:

Առաջին գրավոր բացատրության մեջ Դատավորը նշել է, որ կատարողական թերթ տրվել է հայցվորներից Անդրանիկ Գրիգորյանին, որի կողմից վերաքննիչ բողոք չէր ներկայացվել, հետ-

ևարար, առաջին ատյանի դատարանի վճիռը՝ Անդրանիկ Գրիգորյանի մասով, մտել էր օրինական ուժի մեջ, իսկ վերաքննիչ բողոք ներկայացրած անձինք չէին կարող վերաքննիչ բողոք ներկայացնել Անդրանիկ Գրիգորյանի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության մասով:

Երկրորդ բացատրությամբ Դատավորը նշել է, որ պատշաճ քննություն չի կատարվել իր կողմից թույլ տրված խախտման բնույթի, այն ծնող հանգամանքների և պայմանների վերաբերյալ, ինչի արդյունքում Լիազոր մարմինը հանգել է ոչ ճիշտ հետևության իր կողմից թույլ տրված արարքի որակման խնդրում: Դատավորը հայտնել է, որ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ Լիազոր մարմնի որոշումն ընդունում է մասամբ՝ վերագրվող արարքի առկայության փաստի մասով, միաժամանակ առարկում է արարքի բնույթի՝ կոպիտ խախտման, կոպիտ անփութությամբ կատարված լինելու վերաբերյալ որոշմամբ նշված հիմքերի ու հիմնավորումների դեմ:

Դատավորը նաև նշել է, որ դատական ակտի օրինական ուժի մեջ չմտած լինելու պայմաններում կատարողական թերթի տրամադրման բացառումը պարզագույն իրավակարգավորում է, որն ուսուցանվում է դեռևս իրավաբանական ֆակուլտետի առաջին-երկրորդ կուրսերում: Հետևաբար, 2008 թվականից ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվելով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնում և ունենալով ավելի քան տասը տարվա դատավորի մասնագիտական ստաժ, ակնհայտ է, որ իր կողմից թույլ տրված վրիպումը (խախտումը) չէր կարող պայմանավորված լինել իրավական նորմի չիմացությամբ: Նաև պնդել է, որ իր կողմից նման վրիպում թույլ տալու փաստը հետևանք է իր՝ որպես դատավորի գերծանրաբեռնվածության և աշխատակազմի ոչ համալրված լինելու, մասնավորապես.

- 2018 թվականի հոկտեմբերի 17-ին՝ կատարողական թերթ տալու օրվա դրությամբ, իր վարույթում եղել է 1356 քաղաքացիական գործ, 1514 արբիտրաժային գործ, որոնք քննվում են քաղաքացիական գործերի քննության նույն ընթացակարգով, և 667 վճարման կարգադրություն, ընդհանուր առմամբ 3537 գործ,
- իր աշխատակազմում տեղի է ունեցել փոփոխություն՝ նոր օգնականը հրամանագրվել է 2018 թվականի հոկտեմբերի

03-ին, որն էլ մինչ այդ չի ունեցել դատական համակարգում աշխատելու փորձ և ընդհանուր առմամբ որևէ պատկերացում չունեի դատավորի օգնականի գործառնությունների մասին, և վերջինիս համար այդ ընթացքում աշխատանքը դեռևս ուսումնառություն և ծանոթություն էր ներառում,

- կատարողական թերթ տրամադրելու պահին աշխատակազմում գործավար չի ունեցել:

Դատավորը վկայակոչել է նաև դատավորի անկախությունը երաշխավորող միջազգային իրավական փաստաթղթեր: Նշել է, որ ՄԱԿ-ի 7-րդ կոնգրեսի կողմից 1985թ. սեպտեմբերի 6-ին ընդունված Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների համաձայն՝

- դատական մարմինների անկախությունը երաշխավորվում է պետության կողմից և հաստատվում է Մահմանադրությունում կամ երկրի օրենքներում: Բոլոր պետական և այլ հիմնարկները պարտավոր են հարգել և պահպանել դատական մարմինների անկախությունը (կետ 1-ին).
- յուրաքանչյուր անդամ պետություն պարտավոր է համապատասխան պայմաններ ստեղծել՝ դատական մարմիններին հնարավորություն տալով իրենց պարտականությունները կատարելու պատշաճ կերպով (կետ 7),
- դատավորների լիազորությունների ժամկետը, նրանց անկախությունը, անվտանգությունը, համապատասխան վարձատրությունը, ծառայության պայմանները, թոշակը և թոշակի գնալու տարիքը պետք է պատշաճ ձևով երաշխավորվեն օրենքով (կետ 11):

«Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ (94) 12 հանձնարարականով ամրագրվել է դատավորի պատշաճ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքը, որը ներառում է նաև համապատասխան (պատշաճ) օժանդակ անձնակազմի ապահովումը:

Դատավորը նաև նշել է, որ 2018 թվականի դեկտեմբերի 10-ին իր նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման պատասխան գրություն ներկայացնելուց հետո իր կողմից կրկին ուսումնասիրվել է սույն քաղաքացիական գործը, որից հետո մինչև որոշումն իրեն հանձնելը՝ դեկտեմբերի 27-ին, Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանն ուղղված գրությամբ խնդրել է վերադարձել սույն գործով 17.10.2018 թվականին էլեկտրոնային եղանակով Դատական

ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացված թիվ ԿԹ-75608-2018 կատարողական թերթը:

Դատավորն իր դիրքորոշումը եզրահանգել է հետևյալով. «Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իմ կողմից թույլ տրված վրիպումը որևէ աղերս չունի մասնագիտական առումով ոչ կոմպետենտության կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հետ, այն չի կատարվել դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ունեցել է իր ծնող պատճառները՝ գերծանրաբեռնվածություն, բավարար և պատշաճ պրոֆեսիոնալիզմով աշխատակազմի բացակայություն, ինչպես նաև այն, որ ինքը միջոցներ է ձեռնարկել կատարած խախտման (վրիպման) հետևանքները վերացնելու համար, ուստի խնդրում է մերժել Լիազոր մարմնի կողմից ներկայացված որոշումը»:

Անդրադառնալով արարքի որակման հարցին՝ նիստի ժամանակ Դատավորի ներկայացուցիչը վկայակոչեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածը, որը սահմանում է դատավորի պաշտոնի անհամատեղելիության սկզբունքը: Դատավորի ներկայացուցիչը նույնացրեց դատավորի պաշտոնի անհամատեղելիության սկզբունքը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը նախատեսող «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հետ, համաձայն որի՝ Էական կարգապահական խախտում է դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ: Նշվածը Դատավորի ներկայացուցիչը ներկայացրեց որպես դատավորի կողմից կատարված արարքն Էական կարգապահական խախտում դիտարկելու՝ Արդարադատության նախարարի փաստարկի հերքում:

4. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության համար Էական նշանակություն ունեցող հանգամանքները.

Բարձրագույն դատական խորհուրդը հիմք է ընդունում արձանագրված հետևյալ հանգամանքները.

1. Դատարանը քննել է թիվ ԵԿԴ/2347/02/16 քաղաքացիական գործն ըստ հայցի Անդրանիկ Գրիգորյանի և մյուսների (այսուհետ՝ Հայցվորներ) ընդդեմ «Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպության նախագահ Գրիգոր Գրի-

գորյանի, Երրորդ անձ՝ Սամվել Մարգարյան և մյուսներ (այսուհետ՝ Երրորդ անձինք)՝ 28.11.2014թ. ՀԽՄ արտահերթ համագումարի որոշումն անվավեր ճանաչելու, այն է՝ համագումարի ընթացքում ընդունված բոլոր որոշումները, դրանց հիման վրա կատարված բոլոր կանոնադրական փոփոխությունները և համապատասխան պետական գրանցումը, 28.11.2014թ. ՀԽՄ նախագահի վերընտրությունը, ՀԽՄ արտահերթ համագումար հրավիրելու և դրա օրակարգում ՀԽՄ նոր նախագահի, ՀԽՄ նախագահության և կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները և գույքի օգտագործման հաշվետվությունները համագումարի ընթացքում պատգամավորների քննարկմանը և հաստատմանը ներկայացնելու պահանջների մասին:

2. Դատարանի 12.10.2017թ. վճռով (այսուհետ՝ Վճիռ) հայցը բավարարվել է, իսկ հայցվորներ Կոյյա Ղափլանյանի և Գուրգեն Պապիկյանի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է հայցվորների մահվան հիմքով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ կետ):

3. Գործին մասնակից չդարձած անձ Մարիետա Խաչատրյանի կողմից 14.11.2017թ. և ՀԽՄ նախագահ Գրիգոր Գրիգորյանի կողմից 27.11.2017թ. Վճռի դեմ ներկայացվել են վերաքննիչ բողոքներ:

4. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի 06.12.2017թ. թիվ Ե-65880 գրությամբ թիվ ԵԿԴ/2347/02/16 քաղաքացիական գործն ուղարկվել է վերաքննիչ քաղաքացիական դատարան (այսուհետ՝ վերաքննիչ դատարան):

5. վերաքննիչ դատարանի 12.12.2017թ. որոշմամբ նշված վերաքննիչ բողոքները վերադարձվել են և Մարիետա Խաչատրյանի ու ՀԽՄ նախագահ Գրիգոր Գրիգորյանի կողմից կրկին ներկայացվել են 27.12.2017թ.-ին: վերաքննիչ դատարանի 11.01.2018թ. որոշմամբ վերաքննիչ բողոքներն ընդունվել են վարույթ:

6. Հայցվորներ Նիկոլ Մալխասյանի, Աշոտ Բառքառյանի, Ալեքսանդրա Խաչանի, Օվսաննա Օրդյանի, Արմեն Մարտիրոսյանի, Բախշի Հովհաննիսյանի, Վիոլետա Կարապետյանի, Սուսաննա Ավետյանի, Հասմիկ Սայադյանի, Սարգիս Թադևոսյանի, Սամվել Քալաշյանի, Արմեն Ղազարյանի, Ալվարդ Պողոսյանի, Գառնիկ Չաքարյանի (ներկայացուցիչ՝ Ժորա Հարությունյան) կողմից ևս 07.04.2018թ. ներկայացվել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանի 10.04.2018թ. որոշմամբ նշված վերաքննիչ բողոքը վերադարձվել է, այնուհետև կրկին ներկայացվել է 03.05.2018թ.-ին: Վերաքննիչ դատարանի 08.05.2018թ. որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

7. վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի 31.07.2018թ. որոշմամբ Մարիետա Խաչատրյանի, ՀԽՄ նախագահ Գրիգոր Գրիգորյանի վերաքննիչ բողոքները մերժվել են: Հայցվորների ներկայացուցիչ Ժորա Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է: Վճիռը մասնակի՝ հայցապահանջները բավարարելու մասով, բեկանվել է, և գործն այդ մասով ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Վճիռը՝ քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասով, թողնվել է անփոփոխ և մտել է օրինական ուժի մեջ:

8. վերաքննիչ դատարանի 31.07.2018թ. որոշման դեմ 04.09.2018թ. վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայցվորների և Երրորդ անձանց ներկայացուցիչ Տիգրան Ղազարյանը:

9. վերաքննիչ դատարանի աշխատակազմի ղեկավարի 11.09.2018թ. թիվ ԳԴ7-14400 գրությամբ թիվ ԵԿԴ/2347/02/16 քաղաքացիական գործն ուղարկվել է Վճռաբեկ դատարան:

10. Վճռաբեկ դատարանի 17.10.2018թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ որոշմամբ նշված թերությունը շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար՝ դրա համար սահմանելով եռօրյա ժամկետ՝ որոշումը ստանալու պահից:

11. 28.11.2018թ.-ին Հայցվորների և Երրորդ անձանց ներկայացուցիչ Տիգրան Ղազարյանը սահմանված ժամկետում կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք:

12. 17.10.2018թ.-ին դատավոր Արայիկ Մելքումյանի կողմից թիվ ԵԿԴ/2347/02/16 քաղաքացիական գործով 12.10.2017թ.-ին կայացված վճռի հիման վրա տրվել է կատարողական թերթ՝ **նշումով, որ վճիռն օրինական ուժի մեջ է մտել 31.08.2018թ.-ին:**

13. Նշված կատարողական թերթի հիման վրա Արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի կողմից 19.10.2018թ.-ին հարուցվել է կատարողական վարույթ, և նույն օրը որոշում է կայացվել պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին:

14. Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 02.11.2018թ. իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում նշում է կատարվել ՀԽՄ 16.12.2014 թ. կանոնադրության փոփոխության պետական գրանցման անվավերության վերաբերյալ, ինչպես նաև նախագահի վերընտրության անվավերության մասով ընդունվել է ի գիտություն՝ հիմք ընդունելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումը:

5. Բարձրագույն դատական խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննարկելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը, լսելով Արդարադատության նախարարի ներկայացուցչի հաղորդումը, Դատավորի ներկայացուցչի և Դատավորի բացատրությունները, ուսումնասիրելով վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ 1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը. (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի այն խախտումը, որը հեղինակագրվում է դատական իշխանությունը (...):

Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ (...) դատավորի լիազորությունները՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, դադարեցվում են անհամատեղելիության

պահանջները խախտելու, (...) Էսկան կարգապահական խախտում կատարելու դեպքերում:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Էսկան կարգապահական խախտում է դատավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:

Նույն օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Բարձրագույն դատական խորհրդում կատարվում է միայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշմամբ նշված կարգապահական խախտման սահմաններում:

Խորհուրդն արձանագրում է, որ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության հիմքում Արդարադատության նախարարը դրել է Դատավորի կողմից Էսկան կարգապահական խախտում կատարելու փաստը, որը Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 149-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանվում է որպես դատավորի լիազորությունները Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ դադարեցնելու հիմք:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար Բարձրագույն դատական խորհուրդը կարևոր է համարում հետևյալ հարցադրումները՝

1. արդյո՞ք թիվ ԵԿԴ/2347/02/16 քաղաքացիական գործով պահպանվել է կատարողական թերթ տրամադրելու դատավարական կարգը,

2. արդյո՞ք թիվ ԵԿԴ/2347/02/16 քաղաքացիական գործով դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում,

3. արդյո՞ք թիվ ԵԿԴ/2347/02/16 քաղաքացիական գործով թույլ տրված խախտումը հանդիսանում է Էսկան կարգապահական խախտում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. կատարողական թերթը տալիս է ակտն ընդունած առաջին ատյանի դատարանը՝ պահանջատիրոջ կամ դրա համար հատուկ լիազորված նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

2. Կատարողական թերթը տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ անհապաղ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճիռը բողոքարկվելու և վերաքննիչ դատարանի կողմից չբեկանվելու դեպքում այն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննիչ դատարանի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վճիռը բողոքարկվելու և վերաքննիչ դատարանի կողմից մասնակի բեկանվելու դեպքում վճռի չբեկանված մասն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննիչ դատարանի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վճիռը բողոքարկվելու և վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու դեպքում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու մասին որոշումը բողոքարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու պահից, իսկ եթե վերաքննիչ դատարանի համապատասխան որոշումը բողոքարկվում է Վճռաբեկ դատարան, ապա՝ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վերադարձվելու, առանց քննության թողնվելու, վարույթ ընդունելը մերժվելու կամ վճռաբեկ բողոքը մերժվելու պահից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-4-րդ մասերի համադրված վերլուծությունից բխում է, որ բողոքարկվելու դեպքում առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական ուժի մեջ չի մտնում, և բողոքարկված վճռի օրինական ուժի մեջ մտնելու կամ չմտնելու հարցը բոլոր դեպքերում կախված է տվյալ վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի (բողոք-

ների) կապակցությամբ վերաքննիչ դատարանի կայացրած որոշումից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո: Ընդ որում, ըստ նույն հոդվածի 4-րդ մասի՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված որոշումների դեմ սահմանված ժամկետում վճռաբեկ բողոք ներկայացնելու դեպքում այդ որոշումները համարվում են օրինական ուժի մեջ չմտած:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նշված իրավակարգավորումների և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համադրումը վկայում է, որ առաջին ատյանի դատարանի վճռի հարկադիր կատարման նպատակով չի կարող տրվել կատարողական թերթ, եթե առաջին ատյանի դատարանի վճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, վերաքննիչ դատարանի որոշմամբ այդ բողոքը բավարարվել է (վճիռը բեկանվել է, գործն ուղարկվել է նոր քննության), իսկ վերաքննիչ դատարանի որոշումը, իր հերթին, օրինական ուժի մեջ չի մտել դրա դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու փաստի ուժով:

Ուսումնասիրելով գործի նյութերը, վարույթ հարուցած մարմնի, Դատավորի և վերջինիս ներկայացուցչի բացատրությունները՝ Բարձրագույն դատական խորհուրդը հաստատված է համարում, որ՝

1) թիվ ԵԿԴ/2347/02/16 քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի վճռի հարկադիր կատարման նպատակով Դատավորի կողմից 17.10.2018թ. տրվել է կատարողական թերթ այն պայմաններում, երբ տվյալ գործը գտնվել է բողոքարկման փուլում, և վերաքննիչ դատարանի կողմից 31.07.2018թ. վճիռը՝ հայցապահանջները բավարարելու մասով, բեկանված է եղել,

2) վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի որոշմամբ գործը բեկանված մասով ուղարկվել է Դատարան՝ նոր քննության (վճիռը՝ քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասով, թողնվել է անփոփոխ):

3) վերաքննիչ դատարանի որոշման դեմ 04.09.2018թ.-ին ներկայացվել է վճռաբեկ բողոք:

4) Դատավորը, առանց իր տրամադրության տակ ունենալու թիվ ԵԿԴ/2347/02/16 քաղաքացիական գործի նյութերը (գործը,

ինչպես նշվեց, 06.12.2017թ. ուղարկվել է վերաքննիչ դատարան, որտեղից՝ 11.09.2018թ. ուղարկվել է Վճռաբեկ դատարան և սույն որոշման կայացման պահին գտնվում է Վճռաբեկ դատարանում), առանց հաշվի առնելու Վճռի դեմ վերաքննիչ բողոքների առկայության հանգամանքը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի որոշումն ու դրա դեմ վճռաբեկ բողոքի առկայությունը, 17.10.2018 թ.-ին՝ Վճռի կայացումից գրեթե մեկ տարի հետո, օրինական ուժի մեջ չմտած (բողոքարկված և բեկանված) դատական ակտի առնչությամբ տվել է կատարողական թերթ՝ նշումով, որ այն օրինական ուժի մեջ է մտել 31.08.2018թ.-ին:

Օրինական ուժի մեջ չմտած վճռի հիման վրա կատարողական թերթ տալու փաստը Բարձրագույն դատական խորհուրդը գնահատում է որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Օրենքի վերոնշյալ իրավական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում, քանզի դրա առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Արդարադատության նախարարին ներկայացված գրավոր բացատրության շրջանակներում Դատավորի ներկայացրած փաստարկը, թե Նիկոլ Մալխասյանի, Աշոտ Բառքառյանի, Ալեքսանդրա Խաչյանի, Օվսաննա Օրդյանի, Արմեն Մարտիրոսյանի, Բախշի Հովհաննիսյանի, Արամ Մաթևոսյանի, Արսեն Թաթոյանի, Լիլիթ Հովհաննիսյանի, Վիոլետա Կարապետյանի, Սուսաննա Ավետյանի, Հասմիկ Սայադյանի, Սարգիս Թադևոսյանի, Սամվել Քալաշյանի, Արմեն Դազարյանի, Ալվարդ Պողոսյանի, Գառնիկ Չաքարյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի բավարարման արդյունքում նշված քաղաքացիական գործը նոր քննության է ուղարկվել միայն բողոքաբերների կողմից ներկայացված հայցապահանջների մասով, իսկ Անդրանիկ Գրիգորյանի կողմից վերաքննիչ բողոք ներկայացված չլինելու պարագայում Դատարանի վճիռը՝ Անդրանիկ Գրիգորյանի մասով, մտել է օրինական ուժի մեջ, անհիմն է:

Բարձրագույն դատական խորհուրդը հիմնավոր է համարում այս առնչությամբ Արդարադատության նախարարի այն դիրքորոշումը, ըստ որի՝ նշված բացատրությամբ դատավորի կողմից, ըստ էության, ի ցույց է դրվել այն փաստը, որ վերջինս բավարար չափով չի պատկերացնում քաղաքացիական գործի քննության համար այնպիսի կարևորագույն հասկացությունները, ինչպի-

սիք են հայցի հիմքը և առարկան: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումից ուղղակիորեն բխում է, որ վերաքննիչ բողոքարկման իրավունքով օժտված սուբյեկտներն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում վերաքննիչ բողոք են բերում առաջին ատյանի դատարանի՝ անմիջական կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերի դեմ, որպիսին հանդիսանում է վճիռը: Հետևաբար, վերաքննիչ բողոքարկման օբյեկտը կամ օբյեկտային նախադրյալը դատական ակտն է, որի դեմ բողոքարկման սուբյեկտիվ իրավունքը կրողը բերում է բողոք՝ վիճարկելով դրա օրինականությունն ու հիմնավորվածությունը և նպատակ հետապնդելով չեղարկելու դրա բացասական և ոչ իրավաչափ իրավական հետևանքները: Այսինքն՝ դատական ակտի բողոքարկումը, հանդիսանալով արդար դատաքննության իրավունքի դատական պաշտպանության միջոց, միաժամանակ ուղղված է և՛ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը, և՛ վիճարկվող դատական ակտի իրավական գործողությունը բացառելուն: Ընդ որում, բողոքարկումն ու բողոքը վարույթ ընդունելու հանգամանքներն ինքնին բացառում են դատական ակտի իրավական գործողությունը զուտ այն պատճառով, որ այն օրինական ուժի մեջ չի մտնում: Հարկ է նշել, որ դատական ակտի դեմ բողոք բերելը ոչ միայն բացառում է օրենքով սահմանված ժամկետում այդ ակտի ուժի մեջ մտնելու հնարավորությունը, այլև հանդիսանում է իրավական որոշակիության ապահովման կառուցակարգ այն իմաստով, որ տվյալ պարագայում նաև բացառում է նույն նյութական իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված տրամաբանորեն հակասող հրամայական եզրահանգումների գոյությունը: Ընդ որում, Դատավորի կողմից քննարկվող նորմը մեկնաբանելու արդյունքում կատարողական թերթի տրամադրումը միանշանակ պետք է դիտարկել ոչ իրավաչափ գործողություն, քանզի դատական ակտի դեմ բողոք բերելը բացառում է այդ ակտի կիրարկումը, ինչը նշանակում է, որ այդ ակտը չի օժտվում նաև բացառիկության, անհերքելիության, նախադատելիության, պարտադիրության և կատարելիության հատկանիշներով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել նաև, որ դատակցության պայմաններում, եթե դատակիցներից թեկուզև մեկը բողոք է բերում դատական ակտի դեմ, ապա դատական ակտի օրինական ուժի հատկանիշները վրա չեն հասնում՝ անկախ վերաքննիչ

բողոքարկման իրավունքի մյուս սուբյեկտների կողմից բողոք բերած չլինելու հանգամանքից: Մասնավորապես, քննարկվող գործի շրջանակներում, անկախ հայցվորների քանակից, ներկայացված է եղել կոնկրետ հայցադիմում՝ համապատասխան **անբաժանելի** հայցապահանջներով, հայցի փաստական և իրավական հիմքերով: Ընդ որում, դատավարության ընթացքում հայցադիմում ներկայացրած որևէ անձի կողմից միջնորդություն չի ներկայացվել և դատարանի կողմից որոշում չի կայացվել հայցի առարկան կամ հիմքը փոփոխելու առնչությամբ:

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Դատավորի կողմից խախտվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, մասնավորապես՝ կատարողական թերթը տրվել է օրինական ուժի մեջ չմտած, բեկանված դատական ակտի հիման վրա, որի արդյունքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորման ուժով ստեղծվել է բեկանված դատական ակտի կատարման պարտադիրության և՛ տեսանելիություն, և՛ անհրաժեշտություն՝ հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված՝ հարկադիր կատարողի համար նշված կատարողական թերթը կատարելուց ձեռնպահ մնալու որևէ իրավական հնարավորության բացակայությունը:

Գնահատելով Դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտման ակնհայտությունը⁹ Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ Դատավորին մեղսագրվող խախտումների առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկներով, ավելին՝ դրանք կատարվել են կոպիտ անփութությամբ, քանի որ Դատավորը կարող էր և պարտավոր էր տեղյակ լինել կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ առկա իրավական կանոնակարգումներին և դրանք խախտելու հնարավոր հետևանքներին:

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Դատավորի կողմից թույլ տրված խախտումը ոչ միայն **կոպիտ է՝** հեղինակագրվում է դատական իշխանությունը, այլ նաև **Էական է**, քանի որ անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:

Բարձրագույն դատական խորհուրդը հիմնավոր է համարում վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը, որ դատավարական

այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են հայցը և դրա տարրերը, դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը, դատական ակտը բողոքարկելու և բեկանելու հետևանքները, կատարողական թերթ տալը, հանդիսանում են դատավորի կողմից մշտական կիրառման ենթակա, և դրանց չիմացությունը կամ խեղաթյուրումը՝ առանց որևէ ողջամիտ իրավական ենթադրության կամ փաստարկի, ենթակա է գնահատման որպես դատական իշխանությունը հեղինակագրկող և դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծ (արարք):

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է նաև, որ գործի քննության ժամանակ Դատավորը չպատճառաբանեց իր կողմից Արդարադատության նախարարին ներկայացված գրավոր բացատրության մեջ նշված փաստարկները՝ դատական ակտի մի մասի վերաբերյալ կատարողական թերթը տալու առումով: Ավելին՝ Բարձրագույն դատական խորհրդի նիստում Դատավորի ներկայացուցչի կողմից խախտման փաստն ընդունվեց՝ պատճառաբանելով Դատավորի գերծանրաբեռնվածությամբ և նրա աշխատակազմի մասնագիտական ոչ պատշաճ պատրաստվածությամբ:

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Դատավորի կողմից կատարողական թերթի տրամադրումը քննարկվող դեպքում ուղղակիորեն հակասում է իրավական որոշակիության սկզբունքին: Ավելին՝ առկա է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) պահանջների կոպիտ խախտում, քանզի տվյալ պարագայում ոչ միայն անտեսվել է իրավական որոշակիության սկզբունքը, այլև խախտվել է արդար դատաքննության իրավունքն այն պատճառով, որ դատական ակտի կատարումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտարկում է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բովանդակության շրջանակներում, իսկ դատավորի գուտ սուբյեկտիվ հայեցողության արդյունքում կատարողական թերթի տրամադրմամբ դատական ակտը փաստացի դառնում է հարկադիր կատարման ենթակա, որպիսի պայմաններում խախտվում են բոլոր այն անձանց իրավունքներն ու օրինական շահերը, ում ուղղված է կատարողական թերթի իրավական ներգործությունը:

Անդրադառնալով Դատավորի կողմից թույլ տրված խախտումը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք»

սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով Էական կարգապահական խախտում գնահատելու հարցին՝ Բարձրագույն դատական խորհուրդը հիմնավոր չի համարում Դատավորի ներկայացուցչի դիրքորոշումը, ըստ որի՝ դատավորի արարքը չի կարելի գնահատել դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծ այն պատճառաբանությամբ, որ այն չի հակասում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածին:

Բարձրագույն դատական խորհուրդը հարկ է համարում ուշադրություն հրավիրել այն իրողությանը, որ «անհամատեղելիության պահանջների խախտումը» և «Էական կարգապահական խախտումը» Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասում դիտարկվում են որպես դատավորի լիազորությունները Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ դադարեցնելու ինքնուրույն հիմքեր, որպիսի պայմաններում դրանք նույնացնելն անթույլատրելի է:

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Դատավորի ներկայացուցչի կողմից «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի և 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի նորմերը նույնացվել չեն կարող, քանի որ դրանք ունեն տարբեր իրավական բովանդակություն և հետապնդում են տարբեր իրավական նպատակներ:

Բարձրագույն դատական խորհուրդն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածը վերաբերում է դատավորի պաշտոնի անհամատեղելիության սկզբունքին, որը դատավորի անկախության հիմնարար երաշխիքներից է: Իսկ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է և պայմանավորված է դատավորի դրսևորած այնպիսի վարքագծով, որն անխուսափելիորեն հեղինակագրկում է դատական իշխանությունը, Էապես նվազեցնում է դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը և վնասում է դատավորի բարձր պաշտոնի հանրային ընկալմանը: Մյսինքն՝ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե պաշտոնների անհամատեղելիությանը, այլ դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի արարքին:

Դատավորի կողմից «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի իմաստով «արարք» կատարելը ենթադրում է նաև դատական գործունեության ընթացքում դատավորի կողմից այնպիսի վարքագծի (ներառյալ՝ անգործության) դրսևորումը, որն ակնհայտորեն կարող է կասկածի տակ դնել արդարադատությունը Մահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով նախատեսված իրավական չափորոշիչներին համապատասխանելու հանգամանքը՝ խեղաթյուրելով դրա բուն էությունը: Եթե դատավորի պաշտոնավարման ընթացքում դատավորի վարքագիծը շեղվում է իրավական նորմերի մեկնաբանման և կիրառման ընդհանուր կանոններից, և դատավորը, դրսևորելով ոչ պատշաճ արհեստավարժություն ու մասնագիտական պատրաստվածություն, դուրս է գալիս իրավական նորմի գործողության շրջանակներից ոչ թե գուտ նորմի սխալ մեկնաբանման կամ կիրառման արդյունքում, այլ իր սահմանադրաիրավական լիազորությունների և առաքելության գերազանցման պայմաններում, ապա այդպիսի արարքը կարող է բնութագրվել որպես դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի:

Բարձրագույն դատական խորհուրդը հիմնավոր է համարում նաև վարույթ հարուցած մարմնի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ Դատավորի կողմից դատավարական իրավունքի նորմերի նման կոպիտ խախտումներ թույլ տալու, դատավորի կողմից մշտական կիրառման ենթակա դատավարական ինստիտուտները պատշաճ խորությամբ չիմանալու կամ խեղաթյուրելու, ինչպես նաև վարույթ հարուցած մարմնին և Բարձրագույն դատական խորհրդին դրանց կապակցությամբ որևէ ողջամիտ փաստարկ չներկայացնելու հանգամանքները թույլ են տալիս կասկածի տակ առնել դատավորի անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածությունը, որի ապահովումը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով սահմանված՝ ի պաշտոնե գործելիս դատավորի պարտականությունը, և որի ուժով դատավորը պարտավոր է ապահովել իր պատշաճ մասնագիտական պատրաստվածությունն ու հմտությունների շարունակական կատարելագործումը:

Այն պատճառաբանությունը, ըստ որի՝ Դատավորի կողմից թույլ տրված խախտումը չէր կարող նվազ արհեստավարժությամբ

յան հետևանք լինել և սոսկ թելադրված է եղել իր գերծանրաբեռնվածությամբ ու աշխատակազմի ցածր որակավորմամբ, մասնավորապես՝ նորանշանակ օգնականի անհամարժեք պատրաստվածությամբ, չի կարող հիմնավորված համարվել՝ հաշվի առնելով քննարկման առարկա խախտման բուն էությունն ու այդ հարցադրմանն առնչվող հանգամանքները:

Բարձրագույն դատական խորհուրդը հարկ է համարում փաստել, որ անկախ ծանրաբեռնվածության աստիճանից, աշխատակազմի համալրվածությունից և վերջինիս մասնագիտական պատրաստվածության մակարդակից՝ դատավորը պարտավոր է ապահովել իրավունքի գերակայությունը. արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատավորը պարտավոր է գործել օրենքի շրջանակներում, թույլ չտալ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի կամ դատավորի վարքագծի կանոնների խախտումներ, բարձր պահել իր, դատարանի և դատական իշխանության հեղինակությունը: Դատավորը պարտավոր է ոչ միայն ապահովել իր, այլ նաև իր աշխատակազմի պատշաճ մասնագիտական պատրաստվածությունն ու հմտությունների շարունակական կատարելագործումը («Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 66 հոդվ., մաս 2, 67 հոդվ., մաս 2):

Բարձրագույն դատական խորհրդի գնահատմամբ՝ Դատավորի կողմից 17.10.2018թ. կատարողական թերթ տրամադրելն իրավունքների վերագանցմամբ իրականացված ոչ իրավաչափ գործողություն է, որը հեղինակագրվում է դատական իշխանությունը, Էապես նվազեցնում է դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը և վնասում է դատավորի բարձր պաշտոնի հանրային ընկալմանը:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է նաև, որ բեկանված և բողոքարկման գործընթացում գտնվող դատական ակտի հիման վրա կատարողական թերթ տրամադրելով՝ Դատավորը փաստացի կասկածի տակ է դրել դատական համակարգի աստիճանակարգությունն ու ատյանային գործառութային գործունեության արդյունավետությունը:

Վերոհիշյալի հաշվառմամբ՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Դատավորի կողմից թույլ տրված խախտումը հանդիսանում է ակնհայտ, կոպիտ և Էական կարգապահական խախտում, որը, Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ

մասի համաձայն, հիմք է դատավորի լիազորությունները Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ դադարեցնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասով, 175-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով, 149-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 155-րդ հոդվածով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արդարադատության նախարարի միջնորդությունը բավարարել: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արայիկ Մելքումյանի լիազորությունները դադարեցնել Էական կարգապահական խախտման հիմքով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԱՆԴԱՄՆԵՐ՝**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ա. ԲԵԿԹԱԾՅԱՆ
Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Լ. ՄԵԼԻՔՅԱՆՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ԶԻՉՈՅԱՆ**